ՀՈՎՀԱՆՆԵՍ ԻՆՃԻԿՅԱՆ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հայագիտակ
Երևան 1995

9(47.925)
Հ-58

գր-ա6

Հայագիտական բարեգործական ընկերություն

Նվիրվում է հայոց մեծ եղեռնի 80 տարելիցին

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԻՆՃԻԿՅԱՆ

4886

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

«Հայագիտակ» հրատարակչություն
Երևան 1995

ԳՄԴ 63. 3 (2Հ)
Ի 583

Գիրքը լույս է տեսնում հեղինակի որդու՝
ՌՈՒԲԵՆ ԻՆՃԻԿՅԱՆԻ
հովանավորությամբ

Առաջաբանը ՊԻՈՆ ՀԱԿՈԲՅԱՆԻ
Վերջաբանը ԱՆՈՒՇ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ
Խմբագիր Ալբերտ ԻՍՈՅԱՆ

ԻՆՃԻԿՅԱՆ Հ. Գ.
Ի 583 Սոցիալական հոգեբանությունը և ցեղասպանությունը (խմբ. Ա. Իսոյան), առաջաբան՝ Պ. Հակոբյան, վերջաբան՝ Ա. Հովհաննիսյան, Հայագիտական բարեգործ. ընկ. Եր., «Հայագիտակ» հրատ., 1995 - էջ 103

Անվանի պատմաբան, արևելագետ, հասարակական գործիչ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԻՆՃԻԿՅԱՆԻ (1913-1990) մեծարժեք աշխատության մեջ նորովի են քննվում մեծ եղեռնի պատմական, քաղաքական, կրոնական, ազգային գործոնները, որոնք նպաստեցին թուրքական հասարակության մեջ համապատասխան հոգեբանության հասարակական կարծիքի ձևավորմանը: Հետմահու այս հրատարակությունը հարգանքի տուրք է մեծավաստակ արևելագետի հիշատակին:

Ի 0.5.030209013
786(01) 95

ԳՄԴ 57. 3

ISBN 5-8079-1002-8

© Ինճիկյան Հ.,1995

«Հայագիտակ» հրատարակչություն,1995

ԱՌԱՋԱԲԱՆ

Այս գիրքը պատրաստվել է առավելապես 1990 թ. սկզբներին և ավարտվել հեղինակի մահվանից մի քանի շաբաթ առաջ: Ասել է թե աշխատությունն արդյունք է հանգուցյալ արևելագետ Հովհաննես Ինճիկյանի նախորդ տասնամյակներին ծավալած հետազոտական աշխատանքի՝ փորձի ու սկզբունքների, և պարունակում է հեղինակի համոզումներն ու խորհուրդներն ուղղված սիրելի ազգակիցներին՝ արթուն պահելու մաքառման ոգին և գալիք կյանքում ոչ մի գնով թույլ չտալու, որ կրկնվի թուրք ազգայնամոլների հրահրած սպանդն ու ոճրագործությունն ընդդեմ հայության ու մարդկության:

Գիրքը պիտի հրատարակվեր նույն 1990-ին, բայց տպագրական ու այլ դժվարություններ ձգձգեցին գործը մինչև օրս: Դրանից հետո, թեպետ ընդամենը հինգ տարի է անցել, բայց խորապես փոխվել է կյանքն ու աշխարհը. փլուզվել է Խորհրդային Միությունը, վերածնվել է Հայոց պետականությունը, և շատ բան, որ անցյալում գաղտնիք էր համարվում, այսօր հանրահայտ է լայն հասարակայնությանը՝ պարտադրելով նորովի քննելու և լուծելու նոր ու նորագույն ժամանակների հայոց պատմության, նաև հայոց ցեղասպանության առանցքային հարցերը:

Եթե հեղինակը կենդանի լիներ, հարկավ, կվերախմբագրեր իր աշխատությունը, այլ ոգով ու ոճով կքննարկեր որոշ հարցեր: Նրան ևս ժամանակին հայտնի էին շատ փաստեր ու վավերագրեր, բայց հարկադրված էր լռելյայն անցնելու դրանց կողքով: Հեղինակը քաջ գիտեր, որ թուրք պետության ղեկավարների ձեռքերն ազատ արձակելու և հայ ժողովրդի սպանդն ավարտին հասցնելու գործում ուղղակի և անուղղակի ձևով քիչ չեն նպաստել Լենինը, Տրոցկին, նաև մի շարք անողնաշար հայ բոլշևիկներ, որոնք փոխանակ արհավիրքի օրերին ամրապնդելու ազգային միասնությունը, զինվորական կարգն ու ռազմաճակատը և կանխելու թուրք ջարդարարների առաջխաղացումը դեպի Արևելյան Հայաստան, հարուցեցին խռովություններ, քայքայեցին Կարսը պաշտպանող հայ զինվորների կամքն ու միասնությունը և պատճառ դարձան նոր տարածքների կորստյանն ու հազարավոր անմեղ հայերի կոտորածին նույն Կարսում, Ալեքսանդրապոլում ու Շիրակի գյուղերում: Իսկ հետո էլ, երբ պիտի որոշվեին արդեն խորհրդայնացած Հայաստանի սահմանները, Լենինն ինքն էր կշտամբում նույն հայ բոլշևիկներին և հարկադրում հասկանալ,որ Խորհրդային Ռուսիան Կարսի համար Թուրքիայի վրա զորավոր ճնշում չպիտի բանեցներ և ոչ էլ պատերազմեր. «Հասկացե՛ք, ընկերներ, - ասել է Լենինը, - ...Ռուսիան չ՚ուզեր և չի կրնար կռվիլ մասնավորաբար Կարսի վրա»: Ինչպես Մռավյանն է հաղորդել, «Լենինը Կարսը թրքական նահանգ կը նկատե», և երբ իրենք ընդգծում են «հայ ժողովրդի անտանելի կացությունը, և որ հայ աշխատավոր դասակարգին առջև կոմունիստ կուսակցությունը կրնա վարկաբեկվիլ, Լենին կը հայտնե, թե պատրաստ է ատոր ու կ՚ավելցնե, թե ժամանակավորապես պարտավորված ենք զոհել հայ աշխատավոր դասակարգին շահերը համաշխարհային հեղափոխության շահերուն» (տե՛ս Հայկազյան հայագիտական հանդես, Բեյրութ, 1974, էջ 12-13):

Մեծ եղեռնը հայ ժողովրդի սրտի մեջ բացված խոր վերք է, որ երբեք չի սպիանում ու ծխում է շարունակ և հայ անհատը չի կարող անտարբեր մնալ, երբ շոշափվում է այդ հարցը: Հեղինակը լինելով արյունով ու տոհմով իսկական հայ, այնուամենայնիվ, կարողացել է զսպել իր զգացումները և անկանխակալ պատմաբանի գրչով վիպել անցած գողգոթան իր ժողովրդի, որն առանց այն էլ ահավոր է: Հեղինակն ավելի խոսեցնում է ուրիշներին, բերում փաստեր ու վկայություններ, ականավոր մարդասերների ու հայտնի դիվանագետների մտքերն ու կարծիքները հայ ժողովրդի ծանր կացության մասին Թուրքիայում, հայերի ցեղասպանության նախապատրաստման ու իրականացման դաժան մեթոդների մասին, եղեռնից փրկված հատուկենտ անհատների հիշողությունները մղձավանջային օրերից ու տեսիլքներից, քան թե ծավալուն հոգեբանական, իմաստասիրական սառն ու անկյանք դատողություններով

պարապում համոզված լինելով, որ իրողության ճշմարիտ արձանագրումն առավել ազդու և անհերքելի է, քան տարտամ մտահանգումներով պարապելը:

Աշխատության մեծ մասն, այսպիսով, հայոց ցեղասպանության հարցերին է նվիրված, իսկ սոցիալ հոգեբանության խնդիրները մնում են ածանցիկ իրողություններ օգնելու համար ընթերցողին առավել խորն ընկալելու պանթյուրքիստական, պանթուրանիստական, պանիսլամիստական, ասել է թե ընդհանրապես ցեղասպանության գաղափարի ձևավորման ու զարգացման պատկերը, որ թուրք կառավարող շրջանների ու խավարամիտ ամբոխի միջավայրում բազում տասնամյակների ընթացքում քարոզվելով, նաև սրբագործվելով Ղուրանի պատգամներով՝ իր որոշակի դրսևորումների մեջ դարձել էր ահռելի ու նողկալի չարագործ ուժ, որի հետևանքները մերժելի են հիմքից վեր և դատապարտելի որպես ծանրագույն հանցագործություններ: Այս էլ ասենք, որ սոցիալական հոգեբանությունը միակ բանալին չէ, որով պիտի բացվի այդ գաղտնարանը և բացատրվեն հայ ժողովրդի ցեղասպանության պատճառները, որովհետև աշխարհում կան շատ ժողովուրդներ ու ռասաներ, որոնք նույնպես ապրում են կողք-կողքի և ատելությամբ են լցված միմյանց հանդեպ, բայց չեն դիմում նման չարագործությունների:

Մոլագար ամբոխը, սովորաբար, արյուն թափելուց հետո պահ մի զգաստանում է, փորձում զղջման ինչ-որ փորձեր անել, բայց թուրք պետական գործիչներն ու մտավորականները, թուրք ժողովուրդը կոտորելով պատմական Հայաստանի տարածքում, իրենց հայրենիքում ապրող շուրջ 2 մլն հայ երեխաների, ծերերի և կանանց, նենգորեն զինաթափված տղամարդկանց, որոնք դեռ երեկ մարտնչում էին նույն Թուրքիայի համար, գազանաբար հոշոտելով հայ մտավորականությանը, առ այսօր ոչ միայն զղջման փորձ չեն արել, այլև նույնը կրկնեցին վերջին տարիներին Սումգայիթում, Բաքվում, Գանձակում, Ղարաբաղում:

Հեղինակն այս ամենը դիտում է միասնական հենքի մեջ և ցույց տալիս, որ հին ու նոր օսմաններից մինչև երիտթուրքեր ու նրանցից մինչև ազերի կոմունիստ ղեկավարներ, նույն թուրքերն են, նույն դահիճները, որոնք սառն անտարբերությամբ կարող են նայել իրենց զոհերին և նույնքան սառնությամբ վերջիններիս մեղադրելու պատճառներ հորինել: Աշխատության միջով անցնում է մի գերիշխող գաղափար ևս, այն, որ թուրքերը ոչ միայն ծրագրել և իրագործել են հայկական սպանդը, այլև ոչնչացրել հայ ժողովրդի դարերով ստեղծած հարուստ քաղաքակրթությունը՝ նյութական մշակույթի հուշարձանները, անապատի վերածել երբեմնի ծաղկուն բնակավայրերը, որ նույնչափ ծանրագույն հանցագործություն է մարդկության և գալիք սերունդների նկատմամբ: «Գոյություն չունի բնության որևէ օրենք, որը թույլ տար արվեստի հուշարձանների, կենդանիների և անպաշտպան մարդկանց անիմաստ ոչնչացումն ու անարգումը... Այդ արարքի համար նրանք վաղ թե ուշ պատասխանատու են իրենց խղճի առջև» (Л. Н. Гумилев, Этногенез и биосфера Земли, Л., 1990, с. 464):

Երբ նվաճող ժողովուրդը հպատակների ճակատագիրը որոշելու խնդրում ունենալով ընտրության բազում հնարավորություններ կանգ է առնում ամենադաժան միջոցի՝ ցեղասպանության վրա, դրա համար մեղավոր են ոչ միայն ղեկավարները, այլև դրան մասնակցած յուրաքանչյուր անհատ: Այսպիսի դաժանությունն անկարելի է արդարացնել որևէ գիտության օրենքներով:

Հանգուցյալ արևելագետի սույն աշխատությունը հրատարակելով իբրև գիտական ժառանգություն, արված վերապահումներով հանդերձ, այն համոզումն ունենք, որ իր հարուստ փաստերով և ընդգրկած բազմազան նյութերով այն կարող է որոշակի նպաստ բերել հայոց պատմության նորագույն շրջանի ուսումնասիրությանը, որի անձնվեր մասնակիցն էր Հովհաննես Ինճիկյանը՝ ազնիվ, նվիրված և սկզբունքային գիտնականը, շոշափելի վաստակով ու ծառայություններով՝ Հայաստանում արևելագիտության զարգացման և այդ բնագավառում երիտասարդ ու շնորհալի մասնագետներ պատրաստելու գործում:

ԱՆՑՅԱԼԻ ՄՈՌԱՑՈՒՄԸ ՍՊԱՌՆՈՒՄ Է ՆՐԱ ԿՐԿՆՈՒԹՅԱՆԸ

> Երիտթուրքերը որոշել էին գործել արմատականորեն և մեկ անգամ ընդմիշտ վերջ տալ հայերին... Ամեն ինչ արվել էր երիտթուրքական պարագլուխների ու նրանց կոմիտեի կողմից հանգամանորեն նախապատրաստված ծրագրի համաձայն: Այն վախկոտությունը, որով նրանք ավելի ուշ ժխտում էին իրենց իսկ գործած գազանությունները, նրանց չի ներկայացնում լավագույն կողմից...
>
> Ֆ. ՆԱՆՍԵՆ

1915թ. ապրիլի 24... Այդ տարեթիվը արդեն երեք քառորդ դար է՝ սարսուռով են հիշում բոլոր հայերը, առաջադեմ մարդկությունը որպես սև, արյունոտ օր, մեր դարի առաջին ցեղասպանության ամոթալի սկիզբ: Այդ օրն է սկսվել Օսմանյան կայսրության հայ բնակչության անարգել տեղահանությունն ու բնաջնջումը: Թուրքական կառավարող վերնախավերը աննախադեպ ոճրագործությունը նախապատրաստել են տասնամյակներով, իսկ երիտթուրքական կառավարությունը և նրա ղեկավարությամբ մոլեգնության հասած ամբոխը բարբարոսաբար է իրագործել չարագործությունները:

Վիթխարի քանակությամբ բազմալեզու գրականության, հրապարակված փաստաթղթերի ժողովածուների, գեղարվեստական ստեղծագործությունների առկայության դեպքում սույն ոչ մեծ հետազոտության հրատարակման անհրաժեշտությունն առաջացել է հարցի նոր հայեցակետից ելնելով, այն է՝ ցույց տալ, թե՝ ինչպես ուխտադրժորեն, ծիզվիտական եղանակներով, հենվելով զանգվածային կոտորածների բազմամյա փորձի, Ղուրանի և շարիաթի դոգմաների վրա, երիտթուրքերը նախապատրաստել են երկրի մուսուլման զանգվածների հասարակական հոգեբանությունը և, օգտագործելով համաշխարհային պատերազմի պայմանները՝ հասել իրենց ազգայնական նպատակներին:

Եվ ապա՝ քանի դեռ ողջ են այդ ողբերգությունների վկաները, քանի դեռ ողջ կլինեն նրանց զավակներն ու թոռները, որոնք ականատեսներից լսել են չարագործությունների ճշգրիտ պատմություններն ու փաստերը, քանի դեռ ժողովրդական խոսք ու զրույցը և մարդկանց հիշողությունը պահպանում են անցյալի արյունահեղ պատկերները, դրանց մասին լռել անհնար է: Բազմակի հիշեցումներն այդ մարդատյաց քաղաքականության դեմ մղվող *պայքարի հետևողական ձևերից մեկն է*: Նոր չարագործությունների ճանապարհը փակելու ժողովրդական զանգվածների անսասան կամքի դրսևորման արդյունք է ՀԽՍՀ Գերագույն խորհրդի 1988 թվականի նոյեմբերի 22-ի ընդունած օրենքը, որի առաջին կետում ասված է. «Օսմանյան կայսրությունում 1915 թվականի հայերի ցեղասպանությունը դատապարտելով որպես ծանրագույն

հանցագործություն մարդկության դեմ, ապրիլի 24-ը հայտարարել հայերի ցեղասպանության զոհերի Հիշատակի օր»:

Երկրորդ ոչ պակաս կարևոր հանգամանքը հայերի ցեղասպանության և, ընդհանրապես, քրիստոնյա և այլ հպատակեցված ժողովուրդների բնաջնջման փաստի ժխտումն է պաշտոնական Թուրքիայի կողմից: Այդ կարգի առաջին փորձը կատարվել է դեռ արյունոտ 1916 թվականին, երբ հայկական բոլոր կազմակերպությունները և հասարակական հանձնաժողովներն ու խմբերը հուսահատական փորձեր են ձեռնարկել հայ բնակչությանը փրկելու ոչնչացումից, իսկ փախստականներին սովից ու համաճարակից: Այն ժամանակ հրատարակվել է լուսանկարներ պարունակող մի գրքույկ, որը լրիվ կեղծել է ցեղասպանության պատկերը ամբողջ կայսրությունում: Գրքույկը կոչվել է «Հայկական կոմիտեների ապստամբական շարժումն ու նպատակները սահմանադրության հայտարարումից առաջ և հետո»: Կայսրությունում կատարվող բոլոր գազանությունները համապատասխան լուսանկարված փաստաթղթերով վերագրվել են հայերին: Այդ իրադարձությունների կեղծումը շարունակվում է նաև այսօր:

Սակայն հիմա դա էլ չի բավարարում Թուրքիայի պետական վերնախավին: «Հուրրիյեթ» թերթը (13.08.1982) գրել է, որ 1980 թվականի սեպտեմբերի 12-ից, այսինքն զինվորական-ֆաշիստական հեղաշրջումից հետո միայն «ինտենսիվ աշխատանքներ են տարվում հայկական դոսիեի ուսումնասիրման ուղղությամբ: Երբեմն այդ աշխատանքներին մասնակից են դառնում նաև պետության ղեկավարը և ազգային անվտանգության խորհրդի անդամները»: Այնուհետև, թերթը ցավ է հայտնում, որ թուրքերն, իբր, «ուշ են սկսել ուսումնասիրել» հայկական հարցը: Փոքր-ինչ ավելի ուշ, արտաքին գործերի նախկին նարարար Իլթեր Թյուրքմենը հայ լրագրողների հետ հանդիպման ժամանակ հայտարարել է, որ թուրքերն ի վիճակի են ապացուցել կոտորածների ու ցեղասպանության փաստերի բացակայությունը, ինչպես նաև հայերի մեղադրանքների ու պահանջների անհիմն լինելը: Միաժամանակ նա պնդել է, որ անցյալի համար «ներկայիս թուրքական կառավարությունը չի կարող պատասխանատվություն կրել»[1] : Այդ ամենից բացի, Թուրքիայի արտաքին քաղաքականության ինստիտուտը, որպես պաշտոնական փաստաթուղթ, հրատարակել է մի գրքույկ «9 հարց և 9 պատասխան»: Այստեղ խեղաթյուրելով մեր ժողովրդի ողջ պատմությունը, արմատապես ժխտվում է Արևմտյան Հայաստանի տարածքի նկատմամբ հայերի ունեցած ամեն մի պատմական ու բարոյական իրավունք, իսկ հալածանքների ու ցեղասպանության փաստերը հայտարարված են մտացածին: Բայց հրապարակայնորեն, ժողովուրդների և պետությունների առջև այդ ամենը ապացուցել անհնար է, ուստի Թուրքիայի ներկայացուցիչները, գրեթե միշտ, հրաժարվել են մասնակցել միջազգային կազմակերպությունների կողմից անցկացվող հրապարակային քննարկումներին: Այդպես եղավ 1984 թվականի ապրիլին. Փարիզում, Թուրքիայի ներկայացուցչի բացակայությամբ քննարկվեցին վերոհիշյալ 9 դրույթները, և սակայն Օսմանյան Թուրքիան մեղադրվեց հայերի ցեղասպանության մեջ: Այդ նույն բանը կրկնվեց Եվրախորհրդարանի նիստում, 1987 թվականին:

1 «Սևան» հանդես, 1.10.1982

Շատ հաճախ նրանց չի հաջողվում լրիվ ժխտել ցեղասպանության առկայությունը: Այս դեպքում առաջ է քաշվում պատերազմող թուրքական բանակի թիկունքում, Ռուսաստանի օգտին հայերի կողմից նախապատրաստվող ապստամբության փաստարկը: Նման պայմաններում թուրքերը հարկադրված են լինում «ցույց տալ» ավելի շատ կորուստներ, քան հալածանքների ենթարկված հայ բնակչությունը: Մամուլում երևան են գալիս քիչ թե շատ գիտակ մարդկանց զարմանքն առաջացնող տեղեկություններ այն մասին, որ թուրքերը կորցրել են մինչև երկու միլիոն, այն դեպքում, երբ հայերի կորուստները կազմել են իբր 600 հազար մարդ: Եվ դա կարո՞ղ էր պատահել 300 հազարից ավելի հայ տղամարդկանց բանակ զորակոչելուց հետո, դաժան պատժիչ միջոցներով ամբողջ քրիստոնյա բնակչության լրիվ զինաթափումից և մուսուլմաններին մինչև ատամները զինելուց հետո: Այդուհանդերձ, ծայրահեղ ծանր պայմաններում անգամ, ուժերի անչափ մեծ անհավասարության դեպքում էլ, երկրի շատ շրջաններում տեղի են ունեցել հայերի ապստամբություններ և տևական պաշտպանական մարտեր: Պատմության մեջ են մտել Վանի, Մուշի, Սասունի, Շապին-Գարահիսարի, Ուրֆայի, Մուսա լեռան և այլ հերոսամարտեր:

Հաջորդ լուրջ բացասական երևույթը եղել և մնում է առաջին համաշխարհային պատերազմի տարիներին թուրքական կառավարության հանցավոր գործողություններին եվրոպական տերությունների չմիջամտելու դիրքորոշումը և իրենց նախկին ու ներկայիս դաշնակցին չվիրավորելու ձգտումը: Անկասկած, նրանք ելնելով իրենց շահերից, հետապնդել ու հետապնդում են տարբեր նպատակներ: Սուլթանական Թուրքիայի դաշնակից գերմանացիները, որոնք հաճախ հանդես են եկել որպես նրա խորհրդատուներ, լավատեղյակ են եղել երիտթուրքական կառավարության ծրագրերին ու գործողություններին: Քողարկման նպատակով նրանք օգտագործել են բոլոր հնարավորությունները հայերի դեմ գործադրված բռնարարքները «դատապարտելու» համար: «Գերմանիան և Օսմանյան կայսրությունը 1914-1918 թթ.» մենագրության մեջ պրոֆ. Ուլրիխ Տրումպենները Գերմանիայի դիրքորոշման մասին գրել է. «Իսկ ինչ վերաբերում է գերմանացի ղեկավարների նախազգուշացումներին ու բողոքներին, դրանք ավելի շուտ նպատակ էին հետապնդում ավելորդ սնունդ չտալ դաշնակիցների քարոզչությանը, ինչպես նաև համենայնդեպս իրենց պատասխանատվությունից զերծ պահել ապագայում»[2] :

Անտանտի երկրները Հայաստանը հայտարարել էին իբրև իրենց դաշնակից և որպես թե հանդես էին գալիս նրա շահերի պաշտպանությամբ: Բայց Ռուսաստանի կառավարության միջամտությամբ ու նրա առաջարկությամբ միայն նրանք հրապարակել էին պաշտոնական հայտարարություն, որով հայկական կոտորածների պատասխանատվությունը դրվել էր թուրքական կառավարության վրա:

Սկզբնական շրջանում ԱՄՆ-ը իրեն պահում էր որպես չեզոք տերություն: Այդ պատճառով հզոր տերություններից ոչ մեկը գործնական քայլեր չի ձեռնարկել մի ամբողջ ժողովրդի բնաջնջումը դադարեցնելու համար,

2 *Р. Г. Саакян.* "Ульрих Трумпенер. Германия и Османская империя в 1914-1918 гг.". Принстон, США, 1968. Գրախոսություն. Լրաբեր հասարակական գիտությունների, 1969,N 12, էջ 93

որպեսզի դրանով իսկ իրեն զերծ պահեր գործակցի խարանից: Ցարական Ռուսաստանի նպատակն էր ամրապնդել իր դիրքերը Մերձավոր Արևելքի տարածաշրջանում: Բայց պետք է նշել, որ այդ նպատակը շատ հաճախ համընկնում էր հայ ժողովրդի դարավոր ակնկալություններին ռուսական զենքի օգնությամբ ազատագրվել թուրքական անտանելի լծից:

Այս հարցում հայկական տեսակետի հետ միանգամայն նույնական է բուլղար ժողովրդի տեսակետը: Բուլղարական պատմագրությունը 1877-1878 թթ. արևելյան պատերազմը գնահատել է որպես բալկանյան ժողովուրդների ազատագրական պատերազմ: Այդպիսին է նրա նշանակությունը նաև հայ ժողովրդի համար: 300 տարուց ավելի նա սպասել էր ռուսական զենքի օգնությամբ ազատագրության ժամին: Սպասումի զգացումը նրան չի լքել նույնիսկ առաջին համաշխարհային պատերազմի տարիներին: Դրա վկայությունն է հայդուկ կամավորների յոթ ջոկատների կազմավորումը, որոնք ռուսական բանակի շարքերում մարտնչել են Կովկասյան ռազմաճակատում: Հայերի անդավաճան ռուսական կողմնորոշումը, Ռուսաստանի մերձավոր-արևելյան քաղաքականությանը ցույց տված հնարավոր աջակցությունը, սակայն, չեն հանգեցրել այն բանին, որ ցարական կառավարությունը ցանկալի օգնություն ցուցաբերեր հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարին: Բացահայտ հալածանքների ու ջարդերի ժամանակաշրջաններում անգամ նա չի փորձել, օգտագործելով հնարավոր միջոցները, ինչ-որ կերպ թեթևացնել հայերի դեմ կիրառվող դաժան բռնարարքները: Թեև բռնությունների դեմ բողոքի ձայն են բարձրացրել ոչ միայն առաջադեմ գործիչները, այլ նաև կառավարական մամուլը: Սակայն, դա միայն հասարակական կարծիքի արտացոլումն էր, Ռուսաստանի ժողովուրդների բողոքի արձագանքները: Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակի հետևանքով վերանում է կովկասյան ճակատը, և ռուսական զորքերը հեռանում են, ինչը, հատկապես երիտթուրքական, իսկ այնուհետև նաև քեմալական բանակների գործողությունները սկսվելուց հետո, խիստ ծանրացնում է հայ ժողովրդի դրությունը: Անդրկովկասի տարածքում շարունակվում են զանգվածային կոտորածները, բռնության, կողոպուտների, հրկիզումների, տասնյակ հազարավոր մարդկանց տեղահանության և այլ փաստերը:

ՌՍԴԽՀ ժողովրդական կոմիսարների խորհրդի 1917 թվականի դեկտեմբերի 29-ի դեկրետը «Թուրքահայաստանի մասին» հայ ժողովրդի շահերը պաշտպանելու առաջին փորձերից էր: Բայց օտարերկրյա ռազմական ներխուժումների և քաղաքացիական պատերազմի պայմաններում անհնար է եղել իրականացնել դեկրետի պահանջները հայերի ինքնավարության և անկախության իրավունքի մասին: Ցավոք, տարիներ շարունակ «հայկական հարցը» և հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում և Կովկասում հինականում գտնվել է խորհրդային և ռուսական պատմագրության տեսադաշտից դուրս: Իսկ պատմաբանների հետազոտությունները, հայ գրողների ու հրապարակախոսների ստեղծագործությունները առաջացրել են միանգամայն ոչ համազոր դիմադարձություն: Այդ բանը խիստ նկատելի էր 1966 թվականին «Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում» ժողովածուի ռուսերեն առաջին հրատարակության լույս ընծայումից հետո: Խորհրդային Միության արտգործնախարարության պաշտոնյաներից մեկը ժողովածուի լույս ընծայումը գնահատել է որպես խորհրդա-թուրքական

հարաբերությունների կարգավորմանը խանգարող քայլ: Մտավորականությունն ու գիտնականները, առանձնապես երիտասարդ սերունդը, որպես կանոն, զարմացել են, որ տեղի է ունեցել ցեղասպանություն, իսկ իրենք այդ մասին ոչինչ չեն իմացել: Որոշ մեծավաստակ գիտնականներ անգամ շատ աղոտ պատկերացում են ունեցել թուրք ֆաշիստների չարագործությունների մասին: Վերը շարադրված պատճառների կապակցությամբ մենք ստիպված ու պարտավոր ենք նորից ու նորից անդրադառնալ պատմության զարհուրելի էջերին: Նպատակը մեկն է՝ կանխել մարդկության դեմ ուղղված ոճրագործությունների կրկնությունը: Ցեղասպանությունը պետք է դատապարտեն ոչ միայն տարբեր երկրների գիտնականներն ու հասարակական կարծիքը, այլև պետությունների, կառավարությունների ղեկավարները, քանի որ իրենց իսկ կողմից հիշյալ չարագործությունների կրկնության սպառնալիքը կխոչընդոտի կամ կդժվարացնի համաշխարհային հանրության առջև ծառացած անչափ դժվարին խնդիրների լուծումը:

Ցեղասպանության դատապարտումը դարձել է բոլոր պետությունների ու կառավարությունների, համայն առաջադեմ մարդկության քաղաքական պարտքն ու բարոյական պարտականությունը:

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԷՋԵՐԻՑ

> Ժողովրդին չի կարող բաժին ընկնել ավելի մեծ աղետ, քան չարագործության գնով ձեռք բերված բարգավաճումը:
>
> Ու. ՉԵՆԻՆԳ

Որո՞նք են ցեղասպանության առաջացման պատճառներն ու այն նախապատրաստած պատմական գործոնները:

Քաղաքական առումով՝ ամբողջ ցեղերի ու ժողովուրդների, նրանց բազմացման ու զարգացման պայմանների, նրանց մշակույթի ոչնչացումը յուրահատուկ է «թաթար - մոնղոլների, թուրքական սուլթանների, չինական կայսրերի և այլոց նվաճողական քաղաքականությանը»[1]: Այն ժամանակներում զանգվածային կոտորածներն ունեցել են տարերային բնույթ և հետապնդել են շատ նեղ նպատակներ: Մարդիկ, սակայն, չեն հաշտվել նման հանցագործությունների հետ: Բոլոր ժողովուրդների լավագույն ներկայացուցիչները հանդես են եկել նման բարբարոսական գործողությունների դեմ: Այսպես, Ֆրանսուա Ռաբլեն դեռևս 16-րդ դարում իր «Գարգանտյուա և Պանտագրյուել» վեպում գրել է. «Այն, ինչ մի ժամանակ սարակինոսների ու բարբարոսների մոտ կոչվում էր սխրանք, մեր օրերում

1 *И. Н. Арцибасов*. За пределами законности. М., 1981; с. 246

անվանվում է չարագործություն և ավազակություն»[2]: Անցյալ դարի 20-ական թվականների վերջին Պրոսպեր Մերիմեն իր «Կառլոս 9-րդի գահակալության ժամանակագրությունը» պատմական վեպում ավելի որոշակի է գրել. «Բարդուղիմեոսյան գիշերը նույնիսկ իր ժամանակի համար մեծ հանցագործություն էր. բայց, կրկնում եմ, զանգվածային կոտորածը XVI դարում ամենևին էլ նույնպիսի հանցագործություն չէ, ինչպես կոտորածը XIX դարում»[3]: Անցյալ դարում, իրոք, տեղի են ունեցել ամբողջ ժողովուրդների ու ցեղերի զանգվածային կոտորածներ, գաղութներում և կիսագաղութներում, Հարավային և Հյուսիսային Ամերիկաների տարածքներում, մի շարք այլ բազմազգ պետություններում: Սակայն կոտորածների հայրենիք պետք է համարել Օսմանյան կայսրությունը: Ամերիկացի միսիոներ Ֆ. Դ. Գրինի ընդհանրացված տվյալներով, նշված ժամանակաշրջանում և մինչև 1894 - 1896 թթ. Սասունի կոտորածը, տեղի է ունեցել ոչ մուսուլման ժողովուրդների առնվազն ութ զանգվածային ջարդ ու կոտորած, յուրաքանչյուր անգամ տասնյակ հազարավոր մարդկային զոհերով: Նա նշում է մի շարք ընդհարումներ հույների հետ, որոնց թվում հատկապես արյունահեղ է եղել ջարդը Քիոս կղզում 1862 թվականին, նեստորականների և հայերի կոտորածը արևելյան վիլայեթներում, ասորիների կոտորածը Լիբանանում և Դամասկոսում 1860 թվականին, հույների կոտորածը Կրետե կղզում 1866 - 1867 թթ., բուլղարացիների ջարդը Բալկաններում 1876 թվականին, եզդիների կոտորածը Մոսուլի մոտ 1892 թվականին և այլն[4]: Հեղինակի հետևությունն այսպիսին է. «Թուրքիայի ողջ ոչ մուսուլման բնակչությունը հայտարարված է *օրենքից դուրս*. Երկրի միլիոնավոր հին բնիկ բնակիչներ՝ հույներ, հայեր, նեստորականներ, հակոբյաններ, հրեաներ ու սիրիացիներ համարվել են օտարերկրացիներ: Իրենց իրավական դրությամբ նրանք ռազմագերիներ են՝ համապատասխան իրավունքներով ու պարտականություններով[5]:

Սակայն շարադրված անագորույն չարագործությունները նսեմանում են մեր դարաշրջանում տեղի ունեցածի համեմատ, քանի որ մարդկության պատմության մեջ առաջին անգամ են տեղի ունեցել ամբողջ ժողովուրդների ու ազգերի նախօրոք ծրագրված ոչնչացում:

Խնդրի էությունը շոշափելուց առաջ փորձենք պատասխանել այն հարցին, թե ինչու՞ հենց Օսմանյան Թուրքիան դարձավ ցեղասպանության, ֆաշիստական ճնշման ու հաշվեհարդարի բոլոր հիմնական ձևերի կիրառման հայրենիքը: Տնտեսական, պատմական, քաղաքական ինչպիսի՞ նախադրյալներ ստեղծեցին պայմաններ, որոնք նպաստեցին թուրքական վերնախավերի բարբարոսական, մարդակեր քաղաքականության ձևավորմանը:

Խոսելով հասարակական զարգացման օրենքների մասին, Ֆ. Էնգելսը գրել է. «Մենք մեր պատմությունը ինքներս ենք կերտում, բայց, նախ, մենք այդ բանն անում ենք շատ որոշակի նախադրյալների ու պայմանների առկայության դեպքում: Դրանց մեջ տնտեսականները վերջին հաշվով վճռականն են: Բայց

2 *Ф. Рабле*. Гаргант а и Пантагр ел . М., 1956, кн. I

3 *П. Мериме*. Избранн е сочинени в двух томах, т. I, М., 1956, с. 401

4 "Положение арм н в Турции до вме ател ства держав в 1895 г." Сб., изд. 2-е, М., 1896, с. 285

5 Նույն տեղում, էջ 281

քաղաքական և այլ պայմանները ևս, մարդկանց գլխում ապրող ավանդույթներն անգամ, խաղում են որոշ, թեպետև ոչ վճռական դեր»[6]: Օսմանյան պետության ամբողջ պատմության մեջ բուն թուրք և մի քանի այլ մուսուլման ժողովուրդների զարգացման վճռական կամ որոշիչ տնտեսական գործոններ են եղել սնանապահությունը, ավելի ճիշտ վաչկատուն տնտեսությունը, իսկ ավելի ուշ նաև հողագործությունը: Դրան զուգահեռ, գրեթե մշտապես, տղամարդիկ զբաղվել են զինվորությամբ, ավարառությամբ. այս վերջինը մինչև XVII դարի վերջը եղել է հկամուտների նշանակալի աղբյուր: Իսկ արդյունաբերական արտադրությունը, արհեստներն ու առևտուրը, գրեթե մինչև կայսրության խորտակումը, կենտրոնացված են եղել գլխավորապես հույների, սլավոնների, հայերի, հրեաների և լևանտացիների ձեռքում: Ղեկավարելով տնտեսության տարածուն ձևերը, տիրապետող և մյուս մուսուլման ժողովուրդները, բնականաբար, զարգանում էին դանդաղ, դրանով իսկ կասեցնելով արտադրական և սոցիալական հարաբերությունների զարգացումը ամբողջ կայսրությունում: Դա առանձնապես զգալի է թուրքերի կողմից հպատակեցված, բայց ավելի զարգացած ժողովուրդների համար, որոնք ստիպված են եղել ենթարկվել բռնությանն ու կամայականությանը. դրանք էլ մշտապես քաոս են ստեղծել տնտեսության մեջ և խանգարել երկրի առաջընթացին: Այդ կարգերի բազմադարյա տիրապետությունը, քաղաքական, ռազմական ուժի թելադրանքի, իսլամի պահպանողական ազդեցության հետ միասին լուրջ խոչընդոտ էին դարձել հսկայածավալ բազմազգ պետության առաջընթացի ճանապարհին: Հիմնական, մնայուն տնտեսական այն գործոնը, որը բացատրում է հիշյալ պատկերի կայունությունը, Կ. Մարքսը համարում է հողի պետական սեփականությունը և հողային ռենտայի մշտական ձևը: «Եթե հողային ռենտայի բնածնը,- գրում է նա,- խարսխվում է արտադրական հարաբերությունների վրա, որոնք վերարտադրվում են բնական հարաբերությունների անփոփոխությամբ, ապա հակադարձ ներգործության միջոցով վճարումների այդպիսի ձևը պահպանում է հին արտադրական ձևերը: Այն կազմում է Թուրքական կայսրության ինքնապահպանման խորհրդավոր միջոցներից մեկը»[7]: Նման դրությունը շարունակվել է ավելի քան վեց դար: Եվ ամբողջ նշված ժամանակամիջոցում պատմական գործոնները տեղական բնակչության համար եղել են ոչ պակաս բարդ ու ծանր, քան տնտեսականը: XI դարից մինչև XV դարի վերջը անընդհատ հարձակումների էին ենթարկվում Փոքր Ասիայի և Անդրկովկասի տարածքները, Հարավ-արևելյան Եվրոպան: Սկզբում նվաճողները սելջուկներն էին, այնուհետև մոնղոլները, իսկ ապա թուրք-օսմանները: Այդ նվաճողական գործողությունները շատ սրընթաց էին, արյունահեղ ու ավերիչ: Այսպես, 20 տարվա ընթացքում սելջուկները կատարել են ութ հարձակում, զավթել գրեթե ողջ Հայաստանը, ջախջախիչ պարտության մատնել Բյուզանդիային և ստեղծել իրենց առաջին, բայց շատ կարճատև, պետական կազմավորումները: Որպես օրինակ, նշենք մոտ տասը այդպիսի միավորումների կազմավորումն ու խորտակումը մինչև XIII դարի երեսնական թվականները, այսինքն՝ 150 տարում: Հետագայում, մոնղոլների հարյուրամյա

6 *К. Маркс и Ф. Энгельс*. Соч., т. 37, с. 395. (Նշումները՝ ըստ 2-րդ հրատարակության)

7 *К. Маркс и Ф. Энгельс*. Соч., т. 23, с. 152

տիրապետության ընթացքում կարելի է նշել անողոք, ավերիչ հարձակումների անթիվ, անհամար փաստեր առասպելական նյութական արժեքների, նշանակալի մշակութային հուշարձանների ոչնչացմամբ կամ յուրացմամբ: 1281 թվականից նվաճումների ու հպատակեցումների արշավը շարունակել են օսմանյան սուլթանները: Բայց տեղափոխությունների և նվաճումների ներթափոխումների այդ քաոսում ինչ-որ կերպ կողմնորոշվելու և կոնկրետ պատմական հատվածներում ժողովրդական զանգվածների դրության իրական պատկերը ներկայացնելու համար բերենք առանձին, բնորոշ օրինակներ ու փաստեր: Բազմաբնույթ ու բազմատեսակ այդպիսի օրինակներ կան սկզբնաղբյուրներում և գրականության, ինչպես նաև հպատակեցված ժողովուրդների բանահյուսության մեջ: Հիշյալ դեպքերի ականատես Արիստակես Լաստիվերցին /XI դար/ գրել է. «Իսկ այն ժամանակվա չարագործությունները, որ նրանք մեր աշխարհին հասցրին՝ ո՞վ կարող է գրի առնել կամ ու՞մ միտքը ի վիճակի է այդ հաշվի անցկացնել. որովհետև բոլոր այս երկրները լիքն էին դիակներով, թե շեն և թե անշեն վայրերը, ճանապարհները և անապատ տեղերը, քարանձավները և առապարները, խիտ անտառները և ժայռոտ տեղերը: Եվ բոլոր մարդաբնակ տեղերում նրանք հրդեհեցին և ոչնչացրին տներն ու եկեղեցիները. այս հրդեհի բոցն ավելի էր, քան Բաբելոնի հնոցինը: Եվ այսպիսի ձեռնարկությամբ նրանք կործանեցին մեր երկիրը ոչ թե մեկ անգամ, այլ երեք անգամ՝ մեկ-մեկու հետևից վերադառնալով, մինչև որ մեր երկրում ամեն տեղ հատան բնակիչները, և դադարեց անասունների բառաչոցը»[8]:

Սելջուկների հարձակման զարհուրելի պատկերը նկարագրել է արաբ տարեգիր Սադր-ադ-Դին ալ Հուսայնին, երբ նույն դարի կեսերին ընկնում է մայրաքաղաք Անին. երկարատև անսովոր պաշարումից հոգնած Ալփասլանի զորքերը ներխուժել են քաղաք և սկսել ծիերի սմբակների տակ տրորել մարդկանց: «Եվ կոտորեցին անթիվ քանակությամբ բնակչություն, այնքան շատ, որ մահմեդականներից շատերը չկարողացան ներս խուժել քաղաք սպանվածների բազմության պատճառով: Եվ նրանք գերի վերցրին գրեթե նույնքան, որքան սպանել էին»[9]:

Ժամանակից ու տարածությունից անկախ, նկարագրված պատկերները շարունակվում են զանազան տարբերակներով: XV դարի սերբական «Ենիչերիի նոթեր» վավերագրում, Օստրովիցայից ենիչերի Կոնստանտին Միխայլովիչը, գովաբանելով թուրքական բանակի, հատկապես նրա հեծելազորի բարձր մարտունակությունը, գրել է. «Թուրքերը ամեն ինչ զավթում են, ամեն ինչ թալանում, կոտորում ու ոչնչացնում այնպես, որ դրանից հետո երկար տարիներ աքլորի ձայն անգամ չի լսվի այնտեղ»[10]:

Ռուսական առաջադեմ հասարակական միտքը, չնայած երկրի ներսում եղած քաղաքական լարվածությանը, արտահայտվել է շատ որոշակի, կարեկցելով կայսրության քրիստոնյա ժողովուրդների ծանր կացությանը: XVII դարի վերջին Անդրեյ Լիզլովի գրած «Սկյութական պատմություն» երկը պատմագիտական առաջին աշխատություններից մեկն է, որտեղ որոշակիորեն

8 *Հ. Մանանդյան*, Երկեր, Գ. եր., 1977, էջ 51

9 «Հայ ժողովրդի պատմություն», Եր., 1976, հ. III, էջ 451

10 «Записки ничара», М., 1978, с. 106

անդրադարձել է հայ ժողովրդի ճակատագրին: Հայ պատմագիտական գրականության մեջ այդ աղբյուրը առաջին անգամ վկայակոչել է պատմական գիտությունների դոկտոր Ռ. Խաչատրյանը: Իր աշխատության մեջ նա բերում է Լիզլովի հրապարակած հետևյալ սլավոնական երգը.

Լաց ու կոծի մեջ են ժողովուրդները քրիստոնյա,
Գերության մեջ են անազատ եղբայրները մեր,
Իբր մեղքերի համար են նրանք կամոքն աստծո ստրկացել
Թուրքին, և ծանր կարիքի բեռան տակ կքած,
Լաց են լինում եգիպտացիները, հույներն ու հայերը,
Ու նրանց հետ էլ հունգարները, խորվաթներն ու
մուլտյանները[11]:

Թուրք պատմագրությունը, աղավաղելով փաստերը, մոռացության տալով դարերի ընթացքում կատարված բարբարոսությունները, ժողովուրդների թափած արյունը, միլիոնավոր մարդկանց տանջանքները, ամեն կերպ փառաբանում ու գովերգում է թուրք հրոսակախմբերի հաղթական արշավանքը դեպի Արևմուտք: Մինչև այժմ էլ այդպես է դաստիարակվում թուրք երիտասարդության այսպես կոչված մարտական ոգին:

Կ. Մարքսը, գնահատելով զինված ուժերի ազդեցության հասարակական նշանակությունը, գրել է, որ «թուրքական բանակը հին մուսուլմանական բարբարոսության պատվարն է»[12]: Հենց իբրև այդպիսին են նրան հիշում և դեռ երկար կհիշեն թուրք զավթիչների կողմից նվաճված ժողովուրդները, որոնք հինգ դար շարունակ գտնվել են օսմանյան պետության ծանրագույն լծի տակ: Այստեղ տեղին է հիշատակել քրիստոնյա հպատակների հանդեպ առանձնապես դաժան մի դրսևորման մասին: Դա այսպես կոչված «մանկահավաքությունն» է՝ «դեվշիրմեն», որի ժամանակ հավաքման ենթակա են եղել 8-20 տարեկան տղաները: Նրանց պահել և դաստիարակել են հատուկ պայմաններում, ստիպել ընդունել մահմեդականություն և դարձրել սուլթանի մի տեսակ անձնական ստրուկները: Մանկահավաքությունը Բալկաններում սկսվել է XIV դարում, իսկ Հայաստանում՝ 1464 թվականից: Այդ տղաներից կազմավորվել են այսպես կոչված «նոր զորքերը»՝ ենիչերիները, թուրքական զորքերի ամենաահեղ միավորումները, որոնք գործել են մինչև XIX դարի սկիզբը[13]:

Այդ ամբողջ պատմական արյունոտ իրադրությունը մարդկանց հոգեբանորեն դարձրել էր պատրաստ ոչնչացնելու իրենց նմաններին: Ըստ երևույթին, հենց այդ ժամանակաշրջանում էլ ծագել է ժողովրդական ասացվածքը. «Մարդու գլուխը սոխի գլուխ է»:

Պատերազմը թուրք զավթիչների համար որպես հարստություն դիզելու գլխավոր, երբեմն միակ աղբյուր XVII դարի վերջերից իր տեղը զիջել է օրինական և կամայական հարկերի գանձման համակարգին: Պետությունը, որպես հողի մենաշնորհ տեր, ղեկավարել է հողօգտագործման ողջ

11 *Р. Г. Хачатрян*. Русская историческая мысль и Армения. Ер., 1987, с. 258

12 *К. Маркс и Ф. Энгельс*. Соч., т. 10, с. 28

13 *Մ.Կ. Զուլալյան*. «Դեվշիրմեն» /մանկահավաքը/ Օսմանյան կայսրության մեջ ըստ թուրքական և հայկական աղբյուրների: «Պատմաբանասիրական հանդես», 1959, N 2-3, էջ 247-256

համակարգը, անողոքաբար կողոպտելով ու սնանկացնելով գյուղացիներին, հատկապես ոչ մուսուլմաններին, այսինքն ռայաներին: Հռոմի պատմության մի հեղինակավոր մասնագետի կարծիքով, թուրքական կայսրությունում հայերին «նույնիսկ թույլ չեն տվել օգտվելու ստրկական վիճակի հանգստությունից»[14]: Փաստորեն քաղաքական և իրավաբանական իրավունքներից զրկված օսմանյան կայսրության հպատակները նրա գոյության մայրամուտին անգամ գտնվել են աննկարագրելի ծանր դրության մեջ: Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին լույս տեսած մի երկում ասված է. «Թուրքիայի սոցիալական հարաբերությունները ամենավատթարն են: Գյուղացիները ամբողջովին հանձնված են պաշտոնյաների, հատկապես հարկահավաքների, կապալառուների կամայականությանը. նրանց ագահությունը աննկարագրելի է»[15]:

Ֆրանսիացի նշանավոր բժիշկ ու փիլիսոփա Ֆրանսուա Բերնիեն, որը 1650-60-ական թվականներին 12 տարի ապրել ու աշխատել է Արևելքի երկրներում, հիմնականում Հնդկաստանում, ինչպես նաև Իրանում և Օսմանյան կայսրությունում, որպես արմատացած երևույթ նշել է վարչական պաշտոնների վաճառքը: Բայց նա առանձնացնում է Թուրքիան, որտեղ այդ երևույթը թափանցել է հասարակության բոլոր ծալքերը[16]: Այդ շղթայի ամենասարսափելի օղակը եղել է հարկերի կապալառուների պաշտոնի ամենամյա վաճառքը: Հարկերի չափերը կախված են եղել հարկահավաքների տրամադրությունից: Հաճախ նրանք միևնույն հարկը գանձել են երկու և երեք անգամ, իսկ երբեմն էլ իշխանությունները կամայականորեն հայտարարել են, որ այս կամ այն գյուղը պետք է վճարի բազմամյա հարկեր: Սնհնար է թվարկել կամայական գործողությունների ու հանցագործությունների բոլոր տեսակներն ու ձևերը: Հարկային ճնշման ընդհանուր բնութագրությունն ավարտենք ռուս գիտնական ու ճանապարհորդ Պ. Ա. Չիխաչովի դիտողությամբ, որը անցյալ դարի 60-ական թվականների սկզբին գրել է. «... Եվրոպայի բոլոր երկրներից հենց միայն Օսմանյան կայսրությունն է իր բնակչությանը /հատկապես ոչ մուսուլման/ ենթարկում ամենամեծ նյութական զոհողությունների, քանի որ օրինականացված հարկը մի չնչին մասն է այն կամայական տուրքերի, որ տեղական իշխանությունները պարբերաբար դնում են բնակիչների վրա»[17]: Պատկերի լիակատարության համար նշենք, որ Թուրքիայի տնտեսական խնդիրների գրեթե բոլոր իրատես հետազոտողները հարկերի բոլոր կամայական փոփոխությունների հետ միասին նշել են դրանց գումարային աճը յուրաքանչյուր տասնամյակում: Դրա հետևանքով, Ռ. Բեկգուլյանցի /Սևերյանին/ դիտարկումներով, որը 1914 թվականի ամռանը եղել է Թուրքիայում, «...երիտթուրքերի կողմից գանձվող հարկերը քառապատկվել են, և դրանից հայերը հեծում են ոչ պակաս, քան հին վարչակարգի

14 "Положение арм н...", с. 5

15 *Д. Н. Вергун*. Росси и Турци . Взаимн е отно ени . Войн . Н не нее положение Турции. СПб, 1911, с. 42

16 *Франсуа Бернье*. Истори последних политических переворотов в государстве Великого Могола. М.-Л., 1936, с.с. 205, 206

17 *П. А. Чихачев*. Великие держав и восточн й вопрос. М., 1970. с. 194

ժամանակ»[18]: Չէր փոխվել նաև նրանց կախյալ դրությունը տեղական իշխանություններից և գլխավորապես աղգությամբ քուրդ ավատատերերից, որոնք իրենց գյուղերն ու նրանց բնակիչներին ուրիշ կեղեքիչներից «պաշտպանելու» համար մշակած են եղել բնական ու դրամական հարկերի և տուրքերի գանձման դրենց հատուկ համակարգը: Իսկ բազմաչարչար աշխատավոր գյուղացիների ոաշվարկները նրանց հանգեցրել է այն հետևությանը, որ իրենք պետք է աշխատեն այնքան, որ եղածը բավականացնի օրինական ու ապօրինի հարկերը վճարելու և ընտանիքի կիսաքաղց գոյության համար: Արտադրությունն ընդլայնելու մասին, որպես կանոն, աշխատավորների ճնշող մեծամասնությունը չի էլ մտածել: Անգլիացի ճանապարհորդ, «Հայաստան» երկհատոր հիմնարար աշխատության հեղինակ Հ. Լինչի այն հարցին, թե ինչու՞ են այդքան խեղճ ապրում, չեն օգտագործում տների շրջապատի հարուստ հողերը, Վանա լճի ափին ընկած մի գյուղի գեղջուկները պատասխանել են. «Անօգուտ է աշխատել, քանի դեռ գյուղացուն թույլ չեն տալիս օգտվելու իր աշխատանքի պտուղներից»[19]: Մեկ անգամ ևս հիշեցնենք,որ նման հակաժողովրդական, հակապետական տնտեսական քաղաքականությունը իր սուր ծայրով ուղղված էր քրիստոնյա բնակչության դեմ, իսկ անցյալ դարի երկրորդ կեսից հիմնականում հայերի դեմ:

Քրիստոնյա բնակչության վրա գործադրված նման հետևողական ու անողոք տնտեսական ճնշման իմաստը հասկանալու համար հարկավոր է գնահատել բազմազգ պետության հասարակական կյանքի վրա ազդող բարոյաքաղաքական գործոնները:

Պետք է, նախ և առաջ, նշել, որ այդ գործոններն իրենց ձևավորումից հետո և հետագա զարգացման ընթացքում ձեռք են բերել հարաբերական ինքնուրույնություն: Դա որոշ չափով բացատրվում է նրանով, որ պետական իշխանությունը, գաղափարախոսությունը, մշակույթը, կրոնը և այլն բավական վճռորոշ դեր են կատարել:

Հենվելով նվաճողի, հպատակեցնողի, զավթիչի իրավունքի վրա, թուրքի իշխանությունը հենց սկզբից էլ հիմնվել է կոպիտ զինվորական ու վարչական ուժի վրա, եղել է անողոք և ամբողջ հասարակական կյանքը ենթարկել է Ղուրանի և շարիաթի պահանջներին: Ֆ. Էնգելսը արդարացիորեն նկատել է, որ եթե թուրքերը «քաղաքացիական և զինվորական պաշտոնների մենաշնորհը չունենային, նրանք շուտով բոլորովին կանհետանային»[20]: Նրանց ստեղծած բռնատիրությունը նախանձախնդրորեն հետևել է կայսրության ամբողջականությունը պահպանելուն և դաժանորեն ճնշել է ոչ միայն ընդդիմադիր գործողությունները, այլև ազատ մտքի ամեն մի դրսևորում:

Երիտթուրքերի հանցագործ ղեկավարներից մեկը՝ Շեհաբետդինը հպարտությամբ հայտարարել է՝ ոչ թուրքերին և ընդհանրապես ոչ մուսուլմաններին «թուրքերը չէին ցանկանում, որ մտնեն բանակ և վարչակազմ» և թուրքերը, որ «նվաճել են երկիրը, իրենք էլ պետք է պաշտպանեն ու կառավարեն այն»[21]: Եվ այդ բանը նրանց հաջողվել է դարեր

18 *Р. Бекгулянц* /Северянин/. По Турецкой Армении. Ростов на Дону, 1914, с. 47

19 *Х. Ф. Б. Линч*. Армения, т. II, Тифлис, 1910, с. 184

20 *К. Маркс и Ф. Энгельс*. Соч., т. 9, с. 25

21 *Maurice Pernot*. La question turque. Paris, 1923, p. 125

շարունակ, կայսրության մյուս ժողովուրդների համար ահավոր գրկանքների գնով:

Այդ գինը պարզելու և որոշելու համար մենք սոցիալական հոգեբանության օգնությամբ առաջին անգամ փորձում ենք ավելի լրիվ գիտական տվյալներ ներկայացնել օսմանյան կայսրությունում ցեղասպանության ամբողջ պատմության, դրա նախապատրաստման ու իրականացման քաղաքականության մասին որպես մարդկության դեմ կատարված հանցագործություն: Գ.Վ. Պլեխանովը սովորեցնում էր, որ որևէ ժողովրդի կամ երկրի պատմությունը հասկանալու համար բավական չէ միայն գիտենալ նրա տնտեսությունը: «Պետք է տնտեսությունից,- գրել է նա,- կարողանալ անցնել հասարակական հոգեբանությանը, առանց որի ուշադիր ուսումնասիրման ու ըմբռնման անհնար է պատմության մատերիալիստական բացատրությունը...»[22]:

Ինչպես հայտնի է, սոցիալական հոգեբանությունն ուսումնասիրում է մարդկանց գիտակցված և ծրագրված գործողությունները, նրանց փոխհարաբերությունները և վարքը տարբեր հանգամանքներում: Այդ գիտությունը պնդում է, որ «վարքի (անհատական և խմբային) պատճառները պայմանավորված են ամենից առաջ արտադրության եղանակով, սոցիալական հարաբերությունների բնույթով, հասարակական գիտակցության զարգացման մակարդակով»[23]: Այլ կերպ ասած, սոցիալական այն միջավայրի ձևավորումը, որտեղ գործում են մարդիկ, ցեղերը, ժողովուրդները, որոշվում է հասարակական-տնտեսական ֆորմացիայով, ուստի և այդ միջավայրն ունի պատմական բնույթ, նշանակում է նաև, որ փոփոխվում է արտադրության եղանակի փոփոխությունների համեմատ: Ասված է, որ հասարակության մեջ ապրել և հասարակությունից ազատ լինել չի կարելի, նկատի ունենալով այն, որ հասարակության հետ փոփոխվում է նաև մարդը[24]: Սակայն այդ համընդհանուր օրինաչափությունը յուրաքանչյուր երկրում տարբեր ձևով է դրսևորվում: Օսմանյան կայսրության համար ընդհանուր առմամբ բնորոշ է եղել տնտեսության ու դրա հետ կապված հասարակական կյանքի շատ դանդաղ, գրեթե աննկատելի զարգացում: Դրա հետ մեկտեղ, XVIII դարի վերջերին և XIX դարի սկզբներին ավատատիրական հարաբերությունները, աստիճանաբար, նախ երկրի տարբեր շրջաններում սկսել են հետին պլան մղվել բուրժուական հարաբերությունների կողմից: Բոլոր հետազոտողներն էլ նշում են, որ տնտեսական առաջադիմությունը, գրեթե մինչև կայսրության գոյության վերջը, տեղի է ունեցել առանց տիրապետող ժողովրդի, առանց թուրքերի: Սակայն դա չի թուլացնում նրան՝ որպես պետության հզորության հիմքի: Ռազմաֆեոդալական վերնախավը առանց առանձին ջանքերի հասել է քաղաքական և իրավաբանական դիրքերի հետագա ամրապնդման, պահպանելով պետության կազմավորման ժամանակներից գոյություն ունեցած անհավասարությունը կայսրության հպատակների միջև: Եվ չնայած Թուրքիայի «եվրոպականացման» ամբողջ հասարակական շարժմանը, նույնիսկ երբեք չի էլ քննարկվել կայսրության բոլոր քաղաքացիների իրավահավասարության

22 *Г. В. Плеханов*. Избр. философ. произв. в 5 томах, т. 2, М., 1956, с. 247

23 "Основ социал ной психологии", М., 1982, с. 32

24 *Վ. Ի. Լենին*, ԵԼԺ, հ. 12, էջ 125

4886

հարցը: Եղել են առանձին հայտարարություններ և այդքանը միայն: 1876 թվականի սահմանադրության մեջ նրանք բոլորն էլ հայտարարվել են «օսմանցիներ» իրավունքներով, «հավասարվել» և ինչպես հայտարարել է սուլթան Աբդուլ Համիդը, այդ փոփոխությունները «համապատասխանում են շերիի դրույթներին»[25]:

Իսկ իրականում անհավասարությունը, որպես շարիաթի և բազմադարյա ավանդույթի կողմից սրբագործված կենսական սկզբունք, կարևորագույն դեր է խաղացել «օսմանյան հասարակության մեջ»:

Հանրահայտ է, որ հպատակները բաժանվել են երկու կարգի *ումմա* և *զիմմի*: Հետագայում այդ հասկացությունները ստացել են դավաբանական պատկանելության նշանակություն: Հստակորեն ումմա են համարվել միայն իսլամ դավանողները՝ բոլոր իրավունքներով ու արտոնություններով: Զիմմիներ են անվանել նրանց, ովքեր վճարել են որոշակի հարկատեսակներ, որոնցից ազատված են եղել մուսուլմանները, իսկ այնուհետև ընդհանրապես բոլոր ոչ մուսուլմաններին: Վերջինները «ռազմատուգանք էին մուծում զորքը պահելու համար, պարտավոր էին կրել հատուկ զգեստ և ունենալ տարբերանշաններ, նրանց արգելված էր ձի հեծնել և զենք ունենալ (IX դարում մտցված սահմանափակում), կառուցել կրոնական պաշտամունքի նոր շենքեր և ցուցադրաբար կատարել ժամերգություն, նրանց վկայի ցուցմունքները չէին ընդունվում մուսուլմանական դատարանում»[26]:

Համաշխարհային կրոնների ուսումնասիրող Լ. Մարտիրոսյանը միևնույն պետության քաղաքացիների այդ երկու «տեսակների» դրությունը ճշտել է հետևյալ գծերով. «Զիմմիները *դար-իլ իսլամի* երկրին մեջ չէին կրնար շինել նոր եկեղեցիներ, սինակոկներ, վանքեր, բայց կրնային նորոգել հիները: Անոնց հագուստը միուսլիմանի հագուստեն տարբեր ըլլալու էր: Անոնք իրենց ֆէսին բոլորտիքը ճերմակ կամ կանաչ եազմա չէին կրնար փաթթել, այլ սև: Անոնք մետաքսեայ գոտի չէին կրնար կապել, ձի չէին կրնար գործածել, զենք չէին կրնար կրել... Եթե նա ճանապարհ էր գնում ավանակին հեծած, մուսուլմանի հանդիպելիս պարտավոր էր իջնել ցած», գյավուրների եկեղեցական զանգերը չպետք է բարձր հնչեին, նրանք չպետք է հրապարակորեն թաղեին իրենց հանգուցյալներին, և բազմաթիվ այլ անհեթեթ սահմանափակումներ ու ճնշումներ[27]: Այս բոլոր երևույթները մուսուլմանական երկրներում համարվել են բնական և օրինական: Ամբողջ Արևելքում հայտնի պետական գործիչներից ու դիվանագետներից մեկը, մուսուլմանություն ընդունած հայազգի Մալքում Խանը ասել է, որ ամեն կարգի փոփոխությունները կարող են ունենալ «միայն մեկ օրինական աղբյուր՝ իսլամը»: Իսլամը որոշել է իր հետևորդների կենսական շահերը, ուղղություն է տվել նրանց հոգևոր աշխարհի զարգացմանը, ծառայել որպես նրանց գաղափարախոսության հիմք: Վերջինս, իր հերթին, «ամենախոր կերպով ներգործել է հասարակական հոգեբանության վրա»: Բ. Պորշնևը նշել է հարցի մեկ ուրիշ կողմ ևս. «Հենց անմիջականորեն կենսական պահանջմունքներից ու

25 «Փորձ» հանդես, 1877, N 3, էջ 57-58

26 *Ա. Մասսէ*. Ислам. М., 1961, с. 63

27 *Լ. Մարտիրոսյան*. Դասակարգային կռիվներու գիծը ազգերի պատմության մեջ: Գիրք Ա, Բեյրութ, 1963, էջ 95

շահերից բխող տրամադրությունների և գործողությունների անպատասխանատվությունը, բնազդականությունն ու անգիտությունն էլ կազմում են հասարակական հոգեբանության բնորոշ գիծը»[28]: Այդ բնորոշ գծերը որոշ չափով պայմանավորվում են ավատատիրության ժամանակ տնտեսական հարաբերությունների կայունությամբ, պետության և բոլոր կարգերի կառավարող վերնախավերի նկատմամբ ժողովրդական զանգվածների պարտքի և պարտականությունների գրեթե անփոփոխությամբ, ինչը և ավանդույթների ձև է հաղորդել այդ փոխհարաբերություններին: Այդ բանը հստակ կարելի է դիտել Օսմանյան Թուրքիայի ամբողջ պատմության մեջ: Որպեսզի պատկերը լինի կատարյալ, վկայակոչենք Վ. Կարպովի հետաքրքիր ընդհանրացումը. «Ատելությունը միավորում, համախմբում է մարդկանց, թեկուզ դա լինի ամենակոպիտ բնազդական հիմքերի վրա»[29]:

Թուրքիայի տիրապետող շրջանները գիտակցաբար և բավական հմտորեն օգտագործել են երկրի հասարակական կյանքի այդ երևույթները: Վերը նշվածներից բացի եղել են նաև ուրիշ, պատմականորեն ստեղծված գործոններ, որոնք ծառայել են թուրքական վերնախավի ազգայնամոլ, ավելի ճիշտ՝ մեծապետական նպատակներին: Այդպիսի գործոն եղել և մնում է ազգային-էթնիկական միասնությունը, որը դրսևորվում է *էթնոցենտրիզմի*, ինչպես նաև ազգային բնավորության մեջ: Այս երկու երևույթներն էլ հատուկ են ամեն մի ժողովրդի և կազմավորման գործընթացում նրանց վրա ազդում են պատմական պայմանները, էթնո-մշակութային ավանդույթները, տիրապետող դասակարգի գաղափարախոսությունը, կրոնը և այլն: Էթնոցենտրիզմը արտահայտվում է ուրիշ ժողովուրդների արժեքների հետ սեփական ժողովրդի արժեքների մշտական համեմատության ու համադրության մեջ, անպայման բարձրացնելով յուրայիններին և ժխտելով օտարների նշանակությունը: Ճիշտ է նշվում մի հետազոտության մեջ, որ «իր»՝ ազգայինի նկատմամբ ավելի բարձր ուշադրությունը ծնում է ազգային սահմանափակության, սոցիալ-հոգեբանական մակարդակով էթնոցենտրիզմի վերածնման վտանգ, խթանում է ազգային եսասիրությանն ու ազգային պարծենկոտությանը, այսինքն՝ իր մեջ պարունակում է ազգայինը ազգայնամոլության վերածվելու իրական վտանգ, անկախ այն բանից՝ ցանկանում է արդյոք դրա կրողը թե չի ցանկանում»[30]: Ցավոք, հետազոտության հեղինակների ամբողջ ասածը վերաբերում է սակավաքանակ ժողովուրդներին, որի հետ ոչ մի կերպ չի կարելի համաձայնել: Այն ժողովուրդը, որի մասին խոսվում է տվյալ դեպքում, մեծաքանակ է և բազմանում է արագ, սակայն դարերը չեն փոխել նրա մեծամտությունն ամեն ինչում: Թուրք պատմաբանները 1970-ական թվականներին լույս են ընծայել մի ժողովածու «Օսմանյան պետությունը և նրա տեղը համաշխարհային պատմության մեջ» ընդհանուր խորագրով, որի մեջ զետեղված հոդվածներում ամեն կերպ գովաբանվում է տվյալ պետությունը, նրա կարգերը, նրա դերը համաշխարհային գործերում: Քեմալ Կարպատը, մասնավորապես, գովաբանում է օսմանյան տերության հաստատունությունը, որն իր վեցդարյա

28 ***Б.Ф. Поршнев***. Социальная психология и история. М., 1966, с. 18

29 ***Вяч. Карпов***. Евангелие от догматика. "Огонек" N 31, 1988, с. 15

30 "Социально-психологические проблемы перестройки социалистического общества в документах КПСС", М., 1988, с. 65

գոյությամբ իբր պարտական է իր հատուկ ներքին կառավարմանը և որը հիմնված է բարձր զարգացած տեղական արտադրության ու կրոնահամայնքային միասնության վրա: Այնուհետև նա գտնում է, որ թուրքական պետությունը եղել է ոչ միայն ներքին տնտեսական կյանքի (որը նա շարունակ ապակայունացրել է իր սվազակային քաղաքականությամբ - Հ. Ի.) կազմակերպիչը, այլև XVI դարից վճռական դեր է կատարել «եվրոպական առևտրի զարգացման գործում», հատկապես այն 38 երկրներում, որոնք ամբողջովին կամ մասամբ գտնվել են կայսրության գերիշխանության տակ. Եվ ապա նրա չթուլացող ուշադրությունը, ինչպես նաև աջակցությունը լրջորեն նպաստել են առևտրի զարգացմանը Արևմուտքում և անգամ առանձին պետությունների ամրապնդմանը: Իսկ Հալիլ Ինալջըքը փորձում է ընթերցողին համոզել, որ իբր օսմանները աջակցել են եվրոպայի ազգային պետությունների առաջընթացին նրանով, որ եղել են «նրանց քաղաքական հավասարակշռության կարևորագույն գործոն»: Այնուհետև, նա գտնում է, որ Մոսկվայի պետությունը իր հզորությանը հասել է Ղրիմի խանության հետ մերձեցման շնորհիվ, թուրքերի օգնությամբ, դրանով էլ Ռուսաստանը կարողացել է դիմակայել Լեհաստանին և Ոսկե հորդային[31]: Նման օրինակները շատ շատ են, և ամենից հաճախ ընթերցողին պատում է այն զգացումը, որ բոլոր այդ կեղծարարությունները պատմության ու նրա աղբյուրների նկատմամբ հեղինակների անլուրջ վերաբերմունքի արտահայտություն են: Հավանաբար, ճշմարտությանն ավելի մոտ է երկրորդ հետևությունը՝ «պան» գաղափարներով հիվանդանալը շատ բնորոշ է թուրքական կառավարող շրջաններին /ու նրանց հետևորդներին/: Այդ բանից չի կարողացել խուսափել նույնիսկ գեներալ ու քաղաքագետ Մուստաֆա Քեմալ փաշան: 1922 թվականի նոյեմբերի 1-ին Ազգային ժողովի նիստում նա ասել է. «Ամբողջ աշխարհում երկրագնդի ժողովուրդների թվում գոյություն ունի թյուրքական մեծ ազգը, որը կազմում է առնվազն ավելի քան հարյուր միլիոն մարդ: Այդ ազգը պատմության մեջ գրավում է մի այնպիսի տեղ, որը համամասնական է երկրագնդի վրա նրա գրաված տարածքայն սահմաններին... Այն մարդը, որը կոչվել է թյուրք, թյուրք ազգի առաջին ներկայացուցիչն է, Հաբեթի որդին, Նոյ մարգարեի՝ մարդկության երկրորդ հոր որդին»[32]: Այդ ոգով է աշխատում հանրապետության նախագահի հիմնած թուրքական պատմագիտական ընկերությունը, որը ավելի քան վեց տասնամյակ առաջ իր հիմնական աշխատության մեջ, «Թարիհ»-ում («Պատմություն», հ.IV, էջ 1) սևով սպիտակի վրա գրել է. «Մարդկության պատմության մեջ դեռ երբեք գոյություն չի ունեցել թուրքերի նման ժողովուրդ, որը հիմնել է բազմաթիվ մեծ պետություններ: Հենց թուրքերն են իշխանապետությունների, թագավորությունների ու կայսրությունների մեծ մասի հիմնադիրները Ասիայում և Եվրոպայում»: Որպես արժեքավոր ժառանգություն, շովինիզմի ու պանիսլամիզմի գաղափարախոսությունը փոխանցվում է սերդե սերունդ: Այսպես, առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին, այդ գաղափարախոսության տեսաբաններից ու ոգեշնչողներից մեկը՝ Զելալ Նուրին, իր «Իսլամի

31 "Научно-информационный бюллетень. III серия. Арменоведение за рубежом, N 2/29/. Из трудов турецких авторов", Ер., 1978

32 ***Мустафа Кемаль***. Путь новой Турции, т. IV, М., 1934, с. 271

ությունը» խորագիրը կրող մեծածավալ աշխատության մեջ, խոսելով ուսուլմանական միասնության մեծ ուժի մասին, հատկապես նշել է, որ այդ միասնության մեջ կարևորագույն մասը կազմում են թյուրքերը, իսկ առաջին տեղը նրանց մեջ՝ օսմանցի թուրքերը: «Երիտթուրքերը և պանթյուրքիզմը» հոդվածում անվանի արևելագետներից մեկը՝ Ա. Ս. Տվերիտինովան գրել է. «Բացահայտորեն ակնարկելով օսմանյան թյուրքերի «հատուկ ընդունակությունների» մասին, Ջելալ Նուրին անվիճելի է համարում, որ մյուս բոլոր թյուրքալեզու ժողովուրդները պետք է կուրորեն ենթարկվեն օսմանյան թյուրքերի կամքին, այսինքն՝ իրենց դնեն թուրքական իշխող դասակարգերի իշխանության տակ և գործիք դառնան նրանց զավթողական նկրտումները իրականացնելու համար: Դրա հետևանքով, եթե արաբերենը մնում է որպես կրոնի լեզու, ապա թուրքերենը պետք է դառնա բոլոր մուսուլմանների պաշտոնական քաղաքացիական լեզուն»[33]:

Երբ 1969 թվականին «Գիտելիք» ընկերության անդամների մի խումբ այցելեց Թուրքիա, Այվալըք քաղաքում հատուկ ցուցանակների վրա մենք կարդացինք բազմաթիվ կարգախոսներ՝ «Կեցցե բանակը, իսլամը կհարթի մեր ուղին», «Նախ ազատագրենք գերի թուրքերին, ապա մտածենք Վիետնամի մասին», «Ես սոցիալիստ չեմ, ես թուրք եմ»: Իսկ որոշ ժամանակ հետո Իզմիրի զբոսայգու հրապարակում, ուր տեղի են ունենում միջազգային տոնավաճառներ, մենք տեսանք պղնձե մի տախտակ հետևյալ խոսքերով. «Ամեն մի թուրք մի ամբողջ աշխարհ արժե»:

Վերը բերված փաստերն իրավունք են տալիս ասելու, որ էթնոցենտրիզմը լուրջ հիվանդություն է, որով պատմական որոշակի պայմաններում վարակվում են ցեղեր, ժողովուրդներ և անգամ ամբողջ ազգեր: Այդ ցավով հիվանդանում են արատավոր հասարակության քաղաքացիները կամ անդամները՝ բանվորներն ու գիտնականները, գրողներն ու դերասանները, իրենց մտավորականության կողմից ապակողմնորոշված ցանկացած քաղքենի: Եվ մենք չզարմացանք, երբ թերթերում կարդացինք, որ ահաբեկիչ Ալի Յաղջան, որը փորձ է արել սպանել Հռոմի Հովհաննես Պողոս II պապին, հայտարարել է. «Ես հպարտ եմ, որ թուրք եմ...»:

Թուրքերի ամբարտավանությունն ու գոռոզությունը հանդես են գալիս իբրև նրանց ազգային բնավորության ամենավառ գծեր: Դրա մասնակի բացատրությունը կա արդեն շարադրված փաստերում: Բարոյաքաղաքական հսկայական նշանակություն են ունեցել թուրքերի հաղթական արշավը դեպի Արևմուտք, նոր հողերի նվաճումն ու նորանոր ժողովուրդների ու ցեղերի հնազանդեցումը: Դարեր շարունակ նվաճող ժողովուրդը գերիշխել է և վայելել հատուկ արտոնություններ: Նման կայուն դրությունը, սերնդե սերունդ հաղորդվելով, նպաստել է համապատասխան մտայնության, իսկ ավելի ուշ՝ սոցիալական հոգեբանության և ազգային բնավորության ձևավորմանը: Կայսրության քաղաքացիների միջև գոյություն ունեցած անհավասարությունը հենց դրանով է որոշել արտոնյալ դասերի վերաբերմունքը «երկրորդ տեսակի» հպատակների նկատմամբ և առաջինների մեջ ամրապնդել գերազանցության, բարձրագույն ռասայի կամ հասարակության ընտրյալ ներկայացուցիչներին պատկանելու զգացում: «Այդպես, աստիճանաբար սոցիալական և բնական

33 "Краткие сооб ени института востоковедени ", XXII, 1956, с. 69.

միջավայրը, այս կամ այն ժողովրդի պատմական բախտի առանձնահատկությունները, արտացոլվելով նրա գիտակցության մեջ, սևեռվելով նրա մեջ, հաղորդվելով սերնդից սերունդ, ձևավորում են ապագա ազգի հոգեկան նկարագիրը, նրա ազգային բնավորությունը»[34]: Այն արտահայտվում է ազգային մշակույթի, ժողովրդական ծեսերի ու սովորությունների մեջ: Այն դրսևորվում է մարդկանց արարքների ու գործերի մեջ, անհատի և կոլեկտիվի, իսկ գուցեև ամբողջ ժողովրդի գիտակցված և չգիտակցված, դրական ու բացասական, օգտակար ու անօգտակար գործողությունների մեջ: Վերը նշված ու ընդհանրացված գծերից բացի, գրականության մեջ բավական շատ էջեր են նվիրված թուրքական վերնախավի ունակությանը՝ հասարակության մեջ երևալ քաղաքավարի, հաճոյակատար ու դուրեկան: Զինվորական գործակալ, գեներալ Հոլմսենը 1911 թվականի հունվարին իր զեկուցագրերից մեկում նշում է թուրքերի բնավորության երկու գծերը՝ ծածկամտություն և ոխակալություն: Թուրքը ընդունակ է տարիներով թաքցնել իր զգացմունքները՝ մինչև գա հարմար առիթը, որպեսզի վրեժխնդիր լինի իրեն հասցրած վիրավորանքի համար[35]: Անկասկած, թուրքերի ու նրանց երկրի մեծ գիտակը նկատի է ունեցել այն շրջանները, որտեղ ապրել ու աշխատել է նա: Պետք է ասել նաև, որ վերը նշված գծերը, փոխհարաբերություններում տիրապետող դաժանությունը պայմանավորել են այսպես կոչված «կամավոր ստրկության» կամ հնազանդության հոգեբանության երևան գալը: Այդ հանգամանքը զգալի չափով ազդել է վերջիններիս ազգային բնավորության ձևավորման վրա:

Օսմանյան կայսրությունում քաղաքացիների անհավասարությունը օրինականացրած գլխավոր գործոններից մեկը *իսլամի*, կամ, որ միևնույնն է, դրա դոգմաներն ու օրինադրությունները պարունակող Ղուրանի և շարիաթի անսասան ազդեցությունն է: Իսլամը որպես կրոն հասարակական գիտակցության ձև է, գաղափարախոսություն, որը ձևավորվել է որոշակի դարաշրջանում, իսկ Ղուրանը «արաբա-մուսուլմանական և համաշխարհային մշակույթի կարևորագույն հուշարձան է», ինչպես ասված է Ղուրանի վերջին (1986, ռուսերեն) հրատարակության առաջաբանում: Միաժամանակ, Ղուրանը եղել ու մնում է հիմնադրույթ, որը խախտման ենթակա չէ: Այնտեղ հստակ ձևակերպված են վարքի կանոնները (երբեմն նաև ոչ մուսուլմանների) կյանքի ու գործունեության տարբեր պայմաններում: Հետևաբար, Ղուրանի և շարիաթի հետ կապված խնդիրների քննարկման ու գնահատման ժամանակ անհրաժեշտ է շատ կշռադատված մոտեցում, և ոչ թե հախուռն, կույր փառաբանություն կամ միանշանակ վատաբանում:

Իսլամի լուրջ ուսումնասիրությունը շարունակվում է աշխարհի շատ երկրներում: Այդ ուղղությամբ նշանակալի քայլեր են արել հատկապես արաբ գիտնականները, որոնց ուշադրության կենտրոնում է գտնվում իսլամական ժառանգության խնդիրը: Նրանցից մեկը՝ եգիպտացի գիտնական Մ. Ա. ալ Ալիմը, դուալիզմը համարելով մուսուլմանական կրոնի բնորոշ գիծը, գրել է. «Եթե կա միասնական իսլամ, որը նյութականացվել է ղուրանական տեքստերում և ավանդույթի մեջ, ապա ոչ մի միասնական իսլամ չկա

34 "Основы социальной психологии", М., 1982, с. 142

35 ԿՊՌՊԱ, ֆ. 450, գ. 7716, թ. 139

պատմական և սոցիալական պրակտիկայի տարբեր դրսևորումներում, որոնք իրենց օրինականությունը հիմնում են Ղուրանի և ավանդույթների սեփական մեկնաբանման վրա»[36]. Մեզ թվում է, որ Ղուրանի հենց երկրորդ մեկնաբանման մեջ է պարունակվում հիմնական չարիքը Օսմանյան կայսրության ոչ մուսուլման հպատակների համար: Դ. Երեմեևը միանգամայն արդարացիորեն նշել է. «Նոր կրոնը՝ իսլամը ... ամենից շատ էր համապատասխանում քոչվոր ավագանիի շահերին, ալլահի համար հաճո գործ հռչակելով պատերազմը «անհավատների» դեմ, սպանությունները, կողոպուտները, ուրիշների հողերի զավթումը...»[37]: Պատահական չէ, որ հերոսական գրականության կարգն են դասվում այն ստեղծագործությունները, որոնցում նկարագրված են թուրքական հորդաների ռազմական սխրագործությունները և ուրիշ ժողովուրդների հպատակեցման արյունահեղ պատմությունները: Այսպես, «Իմ պապ Քորքուդի գիրքը» օղուզական հերոսական էպոսը մեզ փոխադրում է օղուզ-թուրքմենների շրջանում իսլամի տիրապետության առաջին դարը, երբ նրանք, նվաճելով Հայաստանը, կռվել են հույների ու վրացիների դեմ: Միջնադարի այս միակ թյուրքալեզու գրավոր էպոսում անպարկեշտության աստիճան հայհոյանքների է ենթարկվում «գյավուրը» և այն ամենը, ինչ կապված է նրա հետ: Ակադեմիկոս Վ. Վ. Բարթոլդի էպոսի թարգմանչի կարծիքով, դրանում «պարզորոշ երևան է գալիս պատերազմի պաշտամունքը»[38]:

Թուրքիան բառիս բուն իմաստով աստվածպետական տերություն է դարձել 1517 թվականին Եգիպտոսը զավթելուց և սուլթանի կողմից խալիֆի կոչումը յուրացնելուց հետո: Դրանից հետո սուլթան խալիֆը դարձել է ոչ միայն հսկայածավալ պետության ղեկավար, այլև բոլոր մուսուլմանների խալիֆ: Բնականաբար, կառավարման կարգերը, ձևերը, երբեմն սոսկ դիմելու ձևերը, արտաքին փայլը, արևելյան պերճությունը և այլն փոխառել են ոչ միայն հպատակները, այլև ուրիշ երկրներ: Համապատասխանաբար, իսլամի գնահատականները բխում էին Օսմանյան կայսրության վրա նրա ունեցած ներգործությունից:Մի թուրք աստվածաբանի կարծիքով «Իր ամբողջ պատմության ընթացքում /հատկապես 1517 թվականից հետո/ իսլամը աչքի ընկնող տեղ է գրավել երկրի հասարակական կյանքի բոլոր բնագավառներում, իսկ մուսուլման հոգևորականությունը անմիջականորեն մասնակցել է պետության կառավարմանը»[39]: Սրան պետք է ավելացնել Հ. Ինալջքի չափազանց հետաքրքիր հետևությունը. նա իր «Օսմանյան կայսրությունը. դասական շրջան. 1300-1600» աշխատության մեջ գրում է, որ «XVI դարում օսմանյան կառավարողները նոր իմաստ հաղորդեցին խալիֆայության հաստատությանը, այն կապելով անհավատների դեմ սրբազան պատերազմի գաղափարի հետ»[40]: Դրանով իսկ իսլամը պաշտոնապես հավակնում է միջամտելու ոչ միայն ներպետական, այլև միջազգային գործերին: Իսլամը եղել է և մնում է հավատացյալ մուսուլմանների գլխավոր շարժիչ, վերահսկող ուժը

36 "Арабские марксист о социал ной роли ислама", М., 1983, с. 9

37 *Դ. Ե. Երեմեև.* Թուրքերի ծագումը. Եր., 1975, էջ 102

38 "Книга моего деда Коркута", М.-Л., 1962, с. 186

39 ***Бакир Юсуф.*** Вли ние ислама на социал но-политическу жизн Турции. Автореферат канд. диссертации. МГУ, 1973, с. 3

40 "Об ествени е науки за рубежом", сери 9, Востоковедение. 1975, N 3, с. 165

թե ներքին և թե արտաքին գործերում: Իրենց էությամբ կրոնական դոգմաներն ու իսլամի դրույթները մարդկանցից վեր են կանգնած և կախված չեն նրանց կամքից: Լրջորեն ասած սուլթանն անգամ իրավունք չուներ վերացնել կամ փոփոխել շարիաթի որևէ դրույթ, որը, արևելագետ Ա. Լիբայերի բնորոշմամբ, Օսմանյան կայսրության յուրատեսակ «սահմանադրությունն» է[41]: Թուրքիայի և թուրքական կարգերի մի այլ գիտակ, Ֆ. Գրինը, նրա պետական վարչակարգը համարում է «քաղաքական-կրոնական: Իսլամը կազմում է պետական մարմնի միսն ու արյունը: Բանակը մահմեդական է, ազգային տոնակատարությունները՝ մահմեդական, պաշտոնական օրացույցը՝ մահմեդական, օրենքները հիմնված են Ղուրանի վրա, դատավորները մահմեդական կրոնի ներկայացուցիչներն են, վկայությունը դատարանում կրոնական գործողություն է»[42]:

Ընթերցողի ուշադրությունը հրավիրենք Օսմանյան կայսրության հոգևոր և քաղաքական ղեկավարների գործունեության վրա, քանի որ հենց նրանց մասին են ամենից շատ լռում երկրի ամբողջ բնակչության վրա իսլամի ունեցած ազդեցությունը բնորոշելիս: Իրենցից՝ թուրքերից բացի, դեռ կան ուրիշներն էլ, որոնք հսկայական ջանքեր են գործադրում ժխտելու մարդկության դեմ կատարված ոճրագործությունների մեջ այդ ղեկավարների մեղքերը:

Կան նաև այնպիսիք, որոնք շրջանցում են պատմության ու կյանքի առաջադրած սուր խնդիրները՝ նույն այդ մեղավորներին պաշտպանելու նպատակով: Այսօր էլ որպես վեճերի առարկա է մնում հիմնական դոգմաներից մեկը՝ ժողովուրդների միջև եղած անհավասարության խնդիրը: Այսպես, Ղուրանը ուսուցանում է. «Ալլահը տվել է ոմանց առավելություն մյուսների նկատմամբ: Բայց նրանք, ում առավելություն է տրված, թող իրենց բաժինը չտան նրանց, ում տիրել է իրենց աջը»[43]: Այդ հիմնադրույթը դարեր շարունակ անշեղորեն կենսագործվել է Թուրքիայում, ասենք նաև մյուս մուսուլմանական պետություններում:

Շատ է գրվել մուսուլմանների և այլ կրոններ դավանողների փոխհարաբերությունների խնդրի շուրջ: Անցյալ դարի վաթսունական թվականներին Պետերբուրգի համալսարանի արևելյան լեզուների բաժնում արաբական գրականության մագիստրոսի աստիճանի համար Վ. Գիրգասը պաշտպանել է ավարտական թեզ: Իր հրատարակած գրքում նա անհավասարության հիմքը համարում է տարբերությունը «հաղթողների ու հաղթվածների, կառավարողների ու կառավարվողների միջև, որը հիմնված է կրոնի վրա և հաստատված է օրենքով, և դա /անհավասարությունը - Հ.Ի./ նվաճման առաջին օրերից եղել է գլխավոր պատճառը, որը խոչընդոտում էր ժողովրդավարությանը մուսուլմանական պետություններում»[44]: Վկայակոչենք շարիաթի մասին մի հատուկ հետազոտություն ևս: Գ. Քերիմովը գրել է. «Չնայած քրիստոնյաների ու հրեաների նկատմամբ շարիաթի հարաբերական

41 Журнал "Народы Азии и Африки", 1978, N 3, с. 58

42 ***Фр. Грин.*** Армянский кризис и владычество турок. Сб. "Положение армян в Турции . . ", с. 295

43 Коран, сура 16, стих 73

44 ***Владимир Гиргас.*** Права христиан на Востоке по мусульманским законам. Санкт-Петербург, 1865, с. 65

կրոնական հանդուրժողականությանը, նրա բոլոր օրենքները ելնում են մուսուլմանների և ոչ մուսուլմանների անհավասարության դրույթից»[45]: Անհրաժեշտ եմ համարում խնդրի քննարկումն ավարտել Կ. Մարքսի ծանրակշիռ մի հետևությամբ. «Ղուրանը և նրա վրա հիմնված մուսուլմանական օրենսդրությունը տարբեր ժողովուրդների աշխարհագրությունն ու ազգագրությունը հանգեցնում են նրանց երկու երկրների և երկու ազգերի ուղղահավատների և անհավատների բաժանելու հասարակ ու հարմար բանաձևի: Անհավատը «հարբին» է, թշնամի: Իսլամը անհավատներին դնում է օրենքից դուրս և անընդհատ թշնամություն ստեղծում մուսուլմանների և անհավատների միջև»[46]: Իսլամի ողջ պատմությունը և նրա ազդեցության արդյունքները հսկայական թուրքական պետությունում բաղկացած են վերը բերված տեսական դրույթները հաստատող փաստերից: Արվում էր ամեն ինչ, որպեսզի բոլոր հանգամանքներում և ամենուրեք ապահովված լիներ բնակչության մի մասի գերազանցությունը մյուսի նկատմամբ: Այդ բանին պետք է հետևեին ոչ միայն հոգևոր անձինք և բոլոր աստիճանների պաշտոնյաները, այլև իսլամ դավանող բոլոր պաշտոնական և ոչ պաշտոնական անձինք: Չէ որ ամեն ինչ՝ հարկերի և տուրքերի գանձումից, յուրաքանչյուրի արտադրական գործունեությունից մինչև շրջապատի հետ ռայաների փոխհարաբերությունների մանրամասները կանոնակարգված էին Ղուրանով և շարիաթով: Հասարակության մտայնությունը, հոգեբանությունը, համապատասխան մթնոլորտը յուրաքանչյուր ուղղահավատ մուսուլմանի մղում էին օգտվելու իրեն վերապահված իրավունքից: Անգլիացի հետազոտող Կ. Մ. Մաքկոլի հետևությունն այս է. «Մուսուլմանը ռայային չի ճանաչում որպես նույն մարդկային ցեղին պատկանող անձ, ինչպիսին ինքն է: Նա ռայայի սեփականությունը, նրա կյանքն ու կանանց համարում է իր օրինական ավարը և քրիստոնյայի կողմից ամեն մի դիմադրություն՝ որպես հանդուգն խռովություն, որը պետք է պատժվի տեղում...»[47]:

Այսպիսով, Օսմանյան կայսրությունում մշակել, ձևավորել ու ստեղծել էին իսլամ չդավանող անձի, մարդկանց խմբերի, ամբողջ ժողովուրդների արժեզրկման մի ընդարձակ, համապարփակ համակարգ: Նրանք պաշտոնապես հայտարարվել էին անլիարժեք մարդիկ կամ ժողովուրդներ, որոնք պարտավոր էին ամեն բանում զիջել մուսուլմաններին:

Բավական է, որ մեկը ընդունի իսլամ, որպեսզի օգտվի ուղղահավատներին տրված բոլոր արտոնություններից ու առանձնաշնորհումներից:

Կայսրությունը պահպանելու համար, ինչպես և ընդառաջելով ժամանակի պահանջներին, հռչակվել են թանզիմաթի բարենորոգումները: Բայց սուլթան Աբդուլ Մեջիդը, 1839 թվականին հայտարարել է. «Մենք լսեցինք, որ մարդիկ, ովքեր չեն հասկացել մեր ցանկությունների իմաստը, երևակայում և ենթադրում են, որ մեր պետության ներքին կարգը և քաղաքական վիճակը պետք է փոփոխվեն: Նման սխալ հավաստիացումները նպաստում են

45 *Г. М. Керимов.* Шариат и его социал на су ност . М., 1978, с. 189

46 *К. Маркс и Ф. Энгельс.* Соч., т. 10, с. 167

47 *К. М. Макколь.* Ответственност Англии перед Арменией. Сборник "Положение арм н в Турции..., с. 145

հասարակական կարծիքը մթագնելուն»[48]: Իր «Թուրքիան և թանզիմաթը» աշխատության մեջ պետության ղեկավարի նման միամիտ-անկեղծ հայտարարություն հրապարակելու համար է. Էնգելգարտին մինչև հիմա էլ չեն ներում թուրք ու թուրքամետ հեղինակները: Չէ՞ որ նա տևական հնարավորություն էր ունեցել անմիջականորեն ուսումնասիրելու թուրքական իրականությունը: Իսկ այդ իրականությունը անցյալ դարի երկրորդ կեսին վատթարացել էր այն աստիճան, որ շատերն այն համարում էին «ավելի վատ, քան ենիչերիների ժամանակներում»[49]: Երկրի կառավարողները ամեն կերպ սրում էին ազգամիջյան հարաբերությունները:

Իրենց պաշտոնական քաղաքականության մեջ նրանք անվարան պահանջել են էլ ավելի սրել իրադրությունը: Թանզիմաթի դարաշրջանի բարենորոգիչներից մեկը՝ մեծ վեզիր Ֆուադ փաշան, իր մահից առաջ թողել է մի կտակ, որով նա դիմել է սուլթանին: Խորհուրդ տալով երկիրը տանել եվրոպականացման ճանապարհով, նա կտրականապես ժխտել է քրիստոնյա ժողովուրդներին ինքնավարություն տալու հնարավորությունը: Նա պահանջել է վարել հույներին մյուս քրիստոնյաներից չեզոքացնելու քաղաքականություն, հույներից և ռուսներից հնարավորին չափ հեռու պահել բուլղարներին, ինչպես նաև սլավոնական մյուս ժողովուրդներին, հայերին, հրեաներին: Ներքին քաղաքականության բնագավառում նա պահանջել է բոլոր ջանքերն ուղղել «միասնական նպատակի՝ մեր ժողովուրդների միաձուլմանը»[50]: «Օսմանականացման» քաղաքականությունը, այնուհանդերձ հաջողություն չունեցավ:

1876 թվականի ապրիլյան ա'պստամբությունը և նրա հաջողությունը Բուլղարիայում, նրա ազատագրումը օսմանականացման ծրագիրը անհնար դարձնելով, զգալիորեն վատթարացրին ոչ մուսուլման ժողովուրդների, հատկապես հայերի դրությունը կայսրության ասիական վիլայեթներում:

48 *Հ.Գ. Ինճիկյան.* Օսմանյան կայսրության անկումը. Եր., 1984, էջ 92

49 "Положение армян в Турции...", с. 89

50 Журнал "Русская мысль", 1896, N 11, с. 191-197

ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԹՈՒՐՔԱԿԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ

Ամեն ինչ նախատեսված էր. զոհերի զինաթափումը, դիմադրություն ցույց տալու ընդունակ երիտասարդության հեռացումը զանգվածային տեղափոխությունը և նրանց տանջանքների ենթարկելը, տղամարդկանց ոչնչացումը տեղահանության ճանապարհին, կանանց ու աղջիկների անջատումը նրանց իսլամի դավանափոխ անելու համար...

ԺԱԿ ԴԸ ՄՈՐԳԱՆ

Ֆուադ փաշայի ելույթից տասը տարի հետո, մեկ այլ մեծ վեզիր Քյամիլ փաշան, 1879 թվականին քիչ ավելի հստակեցրել է մեծապետական քաղաքականության խնդիրները և խիստ դժգոհություն հայտնել բալկանյան ժողովուրդների հաղթանակներից, գտնելով, որ թուրքերը «Եվրոպական Թուրքիայում իրենց կրծքի վրա սնել են օձի», ուստի Ասիական Թուրքիայում «չպետք է կրկնեն նույն հիմարությունը»: Նա հայտարարել է, որ հարկավոր է հայերին անհապաղ այնպես վերջ տալ, որ Հայաստան անունն անգամ այլևս չլսվի: Դրա համար, ասել է նա, մենք ունենք ամեն ինչ, «ամեն գործիք պատրաստ ունինք՝ քրդերը, չերքեզները, կուսակալները, դատավորները, հարկահանները, ոստիկանները, վերջապես՝ ամենայն ինչ. կրոնական պատերազմ մը կհայտարարենք և, դյուրին պատերազմ այնպիսի ազգի մը դեմ, որ ոչ զենք ունի, ոչ զինվոր և ոչ պաշտպան...»[1]:

1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի ավարտից անմիջապես հետո սկսվել են կեսագործվել վարչապետի այդ ցուցումները: Պաշտոնական քարոզչությունը հայերին մեղադրում էր Ռուսաստանի կողմից պատերազմին մասնակցելու մեջ. այդ հանգամանքը ուժեղացնում էր կայսրության մահմեդականների քաղաքական ու հոգեբանական բացասական տրամադրությունները հայերի նկատմամբ: Ուժեղանում էր բացահայտ ու գաղտնի պայքարը ամբողջ պետության մեջ: Լուսավորության բնագավառի ղեկավար գործիչներից մեկը՝ Մուրադ բեյը, հիշում է. «Դեռ 1882 թվականից հրատարակվել էին գաղտնի շրջաբերականներ հայերին հալածելու, հայկական գրական ու քաղաքական հրատարակությունների թիվը կրճատելու, բռնարարքներ կազմակերպելու մասին, միայն զգուշությամբ, որպեսզի

1 «Փորձ» , 1879, N 7-8, էջ 204

գանգատների առիթ չտրվի»[2]: 90-ական թվականների սկզբին «համիդիյե» անկանոն հեծելազորի կազմակերպումը, որի կազմի մեջ հիմնականում մտնում էին աշիրեթային քրդերը, առաջին գործնական քայլն էր՝ իրականացնելու թուրքական կառավարության մտադրությունները: Նրան քաջ հայտնի էր, որ արևելյան վիլայեթներում, ասենք նաև ամբողջ Թուրքիայում, գործում էին բազմաթիվ ավազակախմբեր և պարզապես կողոպտիչների խմբեր, որոնք լրջորեն սպառնում էին առևտրական քարավաններին, խաղաղ բնակիչների տնտեսությանը և որոնց դեմ ոչ մի պայքար չէին մղում կենտրոնական և տեղական իշխանությունները: Մարդկանց այդ վտանգավոր զանգվածը պատրաստ էր մասնակցելու ամեն կարգի ջարդերի ու անկարգությունների: Խիստ հատկանշական է դիվանագիտական շրջաններից հայտնի դարձած հետևյալ կարծիքը. «Իբրև ապացույց այն բանի, որ իրերի նման դրությունը տեղի է ունենում երկրի բացառապես հոռի վարչակազմից, կարող է ծառայել այն հանգամանքը, որ Հայաստանի այն մասը, որ 1878 թվականին անցավ Ռուսաստանին, ապշեցուցիչ հակադրություն է ներկայացնում Թուրքիայի տիրապետության տակ մնացած մասի հետ»[3]: Թուրքիայի կառավարությունը խոսքով համաձայնել էր Բեռլինի վեհաժողովի պահանջներին Արևմտյան Հայաստանում բարեփոխումներ անցկացնելու վերաբերյալ: Այդ խոստումները տարբեր ձևով կրկնվել են մինչև առաջին համաշխարհային պատերազմը: Իսկ իրականում երկրի կառավարողները օգտագործում էին ամեն մի առիթ դրությունը տարածաշրջանում էլ ավելի սրելու համար: Կողոպուտներն ու սպանությունները, զանգվածային ջարդերը դարձել էին սովորական երևույթ: Իրենց համատեղ հայտագրում մեծ տերությունների ներկայացուցիչները նշում էին, որ թուրքական կառավարությունը հրաժարվում է իրականացնել խոստացած բարեփոխությունները, թեպետև ընդունում է դրության լրջությունը հայկական նահանգներում: Դիվանագետները գտնում էին, որ դրության հետագա սաստկացումը «ամենայն հավանականությամբ, կարող է իր հետ բերել ամբողջ քրիստոնյա բնակչության ոչնչացում այդ ընդարձակ շրջաններում...»[4]: 1885 թվականին հայ հայրենասերների կոմիտեն Եվրոպայում դիմել էր Ռուսաստանի արտգործնախարարին մի հուսահատական նամակով, որտեղ Թուրքիայի հայության ծանր վիճակը այսպես է ներկայացված. «Մեր ժողովուրդը ակնհայտորեն կորստյան է դատապարտվում. զոհվում են մարդիկ, ոչնչանում են տնտեսություններ, իրագործվում է բնաջնջման ծրագիր: Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածի ընդունումից ի վեր թուրքական կառավարությունը իր ջանքերը գաղտնի ուղղում է հայ ազգին իր հայրենիքում ոչնչացնելուն»[5]: 90-ական թվականների կեսերին դրությունը էլ ավելի է վատանում, և օտարերկրյա դիտորդները մի անգամ ևս նախազգուշացնում են, որ լուրջ հիմք կա ենթադրելու, որ հայերը կենթարկվեն իսպառ բնաջնջման...: Ըստ երևույթին, թուրքական վերնախավի մտադրությունները ոչ մեկի համար գաղտնիք չեն

2 *Mourad bey*. La force et la faiblesse de la Turquie, Geneve, 1910, p..50

3 *Ролен-Жекмен М.Г.* Армения, армяне и трактаты. Сб. "Положение армян в Турции...", с. 90

4 Նույն տեղում, էջ 97

5 «Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում» ժողվածու. Եր. 1991, էջ 19, այսուհետև՝ ՀՑՕԿ ժող.

եղել, առավել ևս, որ դրանք հաստատվել են 1895-1896 թթ. Սասունի և Կոստանդնուպոլի իրադարձություններով: Սասուն հասած կանոնավոր զորքերը և համիդիյեի զորամասերը ոչնչացնում էին ապստամբության օջախները, փորձում ոչնչացնել տղամարդկանց պարտիզանական զորքերը, այնուհետև բնաջնջում էին մնացած բնակչությանը և ավերում բոլոր բնակավայրերն ու գյուղերը: Թե զինված ուժերն ու մուսուլման բնակչությունը որքան էին քաղաքականապես ու հոգեպես պատրաստված եղել այդ արյունահեղ իրադարձություններին և, որ շատ կարևոր է, կողոպուտներին, ցույց տվեցին այն գործողությունների ծավալները, որոնք հինգ ամսում ընդգրկել էին Արևմտահայաստանի և ողջ կայսրության շատ շրջաններ: Կայսրության ղեկավարության և չինովնիկական դասի քայքայման ակնհայտ ցուցանիշ էին արյունահեղ դեպքերը մայրաքաղաքում՝ 1896 թվականի ամռանը: Դիվանագիտական անձնակազմի, համաշխարհային մամուլի ներկայացուցիչների, բազմաթիվ արտասահմանցիների ու վիթխարի քաղաքի բնակչության աչքի առաջ սկսվում են անզեն հայերի զանգվածային կոտորածներ: Ռուսաստանի զինվորական գործակալ, գնդապետ Ն. Պեշկովը հաղորդում էր, որ ջարդերի հետ կապված խառնակչությունն ու խուճապը արդյունք են այն բանի, որ վստահություն չկա իշխանությունների նկատմամբ: Ոստիկանությունը հրահրում էր ու մասնակցում ջարդերին: «Պարեկները դիտավորյալ չեն լսում կամ աջակցում են մարդասպաններին»[6]: Երեք օր հետո նա հաղորդում է, որ կոտորածները կատարվում են կառավարության կողմից նախօրոք կազմակերպված հրոսակախմբերի կողմից՝ ոստիկանական պաշտոնյաների ղեկավարությամբ: Իսկ ջարդերի ականատես Օ. Կայդանովան գրում էր Կոստանդնուպոլսից. «Այս ամբողջ կոտորածը, թվում է, այսպիսի կրկնապատիկ սարսափելի տպավորություն չէր թողնի խուլ մի վայրում, թուրքական մի ինչ-որ հետամնաց քաղաքում, եթե չլիներ այստեղ՝ մայրաքաղաքում, բոլոր իշխանությունների ներկայությամբ՝ տեղական թե օտարերկրյա: Դա ընդհարում չէր, պատերազմ չէր, ապստամբության ճնշում չէր, այլ պարզապես զազրելի համատարած զանգվածային մի սպանություն, մարդորսություն...»[7]: Անցյալ, լուսավորյալ XIX դարի վերջին զանգվածային կոտորածներն, այդպիսով, իրենց բացահայտ լպիրշությամբ Թուրքիայում ընդունել էին բարբարոսական, նողկալի ձևեր, իսկ պաշտոնական մշտական հրաժարումները արյունալի դեպքերի կապակցությամբ անցել ու անցնում էին բոլոր թույլատրելի սահմանները...

Դարավերջին Օսմանյան կայսրությունում տիրող բռնությունների ու կամայականության զոհերի թիվը անցել էր 300 հազարից: Այդ ոճրագործության համար ոչ ոք պատիժ չի կրել: Իրավացի էր Ժան Ժորեսը, որը 1903 թվականի փետրվարին Փարիզում, հայկական ու մակեդոնական հարցերին նվիրված հանրահավաքում դատապարտել է «Եվրոպայի տևական անտարբերությունը», նրա «լռակյաց ու պասիվ կարեկցությունը», այդ ամենն անվանելով «մեծ հանցագործություն»: «Հայաստանում, - շարունակել է նա, - ջարդերը տեղի էին ունենում ոչ միայն շտապ կարգով ժանդարմի հագուստ հագած կանոնավոր զորքերի կամ ավազակների կողմից, այլև, ինչը որ ավելի վատ է, դրանք

6 ՀՅՕԿ ժող. էջ 157

7 ՀՅՕԿ ժող. էջ 163

բնակչության վայրենի բնազդների հետևանք էին»[8]: Նրա խոսքերը կրկին հաստատվեցին հետագա իրադարձություններով: Համեմատաբար «խաղաղ» ժամանակաշրջանը եղավ շատ անհանգիստ ու փոթորկալից: Կողոպուտները, բռնություններն ու սպանությունները շարունակվում էին քիչ թե շատ փոքր ծավալներով: Բայց հակահայկական քարոզչությունը չէր թուլանում: Համառորեն լուրեր էին տարածվում, որ հայերը իրենց ունեցվածքը վաճառում են զենք ձեռք բերելու համար: Այդ կապակցությամբ, ինչպես թերթերն էին լուսաբանում, շարունակ մայրաքաղաքին էին դիմում իշխանությունները, բանակի ներկայացուցիչները, մասնավոր անձինք՝ պատժամիջոցներ պահանջելով հայերի նկատմամբ: Ի դեպ, տարբեր աստիճանի իշխանություններն իրենք էին ձգտում պահպանել լարվածությունը: Առանց ռազմական դրություն հայտարարելու, երկիրը դրվել էր զորքերի վերահսկողության տակ: Գեներալ Պ. Ավերյանովի տվյալներով, դարասկզբին Թուրքիայի տարածքը բաժանվել էր 491 գումարտակային տարածքների, որոնցից 322-ը գտնվում էին երկրի ասիական մասում[9]: Գրեթե բոլոր քաղաքներում, ավաններում, ոչ մուսուլման բնակչություն ունեցող մեծ ու փոքր գյուղերում կային զորանոցներ, որոնք ապրում էին տեղական բնակչության հաշվին: Երբեմն բնակիչների թիվը միայն աննշան չափով էր գերազանցում ասկյարների թվին: Այսպես, Բայազետի մի գյուղում, որտեղ ապրում էր ընդամենը 27 ծուխ, կանգնած էր 20 հոգուց բաղկացած զորային ստորաբաժանում: Գյուղացիները պարտավոր էին ոչ միայն կերակրել նրանց, այլև ապահովել կացարանով, վառելիքով: Ռուսական փոխհյուպատոսը 1907 թվականի ապրիլին Վանից հաղորդում է դեսպան Զինովևին. «Ապառքների հավաքումը շարունակվում է հարաճուն խստությամբ: Գանձվում են 10 տարվա համար միանգամից, իսկ որոշ գյուղերից՝ նույնիսկ մինչև 1895-1896թթ. իրադարձություններն ընկած ժամանակաշրջանի համար»[10]: Որպեսզի ընթերցողին չծանրաբեռնենք ամենաանհավանական, դաժան փաստերի թվարկմամբ, վկայակոչենք միայն մեջլիսի պատգամավոր, ականավոր հայ գրող, հմուտ իրավաբան, թուրքական խորհրդարանի մի շարք հանձնաժողովների ղեկավար Գրիգոր Զոհրապի 1911 թվականի նոյեմբերի 28-ի հուշագիրը մեծ վեզիր Սայիդ փաշային: Նա կառավարությանը մեղադրում է, որ, չնայած սահմանադրության քառամյա գոյությանը, երկրում գրեթե ոչինչ չի փոխվել: Ավելին, սահմանադրական կառավարության քաղաքական գործունեության մեջ ավելի ու ավելի հաճախ է հանդես գալիս սուլթան Աբդուլ Համիդի ժամանակների վտանգավոր քաղաքականությունը: Առանձնապես վատացել է արևելյան վիլայեթների /այսինքն՝ Արևմտահայաստանի/ հայ բնակչության դրությունը: Հուշագրում նշվում է, որ ունեցվածքի, պատվի և կյանքի ապահովության մասին խոսք անգամ լինել չի կարող, ջարդի սպառնալիքները բնակչությանը պահում են մշտապես սարսափի մթնոլորտում: Օրենքը նրանց չի պաշտպանում, կամայականությունն ու կեղեքումները աճում են օրեցօր: Հայերը սահմանադրության կողմնակիցներ են, ուստի

8 Նույն տեղում, էջ 206-207

9 *П. И. Аверьянов.* Этнографический и военно-политический обзор азиатских владений Оттоманской империи. СПб, 1912, с. 5

10 ՀՅՕԿ ժող. էջ 220

բռնապետության ու միահեծան իշխանության կողմնակիցները ատում են նրանց: Արվում է ամեն ինչ, որպեսզի տնտեսական ծանր դրություն ստեղծվի հայերի համար: Թուրքերը խլում են հայերի հողերը, զավթում ամբողջ բնակավայրեր: Նրանց ետ չի պահում այն հանգամանքը, որ անշարժ գույքն ու հողը պատկանում են եկեղեցուն կամ դպրոցին: Նրանց հայտնի է, որ ռուսական կառավարությունը հրաժարվել է զավթել հայ եկեղեցու հողն ու գույքը: Իսկ իրենք այդ բանն անում են: Հափշտակությունների մի մասը տեղի է ունեցել և տեղի է ունենում շարիաթական դատարաններում մեկ-երկու սուտ վկաների ցուցմունքներով: Հայերի կյանքի և պատվի վերաբերյալ տեղի ունեցող կամայականությունները այլևս անցնում են ամեն չափ ու սահման: Ուժով ստիպում են ընդունել իսլամ: Զանազան պատրվակներ են փնտրում անմեղ մարդկանց պատժելու համար: Գոյություն ունեցող դրության վերլուծությունը համոզում է, որ դա ոչ այնքան առանձին դատական, զինվորական, վարչական աստիճանավորների բացասական վարքագծի արդյունք է, որքան նախապես ծրագրված պետական քաղաքականության հետևանք: Հուշագրի վերջում նա առաջարկում է մի շարք միջոցառումներ, որոնք, նրա կարծիքով, Օսմանյան կայսրությունը կհասցնեն իսկական սահմանադրական վերափոխություն-ների»[11]:

Ինչպես հետևում է բերված փաստերից, երիտթուրքական հեղաշրջումը շոշափելի փոփոխությունների չի հանգեցրել երկրի ոչ քաղաքականության, ոչ էլ տնտեսության մեջ: Իրավացի է ռուս դիվանագետ, թարգմանիչ, պատերազմի նախօրյակին հայկական բարեփոխումների մշակմանը մասնակցած Ա. Մանդելշտամը, նշելով՝ «թուրքական հասարակական կյանքի ծաղկումը տևեց շատ կարճ՝ ընդամենը մի քանի ամիս, և ավարտվեց ռեակցիայի պարտությունից հետո՝ 1909թվականի ապրիլին»[12]: Թուրքական բուրժուական գործիչների հեղափոխական ոգին այնպիսին չէր, որ օգտվեին այն բարենպաստ պայմաններից, որոնք ստեղծվել էին բոլոր ընդդիմադիր ու հեղափոխական ուժերի համատեղ ջանքերով: Դրա պատճառը այն էր, որ «գերեզմանային լռության երկրում, որի վրա դարերով բարձրացված է եղել նշանավոր սուլթանական ցիցը անհամածայնների գլուխներով» (Բոգդան Կնունյանց), նորի ծիլերը չափազանց թույլ էին: Եվ ապա՝ Թուրքիայում հաստատված իթիհատականների տիրապետությունը շուտով ցույց տվեց իր ազգայնամոլ էությունը՝ նախ կանգնելով օսմանիզմի և պանիսլամիզմի դիրքերի վրա, այնուհետև գլխավորելով պանթուրքիստական-պանթուրանիստական շարժումը: Մյուս ժողովուրդների և ազգերի ներկայացուցիչների համախմբության փորձերը նրանք կոպտորեն մերժեցին: Շուտով նրանցից հեռացան քրիստոնյա ժողովուրդների ոչ միայն կուսակցությունները, այլև մյուս կազմակերպությունները: Ինչ վերաբերում է հայ ազգային կուսակցություններին, ապա որոշ ժամանակ երիտթուրքերը, փոխադարձ համաձայնությամբ, սկսել էին սիրալիրություն անել դաշնակցական կուսակցության հանդեպ, փորձում էին ընդհանուր լեզու գտնել հնչակյանների հետ: Այս հարցը, որի մեջ մենք գիտակցաբար չենք խորանում, հիմնավորապես լուսաբանված է Ջ. Ս. Կիրակոսյանի «Երիտթուրքերը

11 Գիտա-ինֆորմացիոն բյուլետեն. Գ մատենաշար, No.2/56/, Եր., 1983, էջ 5,8

12 А.Н. Мандел там. Младотурецка держава. М., 1915, с. 62

պատմության դատաստանի առաջ» աշխատության մեջ: Հեղինակը գտնում է, որ հայ ազգային կուսակցությունները այն ժամանակաշրջանում պատրաստ չէին քաղաքական լուրջ պայքարի: «Ժողովրդի ուժերը,- գրում է նա,- մնում էին չհամախմբված: Համազգային հրատապ խնդիրների շուրջը երբեք միազանգվածություն չստեղծվեց: Ոչ ոք հայ ժողովրդին այնքան վնաս չի հասցրել, որքան փարիսեցիները, որոնք բարեգործության, հայրենասիրության քողի տակ աշխատել են ժողովրդից բարիք ստանալ, բայց նրան օգուտ չեն տվել»[13]:

Հայ քաղաքական կուսակցությունների ու երիտթուրքերի փոխհարաբերությունները հիմնականում լուսաբանված են նաև Մերի Քոչարի մենագրության մեջ[14]: Փաստական հարուստ նյութի հիման վրա նա ցույց է տվել թուրքական կուսակցությունների և կազմակերպությունների բոլոր ցուցադրական ձգտումները՝ այլազգի կազմակերպությունների հետ մերձենալու ու կապեր հաստատելու նպատակով: Փաստերն ու փաստաթղթերը վկայում են ճիշտ հակառակի մասին: Մոնաստիրում անգլիական փոխհյուպատոսը 1910 թվականի օգոստոսի 28-ին մայրաքաղաք՝ դեսպան Լոութերին հաղորդում էր Սալոնիկում կայացած գաղտնի խորհրդակցության մասին, որտեղ ճառով հանդես էր եկել Թալեաթը:

«Դուք գիտեք,- գրել է նա,- որ սահմանադրության համաձայն, հաստատված է մուսուլմանների և գյավուրների հավասարություն, բայց դուք բոլորդ միասին և ամեն մեկդ առանձին գիտեք ու զգում եք, որ սա անիրագործելի իդեալ է»[15]: Նա, որ հիանալի գիտեր և հարցի պատմությունը, և թուրքական վերնախավի քաղաքականությունը ազգային հարցում, բացարձակապես իրավացի էր: Թուրքական լծի տակ անասելի ճնշման դարավոր պատմության ընթացքում այդ բանում համոզվեցին իրենք՝ քրիստոնյա ժողովուրդները: Ա. Ալպոյաճյանը, օսմանյան պետության խնդիրների շուրջ հավաքելով հսկայաքանակ նյութ և նշելով քրիստոնյա բնակչության թվաքանակի բռնի կրճատման եղանակները, հանգել է այն տխուր եզրակացության, որ տիրապետող ու հպատակեցված ժողովուրդների երկարատև համատեղ կյանքը ստեղծել էր համապատասխան հասարակական մթնոլորտ: «Հայը համակերպված էր իր վիճակին,- գրում է նա,- վասնզի ոչ մեկ հույս կամ նեցուկ ուներ իրեն համար, իսկ թուրքը սանձարձակ կգործեր, վասնզի ոչ ոք իր ձեռքը կբռներ արգիլելու համար, որ իր ուզածը չընե»[16]: Այդպես «հանգիստ» կողք-կողքի ապրում էին ժողովուրդները և, ինչպես մեր օրերում ևս պնդում են թուրք պատմագիրները, իբր նրանք բոլորն էլ գոհ են եղել, չեն հայտնել ոչ մի դժգոհություն, մինչև հայ քաղաքական կուսակցությունների լույս աշխարհ գալը, որոնք իբրև թե գործել են դրսի թելադրանքով: Բայց հանուն արդարության պետք է նշել, որ ազգային-ազատագրական շարժման վերելքը, հատկապես XIX դարի երկրորդ կեսին,

13 *Ջ. Կիրակոսյան.* Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ: Գիրք առաջին: Եր., 1982, էջ 344

14 ***Мери Кочар.*** Армяно-турецкие общественно-политические отношения и армянский вопрос. Ер., 1988

15 ՀՅՕԿ ժող, էջ 266

16 Մատենադարան. Ա. Ալպոյաճյանի արխիվ, թղթապանակ 3, վավերաթուղթ 6, թ.8

անհանգստություն է մտցնում թուրքական հասարակության ամենաբարձր շրջաններում: Այդ բանը նկատելի էր երիտօսմանների շրջանում, բայց իրեն առավել զգացնել է տալիս երիտթուրքական հեղաշրջման նախօրյակին և 1876 թվականի սահմանադրության վերականգման ընթացքում: Հայ բուրժուազիայի որոշ շրջանների և քաղաքական կուսակցությունների ցանկությունների ու տրամադրությունների ծանրաչափը ցույց էր տալիս համագործակցության որոշ միտումներ: Այսպես, «Երկրի ձայնը*» շաբաթաթերթի առաջին համարում ծրագրային հոդվածով հանդես եկող Տ. Զավենը կոչ է անում թուրքահային, որ նա «չպիտի բաժանե իր ազատագրության դատը այն ժողովուրդների դատից, որոնց հետ անքակտելիորեն կապված կրում է միևնույն բռնակալության հրեշավոր լուծը: Հետևաբար մենք ընդունում ենք միմիայն մի դատ Թուրքիայում ընդհանուր հեղափոխության դատը»[17]: Այսպիսով նա ժխտում է առանձին ազգային հեղափոխությունների հնարավորությունը: Այդ դիրքորոշման համար երիտթուրքերը բազմիցս իրենց շնորհակալությունն են հայտնել: Սակայն ազգային հարցում այդ դիրքորոշումը ոչ մի ներգործություն չի ունենում երիտթուրքերի վարած քաղաքականության ու մարտավարական գծի վրա: Երիտթուրքերի պարագլուխ Ահմեդ Ռիզան «Մեշվերեթ» թերթում, շարադրելով իր կուսակցության քաղաքական ծրագիրը, խիստ նախազգուշացնում էր այլախոհներին. «Մեր բոլոր իրավական պահանջների հիմքը մեր երկրի միությունը և անբաժանելիությունը լինելով, բոլոր նրանք, որոնք կը պարզեն սեպարատիստ դրոշակ, կը հանդիսանան մեր աչքում որպես մեր երկրի հակառակորդներ և թշնամիներ»[18]: Բազմիցս, հեղաշրջումից առաջ և հետո, զանազան տարբերակներով ամենուրեք հնչում էր վերոհիշյալ հիմնական, ծրագրային սկզբունքը: Մակեդոնական, հայկական, քրդական և այլ հարցերի վերաբերյալ շեղումներ լինում էին, բայց դրանք կրում էին ձևական բնույթ: Ավելի ճիշտ, սուր իրավիճակների պայմաններում լինում էին խոստումներ, բայց դրանք երբեք չէին կատարվում: Ի հաստատումն մեր ասածի, բերենք 1906 թվականի վերջին «Մեշվերեթ» թերթում հրապարակված այսպես կոչված «Միություն և առաջադիմություն» օսմանյան կուսակցության հիմնական կանոնադրության» 3-րդ հոդվածից մի հատված. «Խրախուսել ու մղել օսմանցիներին, որպեսզի միահամուռ ջանքերով աշխատեն օսմանյան զանազան տարրերի և ժողովուրդների միջև ստեղծել մի անկեղծ միություն՝ հիմնված հայրենասիրության և մարդասիրության զգացմունքների վրա՝ հօգուտ հայրենիքի զարգացման ու բարձրացումի»[19]: Այսպիսով, բոլոր կուսակցությունները, քաղաքական միությունները, ակումբներն ու միավորումները, որոնք առաջացել էին երկրի հասարակական կյանքի ակտիվացման շնորհիվ կամ Ասիայի զարթոնքի պայմաններում, իրենց գործունեության գլխավոր նպատակն էին հայտարարում կայսրության միասնությունը, համախմբվածությունը, ամբողջությունը, այդ կոչերի տակ քողարկելով ոչ թուրք ժողովուրդներին «օսմանցի» ընդհանուր անունով

* «Երկրի ձայնը» - շաբաթաթերթ, հիմնվել է Թիֆլիսում 1906 թվականի հոկտեմբերին, պոլսահայ հայտնի հրապարակախոս Տիգրան Զավենի կողմից

17 «Երկրի ձայնը», 1906, N 1, էջ 2

18 Նույն տեղում, 1906, N 2, էջ 3

19 Նույն տեղում, N 8, էջ 9

միաձուլելու դեռևս շարունակվող փորձերը: Արտաքուստ թվացող հաջողություններին որոշ չափով նպաստում էին կայսրության հասարակական կյանքի մի քանի նշանակալի երևույթներ: Երիտթուրքերի երկրորդ 1907 թվականի դեկտեմբերի Փարիզի ժողովը, իր բազմազգ կազմով և հուսադրող խոստումներով խաղում է որոշակի դեր: Ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներին այնտեղ խոստանում են ինքնավարություն, իսկ նրանք էլ, իրենց հերթին, երիտթուրքերին հավաստիացնում են, որ կպաշտպանեն նրանց պայքարը ընդդեմ Աբդուլ Համիդի վարչակարգի: Ժողովի մասնակից հայկական երեք կազմակերպությունների ներկայացուցիչներին հասկացնում են, որ իրենք անկախ հայկական պետության ստեղծման կողմնակիցներ չեն, բայց սահմանադրության վերականգնումից հետո հայերին, մյուս ժողովուրդների հետ հավասար կերպով, կապահովեն «ինքնակառավարման իրավունք», որ նշանակում է նաև «իրենց շահերը օրինական կերպով պաշտպանելու լիակատար հնարավորություն»[20]: Կամայականության ու անօրինականության երկրում այդ խոստումը շատ ու շատ կարևոր էր: Երիտթուրքական հեղաշրջումը հսկայական ազդեցություն է ունենում բազմազգ պետության ողջ բնակչության վրա:

«Ազգերի լիգան, մեծ տերությունները և հայկական հարցը» հիմնարար աշխատության մեջ Ա. Մանդելշտամը հստակ բնութագրում է երիտթուրքերին, նրանց համարելով ամեն մի առաջադիմության հակառակորդներ, բռնակալական վարչաձևի կողմնակիցներ: Խոսքով նրանք բարեփոխումների կողմնակից են, բայց նվազագույն ցանկություն իսկ չեն ցուցաբերում դրանք կենսագործելու համար: «Ինչպես Աբդուլ Համիդի, այնպես էլ երիտթուրքերի գործունեության բնորոշ կողմը,- եզրակացնում է Ա. Մանդելշտամը,- քրիստոնյաների հետապնդումն ու ոչնչացումն էր»[21]: Իրականությունը, սակայն, ավելի անողոք էր:

Երկրի կառավարողներին այնքան էլ հաճելի չէր ժողովրդական զանգվածների, հատկապես ազգային փոքրամասնությունների հասարակական և քաղաքական աշխուժացումը: Թուրքերի հետ տեղի ունեցող համատեղ երթերը, հանրահավաքները, աջակցությունը զանազան զանգվածային միջոցառումներին, որոնք երբեմն չարաշահում էին առանձին թուրք գործիչներ, ցանկալի չէին երիտթուրքերին և ընդհանրապես թուրքական տիրապետող շրջաններին: Եվ հեղաշրջումից արդեն մի քանի ամիս հետո ակնհայտ քայլեր են ձեռնարկվում երկրի հասարակական կյանքի ժողովրդականացման գործընթացի հետագա խորացումը կանխելու համար: Գործադուլները, զանգվածային միջոցառումների ծավալումը սահմանափակելուց բացի, իշխանություններն ուժեղացնում են ոստիկանությունը, զորքերի առանձին ստորաբաժանումները: Այդ բանը նկատելի էր մայրաքաղաքում և կայսրության այն ծայրագավառներում, որտեղ մեծ մասամբ ապրում էր ոչ թուրք բնակչություն: Արդեն 1909 թվականի հունվարին գլխավոր հյուպատոսը Երզրումից հաղորդում էր դեսպան Ի. Զինովևին. «Հոչակված ազատություններով հայերի հրապուրվելը ավելի ու ավելի է գրգռում մուսուլմանների ատելությունը նրանց դեմ: Նույնիսկ առավել առաջադեմ

20 ԿՊԴՊԱ, ֆ. 450, գ. 113, թ. 68

21 *Ջ. Կիրակոսյան.* Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ, էջ 190

երիտթուրքերի մեջ, որոնք դեռ վերջերս այնպես բացահայտորեն իրենց երախտագիտությունն էին հայտնում հայերին Թուրքիայում ազատագրական շարժման նախաձեռնողներ լինելու համար, անվստահությունը հայերի նկատմամբ աճում է ոչ թե օրեցօր, այլ ժամեժամ»[22]: Իսկ որոշ ժամանակ հետո նույն աղբյուրն արդեն հաղորդում էր. «Երիտթուրքերը սկսել են հապճեպորեն զինել մուսուլմաններին, մանավանդ քաղաքային դադաշներին, որոնք հայտնի են իրենց սանձարձակությամբ և հայերի հանդեպ ատելությամբ»[23]: Երիտթուրքական կոմիտեներն ու տեղական իշխանությունները ամենուրեք ուշադիր հետևում էին իրադարձություններին: Նույն թվականի մարտին նրանց ներկայացուցիչներն Ադանայի շրջանում բորբոքում էին հակահայկական տրամադրություններ, քանի որ լուրեր էին շրջում, թե իբր Կիլիկիայում հայերը ձգտում են ստեղծել «ազգային օջախ»: Այն ճնշելու պատրվակով կուտակվել էր զորք, զինվել էր մուսուլմանական ամբոխը: 1909 թվականի ապրիլի սկզբին երեք օրվա ընթացքում Ադանա քաղաքում և հայաբնակ գյուղերում սպանվում է 30 հազարից ավելի մարդ, հրկիզվում է 24 եկեղեցի, 16 դպրոց, 232 տուն, 30 հյուրանոց, 2 գործարան, 1429 ամառանոց, 253 ագարակ, 523 խանութ, 23 ջրաղաց և ուրիշ շատ շենքեր[24]:

Ադանայի ջարդը կամայականության և ոճրագործությունների նոր շրջանի սկիզբն էր: Եթե 1890-ական թվականների կոտորածներն արտաքուստ ունեին բախումների, ընդհարումների ձև, ապա այժմ կազմակերպվում է ուղղակի սպանդ, վայրենի արյունահեղություն, ինչը դրանից հետո դառնում է թուրք դահիճների սովորական վարվելաձև: Ադանայի ողբերգությունից անմիջապես հետո, 1909 թվականի հուլիսի 7-ին, իշխանություններին է դիմում Կոստանդնուպոլսի պատրիարքը՝ նրանց ուշադրությունը հրավիրելով այն բանի վրա, որ ահա արդեն մի քանի տարի է հնարամտությամբ և կանոնավորությամբ իրականացվող կարգադրությունների խստությունը հասել է այն աստիճանի, որ այլևս իրենց պատիվն ու կյանքը ազատելու և ապրուստը հայթայթելու համար ողջ մնացող հայերի կարևոր մի մասը այդքան հազարամյակների իրենց սիրելի հայրենիքը թողնելով՝ գաղթելուց բացի ուրիշ միջոց չէր գտնում[25]:

Հակահայկական քաղաքականությունը իրականացվում էր միանգամայն բացահայտորեն ու լկտիորեն: Իսկ Ֆ. Նանսենը գտնում էր, որ «հայերի ճնշումը երիտթուրքերի կողմից տարբերվում էր Աբդուլ Համիդի ու հին կառավարության հալածանքներից նրանով, որ այն կատարվում էր խնամքով մշակված եղանակով և այդ պատճառով ավելի վտանգավոր էր»[26]: Երևույթի վտանգավորությունը հայ ժողովրդի համար սաստկանում էր, ըստ երևույթին նրանով, որ հասարակական կյանքի աշխուժացումն ուներ որոշակի նպատակամղված բնույթ: Մինչև համաշխարհային պատերազմը երկրում ընդլայնվել էր քաղաքական, մշակութային-լուսավորական կազմակեր-

22 ՀՅՕԿ ժող. էջ 230

23 Նույն տեղում

24 «Հայ ժողովրդի պատմություն», հ.4, էջ 499

25 Հիշատակագիր հայոց պատրիարքի, 7 հուլիսի, 1911թ., Արևելագիտության ինստիտուտի արխիվ, էջ 3

26 *Մ. Արզումանյան.* Նանսենը և Հայաստանը. Եր., 1977, էջ 95

պությունների, ընկերությունների հսկայական ցանց, որի գործունեության առանցքը ազգայնամոլության քարոզչությունն էր: Հեղաշրջումից հետո սկսվում է արագ աճել պարբերական մամուլի թիվը: «Երրորդ օրը իրենց լույս ընծայման մասին են հայտարարում մոտ 150 թերթ ու հանդես: Միայն Ստամբուլում հինգի փոխարեն թուրքերեն սկսում է լույս տեսնել 30 անուն պարբերական»[27]: Այդ հրատարակությունների նշանակալի մասը գտնվում էր երիտթուրքերի ձեռքում: Բայց մամուլի մասին 1909 թվականի օրենքը և իշխանությունների վարչական կամայականությունը հանգեցնում են այն բանին, որ արդեն մոտակա տարիներին մամուլը սկսում է թուլանալ, և հրատարակություններն երկու անգամ կրճատվում են: Հայերեն և հունարեն թերթերի մեծագույն մասը փակվում է: Հասարակական-քաղաքական կյանքի վերելքի մեկ այլ ցուցանիշն էլ բազմաթիվ քաղաքական կուսակցությունների և ընկերությունների ստեղծումն էր: 1908 թվականին իրենց գործունեությունն են սկսում երիտթուրքերի հիմնական կուսակցությունները՝ «Միություն և առաջադիմություն», «Ահրար», «Մուսուլմանական լիգա», «Մուսուլմանական եղբայրություն»: Վերջապես նույն թվականի դեկտեմբերին, բուռն ընտրարշավից հետո, բացվում է թուրքական խորհրդարանը: Սնկի պես մեկը մյուսի հետևից երևան են գալիս մուսուլմանական և զուտ թուրքական ընկերություններ: Դրանցից ամենազանգվածայինը այսպես կոչված «Թյուրք օջախը» ընկերությունն էր, որը շուտով ունենում է մոտ 25 բաժանմունք և ավելի քան երեք հազար անդամ: Սկսվում է մեծածավալ արշավ օտար տարրերից փոքր-ինչ մաքրված թուրքերենի բարելավման ու տարածման ուղղությամբ: Այն կյանքի է կոչում մտավորականության ու երիտասարդության բազմաթիվ կազմա- կերպությունների: Պանթյուրքիզմի գաղափարախոսության հրահրիչներից մեկը՝ Բաքվից վտարանդված Ահմեդ Աղա օղլին /Աղաևը/ նշանակվում է մայրաքաղաքի ուսումնական հաստատությունների տեսուչ: 1911 թվականին Ռուսաստանից մեկ այլ վտարանդի, պանթյուրքիզմի գլխավոր գաղափարախոս Յուսուֆ Աքչուրան (Ակչուրինսկի) հիմնում է «Թյուրք յուրդու» հանդեսը և նույնանուն ակումբը: Հենց այդ ժամանակաշրջանում էլ երիտթուրքերի կազմակերպությունների կենտրոնը Սալոնիկից փոխադրվում է Կոստանդնուպոլիս, որտեղ 1912 թվականին առաջին անգամ գումարվում է երիտթուրքական կուսակցության հերթական համագումարը: Նշված իրադարձությունների մեջ առանձնանում է 1913-ի թյուրքալեզու ժողովուրդների կամ արևմտյան և արևելյան թուրքերի (Թուրքիայի և Կովկասի) ներկայացուցիչների ժողովը Բայազետում: Ընթերցողի համար հետաքրքիր է իմանալ, որ մինչև բոլոր այդ իրադարձությունները Ռուսաստանում կայացել էր պանթյուրքիստների կազմակերպությունների երեք համաժողով, որոնցից վերջինում որոշում էր ընդունվել թյուրքալեզու դպրոցներում ուսուցումը վարել թուրքերեն և թուրքական ծրագրերով:

Ազգայնամոլ քարոզչությունը միանգամայն համապատասխանում է երիտթուրքերի նպատակներին և նպաստում թուրք ժողովրդի ցաքուցրիվ խմբերի և, նույնիսկ, տարբեր խավերի միավորմանը: Բնական է, որ նրանց միջև կային լուրջ տարաձայնություններ, և 1911 թվականին, Կուսակցության Սալոնիկի վերջին ժողովի նախօրյակին այն կանգնում է պառակտման եզրին:

27 *А. Х. Ибрагимов.* Печать Турции. 1965, изд-во МГУ, с. 11.

Բայց տրիպոլիտանյան և բալկանյան պատերազմները առաջնահերթ խնդիր են դարձնում պետության ամբողջականության պահպանումը: Բոլոր հոսանքներն ու հասարակական-քաղաքական կազմակերպությունները և առաջին հերթին երիտթուրքերը, միավորվում են հանուն այդ նպատակի իրականացման: Սակայն Թուրքիան 1912-1913 թթ. պարտվում է և Իտալիային, և բալկանյան պատերազմում: Դրանք ակնառու կերպով ցույց են տալիս, որ տիրապետող ժողովրդի շահերը չեն համապատասխանում թուրքական լծի տակ հեծող ժողովուրդների ազատագրական շարժման նպատակներին: Սապահ-Գուլյանը պատմել է երիտթուրքական հեղաշրջման գործուն մասնակիցներից մեկի՝ Մուստաֆա Նաջիբ բեյի հետ ունեցած իր զրույցի մասին. «Նաջիբ բեյը 1911 թվականին համոզված կերպով ասում էր. «Բոլորն էլ օսմանցի պիտի լինեն, օսմանցի դառնան հոգով, սրտով. մենք համոզված ենք, որ այս երկրի փրկությունը միայն ու միայն դրա մեջ պիտի լինի»[28]: Սպառնալիքների ու բռնությունների երկրում կատարված այդ արտակարգ դեպքերի ականատես Դ. Ֆրեյզերը այն տպավորությունն է ստացել, որ երիտասարդ թուրքերը «սկզբունքորեն նպատակ էին դրել օսմանացնել ամբողջ կայսրությունը»: «Նրանք,- գրում է անգլիացի հեղինակը,- ուզում էին ստիպել ալբանացիներին, հայերին, հրեաներին, հույներին, արաբներին, սիրիացիներին, քրդերին և մակեդոնացիներին հրաժարվել իրենց ազգային ինքնությունից, ձուլվել մեկ ընդհանուրի մեջ, խոսել թուրքերեն, օգտվել արաբական այբուբենից և այլն»[29]: Բայց այդ սին ցանկությունները չէին համապատասխանում ոչ միայն քրիստոնյա, այլև իսլամ դավանող ժողովուրդների ձգտումներին ու նպատակներին: Արաբները անցյալ դարի վերջին քառորդում արդեն ստեղծել էին գաղտնի ընկերություններ, որոնք պայքարում էին ազատագրվելու թուրքական լծից: Իսկ 1904 թվականին Փարիզում հիմնվում է համազգային կենտրոն՝ Արաբական հայրենիքի լիգա: Հաջորդ տարում լիգան կոչով դիմում է «թանկագին հայրենակիցներին» բողոքելով յուրայինների ճնշման դեմ: Լիգան փայլուն կերպով բացահայտում է թուրքական ազգային քաղաքականության նողկալի բնույթը: «Տերությունների պատկերացմամբ, հանդիսանալով սուլթանի կայսրության ամենաբազմաքանակ քաջարի էթնիկական զանգվածը, միայն մենք ենք կազմում թուրքերի ուժը, և մեր օգնությամբ Աբդուլ Համիդը իր իշխանության տակ է պահում ալբանացիներին, այդ ալբանացիների օգնությամբ նա կոտորում է մակեդոնացիներին: Ճիշտ այդպես էլ նա ճնշում է գործադրում և քրդերի օգնությամբ էլ կոտորում հայերին»[30]:

Տրիպոլիտանական և բալկանյան պատերազմների տարիներին և հետպատերազմյան ժամանակաշրջանում սաստկանում է սոցիալական և ազգային ճգնաժամը, և սրվում են հակասությունները, իսկ նույնիսկ ազգային այն կազմակերպությունները, որոնք համագործակցություն և աջակցություն էին խոստացել երիտթուրքերին, հեռանալով նրանցից սկսում են պաշտպանել իրենց ժողովուրդների շահերը՝ ընդդեմ կայսրության կառավարող վերնախավի

28 *Ջ. Կիրակոսյան.* Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ. Գիրք առաջին, էջ 224

29 Նույն տեղում, էջ 225

30 *Eugene Yung.* Les puissances devant le revolte arabe. La crise mondiale de demain, Paris, 1906, p.26

հարձակողական և ազգայնամոլ քաղաքականության: Շարունակ ռազմական գործողություններ էին տեղի ունենում Եմենում, անհանգիստ էր Սիրիայում, Լիբանանում: 1913 թվականի գարնանը Փարիզում հրավիրվում է համաարաբական առաջին ժողովը: Զգալիորեն ավելի ուշ, 1965 թվականի հոկտեմբերին, Ալմա Աթայի միջազգային գիտաժողովում, գնահատելով ազգային-ազատագրական շարժումների և հեղափոխությունների նշանակությունը, հայտնի գրող ու քաղաքական գործիչ Ազիզ Շերիֆը պայքարի այդ փուլի մասին ասել է. «Հայրենասիրաբար տրամադրված արաբ մտավորականները, Օսմանյան կայսրության եղբայրների հետ միասին, իրենց ավանդը ներդրեցին քաղաքական գործունեության մեջ: Սակայն, երբ երիտթուրքերի ղեկավարները սկսեցին վարել ազգային խտրականության, պանթուրքիզմի և բռնի թյուրքացման քաղաքականություն, դրա պատասխան հակազդեցությունը եղավ թուրքական ճնշումից լրիվ ազատագրվելու ձգտումը»[31]: Բազմազգ պետության վիճակի այս ճշմարտացի գնահատականը հավասարապես վերաբերում է նաև ալբանացիներին, քրդերին և մյուս ժողովուրդներին:

Թուրքերին չի հաջողվում ամրապնդել «օսմանյան ազգը» և օսմանիզմի հիմնադրույթը կրում է կատարյալ ձախողում: Երիտթուրքերը հրաժարվում են դրանից, վերջնականապես համոզվելով, որ ճնշված ժողովուրդները երբեք չեն համաձայնի միասնություն ստեղծել «ընդհանուր հայրենիքի» մտացածին գաղափարով: Անհրաժեշտ էր նոր գաղափարախոսություն, որը պետք չէր երկար որոնել, քանի որ այն արդեն սաղմնային վիճակում կար նույն օսմանիզմի մեջ, բայց միս ու արյուն է ստանում նրանից հրաժարվելուց հետո: Թուրք ազգայնամոլները պարզում են և մինչև հիմա էլ բարձր են պահում *պանթուրանիզմի* դրոշը: Դրա հիմնական խնդիրը կայսրության ներսում մնում էր նախկինը, այսինքն՝ ձուլել ոչ թուրք ժողովուրդներին, թուրքացնել նրանց: Դեռ 1908 թվականի ամռանը զինվորական գործակալը Կոստանդնուպոլսից հաղորդում էր. «Արդեն այժմ պարզ է դառնում, որ «ազատությունը, եղբայրությունը, հավասարությունը թուրքերը կընդունեն յուրովի, բայց միայն ոչ այլազգիների օգտին»[32]: Հեղաշրջումից առաջ երիտթուրքերի հռչակած ազգերի հավասարությունը, նշել է Հալիս Օքանը, «եղավ սադրիչ կարգախոս»[33]: Վերջապես՝ «Միություն և առաջադիմություն» կուսակցության հերթական հավաքը ասում է իր վերջնական խոսքը: Ընդունված որոշման մեջ խոսվում է «թուրքական հպատակների» բռնի թուրքացման մասին և այն, որ «կայսրության նկարագիրը պետք է լինի մահմեդական: Պետք է ապահովվի մահմեդական հաստատություններու և ավանդություններու հանդեպ հարգանքը: Պետք է մերժել այլացեղ ազգություններու իրենք իրենց մեջ կազմակերպվելու իրավունքը: Ազգությունները զանցառելի քանակություններ են: Թուրք լեզվի

31 *Азиз Шериф.* Роль общественного и национального самосознания народов Арабского Востока. Алма-Ата, 1965. Текст доклада, с. 5

32 ԿՊԴՊԱ, ֆ. 2000, g.1, գ. 1011, թ. 241

33 *З. Х. Окан.* Развитие на капитализма в Турция. София, 1961, с. 29

տարածումը գերազանց միջոց մըն է հաստատելու մահմեդական գերիշխանությունը և յուրացնելով ծուլելու մյուս տարրերը»[34]:

Ոչ պակաս կարևոր ու նշանակալի էր պանթյուրքիստների գործունեության ծրագիրը Թուրքիայի սահմաններից դուրս: Գլխավորն ու հիմնականը բոլոր թյուրքալեզու ժողովուրդներին մեկ ամբողջության մեջ միավորելու քարոզչությունն էր, որի կենտրոնը պետք է լիներ Թուրքիան: Այդպիսի միավորման աշխարհագրական սահմանները /Թուրանը/ տարբեր կերպ էին որոշում պանթյուրքիզմի զանազան պարագլուխներն ու տեսաբանները: Ոչ ոք հարկ չէր համարում հաշվի նստել մյուս ժողովուրդների ու երկրների շահերի հետ, քանի որ պանթյուրքիստական խնդիրների իրականացումը կարող էր հենվել միայն աշխարհի վերաբաժանման վրա:

«Պանթյուրքիստական գաղափարախոսությունը,- գրում է Դ. Երեմեևը,- զարգացել է երիտասարդ թուրքական ազգայնամոլության հենքի վրա, որը սկզբում ստացել էր «թյուրքչյուլյուք» անունը, մի արտահայտություն, որն ուներ երկակի իմաստ: Դրա մեջ պարունակվում էր երկու միանգամայն տարբեր հասկացություն. թուրքիզմ (թուրքական ազգայնամոլություն) և թյուրքիզմ (պանթյուրքիզմ)»[35]: Այդ գաղափարախոսության յուրահատկությունը նաև այն է, որ նա սերտորեն միահյուսվում է պանիսլամիզմի հետ: Դրանով իսկ հնարավորություն էր ստեղծվում որոշակի նպատակներով խաղալ բոլոր մուսուլման, հատկապես թյուրքալեզու ժողովուրդների կրոնական զգացմունքների հետ և որոշակի ճնշում գործադրել արաբների, քրդերի և իսլամ դավանող մյուս ժողովուրդների ազատագրական շարժման վրա՝ նրանց մեղադրելով կրոնական միասնությունը խախտելու մեջ:

Երիտթուրքերը հույս ունեին և աշխատում էին նոր պայմաններում գաղափարախոսական այդ հուժկու գործոններն օգտագործել լուծելու հին խնդիրը՝ կանխել օսմանյան պետության քայքայումը: Ուստի նրանք սաստկացնում էին ներքին քաղաքականությունը, շարունակում դաժանորեն ճնշել ենթակա ժողովուրդների ազատագրական պայքարի ամեն մի դրսևորում: Թուրքիայում երիտթուրքերի տիրապետության ժամանակաշրջանի հետազոտող Համիդ Ալիևը նույնպես հանգել է այն հետևության, որ «երիտթուրքերի ազգային քաղաքականության մեջ 1908-1914 թթ. ամենադժվարին օղակը եղել է հայկական հարցը»[36]: Գործնականորեն այդ դժվարին օղակը պայմանավորված էր երկրի կառավարող վերնախավի ձգտումով՝ ամբողջ կայսրության մեջ հայերի կյանքի ու գործունեության ամեն կարգի հարցերի քննարկման և լուծման ժամանակ ստեղծել անտանելի պայմաններ: Այդ բարդ փոփոխություններին ականատես եղած Լ. Օշերովսկին նշում է, որ բազմազգ Թուրքիայում մյուս բոլոր ժողովուրդներից առավել բռնությունների ու կոտորածների ենթակա են եղել հայերը[37]: Այդ կարծիքը տիրապետել է բոլոր նրանց մոտ, ովքեր շատ թե քիչ ծանոթ են եղել կայսրության գործերի վիճակին՝ նրա գոյության վերջին փուլում: Բայց ինչո՞վ

34 *Չարևանդ.* Միացյալ անկախ Թուրանիա կամ, ինչ՞ կմտածեն թուրքերը, 1926, էջ 69

35 *Д. Е. Еремеев.* Особенности образовани турецкой нации. Журнал "Советска тнографи ", 1969, N 5, с. 64

36 *Г. З. Алиев.* Турци в период правлени младотурок. М., 1972, с. 191

37 *Л. Ошеровский.* Трагеди арм н-беженцев. СПб, 1916, с. 21

բացատրել այդ երևույթը: Չէ՞ որ Աբդուլ Համիդի ատելի վարչակարգի դեմ մղված պայքարում քրիստոնյա բոլոր ժողովուրդների մեջ առավել մեծ հետևողականություն էին ցուցաբերել հայերը: Նրանց ներկայացուցիչները եղել են քաղաքական ուժերի, հենց այն խմբերի շարքում, որոնք նշանակալի դեր էին խաղացել երիտթուրքական կուսակցության ստեղծման գործում: Նրանք հիացմունքով են ընդունել երիտթուրքերի հաղթանակը և դեպքերի ականատեսներից մեկի պատմածով, «երբ սահմանադրությունը եկավ, առաջին օրերին հայերի մեծամասնությունը, ես էլ նրանց հետ միասին, բոլորս էլ իթթիհատականներ դարձանք: Ամենքիս էլ համոզումն այն էր, որ սահմանադրություն բերող կուսակցությունը թե ընդհանուր երկրի և թե բոլոր ազգերի առաջադիմության ու զարգացման պիտի աշխատի»[38]: Այդ համոզմունքը ունեցել է բավականին շատ համախոհներ: «Վերածնունդ» հանդեսի 1912 թվականի համարներից մեկում Լևոն Աճեմյան անունով մեկը «Ո՞վ ենք մենք» խորագիրը կրող հոդվածում «օսմանյան պետության ամբողջականության և միության» մեջ էր տեսնում բոլոր բաղկացուցիչ տարրերի «ազատ ու համերաշխ գործակցության հնարավորությունը...»[39]: Բավական շատ էին դրվատական խոսքերը երիտթուրքերի մասին: Հետադիմականները գովում էին նրա համար, որ երկրում ոչինչ չի փոխվում: Արմատականներն ու հեղափոխականները ձգտում էին քաղաքական և սոցիալական փոփոխությունների: Բոլշևիկներն անգամ հույս ունեին, որ տեղի ունեցող իրադարձությունները աշխատավորական զանգվածներին դուրս կբերեն անշարժության ու անտարբերության վիճակից: Արտահայտելով այդ միտքը՝ Բ. Կնունյանցը այնուհանդերձ գտնում էր, որ «երիտասարդ թուրքերի հեղափոխությունը զարկ կտա օսմանյան ազգի զարթոնքին՝ սա է նրա պատմական հսկայական նշանակությունը, թեև այդ հեղափոխությունն ինքնին դեռ բնավ չի նշանակում անցում արևելյան բռնապետությունից դեպի եվրոպական պառլամենտարիզմ»[40]: Ընդհակառակը, հետադիմական վարչակարգը երկար ժամանակով կանխորոշել էր երկրի հասարակական կյանքի բնորոշ գծերը: Արտաքին խաբուսիկ փայլը, բարեկամության և անգամ ժողովուրդների համատեղ գործողությունների կոչերը չփոխեցին իրադարձությունների ընթացքը: Դրանք միայն մինչև որոշակի ժամանակաշրջան ինչ-որ չափով քողարկում էին երիտթուրքերի իսկական մտադրություններն ու ծրագրերը: Ինչպես ճիշտ է նշել գերմանացի արևելագետ Ե. Վերները՝, «Նացիոնալիզմին էին ենթարկվում՝ բոլոր գաղափարներն ու հոսանքները», մենք կավելացնենք՝ թուրք գործիչների ու մտավորականության բոլոր սերունդները՝ սկսած անցյալ դարի երկրորդ կեսից: Ալի Ֆուադ փաշայի գաղափարները խտացնում է Քյամիլ փաշան, երիտօսմանական «անմեղ» նացիոնալիզմը վերածելով երիտթուրքական շովինիզմի ու պանթյուրքիզմի: Ըստ որում այդ գործընթացը վճռական ազդեցություն է ունենում ներքին կյանքի վրա և գրավում արտասահմանի պանթյուրքիստների ուշադրությունը: Կապերը իրական էին և՝ պահանջում էին կուսակցության ու պետության ղեկավարների սևեռուն ուշադրություն: Այսպես, ի պատասխան Ռուսաստանի

38 *Զ. Կիրակոսյան.* Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ, էջ 264

39 Նույն տեղում, էջ 266

40 *Բ. Կնունյանց.* Ընտիր երկեր, Եր., 1978, էջ 544

պանթյուրքիզմի պարագլուխների նամակի, դեռ 1906 թվականի նոյեմբերին Բ. Շաքիրը իր «իսլամական եղբայրներին» միավորման կոչով դիմել էր ռուսական պետության բոլոր մուսուլմաններին՝ տեղերում ստեղծել գաղտնի կազմակերպություններ, կուտակել անհրաժեշտ նյութական միջոցներ, բայց առայժմ հրապարակորեն հանդես չգալ իշխանությունների դեմ: Վերջին յոթերորդ կետում ասվում էր. «Մեր թշնամին և ռուսական լծից ձեզ ազատելու ամենալուրջ արգելքներից մեկը հայերն են: Մշակեք անոնց թուլացնելու իրական ծրագիր»[41]: Նման ցուցումը լիովին համապատասխանում էր կովկասյան պանթյուրքիստների, հատկապես մուսավաթականների տրամադրություններին: Հայտնի են նրանց հայտարարություններն այն մասին, որ նպաստավոր պայմաններում անհրաժեշտ է Կովկասը հայտարարել որպես Թուրքիայի մի մասը: Ուստի պատմական առումով, նրանց միանգամայն կարելի է անվանել երիտթուրքերի գաղափարների ու հանցավոր գործողությունների հանցակիցներ: 1912 թվականին պանթյուրքիզմի գլխավոր տեսաբաններից մեկը՝ Ջ. Նուրին իր «Օսմանյան կայսրության անկման պատմությունը» գրքում, կարծես հանրագումարի բերելով 500-ամյա պատմության արդյունքները, որի ընթացքում թուրքերին չի հաջողվել ծուլման միջոցով միավորել կայսրության բոլոր էթնիկական տարրերը, ավելի նպատակահարմար է համարում զանգվածաբար կոտորել կամ բնաջնջել այլացեղերին[42]: Նման ոճրակոչ գաղափարներ հանդիպում են ոչ միայն իբրև առանձին արտահայտություններ, հրապարակային պահանջներ, այլև որպես որոշումներ ու կարգադրություններ, որոնք ավելի ու ավելի հաճախ էին ընդունվում երիտթուրքական հեղաշրջումից հետո: Իթթիհատի հերթական համագումարը 1910 թվականի հոկտեմբերին ուղղակի ցուցում է տալիս. «Պատեհ առիթով արմատապես բնաջնջել հայկական բարձրավանդակի հայությունը»[43]: Երիտթուրքական կուսակցության կենտկոմի գաղտնի նիստերում՝ ոճրագործ ծրագրերի իրականացման այդ որջում, շատ ղեկավարներ միանգամայն բացահայտորեն արտահայտում են իրենց մտադրությունը: Գլխավոր գործող անձերից մեկը՝ դոկտոր Նազըմ բեյը, վճռականորեն հանդես է գալիս հայերի իսպառ բնաջնջման օգտին՝ կիրառելով եզրափակիչ հզոր հարվածը. «այլապես,- ասում է նա,- մենք ռիսկ ենք անում արթնացնելու այն տարրերին, որոնց նույնպես մտադիր ենք ջնջել ճանապարհից՝ արաբներին ու քրդերին... Հայ ժողովրդին պետք է ոչնչացնել արմատապես, որպեսզի ոչ մի հայ չմնա մեր երկրում և, մոռացվի այդ անունը... Ես ձեր ընկերը, զինակիցն ու եղբայրն եմ դարձել, որպեսզի վերածենք թուրքիզմը: Ես ուզում եմ, որ այս հողում միայն թուրքը և միայն թուրքը ապրի ու իշխի: Իմ կրոնը Թուրանն է»[44]:

Երիտթուրքերի պարագլուխներից Բ. Շաքիրը բավական խիստ արտահայտություններով իր վերաբերմունքն է հայտնել Հայաստանի հանրապետության վարչապետ Ալ. Խատիսյանին. «Հայերը կանգնած են մեր

41 *Հ. Ղազարյան.* Ցեղասպան թուրքը, Պեյրութ, 1968, էջ 154

42 *Հր. Սիմոնյան,* Թուրք ազգային բուրժուազիայի գաղափարաբանությունը և քաղաքականությունը, Եր., 1986, էջ 233-234

43 Նույն տեղում, էջ 224:

44 ՀՅՕԿ ժող. էջ 410:

համիսլամական և համաթուրքական սրբազան իդեալներու իրականացման ճամբուն վրա, ու մենք անխուսափելիորեն կբախվինք անոնց հետ: Ատիկա վեր է և դուրս մեր անձնական զգացմունքներեն և տրամադրություններեն: Մենք հարկադրված ենք տարերայնորեն ոչնչացնել մեր ճամբուն վրայեն այն ամենը, ինչ արգելք հանդիսանա մեր ազգային սրբազան իդեալներուն»[45]:

Պանիսլամիզմը եղել է բոլոր քրիստոնյա հպատակների ճնշման ու կեղեքման գործիք: Բայց Բալկաններում բանն այլ կերպ էր, քան Փոքր Ասիայում: Առաջին դեպքում սլավոնական մեծամասնությունը ոչ մուսուլման ժողովուրդների ու եվրոպական տերությունների հետ սերտ հարևանությամբ խիստ թուլացնում էին իսլամի ազդեցությունը տեղական կյանքի վրա: Երկրորդ դեպքում, մուսուլմանական վիթխարի ծովում, համեմատաբար սակավաթիվ քրիստոնյա ժողովուրդները և հատկապես հայերը անպաշտպան էին, գտնվում էին կամայականության, ապօրինությունների կիզակետում և լրիվ կախված էին տեղական իշխանությունների, ամեն կարգի բաշիբոզուկների ու ավազակների կամքից: Հենց այստեղ էին լրիվ չափով գործում բոլոր այն սահմանափակումները, որ հաստատված էին Ղուրանի դոգմաներով ու շարիաթի դրույթներով: Թյուրքչյուլքի խիստ պահանջներն աննկատելի էին եվրոպական Թուրքիայի շրջաններում և քրիստոնյա ճնշող բնակչություն ունեցող տարածքներում: Իսլամացման և թուրքացման քաղաքականությունը հետևողականորեն կիրառվում էր ամբողջ Անատոլիայում, որտեղ ընկած էր Արևմտյան Հայաստանը: «*Պանթյուրքիզմը* երկու սուր ծայր ուներ,- գրում է Հր. Սիմոնյանը: - Դրանցից առաջինն ուղղված էր Ռուսաստանի դեմ, որի կազմում էր թուրքալեզու ժողովուրդների բացարձակ մեծամասնությունը: Մյուս սուր ծայրով այն ուղղվում է թուրանական «միասնական ժողովրդի» մեջ ընկած հայ ժողովրդի՝ իբրև խոչընդոտի դեմ՝ ինչպես բուն Թուրքիայում, այնպես էլ Կովկասում»[46]:

Այսպիսով, հայերը դառնում են երիտթուրքերի, շովինիստների ու ամեն կարգի ռասիստների նպատակամղված գործողությունների գլխավոր թիրախը: Ծավալվող իրադարձությունները էլ ավելի են վատթարացնում ամբողջ կայսրության անպաշտպան հայ բնակչության առանց այն էլ ողբերգական դրությունը: Ինչպես նշում է Յու. Վեսելովսկին, բոլոր հանցավոր գործողությունների անմիջական խնդիրն էր «որքան հնարավոր է կրճատել» հայ բնակչության թվաքանակը: «Եվ XX դարում,- շարունակում է նա,- Թուրքիան դեռևս ինչ-որ մի ժամանակավրեպ բան է, բարբարոսական անցյալի վերապրուկ, արդեն գրեթե լրիվ Եվրոպայից վռնդված, նա կարծես աշխատում է շարունակ կորցրածը հետ ստանալ իր ասիական նահանգներից, ցույց տալ, որ այնտեղ, գոնե, ոչ ոք իր գլխին իշխան չէ, որ այնտեղ նա կարող է գործել, ինչպես ցանկանա...»[47] : Իսկ հայերի դրությունը աստիճանաբար դառնում էր ավելի վատ, քան սահմանադրության հռչակումից առաջ էր: Ողբերգությունը սաստկանում էր նաև նրանով, որ այդ իրողությունը ծնել էր լավագույն

45 *Լևոն Վարդան.* Հայկական տասնհինգը և հայերու լքյալ գույքերը. Պեյրութ, 1970, էջ 214

46 *Հր. Սիմոնյան.* Թուրք ազգային բուրժուազիայի գաղափարաբանությունը և քաղաքականությունը, էջ 287

47 *Ю. Веселовский.* Трагедия Турецкой Армении. М., 1915, с.20

ապագայի հույսեր, և իրենց հարազատ վայրերն էին վերադարձել «հրից ու սրից» փախած տասնյակ հազարավոր մարդիկ: Բայց նրանց ունեցվածքը, շենքերն ու հողերը, մեծամասամբ զավթել էին Բալկաններից վերաբնակված մուսուլմանները կամ տեղի թուրք ու քուրդ բնակիչները: 1911-1913 թթ. կառավարությունը շարունակում էր որոշումներ ընդունել հայերի նոր բնակավայրերն ու հողերը մուհաջիրներին հանձնելու մասին, որոնց թիվն արդեն անցել էր 200 հազարից: Այդ ամենը նշանակում էր, ինչպես կառավարությանն ուղղած իր դիմումներից մեկում նշել էր արևմտահայության պատրիարքը, «որ հայերն այլևս իրավունք չունեն ապրելու Օսմանյան կայսրությունում»: Կամ, ինչպես ասված է Էրզրումի գլխավոր հյուպատոսի զեկուցագրում, դեռ 1910 թվականի աշնանը իշխանությունները իրենց գործողություններում ղեկավարվել են մի հնացած սկզբունքով՝ հայ ես, ուրեմն մեղավոր ես: Նույն գլխավոր հյուպատոսության 1912 թվականի նոյեմբերի 23-ի մեկ այլ զեկուցագրում կարդում ենք. «Հայկական ջարդերի չափերը չի կարելի հաշվել միայն անմիջականորեն կոտորածից ընկած զոհերով: Անհամեմատ ավելի խորն են ընգրկում և բնակչության կրճատման վրա ազդում դրանց անուղղակի հետևանքները, որոնք արտահայտվում են ծնելիության և, դրա հետևանքով էլ բազում տարիներով բնակչության աճի նվազման մեջ[48] : Հիշյալ երևույթները շարունակվում էին տասնամյակներով և ըստ էության հանդիսանում էին ցեղասպանության նախապատրաստման փուլերը: Նույն կարգի փաստերի շարքը պետք է դասել նաև բնակչության նյութական աներևակայելի ուժասպառումը: Կայսրությունը պատերազմի էր պատրաստվում և զգալիորեն ավելացնում էր իր զինված ուժերը, իսկ բանակը սպառազինությունների, հանդերձանքի ու պարենի սուր կարիք ուներ: Ուստի բնակչությունից նյութական բարիքների հավաքման ու բռնագրավման ընթացիկ միջոցառումներից բացի, զուգահեռաբար տեղի էր ունենում իսկական կողոպուտ: Ըստ Ամերիկայի դեսպան Հ. Մորգենթաուի «կառավարությունը ցույց տվավ միշտ այս միևնույն անպատկառությունը և անխոհեմությունը առևտրականներեն և խանութպաններեն ապրանք բռնագրավելու իր ձևին մեջ ալ: Այս արարքները քիչ տարբերություն ունեին գիտակից ավազակութենե»[49] : Գյուղերում գյուղացիներից խլում էին այն ամենը, ինչ ձեռքերն էր ընկնում՝ ձիեր, ջորիներ, ուղտեր, ոչխարներ, կովեր: Գյուղացիները մնում էին առանց լծկանի և կորցնում էին սննդի միջոցների մեծագույն մասը: Տնտեսական քայքայումը փաստորեն դառնում էր հայ բնակչության բնաջնջման սկիզբը: Հայ բնակչության թվի կրճատման միջոցներից մեկն էլ այն էր, որ նրանց բռնի կերպով ստիպում էին ընդունել մահմեդականություն: Որոշ տեղերում դա կրում էր զանգվածային բնույթ: Կրոնափոխ, երբեմն դավանափոխ էին լինում ամբողջ ընտանիքներով, իսկ երբեմն՝ բնակավայրերով:

Ստեղծված անելանելի դրությունը անենուրեք ուժեղացնում էր հայերի ռուսամետ տրամադրությունները: Նրանք հաճախ էին դիմում ռուս դիվանագետներին և ռուսական տարբեր հիմնարկների: Կոստանդնուպոլսում ռուսական դեսպան Գիրսը 1912 թվականի նոյեմբերին հաղորդում է Պետերբուրգ այն մասին, որ երկու հայտնի հասարակական գործիչներ՝

48 ՀՅՕԿ ժող. էջ 290

49 *Լևոն Վարդան.* Հայկական տասնհինգը և հայերու լքյալ գույքերը, էջ 31

Զոհրապը և Մարտիկյանը այցելել են իրեն և հայ ժողովրդի անունից հայտարարել «կտրականապես, որ հայ ժողովուրդը այժմ ուրիշ ոչ մի ելք չի տեսնում՝ բացի Ռուսաստանին դիմելը, միայն որը կարող է փրկել նրան սարսափելի դրությունից»[50] :Հայ բնակչության բարեկամական զգացմունքների անկեղծությունը խոստովանում էր ռուսական հասարակության նշանակալի մասը՝ կառավարական շրջաններից մինչև մտավորականության ու ժողովրդի ներկայացուցիչները: Ռուսական մամուլի էջերը լի էին տարբեր առիթներով արտահայտված նման մտքերով: «Ռուսսկոյե սլովո» թերթը գտնում էր, որ «հայերին պաշտպանելը ոչ միայն օգտակար է լինելու Ռուսաստանի համար, այլև դա անհրաժեշտ է նրա իսկ ապահովության համար: Բոլոր թուրքահայերը, առանց կուսակցության խտրության... Ռուսաստանի մեջ են տեսնում իրենց միակ պաշտպանին ու փրկարարին և նախանձով են նայում ռուսահայերի խաղաղ կյանքին»[51] : Նման փաստաթղթերը անչափ շատ են: Բնական է, որ հայերի ռուսական կողմնո-որոշումը նոր բան չէր թուրքական կառավարության համար: Նա փորձում էր երիտթուրքերին մոտ կանգնած մարդկանց միջոցով, օգտագործելով մամուլը և ճնշման մյուս միջոցները, հայ հասարակայնությունից խոստում կորզել, որ Ռուսաստանին ոչ մի օգնություն ցույց չեն տա Թուրքիայի հետ պատերազմ ծագելու դեպքում: Ավելին, կառավարությունը հավաստիացում էր պահանջում, որ Ռուսական կայսրության հայ բնակչությունը մասնակցություն չի ունենա Թուրքիայի դեմ հնարավոր պատերազմին: Բայց նման խոստում նրան չի հաջողվում կորզել ոչ հասարակական կազմակերպություններից, ոչ էլ, առավել ևս, ժողովրդից: Իհարկե, այդ դիրքորոշումը թանկ է նստում հայերի վրա: Նրանք հայերին անվանում են Ռուսաստանի գործակալներ: Համապատաս-խանաբար, երիտթուրքերը պատրաստվում էին հաշվեհարդար տեսնել այդ գործակալների նկատմամբ: Ադանայի կոտորածներից հետո թուրքերի և ընդհանրապես մուսուլմանների զինումը ամենուրեք կրում էր կազմակերպված բնույթ: Կառավարական մարմինների բացահայտ գործողություններից անհանգստացած՝ ազգային կազմակերպությունները բազմիցս և ավելի ու ավելի հետևողականորեն դիմում էին Թուրքիայի գերագույն իշխանություններին, դիվանագետներին ու նրանց կառավարություններին:

Այդ ժամանակաշրջանում ուշադրության կենտրոնում էին Արևմտահայաստանում բարեփոխումների պահանջները, որոնք արդեն քառորդ դար շարունակ վեճերի առարկա էին Թուրքիայի և հզոր տերությունների միջև: Այնժամ արդեն շատերի համար պարզ էր, որ թուրքական կողմը, ինչպես սովորաբար, ոչ միայն չէր կատարում իր խոստումները, այլև պատրաստվում էր շատ սուր հարցերը լուծել զենքի ուժով: Հրապարակային բողոքների վրա ոչ մի ուշադրություն չէին դարձնում: Կոստանդնուպոլսի հայ պատրիարքը 1911 թվականի սկզբին արդարադատության նախարարին հղած իր հերթական դիմումի մեջ գրում էր. «Մենք, որ կհավատայինք, թե սահմանադրության հաստատումով վերջ պիտի գտնեին պատմական դարձած մեր բողոքները, այսօր, դժբախտաբար, հուսախաբ ենք եղած սահմանադրական վերջին երկու

50 ՀՅՕԿ ժող. էջ 291

51 *Ջ. Կիրակոսյան.* Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ, գիրք առաջին, էջ 283

տարիներու մեջ ալ կառավարության անփույթ վերաբերումեն, մանավանդ Բաղեշ, Վան, Տիարբեքիր և Խարբերդ նահանգներու նկատմամբ, ուր կյանքի, գույքի ու պատվի բացարձակ անապահովություն կը տիրե»[52] : Եվ այնուհետև, նման վարվելակերպի բացասական արդյունքներից մեկն էլ, նրա կարծիքով, այն էր, որ զենք կրելու արտոնությունը տրված էր ավատատերերին ու նրանց ենթականերին, իսկ զենքի արգելման մասին օրենքը կիրառվում էր միայն հայերի նկատմամբ: Պատրիարքի և ամբողջ հայ հասարակայնության անհանգստությունը հաստատող փաստեր շատ կային: Բացահայտ ու գաղտնի զենք և հագուստ էր բերվում: Էրզրումի գլխավոր հյուպատոսը 1910 թվականի վերջին հաղորդում էր. «Շարունակվում է զենքի և զինվորական հանդերձանքի առաքումը տարբեր քաղաքներ: Նոյեմբերի 18-ին Բիթլիս է ուղարկվել 38 արկղ հրացան: Բիթլիսի վիլայեթի Սերտ գյուղում հին տիպի հրացանները, մաուզերները փոխարինվել են նորերով՝ հինգ հարվածայիններով: Այս նույն տիպի հրացաններից են ուղարկվել Ալաշկերտ ու Ղարաքիլիսա: Հին մաուզերները կփոխարինվեն Մարտին տիպի հրացաններով, որոնք զինանոց կմտնեն...»[53] : Հետագայում ևս շարունակվում էին նման հաղորդումները: Միաժամանակ խոսվում էր նոր համալրման և նույնիսկ, քաղաքացիական բնակչության ուսուցման մասին: Իսկ Ռուսաստանին պատերազմ հայտարարելու նախօրյակին սկսվում են զորավարժություններ: Այսպիսին էր պատկերը Թուրքիայում հայ բնակչության ցեղասպանության նախօրյակին:

Որպես կարևոր ու վիճելի խնդիր է ժողովրդի մասնակցությունը պատերազմին, իսկ ավելի կարևոր՝ ցեղասպանությանը: Այս հարցի պատասխանը կարելի է գտնել՝ ելնելով սոցիալական հոգեբանության սկզբունքներից, զանգվածների, հատկապես ամբոխի գործողությունների վերլուծությունից: Միշտ ու ամենուրեք մենք հաստատել ենք այն դրույթը, որ ժողովուրդները չեն կարող կանգնել մարդկության դեմ հանցավոր գործողությունների ուղու վրա. այդ բանում մեղավոր են կառավարությունները, պետական գործիչները, գաղափարախոսությունը, նրա կերտողներն ու կրողները: Սա բացարձակ ճշմարտություն է, կյանքի ճշմարտությունը: Բայց շեղումներ միշտ էլ լինում են... Որպես Հայրենական մեծ պատերազմի մասնակից և բանակային քաղաշխատող, տողերիս հեղինակը լավ է հիշում, որ պատերազմի առաջին շրջանում մեր հիմնական կարգախոսը եղել է՝ «սպանիր գերմանացուն»: Այդ կոչը հասկանալի էր բոլորիս: Գերմանացիները մեր գիտակցության մեջ ընկալվում էին որպես բնաջնջման, ոչնչացման, ստրկության վարչակարգի կրողներ: Բոլորին հայտնի էր, որ նրանք, ավելի ճիշտ՝ նրանց առաջնորդները, իրենց առջև խնդիր էին դրել ոչնչացնել ամբողջ ժողովուրդներ՝ սլավոններին, հրեաներին և ուրիշների: Նրանք թուրքերից հետո եղել են պատմության մեջ զարհուրելի ցեղասպանության կազմակերպիչներ ու կիրառողներ: Ամենուր մեղադրում էին բոլոր գերմանացիներին, հաճախ ծերբակալում անմեղ մարդկանց, իսկ Մերձվոլգյան գերմանացիների ինքնավար հանրապետության բնակչությանը արտաքսել էին Արևելք: Մարդիկ բռնարարքների էին ենթարկվում միայն այն պատճառով, որ գերմանացի են: Եվ

52 ՀՅՕԿ ժող. էջ 272

53 Նույն տեղում, էջ 268

դա այն ժամանակ, երբ խորհրդային բանակի շարքերում ծառայում էին գերմանացիներ, թեև չնչին փոքրամասնությամբ:

Մեր ազգային մեծ բանաստեղծ Հովհաննես Թումանյանը գրել է մեզ հետաքրքրող երևույթի մասին. «...Շատերը ժողովուրդն ու ամբոխը շփոթում են իրար հետ: Սրանք իրար հակասող բաներ են: Ժողովուրդն իմաստուն է, ամբոխը՝ հիմար: Ժողովուրդը ծանր է, ամբոխը՝ թեթև: Ժողովուրդը մեծահոգի է ու բարի, ամբոխը դյուրագրգիռ ու չար, ժողովուրդն աշխատանք է սիրում, ամբոխը՝ թալան, ժողովուրդը խաղաղասեր է, ամբոխը՝ կռվարար...»[54] : Մեծ իմաստունի դատողությունները, ըստ երևույթին, ելնում են արտակարգ իրավիճակների մասին եղած կոնկրետ պատկերացումից, որոնց ժամանակ ստեղծվում է հոգեբանական հատուկ մթնոլորտ: Շովինիզմն ու կրոնական մոլեռանդությունը փոխում են ժողովրդի կամ, գոնե, նրա առավել չկազմակերպված մասի նկարագիրը: Քաղաքականության, կյանքի պայմանների ու պահանջների փոփոխությունները ազդում են հասարակական հոգեբանության և ժողովրդի վրա, ավելի ճիշտ՝ նրա մեծագույն մասը երբեմն փոխվում է անճանաչելիորեն: Թուրք ժողովրդի և Օսմանյան կայսրության տարածքում ապրած մի քանի այլ մուսուլման ժողովուրդների մասին պետք է ասել, որ նրանց ամբողջ պատմությունն ու առօրյա կյանքը ընթացել է Ղուրանի և շարիաթի դոգմաներն ու պահանջները կրողների աչալուրջ հսկողության ներքո: Եվ, ինչպես արդեն վերևում ասվեց, նրանց շարունակ ներշնչում էին ուրիշ կրոններ դավանող ժողովուրդների նկատմամբ թուրքերի գերազանցության զգացումը: Իրենց մոր կաթի հետ մուսուլմանների և հատկապես, թուրքերի երեխաները, ծծում էին այդ գաղափարները, որոնք հետագայում ուղղություն էին տալիս նրանց մտքերին ու գործերին: Ասվածը խնդրի լոկ մի կողմն է: Մյուս կողմը, որը հատուկ է բոլոր ժողովուրդների անկազմակերպ մասին, այլ կերպ ասած՝ ամբոխին, խուժանին և լայնորեն լուսաբանված է գրականության մեջ, նրա ակտիվ դերն է երկրի հասարակական կյանքում: Դեռ անցյալ դարի կեսերին, խոսելով Կոստանդնուպոլսի և Թուրքիայի մի քանի այլ մեծ քաղաքների, քաղաքային տգետ ամբոխի մասին, Կ. Մարքսը գրում էր. «Այն գերազանցապես թուրքական ծագում ունի և չնայած այն բանին, որ նրան աշխատանք տվողները գլխավորապես քրիստոնյա կապիտալիստներն են, այն այնուհանդերձ նախանձախնդրորեն պաշտպանում է իր երևակայական գերազանցությունը և անպատիժ վայրագություններ անելու իր իրական իրավունքը... Տգետ ամբոխին անհրաժեշտ է գրավել կաշառքի ու շողոքորթության միջոցով: Եվ հասկանալի է, վաղ թե ուշ միանգամայն անհրաժեշտ կլինի եվրոպական մայրցամաքի ամենագեղեցիկ մասերից մեկը ազատագրել այն ամբոխի տիրապետությունից, որի համեմատությամբ հռոմեական կայսրության ժամանակների խաժամուժը՝ իրենից կներկայացներ իմաստունների ու հերոսների մի ժողով»[55] : Գերմանացի լրագրող Բ. Շտերնը Թուրքիայի մասին «Հիվանդ մարդը» խորագիրը կրող հոդվածաշարում ներկայացնում է երկրի իրական պատկերը մեր դարասկզբին: Որպես բնորոշ գիծ նա մատնանշում է պաշտոնական իշխանությունների սերտ կապը խաժամուժի հետ: Կապը իրականացվում էր 43 հազար լրտեսների ընդարձակ

54 «Գրական թերթ», 24 փետրվարի, 1989թ.

55 *К. Маркс и Ф. Энгельс.* Соч., т. 9, с. 6-7

ցանցի միջոցով, որոնցից 3000-ը սպասարկում էին Աբդուլ Համիդի արքունիքը. մնացածները ցրված էին ամբողջ պետության մեջ: Այնուհետև, կապն իրականացվում էր ժանդարմների ու ոստիկանների միջոցով, որոնք կատարում էին ամենաանմաքուր հանձնարարություններ, ուստի և երբեմն հավաքագրվում էին այդ խաժամուժի շարքերից: Ոստիկանները հաճախ գործարքի մեջ էին մտնում ոճրագործների, գողերի ու ավազակների հետ, վերջիններիս թալանած ավարից ստանալով իրենց բաժինը: Այդ մեքենայություններին գործուն մասնակցություն էին ունենում սպասարկման բոլոր խմբերն ու ավազակախմբերը՝ բեքչիները (գիշերային պահակներ), թուլումբաջիները (հրշեջները), կայրքչիները (մակույկավարներ), ստամբուլցի նշանավոր համբալները: Նրանք բոլորն էլ աշխատում էին օգտագործել փող վաստակելու, օգուտ կորզելու ամեն մի հնարավորություն: Հենց նման գործողությունների համար էլ Բ. Շտերնը դրանց բոլորին անվանել է «կես ոստիկանություն»[56]: Պատկերը լրիվ ներկայացնելու համար բազմաթիվ օրինակներից բերենք մի քանիսը միայն: Վան քաղաքի շուկայի 1876 թ. նշանավոր հրդեհի ժամանակ ականատեսները «զարմանքով տեսան, որ պահակազորքը, ոստիկանական զինվորներն ու ամբոխը, միավորվելով, կացիններն ու ջահերը ձեռքներին, ավերում են հայերի խանութներն ու տները, թալանում ու հրկիզում դրանք»: Իսկ պաշտոնատար անձինք ոչ միայն չէին խոչընդոտում, այլև ոգևորում էին նրանց[57]: Բանակը, ոստիկանները և ամբոխը համատեղ են գործել 1894-1896 թթ. Պոլսում, Տրապիզոնում, Դիարբեքիրում, Սվազում, Արաբկիրում և բազմաթիվ այլ բնակավայրերում կատարված ջարդերի ժամանակ: Դեպքերի ականատես, Սվազում ֆրանսիական հյուպատոսի կնոջ վկայությամբ, պատերազմի նախօրյակին քաղաքում կազմակերպվել էր կոտորած: «Շուկայի մեջ բոլորը սպանեցին... Զորքը կանցնե ավարին հետ, արյունոտ ձեռքերով: Խուժանը կշարունակե կողոպտել: Ախ, այդ խուժանը, ինչ վայրագություններ չգործեց: Եվ որովհետև զինված չէր կանոնավոր զենքերով, բռնած էր ինչ որ ձեռքն էր անցնում՝ կացին, նաճախ, քար ու բիր, որոնցմով կջարդեր զոհերուն գլուխը և ապա կտաներ գետը կծգեր իրենց ողբակոծ մայրերու ու կանանց աչքին առջև: Սպանելե առաջ կմերկացներ, կմասնատեր անդամները և զոհերուն հետ դիվային խաղ կխաղար...»: Իսկ երբ խուժանը «չէր կրնար ավարը փոխադրել, նավթ կլեցներ և կայրեր, որպեսզի ջարդեն վերապրողները չօգտվին»[58]: Կողոպուտներից բացի խուժանի ներկայացուցիչները կատարում էին իշխանությունների հանցավոր հանձնարարությունները, դրա դիմաց ստանալով առատ վարձատրություն: Էրզրումի գլխավոր հյուպատոսը 1913 թվականի հոկտեմբերին հաղորդում էր, որ տեղական իշխանությունները մտադրվել էին կազմակերպել պատրիարքի սպանությունը Էրզրումից Կոստանդնուպոլիս մեկնելու պահին: Այդ նպատակի համար 50 լիրայով վարձել էին երկու դադաշներ կամ Էրզրումցի ավազակներ...[59]: Մեկ այլ հաղորդման մեջ դեսպանին տեղեկացնում են, որ իթթիհատականների տեղական ակումբը հիմնել է «Թուրք գյուշի» (Թուրքերի ուժ) ընկերությունը,

56 «Մուրճ» հանդես, 1905, N 9, էջ 98

57 *Վ. Համբարձումյան*. Գուղաշխարհ, Փարիզ, 1917, էջ 205

58 Նույն տեղում, էջ 206

59 ՀՅՕԿ ժող. էջ 322

որը ծավալել է բավական մեծ գործունեություն: Անդամների մեծ մասը, բացառությամբ ծառայողների ու արհեստավորների «պատկանում են Էրզրումցի դադաշներին կամ ավազակներին[60]: Այնուհետև ասված է, որ ընկերության անդամների համար անցկացվում են ռազմական պարապմունքներ: Ինչպես ասում են՝ մեկնաբանություններն ավելորդ են: Մնում է ավելացնել, որ հասարակության այդ տականքները առանձնապես սարսափելի են իրենց մոլեռանդությամբ: Շովինիզմից խելահեղ նրանք սարսափելի կրոնամոլ էին և կուրորեն կատարում էին հոգևոր ու աշխարհիկ առաջնորդների ցուցումները: Եվ իրավացի է ժամանակակից աչքի ընկնող աստվածաբաններից մեկը, որ մուսուլմանական վարչակարգի տիրապետության ժամանակ սոցիալական բարոյականության միակ հիմքը եղել է իսլամը... «Մեզ՝ մուսուլմաններիս համար գոյություն չունի այնպիսի մի բարոյականություն, որը վերջնական արդարացում չստանա իսլամում»[61]: Թուրքերի վրա լուրջ և խոր ազդեցություն ուներ նաև պատմական անցյալը, առաջավոր Ասիայի նվաճման ժամանակներից ասես բնատուր դարձած դաժանությունն ու անգութ վերաբերմունքը ամբողջ շրջապատի նկատմամբ: Չի կարելի չհամաձայնել թուրքական նացիոնալիզմի գաղափարախոս Զ. Նուրիի հետ, որը իր ցեղակիցների բնորոշ գծերից մեկը տալիս է հետևյալ ընդհանրացման մեջ. «Թուրքերի բազմաթիվ վատ սովորություններ բնածին են և առաջացել են նախկին վնասակար ավանդույթներից: Մենք մերոնց նկատմամբ նույնպես խղճահարության զգացում չենք տածում: Թուրքերը անողոք են ոչ միայն հայերի և ուրիշների, այլև միմյանց նկատմամբ»[62]: Սակայն ընդհանուրի խոստովանությամբ, առավել տարածված և հաստատուն սոցիալ-հոգեբանական երևույթներից մեկը եղել ու մնում է կրոնական գործոնը: Որքան ավելի ուժեղ է նրա ազդեցությունն ու զգայական ներգործությունը, այնքան զանգվածների մոլեռանդությունն ավելի է ազդում տեղի ունեցող իրադարձությունների վրա: Թուրքերի հարձակողական ոգին և հոգեկան լարվածությունը պահպանելու համար շարունակ նրանց հիշեցնում էին, որ քրիստոնյա հպատակները, մասնավորապես հայերը ունեցել են դարերով պահպանված և երաշխավորված արտոնություններ, իբր իրենք հարստանում էին, իսկ թուրքերը ապրում էին աղքատության մեջ: Երիտթուրքերի ղեկավարներից մեկը՝ Զ. Շեհաբետդինը, հենց այդպես էլ բացատրում է յուրայինների թշնամության ու ատելության պատճառները: «Հույները, հայերը, հրեաները իրենց օգտին շահագործել են երկիրը... Մեր աղքատությունը, երկրի քայքայված վիճակը, որ ստեղծել էին հենց իրենք, մեր մեջ ատելություն էր արթնացնում նրանց նկատմամբ»[63]: Այդ փաստարկը, երիտթուրքերի տեսակետից, թույլ էր տալիս կեղեքումներից ու ջարդերից հետո զանգվածներին ներշնչել, որ հայերի բնաջնջումը անհրաժեշտ է ու անխուսափելի: Հանրահայտ է, որ պետական գործիչների ու մտածողների համոզվածությունը աստիճանաբար և «անտեսանելի ուղիներով առաջնորդներից անցնում է զանգվածներին»: Հոգեբանների դիտարկումների համաձայն, «մարդիկ

60 ՀՅՕԿ ժող., էջ 325

61 *М. Т. Степанянц*. Философия и социология в Пакистане. М., 1967, с. 64

62 *Celal Nuri*. Osmanli Imparatorlugunun tedemviyati. Istanbul, 1913, s. 99

63 *Maurice Pernot*. La question turque. p.126

պատրաստականություն են ցուցաբերում ենթարկվելու շրջապատի վարակիչ ներգործությանը, երբ այդ գործողությունը համապատասխանում է իրենց գաղափարներին և համոզմունքներին»[64] : Ըստ երևույթին, զանգվածների վրա ներգործության երկրորդ ուղին նույնպես լուրջ նշանակություն ունի նրանց արարքները նախապատրաստելու համար: Մ. Վռոնչենկոն վկայակոչում է մի ընդհանուր հոգեբանական երևույթ ևս, որը բացահայտում է թուրքերի նախանձի և հայատյացության արմատները: Հայերին նա բնութագրում է որպես գործարար, խոհեմ, հպարտ մարդկանց: «Հայերը,- գրում է նա,- աշխատասեր, օգտակար, ոչ քմահաճ ժողովուրդ են»[65] :

Ստորև անհրաժեշտ ենք համարում փոքր-ինչ ավելի հանգամանորեն կանգ առնել սոցիալական հոգեբանության ընդհանուր հետևությունների վրա, առանց որոնց դժվար կլինի հասկանալ ու բացատրել՝ հայ ժողովրդի ողբերգության ողջ խորությունը: Սոցիալական հոգեբանության էական կողմերից մեկն այն է, որ զանգվածային գործողությունների ժամանակաշրջաններում «մեծ դեր են խաղում չգիտակցված գործընթացները»: Այդ հանգամանքը շատ վարպետորեն օգտագործում են նման ելույթների կազմակերպիչներն ու ոգեշնչողները: Անկազմակերպվածությունը, որոշակի նախնական նպատակների բացակայությունը, տարերային գործելակերպը, խուժանի մոլուցքը անչափ շահավետ են. անխոհեմ գործողություններ կատարելու համար: «Ամբոխը հաճախ մարդկանց միանգամայն պատահական բազմություն է,- գրում է հոգեբան Բ.Պորշնևը,- նրանց միջև չի կարող լինել ներքին ոչ մի կապ, նրանք ընդհանրություն են դառնում լոկ այն չափով, ինչ չափով որ համակված են լինում միատեսակ նեգատիվ, ավերիչ էմոցիայով ինչ-ինչ անձանց, հաստատությունների, իրադարձությունների նկատմամբ... Անկասկած դա սոցիալ-հոգեբանական ընդհանրության սկզբնական և ստորին, կարելի է ասել, ընդամենը միայն ելակետային ձևն է»[66] : Այնուհետև նա շարունակում է. «Խմբային, կոլեկտիվ և զանգվածային տրամադրությունն ունենում է բնորոշ գծեր՝ վարակչություն, մեծ խթանիչ ուժ, զանգվածայնություն և շարժունություն»[67] : Ընդ որում բոլոր մասնագետները համամիտ են, որ զանգվածների վրա վճռական ներգործություն են ունենում հասարակական կարծիքի գաղափարական մշակումը և կոնկրետ պատմական իրադրությունները: Այդ ամենը գրգռում է զանգվածներին, նրանց նախապատրաստում որոշակի գործողությունների: «Ամբոխի գործողությունների մեջ տեղի է ունենում գաղափարախոսական և սոցիալ-հոգեբանական ազդեցությունների միակցում և գործնական կիրառում, դրանց փոխներթափանցում մարդկանց ռեալ վարքագծի մեջ: Խմբային զգացումները, կամքի դրսևորումները, տրամադրությունները՝ լինում են գաղափարախոսական տեսակետից գունազարդված: Զանգվածային հիստերիայի, ռազմական կեղծ հայրենասիրական մոլուցքի, նացիոնալիստական և շովինիստական տրամադրությունների բռնկումների իրադրությունը... անփոփոխ կերպով դառնում է մի հենք, որի վրա ծավալվում են երբեմն ամենաողբերգական իրադարձություններ:

64 "Социал на психологи.", М., 1975, с. 285

65 М. Вронченко. Обозрение Малой Азии. Част втора . СПб., 1840, с. 242-243

66 *Б. Ф. Поршнев.* Социал на психологи и истори . М., 1966, с. 91

67 Նույն տեղում, էջ 114

Դրանցում հաճախ որպես գործող ուժ հանդես է գալիս ամբոխը»[68] : Այդ պայմաններում նրա վրա զգալի ներգործություն են ունենում ինչպես զանազան լուրերը, այնպես էլ վերևից թելադրվող հաղորդումները: Մարդիկ աստիճանաբար, աննկատ ու տարերայնորեն մերձենում են, չգիտակցելով, թե դա ինչպես է տեղի ունենում:

Անհատի և զանգվածների վարքագծի ու գործողությունների հոգեբանական վերլուծությունը սոսկ բացատրում է, թե ինչպես էին նախապատրաստվել և ինչպես էին տեղի ունեցել կոտորածները, ջարդերը: Բայց պետք է պարզել նաև դրանց հետևանքների համար պատասխանատվության և մեղավորության հարցը:

ՀԱՅԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ

> Ի՞նչ է կոտորածը Հայաստանում: Դա Բարձրագույն դռան կողմից ձեռնարկված վարչական միջոց է, որի միակ դրդապատճառն ու նպատակն է բարեփոխումների կենսագործման լիակատար մերժումը՝ հայ ազգի բնաջնջման միջոցով:
>
> ՅՈՀԱՆ ԼԵՓՍԻՈՒՍ

Հետազոտության առարկա է եղել ու պիտի լինի թուրք ժողովրդի, հատկապես նրա անկազմակերպ մասի՝ ամբոխի պատասխանատվության խնդիրը, մարդկանց խաժամուժ, ովքեր «սոսկալի մոլեռանդ են և աչքերնին տնկած հայու ունեցածին, իսլամ չեղողի մը վրա արև անգամ չեն ուզեր որ դպի»[1] : Այս իրողությունը, որ խիստ դիպուկ է բնութագրել հայոց եկեղեցու հովիվներից մեկը, մեր կարծիքով, կարելի է տարածել գրեթե ամբողջ թուրք ժողովրդի վրա կոտորածների ու ցեղասպանության ժամանակաշրջաններում: Եվ իրավացի էր հայ հասարակական գործիչ ու հրապարակախոս Գերսամ Սահարոնյանը, երբ բանավեճի ժամանակ գրում էր. «Ոչ մեկ ատեն պատմության մեջ «իշխանություններ» ու «ժողովուրդ» կամ «աշխատավորական զանգվածներ» այնքան նույնացան, այնքան համամիտ եղան իրարու, այնքան սերտորեն գործակցեցան իրարու հետ՝ որքան «թրքական իշխանությունները» և այսպես կոչված «թուրք աշխատավորական զանգվածները՝» 1915 թվականին սկսված ցեղասպանության ընթացքին: Ոչ մեկ ատեն, ոչ մեկ տեղ , ոչ ազդվորեն և ոչ ալ մեղմորեն «թուրք աշխատավորական զանգվածներ» կոչված այդ ոհմակները չընդվզեցան իրենց իշխանությանց որոշումներուն, ծրագիրներուն

68 "Основы социальной психологии", с. 168

1 ՀՅՕԿ ժող. էջ 289

ու ոճիրներուն դեմ...»[2] : Անկասկած, մեծ նշանակություն է ունեցել ղեկավար գործիչների և համապատասխան մարմինների բազմակի նախազգուշացումները հայերին թաքցնելու դեպքում պատասխանատվություն կրելու մասին: Հայերի, ում «թուրքական հողի վրա ապրելու և աշխատելու իրավունքը լիովին վերացված է»[3] : Համառորեն խորհուրդ էին տալիս նրանց թշվառ վիճակը տեսնելիս չենթարկվել կարեկցանքի, այլ վերջ տալ բոլորին և ամեն կերպ աշխատել ոչնչացնել բուն «Հայաստան» անունը Թուրքիայում: Իսկ զինվորական ու քաղաքացիական պաշտոնյաներին, հրամաններն ու կարգադրությունները չկատարելու դեպքում, սպառնում էին խիստ պատիժ: Եվ այստեղ գլխավորն այն է, որ ժողովուրդն իր մեծամասնությամբ հոգեբանորեն ու գործնականորեն դեռևս պատրաստված չէր բռնարարքների ու հանցավոր գործողությունների: Այդ բանն է հաստատում Կոստանդնուպոլսում ռուսական դեսպանի 1914 թվականի սեպտեմբերի 9-ի հեռագիրը: Հեռագրում շարադրված է էրզրումի գլխավոր հյուպատոս Ադամովի զեկուցագիրը, որտեղ ասվում է, «Այստեղ հավաքվել է առնվազն 300 000, որոնցից մոտ 100 000-ը Դիարբեքիրից, Սվազից, Խարբերդից եկած կանոնավոր զորքեր են: Բանակում քիչ կա հանդերձանք, հրացան ու պարենամթերք: Ապսվել են սով, հիվանդություններ, դասալքություն: Հայկական կոտորածը հետաձգվել է, քանի որ հարուստ մուսուլմանները երաշխիքներ են պահանջել, որ չեն պատժվի Ռուսաստանի կողմից...»[4] : Մինչև պատերազմը սկսվելը Ռուսաստանի դիրքը այդ հարցում հաշվի էր առնվում: Թուրք ղեկավարներին, ինչպես վերևում նշվեց, քաջ հայտնի էր հայերի ռուսամետ կողմնորոշումը և ռուս շատ գործիչների բարեհաճ վերաբերմունքը հայերի նկատմամբ: Նույնիսկ հորինված լուրեր էին տարածվում, որ, իբր, Նիկոլայ II-ը 1914 թվականի սեպտեմբերի 17-ին ապստամբելու կոչով դիմել է Թուրքիայի հայերին: Հայերի ապստամբության և նրանց կողմից թուրքական զինված ուժերի թիկունքում սպառնալիք ստեղծելու լուրերը շարունակվում էին: Իսկ իրականությունը հանրածանոթ էր. Թուրքիան չէր մոռանում իր պարտությունը 1877-1878 թթ. և արդեն մի քանի տարի է պատրաստվում էր նոր պատերազմի: Զինվորական գործակալ Մ. Ն. Լեոնտևը 1914 թվականի հոկտեմբերի 9-ին հաղորդում էր. «Առայժմ զորահավաքը և բանակի կենտրոնացումը կարելի է համարել ավարտված»[5]:Այդ բանը շուտով հաստատվում է: Հոկտեմբերի 27-ին Գյոբեն և Բրեսլաու նավերը ուխտադրժորեն հարձակվում են ռուսական նավատորմի վրա և էական վնաս հասցնում: Հոկտեմբերի 29-ին թուրքական ականակիրը Օդեսայի նավահանգստում ջրասույզ է անում մի հրետանավակ: Հաջորդ օրը թուրքական նավերն արդեն գործում են Սևաստոպոլի, Թեոդոսիայի, Նովոռոսիյսկի շրջաններում: Եվ միայն նոյեմբերի 11-ին պաշտոնապես պատերազմ է հայտարարվում Ռուսաստանին: Դրանից առաջ, օգոստոսի 6-ին, գերմանական դեսպան Վենգենհայմը մեծ վեզիր Խալիմ փաշային է հանձնում մի նամակ, որի մեջ հստակեցվում էին նախօրյակին կնքված «դաշինքի» պայմանները: Կետերից մեկում ասվում էր. «Գերմանիան պարտավորվում է

2 *Գ. Սիարոնյան.* Խոհեր հիսնամյակի ավարտին. Բեյրութ, 1966, էջ 23

3 ՀՅՕԿ ժող. էջ 564

4 ՌՇՆԿՊԱ, ֆ. 418, g.1, պահպ. միավ. 4270, թ. 93

5 ԿՊԴՊԱ, ֆ. 2000, g. 1, գ. 3860, թ. 112

Թուրքիայի արևելյան սահմանի այնպիսի վերագծում, որը հնարավորություն կտա անմիջական շփում հաստատել Ռուսաստանի մուսուլման տարրերի հետ»[6] : Այսպիսով պատերազմը Ռուսաստանի դեմ մղվում էր ի կատարումն պանթուրքիզմի ծրագրի, որի սուր ծայրն ուղղված էր հայերի դեմ: Յա. Թուզչյանը, հայազգի այն բժիշկներից մեկը, ում հնարավորություն էին տվել իր գործունեությունը շարունակել բանակում, գրում էր. «Հայաջնջումի պատճառը հայերու ապստամբությունը չէր, այլ թուրք կառավարության ընդունած սկզբունքն ու կանխամտածված ծրագրին միակ հետևանքն էր»[7]: Նա շարադրում է իր հետ ծառայած թուրք շատ սպաների տեսակետը, որոնք բացահայտ պաշտպանում էին իրենց կառավարության հանցավոր գործողությունները: Նրանցից մեկը լկտի կերպով հայտարարել է. «Հայերը ինչ որ ալ լինեին, որչափ ավելի հավատարիմ ալ լինեին, օգուտ չուներ և ինչ որ ալ ընեին հայաջնջումը անխուսափելի էր, քանի որ հարմար պատեհությունն եկած էր, ինչ որ այլ հասկըցանք, թե հայերու ու հույներու զարգացումը մեզ համար ապագա չխոստանար և ինչ որ թե առաջ և թե վերջ մեզ համար փորձանք եղած էր. ասոր համար հայերը բնաջինջ ըրինք, որպեսզի մենք ապահովվեինք»[8] : Ընտրված քաղաքականության նկատմամբ եղած վստահությունն ու անդրդվելիությունը կուսակցական և պետական մարմիններին մղում էին տենդագին գործունեության: 1915 թվականի ապրիլից մինչև 1916 թվականի մարտ ամիսը գավառներ էին ուղարկվել ավելի քան 30 հեռագիր, ցուցում, հրաման ջարդերը սկսելու, դրանց մեթոդների ու ձևերի և կատարողների հստակ գործողությունների մասին: Միաժամանակ հրահանգներ, նամակներ և կարգադրություններ էին ուղարկվում «տեղահանված քաղաքացիների գույքը ընդունելու և պահեստներում պահպանելու կարգի» մասին մինչև նրանց «վերադարձը», իբր այդ գույքը նորից տերերին հանձնելու համար: Նման փաստաթղթերի քանակն անցնում է երկու տասնյակից: Փաստաթղթերից հիմնականը 1915 թվականի մայիսի 16-ի հրահանգն է «լքված գույքի, անշարժ ագարակների ու հողերի մասին», որը բաղկացած է 34 մանրամասն հոդվածներից: Փաստաթղթերի առաջին խումբը նախատեսվում էր երկրի ներսում կիրառելու համար և խնամքով թաքցվում էր արտաքին աշխարհից: Երկրորդ խումբը, ընդհակառակը, բացահայտորեն ուղարկվում էր տեղերը: Այդ փաստաթղթերը Թուրքիայի կառավարող շրջանների անսքող լկտիության ու կեղծիքի վկայությունն են: Այն ներկայացումը, որ նրանք սարքել էին արժեքներն ու ունեցվածքը գույքագրելու, պահպանելու և իբր տերերին վերադարձնելու համար, լրացնում էր զոհերի նկատմամբ գործադրված ծաղրուծանակի ընդհանուր պատկերը: Այսպիսով հայերի իսպառ բնաջնջման ծրագիրը կենսագործվում էր ամենայն ջանադրությամբ: Բացի դրանից, հանցավոր գործողությունները պատշաճ մակարդակով կատարելու համար, վերադաս պետերի հրամանները երաշխավորում էին կատարողների շահերի պաշտպանություն: Իր առաջին հրամաններից մեկում (1915 թվականի սեպտեմբերի 9-ին) Թալեաթ փաշան պահանջել է առաջադրանքը կատարելու

6 *Е. Ф. Лудшувейт.* Турция в годы первой мировой войны. М., 1966, с. 33

7 *Ջ. Կիրակոսյան.* Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը 1914-1916 թթ. Եր. 1965, էջ 231

8 Նույն տեղում, էջ 232

համար պատասխանատու անձանց հաղորդել, որ նրանք պարտավոր են կենսագործել իրենց իսկական մտադրությունը, առանց պատասխանատվությունից վախենալու[9]: Գործողությունները ծրագրվել ու հաջորդաբար իրականացվել են ըստ շրջանների: Լեփսիուսի հաղորդմամբ՝ Կիլիկիայի հայ բնակչության տեղահանումը կատարվել է 1915 թվականի մարտ-մայիս ամիսներին: Կոտորածները Արևմտահայաստանում և հարևան շրջաններում իրականացվել է մայիսի վերջից, իսկ երկրի կենտրոնական մասում՝ օգոստոս-սեպտեմբեր ամիսներին: Մի երկու տասնյակ քաղաքներից, որոնց բնակիչների նշանակալի մասը կազմել են հայերը, ապրիլ-մայիս ամիսների ընթացքում աքսորվել և ոչնչացվել է ավելի քան 3000 մտավորական: «Հունիսի սկզբից,- այնուհետև գրում է Լեփսիուսը,- պետության մեջ վարչական պաշտոններ զբաղեցնող բոլոր հայերը հանվեցին իրենց պաշտոններից, իսկ բոլոր բժիշկները, որոնք պատերազմի սկզբից ևեթ հավատարմորեն իրենց պարտականությունն էին կատարում թուրքական զինվորական հոսպիտալներում, բանտ նետվեցին»: Առաջադրված նպատակին հասնելու համար օգտագործվել են կամայականությունն ու ապօրինությունը, բռնությունն ու խաբեությունը: Լեփսիուսը շարունակում է. «Հազարավոր հայերի, պատվավոր կրթված մարդկանց՝ պատգամավորների, հրապարակախոսների, գրողների, բանաստեղծների, իրավաբանների, փաստաբանների, նոտարների, ծառայողների, բժիշկների, վաճառականների, բանկիրների և բոլոր ունևոր ու ազդեցիկ տարրերի բոլոր այդ ձերբակալությունները կատարվեցին առանց որևէ մի դատաքննության: Պարզապես նրանք (թուրքերը) ուզում էին գլխատել հայ ժողովրդին՝ նախքան նրա առանձին մասերի ջախջախմանն անցնելը»[10] : Մինչև տեղահանությունը, ձեռնարկումների մյուս փուլը լինում է ավելի քան 300 000 երիտասարդների զորահավաքը, որոնք պատերազմի սկզբին մարտական գործողություններին մասնակցելուց մի քանի ամիս հետո զինաթափվել են, փոխադրվել թիկունք և գնդակահարվել: Այդպես հայ բնակչությունը կոտորածից առաջ մնում է առանց ղեկավարների և գրեթե լրիվ կորցնում իր համար այնքան թանկագին տղամարդկանց մասը: Կառավարության կողմից ճանաչված հայկական վարչական պաշտոնների կատարյալ բացակայության պայմաններում եկեղեցին եղել և մնում էր որպես հոգևոր կյանքի կառավարման, միջհամայնքային հարաբերությունների և ինչպես նաև իշխանությունների հետ կապերի միակ հաստատությունը: Ուստի եկեղեցին ու նրա սպասավորները նույնպես ենթարկվում էին զանազան հալածանքների: Ըստ կառավարության և սուլթանի կողմից ճանաչված արտոնությունների, երբ բարձրաստիճան հոգևոր անձինք պատասխանատվության չէին կանչվում առանց պատրիարքի թույլտվության, ոչ մի տեղ և գրեթե երբեք հաշվի չէր առնվում: Բռնի զավթումները, կողոպուտները, վանքերի ու եկեղեցիների հրկիզումներն ու սրբապղծությունը սովորական երևույթ էին, իսկ կոտորածների և ցեղասպանության ժամանակաշրջանում դրանք դառնում էին ոճրագործությունների կենտրոններ: Հարգանքի տուրք պետք է մատուցել հոգևորականության ներկայացուցիչներին, ովքեր բոլոր միջոցներով աշխատում էին թեթևացնել իրենց հոտի դրությունը, իմաստնություն ու

9 ՀՅՕԿ ժող. էջ 574

10 Նույն տեղում, էջ 469-470

քաջություն էին ցուցաբերում կոտորածների արտակարգ պայմաններում, որպես ժողովրդի ներկայացուցիչներ ենթարկվում էին ամենադաժան հալածանքների ու անհերևակայելի ծաղրուծանակի: Կոստանդնուպոլսի պատրիարքի հաղորդման համաձայն, մինչև 1915 թվականի վերջը հայկական վանքերն ու եկեղեցիները մեծ մասամբ ավերվել են ու սրբապղծվել, իսկ հոգևորականությունը գրեթե ամբողջովին կոտորվել է: 16 թեմական առաջնորդներ ձեռբակալվել են, կախաղան բարձրացվել, տանջամահ արվել խուժանի կողմից:

Հացավոր գործողությունների շղթայի մի օղակն էր դեռևս 1914 թվականի աշնանը հայ գյուղացիության բռնի արտաքսումը: Դա մի վճռական քայլ էր բնիկ ժողովրդին արմատախիլ անելու իր պատմական բնօրրանից: Բռնարարքներից հետո քաղաքներում մնում են ծերերը, երեխաներն ու կանայք, որոնք դառնում են պատժամիջոցների զոհեր՝ ընդհուպ մինչև ցեղասպանության վերջը: Արդեն 1914 թվականի ամռանը երիտթուրքերի ցուցումով և էնվերի հրամանով կազմավորվում են այսպես կոչված հատուկ զորամասեր՝ «թեշքիլաթի մահսուսիյե», որպես անմիջական պատժիչ ուժերի ղեկավար մարմիններ՝ հայ բնակչության տեղահանությունն ու կոտորածն իրականացնելու համար: Այդ անվան տակ գործել է մի կազմակերպություն ևս, որի կենտրոնը մայրաքաղաքում էր, և որի նպատակն է եղել համախմբել բոլոր նրանց, որքեր լավ են իմացել Կովկասը, տիրապետել են կովկասյան ժողովուրդների լեզուներին և պատրաստ են եղել պատերազմ հայտարարելուց հետո Ռուսաստանի թիկունքում կազմակերպել ապստամբություններ ու քայքայիչ գործողություններ[11]:

Երիտթուրքական կառավարության ղեկավարների և «Միություն ու առաջադիմություն» կուսակցության անդամների դատավարության ժամանակ, որը ընդմիջումներով տեղի էր ունենում Կոստանդնուպոլսում 1919 թվականի ապրիլից մինչև հուլիս, պարզվում են մի շարք մանրամասներ: Մեղադրական եզրակացության մեջ մատնանշվում է, որ հենց իթթիհատի կենտկոմի ազդեցիկ անդամները, ինքը՝ «կոմիտեն, նրա իրավական դեմքը, մեղադրվում է օրինազանցության, չարաշահումների և մի շարք կոտորածներ կատարելու հանցանքով»[12] : Մեղադրվում են հենց կուսակցությունը, նրա ղեկավարները և տեղական կոմիտեները: Ա. Մանդելշտամը հաստատում է, որ փաստական իշխանությունը պատկանում էր ոչ թե երկրի կառավարությանը և նույնիսկ, ոչ թե իթթիհատի կոմիտեին: Կուսակցության պարագլուխներ էնվերը, Թալեաթը, Ջեմալը, Խալիլը միշտ չէ, որ անհրաժեշտ էին գտնում կոմիտեին տեղյակ պահել իրենց քաղաքականության բոլոր գաղտնիքներին[13]: Չափազանց կարևոր է հիշել ղեկավարության մի շրջաբերականի մասին, որը հասցեագրված է եղել իրենց տեղական կոմիտեներին՝ պատերազմի նախօրյակին: Այնտեղ խոսվում է Օսմանյան կայսրության և մյուս մուսուլմանական պետությունների դեմ տերությունների բազմադարյա

11 Տես «Հայերի ցեղասպանությունը ըստ երիտթուրքերի դատավարության փաստաթղթերի»: Առաջաբանը, թարգմանությունը և ծանոթագրությունները Ա. Հ. Փափազյանի, Եր., 1988, էջ 10,14

12 Նույն տեղում, էջ 37

13 *А. Н. Мандельштам.* Младотурецкая держава, с. 55

ագրեսիայի, Թուրքիայի և Գերմանիայի շահերի միասնության ու նրանց դաշինքի անհրաժեշտության, «երդվյալ, անհաշտ, հավերժական թշնամու» Ռուսաստանի կողմից հայրենիքի դեմ ուղղված սպառնալիքի մասին, որը սկսվել է դեռ Պերոս Առաջինի ժամանակներից: Գլխավորը, սակայն, այլ է. «Չմոռանանք, որ համաշխարհային պատերազմին մեր մասնակցության նպատակը սոսկ վերահաս, սպառնացող կորուստն մեզ փրկել չէ. այլ մենք կը հետապնդենք ավելի անմիջական նպատակ մը- մեր ազգային իդեալին իրականացումը: Մեր ժողովրդին և հայրենիքին ազգային իդեալը մեզի մեկ կողմե կը մղե խորտակելու մոսքովեան թշնամին, ատով հասնելու մեր կայսրության համար բնական սահմանի մը (այսինքն՝ Ռուսաստանի բոլոր թուրքալեզու և մուսուլման ժողովուրդների միավորման: Հ. Ի.), որուն մեջ պարփակվին ու միանան մեր բոլոր ազգակից եղբայրները... Մենք կը կռվինք մեր ազգին, մեր կրոնին և մեր ազգային իդեալին համար»[14] : Այս հիմնական փաստաթուղթը թելադրում էր կենտրոնի կամքը և ազատ արձակում տեղական կոմիտեների ձեռքերը: Նրանց ներկայացուցիչները տեղերում, երբեմն զբաղեցնելով ոչ կուսակցական պաշտոններ, կատարել են կուսակցական կենտրոնների ցուցումները: Վերջիններս, ասված է մեղադրական եզրակացության մեջ, «Միություն և առաջադիմություն» կուսակցության առաջնորդները մի ներքին ահաբեկչական ուժ ստեղծելով՝ զանազան ձևերով այլափոխել են Օսմանյան կայսրության սահմանադրական օրենքները և իրենց քմահաճ գործարքներն իրականացրել են վիլայեթներում իրեց մարդկանց միջոցով «պատասխանատու քարտուղարներ» և «լիազորներ» անվան տակ[15]: Հիշյալ անձինք զբաղեցրել են հարկային տեսչի, դպրոցների տնօրենների կամ դասատուների, բանկի, տեղական ոստիկանության, գյուղատնտեսության բնագավառի աշխատողի, քաղաքագլխի, ոստիկանության պետի, իսկ ավելի հաճախ՝ տարբեր աստիճանների սպաների պաշտոններ: Հատուկ զինվորական կոլեգիայի դատավճռում դատապարտվում է հիշյալ անձանց, ոճրագործությունների մասնակիցների գործունեությունը և ցույց տրվում այն հանցանքները, որոնց համար նրանք ենթարկվել են պատասխանատվության: Վերջնականապես բացահայտված է, թե ինչպես վերոհիշյալ պատասխանատու քարտուղարներից և լիազորներից մի քանիսը նպաստել և օժանդակել են կենտրոնական կոմիտեի ծրագրին ու իրենց մասնաճյուղերում հավաքագրված մարդասպանների և այլ հանցագործների միջոցով կազմակերպել են հայերի կոտորածը և կողոպտել նրանց ունեցվածքը: Զբաղվել են հարստահարությամբ և տիրացել նրանց լքյալ գույքին[16]: Իբրև բնորոշ օրինակ, նշվում են Յոզղաթի մութասարֆի տեղակալի և Բողազլյանի կայմակամ Քեմալ բեյի՝ տեղական հայերի ջարդի ու նրանց հարստության կողոպուտների գլխավոր կազմակերպչի գործողությունները: Նա եղել է «գլխավոր հանցագործը, քանի որ ինքն է նշանակել մի շարք անպաշտոն մարդկանց, որպեսզի ուղեկցեն քարավանները և միևնույն ժամանակ ստիպել է քարավանի պաշտոնական

14 *Զարևանդ*. Միացյալ անկախ Թուրանիա, 1926, էջ 137-138

15 «Հայերի ցեղասպանությունը ըստ երիտթուրքերի դատավարության փաստաթղթերի», էջ 134

16 Նույն տեղում, էջ 157

առաջնորդ Շյուքրի չավուշին՝ որ նա հնազանդվի և կատարի նրա հրամանները[17]:

Բոլոր կարգի ոճիրներ գործողների արարքներին նպաստող կարևոր ու մշտական գործոն է եղել մուսուլման հոգևորականության օգնությունը: 1914 թվականի նոյեմբերի 11-ին իսլամական առաջնորդը հրատարակել է հինգ ֆեթվա, սրբազան պատերազմ՝ ջիհադ հայտարարելու մասին: Մուսուլման հոգևորականության առաջնորդի դիմումի մեջ, դեռ հնում ընդունված հարցերի ու պատասխանների ձևով հիշեցվում է Ղուրանի պահանջը բոլոր հավատացյալներին՝ «ձեր սեփականությամբ և կյանքով պայքար մղեք» ձեր թշնամիների դեմ: «Իսլամի փադիշահի» անունից «բոլոր աշխարհամասերի» մուսուլմաններին կոչ է արվում պայքար մղել Ռուսաստանի, Անգլիայի, Ֆրանսիայի դեմ, միաժամանակ աջակցել Թուրքիայի դաշնակիցներին՝ Գերմանիային և Ավստրիային: Սրբազան պատերազմ հայտարարելուց հետո պետք է «անցնել գործուն հարձակման»: Այնուհետև առաջ է քաշվում ընդհանուր խնդիրը: Իհարկե ոչ բոլորն են հետևել ֆեթվայի խորհրդին, ավելի ճիշտ՝ պահանջին: Սակայն երկրի ներսում այն խաղացել է որոշակի դեր, «ազգային իդեալի» իրականացման գործում: Կրքերի բորբոքվածության և կրոնական մոլեռանդության պայմաններում, որպես կանոն, ընկած են կոլեկտիվ գործողություններ: Վ. Գիրգասը ընդգծում է, որ իսլամը «պատերազմը անհավատների դեմ հայտարարել է պարտադիր իր բոլոր հետևորդների համար, ինչպես աղոթքը, պասը և մուսուլմանների մյուս կրոնական պարտականությունները: Այն... պետք է շարունակվի այնքան ժամանակ, մինչև որ բոլոր ժողովուրդները ընդունեն իսլամ կամ ենթարկվեն մուսուլմանների իշխանությանը: Ամբողջ Ղուրանը լի է պատվերներով սրբազան պատերազմի մասին...»[18]: Եվ նա վկայակոչում է Ղուրանի հայտնի դրույթները, որոնք ասում են. «Եվ Ալլահի ճանապարհին կռվեք նրանց դեմ, ովքեր կռվում են ձեր դեմ... Եվ սպանեք նրանց, որտեղ պատահեք, վռնդեք նրանց այնտեղից, որտեղից նրանք վռնդել են ձեզ»[19]:

Հայ մեծագույն վիպասան Ռաֆֆին, իր ստեղծագործություններում բավական շատ էջեր է նվիրել տարածաշրջանում ապրող ժողովուրդների կրոնական փոխհարաբերություններին: Նա հիանալի է նկարագրել Իրանում և Թուրքիայում հոգեբանական ու կրոնական մթնոլորտը, առանձին ժողովուրդների դրությունը, նրանց միջև եղած կրոնական ու այլ երկպառակտությունների պատճառները: Նա նշել է նաև ժողովրդի ստորին խավերի տարերային ակտիվությունը հատկապես զանգվածային հուզումների, ազգամիջյան և այլ ընդհարումների ժամանակ: «Ռամիկի կատաղությունը,- գրում է նա,- ավելի սարսափելի կերպարանք է ստանում, երբ նրան առաջնորդում է կղերը,- երբ գործի մեջ խառնվում է կրոնական մոլեռանդությունը: Այդ դեպքում վայրենությունը սրբագործվում է եկեղեցու և աստծո անունով: Սույն մոլեռանդությունը ստեղծեց ամոթալի ինկվիզիցիան և բազմացրեց աուտո-դաֆեների թիվը»[20]: Թուրքական բարբարոսական

17 Նույն տեղում, էջ 165-166

18 *Вл. Гиргас*. Права христиан на востоке..., с. 52

19 Коран, Сура, с. 186,187,198

20 *Ռաֆֆի*. Երկերի ժողովածու, հ. 4,Եր.,1956, էջ 212

վարչակարգի դեմ ծղված ազգային-ազատագրական պայքարի գաղափարախոսը չգիտեր, որ այդ տողերը գրվելուց երեք տասնամյակ հետո մուսուլմանական մոլեռանդությունն ու թուրքական շովինիզմը կդառնան հայ ժողովրդի պատմական ողբերգության մեղավորները: Իսկ մեր ժողովուրդը, քաջ իմանալով վերահաս վտանգի ողջ խորությունը, գրեթե չէր *նախապատրաստվում* իր սեփական պաշտպանությանը կամ ինքնապաշտպանությանը: Ճակատագրական այդ սխալի մեղքը ընկնում է բոլոր քաղաքական կազմակերպությունների և ազգային կուսակցությունների վրա: Մեղքի գիտակցումը եկավ ուշ, բայց դա օգտակար դասերի ու հետևությունների չհանգեցրեց նույնիսկ մեր օրերում: Դաշնակցություն կուսակցության պարագլուխներից մեկը Կ. Սասունին, տարիներ հետո նշում է, որ չկար ապստամբության հոգեբանություն, չկար նաև նախապես մշակված ծրագիր[21]:

Սակայն բերված արդարացի դիտողությունը պահանջում է որոշ լրացում: Հայդուկների ժողովրդական փառապանծ շարժումը, անկասկած, ազգային-ազատագրական պայքարի լավ դպրոց էր: Կյանքի դաժան պայմանները (գրեթե մշտապես լեռներում ու անբնակ վայրերում, սովի ու ցրտի մշտական վտանգ, վերահաս բռնությունների մշտական զգացում) խաղաղ աշխատանքի մարդկանց, արհեստավորներին ու առևտրականներին հիմնականում հեռու էին պահում այդ շարժմանը գործուն մասնակցություն ունենալուց:

Իրենց հերթին հայ հարուստները (ամիրաները, սարրաֆները, վաճառականները, խոշոր հողատերերը) ժողովրդական շարժմանը դեմ էին: Դասակարգային ու տնտեսական շահերը, բարեկեցիկ կյանքը նրանց թույլ չէր տալիս անցնելու ազատագրական պայքարի կողմը: Ուստի հայ աշխատավորների դաստիարակության ու նրանց վրա ներգործման բոլոր ձևերի գաղափարախոսական հիմնական նշանաբանը, անգամ արյունարբու սուլթան Աբդուլ Համիդի «զուլումի» տարիներին, բռնակալական վարչակարգի պայմանների հետ հաշտվելն է եղել: Դրա հետևանքով կայսրության հայ բնակչության շրջանում տիրում էր խաղաղ տրամադրություն և բարեհոգության մթնոլորտ չնայած կյանքի ծանր պայմաններին: Իրերի այդպիսի դրությունից քաջալերված թուրքական վերնախավը ավելի սպառնալի գործողություններով ուժեղացնում էր նաև հոգեբանական ճնշումը հայ բնակչության վրա: Տակավին հայտարարված ազատության ու հավասարության արշալույսին, մեջլիսի ընտրարշավի ժամանակ, մայրաքաղաքի տների պատերին երևան են գալիս թռուցիկներ հետևյալ բովանդակությամբ. «Հայերին ու հույներին ազատություն տալը նշանակում է տերության կործանում, օսմանյան կայսրությունն արդեն կանգնած է կործանման վիհի առաջ, ուստի իսլամի ճշմարիտ բարեկամները լուրջ կերպով պիտի մտածեն ու միջոցներ ձեռք առնեն հայերին ջնջելու և պետությունն անկումից փրկելու համար»[22]: Շուտով մեկը մյուսի հետևից, ազգային ամենահեղինակավոր հաստատության՝ հայ պատրիարքության հասցեով սկսվում են գրավոր սպառնալիքներ: Դրանցից մեկում ասված էր. «Այժմս մենք ապրում ենք ոչ բռնապետության շրջանում, այդ պատճառով դուք պետք է համկանաք, որ երիտթուրքերը արթնացել են... Մենք անտարբեր չենք

21 *Կ. Սասունի.* Ապրիլյան եղեռնը քննական ակնոցով, Բեյրութ, 1931, էջ 43

22 *Ջ. Կիրակոսյան.* Երիտթուրքերը..., գիրք առաջին, էջ 315

մնա այն արարքների նկատմամբ, որոնք վիրավորում են մեր արժանապատվությունը: Դուք, հայերդ, այդ բանը պետք է լավ հասկանաք և համապատասխանորեն գործեք: Միք մոռանա, թե դուք որտեղ եք ապրում: Մենք ձեզ զգուշացրինք»[23]: Չորս օր հետո, 1912 թվականի նոյեմբերի 16-ին պատրիարքությունը ստանում է երկրորդ նամակը, որն արդեն պարունակում էր ուղղակի սպառնալիք. «հեռու չէ ձեր ահեղ վախճանը: Չկասկածեք, որ մոտ ժամանակներում մենք կփշրենք ձեր թևերը, ձեր պատրիարքարանը, ձեր ժողովները: Թուրքական յաթաղանը թոցրել է միլիոնավոր գյավուրների գլուխներ, և մենք մտադիր ենք թոցնել ևս միլիոնավոր գլուխներ: Արդ իմացեք, որ թուրքերը երդվել են գյավուր-հայերից... մաքրել իրենց երկիրը»[24]:

Այդպիսով երիտթուրքերը երկար ժամանակ ու հանգամանորեն նախապատրաստվում էին հայերի ցեղասպանությանը: Եվ երբ հասնում է ժամանակը հրաման է տրվում. «Հայերի ոչնչացումն իրականացնել ամենուրեք, միաժամանակ, հնարավորություն և ժամանակ չտալով ինքնապաշտպանության համար»[25]: «Միություն և առաջադիմություն» կուսակցության կենտրոնական կոմիտեի ցուցումներում նախապես գործողությունների պատրաստված բոլոր կազմակերպություններին ու անձանց հայտնվում է, որ նրանք պարտավոր են «ցույց տալ օգնություն կուսակցության տեղական մարմիններին, որոնք ապրիլի 24-ի արևածագին, համաձայն գաղտնի կարգադրության, կանցնեն հրամանի կատարմանը»[26]: Ջեռնամուխ են լինում շատ կազմակերպված և ամենուրեք գրեթե միաժամանակ: Ղեկավարությունը հետևում էր իրադարձությունների ընթացքին և թույլ չէր տալիս ոչ մի հապաղում: Եթե նշենք միայն հիմնական իրադարձությունները, ապա կստացվի հետևյալ պատկերը: 1914 թվականի հոկտեմբերի 31-ին պատերազմ հայտարարելուց հետո, բարձրաստիճան պնծինք տեղերում սկսում են լուրեր տարածել հայերի առաջիկա կոտորածի մասին: Միաժամանակ թուրքերը սկսում են հայերին արտաքսել ու կոտորել Արևմտահայաստանի գյուղական վայրերում: Հենց այդ ժամանակ էլ, թուրքերին Անդրկովկասի և Իրանական Ադրբեջանի մուսուլման բնակչությունից անջատող տարածքներում ապրող ոչ թուրք բոլոր տարրերին վերացնելու ծրագրի համաձայն, Ուրմիայի շրջանում սկսում են կոտորել սիրիացի նեստորականներին: 1915 թվականի փետրվարի 27-ին ռազմական նախարար Էնվերը ծածկագիր հեռագրով զորամիավորումների հրամանատարներին տեղեկացնում է, որ հրաման է արձակվել «ամբողջ հայ ազգը» բնաջնջելու մասին: Հեռագրում նշվում են կատարման ենթակա հետևյալ գործողությունները.

«1.Օսմանյան հպատակներ հանդիսացող երկրի բոլոր հայերին հինգ տարեկանից բարձր, դուրս բերել քաղաքներից և ոչնչացնել:

2.Կայսերական բանակներում ծառայող բոլոր հայերին, առանց խախտելու սովորական կարգը, անջատել նրանց դիվիզիաներից, տանել ամայի վայրեր՝ կողմնակի աչքերից հեռու, և գնդակահարել:

23 *Լևոն Վարդան.* Թող թուրքը խոսի, Բեյրութ, 1957, էջ 24-25

24 Նույն տեղում, էջ 26

25 *Ջ. Կիրակոսյան.* Երիտթուրքերը..., գիրք երկրորդ, էջ 24

26 *Մեվլան-զադե Ռիֆաթ.* Օսմանյան հեղափոխության մութ ծալքերը: Բեյրութ, 1938, էջ 198

3.Զինվորական ծառայության մեջ գտնվող հայ սպաներին վերցնել կալանքի իրենց գնդերում՝ մինչև հետագա կարգադրությունները»[27] :
Երբ հրամանները տեղ են հասնում, հայ սպաներին, չնայած նրանց հավատարմությանը, մարտի 15-ից խմբերով, 100-200-ական մարդ տանում են որոշակի տեղեր և գնդակահարում: Մեկ ամիս հետո իշխանության տեղական մարմինները մանրամասն ցուցումներ են ստանում իրականացվող միջոցառումներին մասնակցելու վերաբերյալ: Մայիսի 14-ին ընդունվում է օրենք հայերի տեղահանության մասին և հինգ օր հետո արձակվում է հրաման «ամբողջ հայ բնակչությանը անատոլիական բոլոր վիլայեթներից և Կիլիկիայից Բաղդադի երկաթուղուց հարավ՝ արաբական անապատներն արտաքսելու» մասին : Օգոստոսին եվրոպական երկրների թերթերը սկսում են հաղորդել պատմության մեջ նախադեպը չունեցող մի ամբողջ ժողովրդի բնաջնջման բոթը: Անգլիական «Քրիսչեն սայենս մոնիտոր» թերթը սեպտեմբերի 15-ի համարում զետեղում է մի հոդված հետևյալ խորագրով. «Թուրքիայում կատարվող կոտորածները համարվում են վատթարագույնը պատմության մեջ»[28] :

Բանն այն է, որ վերևից տրված հրամաններում պահանջվում էր հայերի բնաջնջման գործին մասնակից դարձնել տվյալ վայրի բնակչությանը, իսկ նրան օգնելու համար ուղարկվում են ազատ արձակված ավելի քան երեսուն հազար քրեական տարրեր, որոնք տեղահանությանը հաղորդում են առանձնապես դաժան ու անողոք բնույթ: Տեղական իշխանություններին և զինված ուժերին կարգադրված էր հետևել իջեցված հրամանների ու հրահանգների ճշգրիտ կատարմանը: Բայց տեղի էր ունենում գործողությունների կատարյալ շփոթ. ամեն մեկն անում էր այն, ինչ թելադրում էին հանգամանքները, կոնկրետ դեպքերն ու իրադարձությունները: Սակայն իրենք՝ կոտորածների մասնակիցներն ու ականատեսները նշում են, որ ամեն մեկը աշխատում էր մյուսներին գերազանցել իր դաժանությամբ և հնարավորին չափ ավելի լավ, ավելի նրբորեն կատարել «իր պարտքը»: Օրինակ՝ հրամանը պահանջում էր. «Ոչ ոքի ողջ չթողնեք, մասնավորապես մինչև հինգ-յոթ տարեկան երեխաներին, այլապես նրանք կմեծանան ու կծգտեն վրեժխնդիր լինել»: Ոմն Սլեման Օնբաշի, իր ավազակախմբի օգնությամբ հավաքում է ճանապարհներին մնացած ուժասպառ, կիսակենդան մանուկներին, հրամայում է փոս փորել և բոլորին թաղել այդ փոսում: Այդ գազանային արարքի մասնակիցը այնուհետև պատմում է. «Սկսեցինք մանկիկները շարել այդ փոսին մեջ և ձեռքով կռշտ-կոշտ հողեր խոթել այդ մանկիկներու բերանին մեջ և ոտքով ալ կոխել անոնց բերաններուն մեջ, որպեսզի շունչ չկրնային առնել ու խեղդամահ ըլլային...Վերջն ալ, հողով ծածկեցինք այդ փոսը...»[29]: «Ստամբուլ» թերթում տպագրվում է մի հարցազրույց հրամանների «հաջող» կատարման մասին, որտեղ այդ երևույթը բացատրվում է այն հանգամանքով, որ «ազգի գլխավոր զանգվածի օժանդակության պայմաններում է հնարավոր կատարել

27 Լրաբեր հասարակական գիտությունների, 1965, N 3, էջ74
28 *Ջ. Կիրակոսյան.* Երիտթուրքերը ... , գիրք II, էջ30
29 *Սարգիս և Միսակ Բդեյաններ.* Հարազատ պատմություն Տարոնոյ, Կահիրե, 1962, էջ 569

նման մի համապարփակ ոճրագործություն»[30] : Պետք է վերստին ընդգծել, որ երիտթուրքերի ղեկավարների բոլոր ջանքերը, կատարված գազանությունների ու հանցագործությունների իրականացնողների ու անմիջական մասնակիցների բոլոր գործողությունները մի նպատակ են ունեցել՝ լրիվ ու վերջնականապես ոչնչացնել մի *ամբողջ* ժողովուրդ: Լեհ գիտնական ու հրապարակախոս Բոգդան Գեմբարսկին իր նշանավոր «Իմ հին թուրք ծանոթին» նամակի մեջ, հանգամանորեն ու խորը վերլուծում է հայերի ցեղասպանության ողբերգական պատմությունն ու հետևանքները: «Ոստիկանական հրամանների ու կարգադրությունների իրականացում միլիոնավոր մարդկանց զարհուրելի մահվան մատնելու մասին... Հայերը պարտավոր էին լքել տվյալ վայրը, սովորաբար երկու ժամվա ընթացքում՝ իբր բնակության նոր վայրեր փոխադրվելու համար: Թույլատրվում էր իրենց հետ վերցնել միայն ձեռքի ուղեբեռ, իրենց ամբողջ ունեցվածքը թողնելով նոր բնակիչներին՝ մուսուլմաններին: Խստիվ արգելվում էր օգտվել որևէ փոխադրամիջոցից: Ոչ մի բացառություն չէր արվում ոչ ծերերի, ոչ հիվանդների, ոչ երեխաների, ոչ էլ նույնիսկ հղի կանանց համար»[31] :

Կոտորածներն սկսվելուց ուղիղ մեկ ամիս հետո Կոստանդնուպոլիս է ժամանել Յոհան Լեփսիուսը: Շուտով նրան ընդունել է էնվերը և նրանց միջև տեղի է ունեցել լուրջ խոսակցություն թուրքական կառավարության հանցավոր գործերի մասին: «Հարյուր հազարավոր մարդիկ,- ասել է Լեփսիուսը,-արդեն տարագրության ճանապարհն են բռնել: Իշխանությունները միայն գաղթից են խոսում: Բայց ես կպնդեմ, որ դա, մեղմ ասած, բառի չարաշահում է, ուրիշ ոչինչ: Կարելի՞ է գրչի մի հարվածով հողագործներից, արհեստավորներից, քաղաքաբնակ մարդկանցից ու մտավորականներից կազմված մի ժողովուրդ աքսորել Միջագետքի անապատը, օվկիանոսի պես անծայրածիր, ամայի վայրեր, որտեղից նույնիսկ բեդվին ցեղերն են փախչում...Դա միայն պատրվակ է»[32] :

Քողարկումը, սակայն, երկար չի շարունակվել: Նախօրոք ծրագրված գործողությունները իրականացվել են այնպիսի հետևողականությամբ, որ բոլորի համար պարզ է դարձել, թե ուր է տանում թուրքական իշխանությունների յուրաքանչյուր քայլը: Հ.Մորգենթաուի համար դեռ կոտորածների շրջանում պարզ է եղել դրանց գործնական նպատակը: «Ամբողջ թուրքական կայսրությունում,- գրել է նա,- ձեռնամուխ էին եղել ոչնչացնելու բոլոր առողջ տղամարդկանց ոչ միայն նրա համար, որպեսզի ոչնչացնեին հայերի նոր սերունդ վերարտադրելու ընդունակ ամբողջ արական բնակչությանը, այլև նրա համար, որ բնակչության ավելի թույլ մասը դառնա հեշտ ավար»[33] : Այնուհետև նա նշել է դահիճների առանձին ջանադրությունը կրթված, հարուստ և ազդեցիկ մարդկանց ոչնչացնելիս: Ծերերից, երեխաներից ու կանանցից բաղկացած քարավանները ենթարկվել են ամեն տեսակ անարգանքների, ծաղրանքի ու գազանությունների: Անընդհատ բռնությունների ու լրբության զոհ են դարձել կանայք, հատկապես դեռատի ու գեղեցիկ

30 *Ջ. Կիրակոսյան.* Երիտթուրքերը պատմության դատարանի առաջ, գիրք II, էջ 18
31 «Կիերունկի» (Ուղղություն), N 47, 1961թ., 26 նոյեմբերի
32 *Ֆ. Վերֆել.* Մուսա լեռան քառասուն օրը, Եր.1964, էջ 139-140
33 ՀՅՕԿ ժող. էջ 655

կանայք: «Նրանց նույնիսկ մի կողմ չէին տանում: Այս մարդիկ անասուններից էլ վատ էին. դրանք գոնե քիչ թե շատ ամոթի զգացում ունեն, իսկ սրանց պետք էր հնարավորին չափ շատ ավելի նողկալիություններ ու զազրելիություններ... Ինչ-որ նորմայի ու հերթի պես բան էին սահմանել. յուրաքանչյուր 10 զինվորի հատկացնում էին մի կին, զվարճանում նրանով, 2-3 ժամ անընդմեջ, ապա տանջահար, կիսամեռ, հաճախ ուշաթափ՝ թողնում հեռանում... Չպղծված չթողեցին նույնիսկ 10, նույնիսկ 8-տարեկան աղջիկներին»[34]: Մի մտավորական երիտասարդ կին պատմելով այդ մասին, այն կարծիքն է հայտնել, որ իրենց դահիճները զուրկ էին սովորական մարդկային հատկություններից և դարձել էին գազանաբարո զազրելի արարածներ: Նման պայմաններում երբ հասարակական կարծիքը հերոսի պատվանդանին էր բարձրացնում ամենից ավելի նողկալի սրիկաներին, մարդասպաններին, կողոպտիչներին, նրանց շարքերը չէին կարող նոսրանալ: Ընդհակառակը, դրանք համալրվում էին նորանոր մարդկանցով, ովքեր ցանկանում էին թալանել, հարստանալ, «կտրիճ» երևալ և այլն: «Տգիտության մոլուցքը,- գրել է Ն. Ռերիխը,- ամենից առաջ ձգտում է հասնել ամենավեհին: Տգիտությունը պահանջ է զգում ինչ-որ բան կոտորել, ինչ-որ մեկի գլուխը թռցնել. նա ուզում է մոր արգանդից կտրել-հանել զավակին, ուզում է արմատախիլ անել կյանքը՝ դարձնել դատարկ տարածություն ... Ահա տգիտության իդեալը»[35] : Այդ նպատակի իրականացման համար Թուրքիայում ստեղծվել էին միանգամայն բարենպաստ պայմաններ, իսկ երկրի ղեկավարությունը շարունակ գրգռում էր ամբոխի ստոր բնազդները, արյունով արբեցած մարդկանց մղում նորանոր ոճիրների: Նման վիճակի մասին ավելի որոշակի է գրել Բ. Պորշնևը. «Կենսական պահանջներից և շահերից բխող տրամադրությունների և գործողությունների ժամանակ հենց անպատասխանատվությունը, բնազդականությունը և տգիտությունը բառիս բուն իմաստով կազմում են հասարակական հոգեբանության բնորոշ գիծը»[36]: Այդ ամենը ապահովվում էր շովինիզմի ու մուսուլմանական մոլեռանդության մոլուցքով, որով և բացատրվում է բոլոր մասնակիցների դաժանությունն ու անողոքությունը՝ սկսած երիտթուրքական կուսակցության ու կառավարության ղեկավարներից մինչև հրամանների ու ցուցումների շարքային կատարողները, ինչպես նաև նորին մեծություն ամբոխը՝ խուժանը: Որքան ավելի շատ էին կիրառվում բռնարարքներ, այնքան ավելի շատ էին քայքայվում ոճրագործ միավորումներն ու խմբերը: «Դեն» թերթը 1915 թվականի սեպտեմբերի 6-ի համարում տպագրել է մի թուրք բժշկի հուշերը, որտեղ նկարագրված է Սիրիայից Բիթլիս ուղարկված դիվիզիայի ուղին: Մինչև տեղաբախշման վայրը հասնելը 7-8 հազարանոց միավորումը կորցնում է իր կազմի կեսից ավելին և դառնում մարդկանց մի խաժամուժ, որը ընդհանուր ոչինչ չի ունենում բանակ հասկացության հետ: Այլ կերպ չէր էլ կարող լինել, այնուհետև գրում է օրագրի հեղինակը, քանի որ զորամասերը ճանապարհին ապահովված չէին զորական կարգուկանոնը պահպանելու տարրական պայմաններով. զինվորները «բացառապես սնվում էին դիակապտությամբ..., ուտում էին օրական մեկ անգամից ոչ ավելի... Այդ սոված, տանջահար մարդիկ միավորվել էին միայն

34 ՀՅՕԿ ժող. էջ 462

35 "Литературна газета", 15 и н 1988 г., с. 13

36 *Б. Ф. Поршнев.* Социал на психологи и истори , с. 18

«ղազավաթի» քրիստոնյաների դեմ սրբազան պատերազմի ընդհանուր գաղափարով: Այստեղից էլ՝ անօգնական հայերի հանդեպ գազանությունների ու բռնությունների աներևակայելի պատկերները...»[37]:

Կանանց ու երեխաների մի մեծ խումբ օրը ցերեկով դուրս է բերվել Երզնկա քաղաքից և շարժվել Եփրատի ուղղությամբ: «Հազիվ էիք մոտեցել Թիլչային, երբ մոտակա փոսերից ինչ-որ ստվերներ նկատեցինք,- պատմում է զոհերից մեկը: - Մարդկանց գլուխներ էին երևում և անհետանում: Մեզ քշեցին մի ընդարձակ հովիտ: Հանկարծ, միաժամանակ չորս կողմից մեզ վրա թափվեցին հազարավոր մարդիկ, բոլորը զինված զենքերով՝ սրերով, դաշույններով, կացիններով, դանակներով, երկաթի կտորներով և այլ այնպիսի իրերով, որոնցով հնարավոր է մարդ սպանել: Հանեցին կանանց ու երեխաների նոր շորերը, վեցրին իրերը՝ մատներից հանում էին մատանիները, ականջներից օղերը, բաց էին անում մարդկանց բերանները ու մուրճով խփում հանում էին ոսկի ատամները: Դրանից հետո հարձակվեցին անպաշտպան ժողովրդի վրա... Մթնեց, բայց ջարդը դեռ շարունակվում էր...»[38]: Նույն թվականի հուլիս-օգոստոս ամիսներին գերմանացի մի ծառայող, Արևմտյան Անատոլիայում ականատես է եղել զարհուրելի տեսարանների: Մոտ 800 հայերից բաղկացած մի խումբ արտաքսել են Մարաշից և ասել, որ փոխադրում են Այնթափ: «Երբ նրանք մոտեցել էին Այնթափին, նրանց ասել են. «Մենք սխալվել ենք, պետք է գնալ Հիսիբին»... Հիսիբինում նրանց ասել են. «Մենք նորից ենք սխալվել, պետք է գնալ Մամբիջ... իսկ այնտեղ նորից՝ «Սխալ է տեղի ունեցել, պետք է գնան Բաբ» և այլն: Այսպես նրանք թափառել են 17 օր՝ իրենց ուղեկցող զինվորների կամայականությանը հանձնված»[39]:

Ոճրագործություններին մասնակցում էին նաև թուրք բժիշկները: «Մահվան դատապարտվածների վրա փորձեր կատարելու» հրամանը կիրառվել է նրանց հայազգի գործընկերների վրա: Այդ նպատակի համար ուղարկվել են ավելի ու ավելի շատ երիտասարդ առողջ տղաներ, որոնք ծառայել են բանակում կամ գտնվել թիկունքում: Բծավոր տիֆի դեմ կատարված պատվաստումները խլել են մեծ թվով կյանքեր: Դրանք շարունակվել են 1915-1916 թթ. ընթացքում ևս. այդ աշխատանքները «ղեկավարել են» մայրաքաղաքի ու բժշկական այլ հաստատությունների պրոֆեսորներ: 1918 թվականին մամուլում հայտնվել են թուրք բժիշկների հոդվածները, որոնք երիտթուրքերին մեղադրել են նաև այդ հանցագործությունների համար: Վիրաբույժ Հեյդար Զեմալը ներքին գործերի նախարարին գրել է. «Ձեր խոնարհ ծառան հայտարարում է, որ քաղաքական հանցագործությունների հետ մեկտեղ կատարվել են նաև գիտական հանցագործություններ, որոնց մասին պատրաստ եմ տալ ցանկացած պարզաբանումներ»[40]: Դոկտոր Սելահէդդինը, վկայակոչելով հիշյալ նամակը, հայտարարել է, որ ինքը պատրաստ է հաստատելու իր գործընկերոջ մեղադրանքները: « Եթե ընդունենք,- գրում է նա,- որ «Միություն և առաջադիմություն» կուսակցության կառավարությունը (ավելացնենք նաև Գերմանիան) երբեք էլ նշանակություն չի տվել խղճին,

37 ՀՅՕԿ ժող. էջ 429-430

38 *Գ. Ստեփանյան.* Սղձավանջային օրեր, Եր., 1945, էջ 149

39 ՀՅՕԿ ժող. էջ 388

40 Նույն տեղում, էջ 523

բարոյականությանը, պատվին ու սրբագործված բոլոր սովորույթներին, ապա կարելի է դյուրությամբ հասկանալ այն առաջադրող գաղափարը, որը նրան մղել է այսքան շատ տառապանքներ պատճառելու հայերին: Այն ժամանակ ոչ ոք հաշիվ չէր պահանջում կատարված վայրագությունների համար, և մարդիկ կարծում էին, թե այդ ամենը անպատիժ կմնա:

Հենց այդպիսի մոլորությունն էլ մղեց բծավոր տիֆի պատվաստանյութի փորձեր իրականացնելու Երզնկայում»: Բժիշկների թույլտվությամբ սուր վարակիչ հիվանդներին տեղավորում էին մարդաշատ վայրերում: Ականատեսը հանդիպել է «200 հոգուց բաղկացած մի շարասյան: Նրանք գրեթե բոլորն էլ կույր էին»[41]: Դահիճները աշխատել են հորինել տանջանքների նորանոր ձևեր, մի բան, որը խրախուսվել է ղեկավարության կողմից: Մի թուրք պատասխանատու պաշտոնյայի պատմածի համաձայն, այդ հարցին առանձնահատուկ ուշադրություն են դարձրել, իսկ խոշտանգումների մանրամասնությունները քննարկվել են «Միություն և առաջադիմություն» կոմիտեի նստավայրում:Ցավ պատճառելու ամեն մի մեթոդ գնահատվել է որպես մի հիանալի հայտնագործություն, և պաշտոնյաները շարունակ գլուխ են կոտրել, թե ինչպես հորինեն տանջանքների որևե նոր ձև: Նրանք նույնիսկ դիմել են իսպանական ինկվիզիցիայի և պատմական այլ պատժաձևերի աղբյուրների ուսումնասիրմանը, որոնք վերաբերել են կտտանքների կիրառմանը: Նկատի ունենալով թուրք պատժիչների առանձին հակումը իրենց զոհերի խոշտանգման նրբին մեթոդների նկատմամբ, անցյալ դարի վերջերին Ռաֆֆին գրել է. «Վերջին ժամանակներս կարդացի ինկվիզիցիայի հնարած գործիքների նկարագրությունը և նրանց տեսակները, զարմացա, թե ինչպես է պատահել, որ կաթոլիկ եկեղեցու հանճարը, որ այնքան զորավոր էր տանջանքի մեքենաներ ստեղծելու մեջ, բոլորովին ի նկատի չի առել ֆալախկան...»[42] :Դա մի հասարակ փայտաշեն սարք է, որի մեջ կախված վիճակում սեղմել են մարդկանց ոտքերը և գավազաններով ու ճիպոտներով խփել ներբաններին մինչև գիտակցության կորուստը: Բանտային այդ սովորական գործիքը կոտորածների ժամանակ պիտանի չի եղել, քանի որ զոհերը տանջանքների են ենթարկվել առանց որևէ սարքի: Լայնորեն հայտնի է եղել Վանի կուսակալ Զևդեթ բեյը, որը ձիու պայտեր է խփել իր զոհերի ներբաններին: Ծովերի ափերին պատժիչները անպաշտպան մարդկանց պարզապես ծովն են թափել, իսկ խուլ վայրերում նրանց մեծ քանակությամբ հավաքել են եկեղեցիներում, դպրոցներում, մարագներում և այլ շենքերում և ողջ-ողջ այրել: Մի քանի կամ մի քանի տասնյակ մարդկանց կապել են իրար և ժայռից գլորել խոր անդունդները կամ հատուկ փորած փոսերը: Գերմանացի հայտնի գրող ու հրապարակախոս Արմին Վեգները, որ այն ժամանակ եղել է հատուկ թղթակից և շատ բաներ տեսել սեփական աչքերով, գրել է. «Պաշտոնատար անձինք, սպաները, զինվորները, քոչվորները մրցում էին իրար հետ արյունռուշտ խրախճանքներում՝ ապաստարաններից ուժով դուրս էին քաշում որբ աղջիկներին իրենց անասնական կրքին հագուրդ տալու համար, մահակներով ծեծում էին հղի կանանց ու մեռնողներին, որոնք հազիվհազ էին քարշ տալիս ոտքերը, մինչև որ ընկնում էին անշնչացած, ճամփի փոշին վերածելով

41 ՀՅՕԿ ժող. էջ 523

42 *Ռաֆֆի.* Երկեր, հ. 4, Եր. 1956, էջ 254

արնաշաղախ զանգվածի»[43]. Այն ժամանակ այդ ամենը սովորական բան է համարվել, գոյություն է ունեցել մի նողկալի ու զարհուրելի միաբանություն, և որքան ավելի շատ են շարունակվել խայտառակությունները ու սարսափները, այնքան դահիճներն ավելի դաժանորեն են վարվել իրենց զոհերի հետ: Ամբոխային գիտակցությունը թուրքերին մղել է նորանոր ոճրագործությունների: Մարդկանց ոչնչացման մինչ այդ աննախադեպ գազանային եղանակներով երիտթուրքերը ընդմիշտ դարձան զանազան ֆաշիստական հոսանքների ուսուցիչներ և գերմանական ֆաշիզմի իսկական խորհրդատուներ: Ասվածը հաստատվում է անողոք փաստերով: Ամերիկացի հրապարակախոս ու պատմաբան Հ. Ա. Գիբոնսը, որը պատերազմի նախօրյակին ապրել է Թուրքիայում, այդ արյունոտ տարիներն անվանել է «նորագույն պատմության ամենասև էջը»: Անչափ կարևոր են առանձին փաստերի ու իրադարձությունների նրա բնորոշումները: Նրա կարծիքով՝ «Ադանայում կոտորածը հայերի բնաջնջման առաջին փորձն է այն մարդկանց կողմից, ովքեր զավթելով Աբդուլ Համիդի իշխանությունը, ժառանգել են նաև գործելու նրանց եղանակը... Իրենց խելքով ու դիրքով աչքի ընկնող երիտթուրքերը համոզված կրկնել են տարածված արտահայտությունը. «Հայկական հարցից ազատվելու միակ եղանակը հենց հայերից ազատվելն է»: Ադանայում սկսած հայերի ջարդն ավարտին հասցնելու միտքը քաղաքական ուղեցույց գաղափար է եղել վեց տարի շարունակ: Վերջապես ներկայացավ այդ գաղափարն իրականացնելու առիթը: Դրանից, անշուշտ, անհապաղ օգտվեցին»[44]: Ինչպես արդեն ասվեց, որոշ ժամանակ դա արտաքին աշխարհից գաղտնի է մնում: Բայց երիտթուրքերը իրենց շրջանում ամեն ինչ մշակել են մանրամասնորեն և փորձել իրենք իրենց համոզել, որ առաջադրված ծրագիրը հիմնավորված է և բխում է կենսական անհրաժեշտությունից: «Դաժանությունը բնության օրենքն է,- ասել է դոկտոր Նազըմը,- այն կարելի է ընդունել կամ մերժել միայն դատողություններում: Մի՞թե կենդանի էակները, նույնիսկ բույսերը, չեն ապրում ուտելով ու ոչնչացնելով միմյանց: Միգուցե դուք կասեք «արգելեք նրանց դա, չէ որ դա բարբարոսություն է»[45]: Նշանակում է երիտթուրքերն արդեն իրենք են որոշակի անուն տվել իրենց սեփական գործողություններին: Կրոնական գործիչ Հասան Ֆեհմին ուրիշ դիրքերից է մոտենում խնդրին՝ «...հենվելով արևելյան գիտության և սուրբ օրենքի՝ շարիաթի վրա, որի համաձայն այն ամենը ինչ վնասակար է, պետք է կործանվի: Ճշտիվ ապացուցված է, որ հայերը վնաս են պատճառում: Առանց տատանվելու պետք է նրանց կոտորել մինչև վերջին մարդը: Անգամ ես պատրաստ եմ տալ սրբազան վճիռը՝ ֆեթվան»[46]: Իսկ հրամաններում, ինչպես մենք արդեն տեսանք, պահանջվել է անշեղորեն կենսագործել ծրագիրը: Կոմիտեի ղեկավարության ցուցումներից մեկում պատվիրվում է «ճանապարհից սրբել ու ոչնչացնել այն զանազան ուժերը, որոնք բազում տարիներ խոչընդոտ են հանդիսացել, և որպեսզի վերջ դնի դրան, նա ստիպված է դիմել ամենադաժան միջոցների: Հավատացնում ենք Ձեզ, որ մենք ինքներս զարհուրեցինք, երբ

43 ՀՅՕԿ ժող. էջ 697

44 Նույն տեղում, էջ 536-537

45 Նույն տեղում, էջ 496

46 Նույն տեղում, էջ 498

մտածում էինք այդ մեթոդների մասին, սակայն ջեմիյեթը ուրիշ ուղի չի տեսնում իր գործի կայունությունն ապահովելու համար»[47]:

Թուրքերի վայրագություններն ու գազանությունները այսքան վկայակոչելուց հետո այնուամենայնիվ մարդկային պահանջ է զգացվում փոքր-ինչ հեռանալ զարհուրելի տեսարաններից և հոգեբանության օգնությամբ ըմբռնել ինչն է պատճառը, որ գրեթե բոլորը, թե ղեկավարները և թե ժողովուրդը դարձան մարդասպան: Երիտթուրքական շարժման առաջադիմական թևի ղեկավար գործիչներից մեկը՝ գահաժառանգ Մեհմեդ Սաբահեդդինը, «Թուրքերը և առաջադիմությունը» հոդվածում գրեթե տալիս է այդ հարցադրման պատասխանը. «Հաջող պատերազմներու պտուղը, սուրի ծայրով գրավված հարստությունները, ավարը մեղկացման պատճառ կդառնային՝ ազատ կացուցանելով թուրքերը իրենց գոյության համար անհրաժեշտ բաները հայթայթելու որևէ ճիգե...»[48]: Երկար տարիներ Թուրքիայում ապրած, թուրք հասարակական շատ գործիչների անձամբ ճանաչած հայ նշանավոր գրող, հրապարակախոս Ավետիս Ահարոնյանը ցեղասպանությունից հետո գրած իր նոթերում իր խորհրդածություններն է շարադրել կոտորածների պատճառների և բարբարոսական այլ գործողությունների մասին: Նա բացարձակապես անտրամաբանական, վայրագ է համարել, որ ամոթալի այդ գործողությունները ղեկավարել են այն թուրք երիտասարդները, «որոնք տասնյակ տարիներ դաստիարակվել էին Եվրոպայում... Զարհուրելի է մտածել, որ Սորբոնն ավարտած, Ֆրանսիական Մեծ Հեղափոխության պատգամները սերտած մի Բեհաեդդին Շաքիր, մի հռետոր Նազիմ, մի Բաբան զատե, մի Ջանփոլատ և այլն, իրենց հայրենի մթնոլորտի մեջ մի-մի Ջենգիզ խան ու Լենկթեմուր դարձան...»[49]: Եվ պատասխանը նա գտնում է պատմական անցյալի ավանդույթների մեջ, այն բանում, որ «թուրքը միայն վեց-յոթ դար առաջ իր անապատները թողած՝ տակավին պահում է այդ անապատների ոգին, այն անծայր ու դեղին հարթությունների, ուր քաղաքակրթությունը կարավանների թիկունքի վրա է ծվարած, ընտանիքը՝ վրանի տակ կամ ծածկված սայլերի մեջ, և առաքինությունը միայն սրի ծայրին»[50]: Իսկ ըստ թուրքագետ Դ. Ե. Երեմեևի՝ թուրք ավատատերերը և նրանց ժառանգները «որպես կանոն, դուրս են եկել քոչվոր ավագանիից» և վարում են «չափազանց մակաբույծ կյանք: Ավատատերերի մեծ մասը (և ոչ միայն նրանք - Հ.Ի.) անհամեմատ ավելի շահավետ ու ավելի «պատվաբեր» զբաղմունք էր համարում նվաճված ժողովուրդներին կողոպտելը, քան սեփական տնտեսություն վարելը»[51]:

Այս վկայակոչումներից հետո անառարկելի է դառնում, որ բռնության ու կամայականության քաղաքականությունը բնորոշ է եղել ոչ միայն կառավարող վերնախավին: Այդ քաղաքականությունը համապատասխանել է նաև թուրք ժողովրդի մյուս խավերի տրամադրություններին ու նպատակներին: Թուրքական իրականության համար սովորական երևույթ կարելի է համարել,

47 Տեղեկագիր ՀՍՍՀ ԳԱ հասարակական գիտությունների, 1965, N 3, էջ 76

48 «Երկրի ձայնը», 1907,N 10, էջ 4

49 *Ա. Ահարոնյան.* Հայրենիքիս համար, էջ 150

50 Նույն տեղում, էջ 147

51 "Советска тнографи ", 1969, N 5, с. 57

երբ մտավորականության ներկայացուցիչը բորբոքում է ամբոխի գազանային բնազդները: Այսպես, «Թանին» թերթը 1911 թվականի սեպտեմբերի 21-ի համարում զետեղել է բանաստեղծ Էնիս Ավնի բեյի (կեղծանունը՝ Աքա Գյունդուզ) մի բանաստեղծությունը՝ կոչով. «Գթությունը պիտի կախ տամ յաթաղանիս ծայրից, իմաստությունը՝ հրազենիս փամփուշտից, քաղաքակրթությունը՝ նժույգիս հետևի պայտից...»[52]:

Մարդկային նման հատկություններով, բնականաբար, հեշտ է դահիճ դառնալ: Երզնկայից Սվազ գնացող գերմանացի բուժքույրերը պատմել են, որ ճանապարհին իրենք հանդիպել են վայրագ տեսքով մի մարդու: Նա այդտեղ տեղավորվել է, որպեսզի սպանի անցնող հայերին և արդեն սպանել է 250 մարդ: Պարծեցել են շարքային մարդիկ՝ ցույց տալով սպանած գյավուրների բանակը, պարծեցել են մեծ ու փոքր պետերը, որ վտարել են բնակչությանը և երկրի երեսից ջնջել գյուղեր ու բնակավայրեր: Եղել են նաև այնպիսիք, ովքեր ափսոսացել են, որ հնարավորություն չեն ունեցել մասնակցելու պատժիչ գործողություններին: Մի տառապյալ հայ մարդ, ճամբարներից ու բանտերից փախած, պատմել է մի հազվագյուտ դեպքի մասին: Լեռնային մի գյուղում ծերունի քրդերը խղճացել են նրան և կերակրել: Նրանց կողքից անցնող մի երիտասարդ, նկատելով ցնցոտիներ հագած այդ տանջահար մարդուն, հարցրել է. «Ո՞վ է այս օտարականը: - Ֆիլար՝ պատասխանել են նրան: -Ոչ, ֆիլար (փախստական) չէ, ֆլա (հայ) է: Փառք քեզ, Աստված, դու ինձ չզրկեցիր քո դրախտի բարիքները վայելելու հաճույքից: Ես սրբազան պատերազմի օրերին հիվանդ պառկած էի, չկարողացա կատարել աստվածային պատգամը: Նույնիսկ մի հայ չկարողացա սպանել, փառք քեզ, Աստված»[53]: Փախստականին անխուսափելի մահից փրկել է մի դերվիշ: Այս միջադեպում երևան է գալիս երկու միտում, որ դրսևորվել է ջարդերի ժամանակ: Ոմանք գրավել են փախստականին աջակցելու ու պաշտպանելու դիրք՝ հավանաբար, ենթադրելով, թե երկար չի տևի այդ մղձավանջային վիճակը, թեև այդ միտումի կողմնակիցները, եթե անգամ նրանք շատ էլ լինեին, գործել են պատասխանատվությունից վախենալով: Իսկ պատժիչները գործել են բացահայտ, լկտիաբար, հանդգնորեն: Նրանց գործողությունները ի չիք էին դարձրել առաջին խմբի աննշան ջանքերը: Այսպիսին է ցեղասպանության ողբերգական ժամանակի իրականությունը: Անցյալի երևույթների նման ընդհանրացման դեպքում, իրատես լինելու համար, պետք է նկատի ունենալ, որ մարդիկ հաճախ չեն գիտակցել իրենց արարքների ողջ խորությունը:

Զինվորական արտակարգ տրիբունալի դատավճռում, որը կայացել է 1919 թվականի մարտի 8-ին, ցեղասպանության ղեկավարներն ու կազմակերպիչները մեղադրվել են այն բանում, որ նրանք, տղամարդկանց մեկուսացնելուց հետո, սկսել են կանանց ու երեխաների տեղահանումը, ոտնահարելով նրանց քաղաքացիական իրավունքները: «Ոչնչացվածքն ու դրամը կողոպտելուց հետո, նրանց քարավանները ճամփու են դրվել կյանքի ապահովության բոլոր միջոցներից զուրկ... Ոչ մի ուշադրություն չեն դարձրել նրանց կյանքն ապահովելու խնդրին, այլ, ընդհակառակը, ամուր կապելով բոլոր տղամարդկանց ձեռքերը՝ զրկել են նրանց ինքնապաշտպանության բոլոր

52 *Հ. Մելքոնյան.* Հիշողության դաշտ, Եր. 1987, էջ 35

53 *Գ. Ստեփանյան.* Մղձավանջային օրեր, էջ 131

հնարավորություններից...Մեղադրյալները թույլ են տվել բարբարոսական գործողություններ, ջարդեր ու կողոպուտներ ճանապարհին... «Այնուհետև դատարանը գտնում է, որ եթե հայերը նույնիսկ հակառակորդի /Ռուսաստանի/ կողմն էլ անցած լինեն և մասնակցեն ապստամբություններին, ապա դա չի կարող որպես հիմք ծառայել «կատարված դաժանությունները արդարացնելու համար»[54]: Այն դատարանն անգամ, որի կազմում եղել են մեղադրյալների նախկին ընկերներն ու գործընկերները, կատարված չարագործությունների համար դատապարտել է ինչպես ղեկավարներին, այնպես էլ հասարակ կատարողներին: Բայց իսկական դատավարությունը մինչև օրս այդպես էլ չի կայացել. զոհերը, նրանց սերունդները սպասում են դրան: Ֆ. Նանսենը գրել է. «Այդ գազանությունները իրենց չափերով ու զազրելի դաժանությամբ գերազանցում են պատմության մեջ հայտնի բոլոր վայրագությունները...»[55]: Հ. Մորգենթաուն համակարծիք է նրան. «Համոզված եմ, որ մարդկության ողջ պատմության մեջ չկան այնքան զարհուրելի փաստեր, ինչքան որ այս կոտորածը»[56]: Իսկ Հ. Բարբյուսը մեր ազգային ողբերգությունը գնահատել է որպես սարսափելի: «Եթե բաժանենք գլուխների այն ողբերգությունները,- գրել է նա,- որոնք իր գոյության ընթացքում ապրել է մարդկությունը, ապա նրանցից ամենասարսափելին անպայման հայ ժողովրդի մարտիրոսությունն է»[57]: Համանման գնահատականներ են տվել նաև բազմաթիվ ռուս և արևմտյան ականավոր գրողներ, մտածողներ, հասարակական ու պետական գործիչներ: Նրանց խոսքը հիմնված է անթիվ-անհամար փաստերի և թուրք դահիճների արձանագրված գործողությունների վրա: 1915 թվականի կոտորածները Հ. Գիբոնսը անվանել է «հայերի ջարդի նոր դարագլուխ»:

«Խոսում են անմահները» գրքում գրող Հրանտ Հրահանը նկարագրում է Ադափազարից տեղահանված բոլորովին անպաշտպան մարդկանց երթի ողբերգական տեսարանը: «Նրանց հոգեկան տառապանքն անտանելի էր դառնում մանավանդ, երբ դիմացի լեռնալանջում սպասող արյունախում մարդակերպ գազանները անհամբերությունից մոլեգնած, իրենց տապարներն ու յաթաղանները կատաղի թափով օդի մեջ ճոճում էին...»[58]: Այնուհետև նա պատմում է, թե ինչպես ժանդարմները, զոհերին հիմնավորապես թալանելուց հետո, օգտագործում էին ամեն մի թեկուզ աննշան հնարավորություն, կիսամեռ մարդկանց հրաշքով մնացած փողն ու արժեքավոր իրերը կորզելու համար: Պահանջում էին վճարել ամեն մի «ծառայության» համար: Արևի տակ հանգստանալու համար ոչինչ չէին պահանջում, բայց, «կանաչության վրա նստելը փող արժեր: Իսկ ծառերի հովանու տակ և աղբյուրի մոտ նստելը շատ թանկ էր»: Պահանջվում էր վճարել զով կիրճերով և գյուղերի մոտով անցնելու համար, որտեղ կարելի կլիներ ինչ-որ ուտելիք ճարել, դիակները թաղելու թույլտվության համար, խուժանի հարձակումներից «պաշտպանելու» համար: Բայց երբ արդեն խլված էին բոլոր արժեքավոր իրերը, մոռացվում էին բոլոր

54 «Հայերի ցեղասպանությունը ըստ երիտթուրքերի դատավարության փաստաթղթերի», էջ 164

55 ՀՅՕԿ ժող. էջ 709

56 Նույն տեղում, էջ 667

57 «Սովետական Հայաստան» հանդես, 1973, N 9, էջ 21

58 *Հ. Հրահան (Հ. Նազարյան)*, Խոսում են անմահները, Երևան, 1970, էջ 205

տեսակի խոստումները, դիակները մնում էին առանց թաղելու, հողով ծածկելու համար անգամ ժամանակ չէր տրվում»[59]: Վերը հիշատակված «Օսմանյան կայսրության ճակատագիրը» գրքում Ա. Մանդելշտամը թվարկել է այն խոշտանգումների տեսակները, որոնց ենթարկվել են տեղահանված հայերը: «Անողոք գանահարություն, հանված աչքեր, պոկված եղունգներ ու մազեր, սողոցված կամ կտրված քթեր, ձեռքեր, ոտքեր և մարմնի այլ մասեր»[60]:

Անկասկած, ցեղասպանությանը զոհ են դարձել ոչ միայն հայերը: Նեղացնել տուժած ժողովուրդների շրջանակը կնշանակեր փոքրացնել մարդկության դեմ կատարված ոճրագործությունների կազմակերպիչների մեղքը: Մեծապետական շովինիզմը քաղաքականության մեջ միշտ էլ ելել ու ելնում է այն սևեռուն գաղափարից, որ, իբր, տվյալ երկրում բնակվող մյուս ժողովուրդներն ապրում են տիրապետող ժողովրդի հաշվին, օգտվում նրա ունեցվածքից ու բարիքներից, երկրի հարստություններից առանց փոխհատուցելու նրա կորուստը: Իրականում միշտ եղել է հակառակը, բայց դա չի փոխում մեծապետական տիրակալների համոզմունքները: Երիտթուրքերը բացառություն չեն եղել, դեռ ավելին, պանթուրքիզմը և պանթուրանիզմը նրանց դարձրել էր ավելի կատաղի, մոլի շովինիստներ: Թալեաթը գրել է. «Հույները, բուլղարները, սերբերը, հայերը, արաբները, քրդերը և ալբանացիները Թուրքիան տկարացնելով, Աբդուլ Համիդի դեպի մահ տանող կառավարությունից աշխատում էին ապահովել երկու տեսակի օգուտ»[61]: Նրանց մի մասը, Եվրոպայի օգնությամբ, ցանկանում էր ձեռք բերել անկախություն, մյուսները, որպես սուլթանի մերձավորներ, ծծում էին երկրի հյութերը: Հուշերի հեղինակը վերջիններիս թվին է դասում չերքեզներին, ալբանացիներին, արաբներին և նրանց, ովքեր պաշտոնական կամ դասային դիրքով կարող էին օգտվել իրենց արտոնություններից: Ռուսի հրամաններում և շրջաբերականներում քանիցս հանդիպում են նաև ցուցումներ, որ եթե հարմար առիթը ներկայանա, ապա չի կարելի ափսոսալ նաև հիշյալ ժողովուրդների ներկայացուցիչներին: Դա կարելի է հաստատել Հալեպի գլխավոր նահանգապետ Նուրի բեյի միանգամայն որոշակի հայտարարությամբ: Նա իր քարտուղար Նայիմ բեյի այն անհանգստությանը, թե տիֆը և բազմաթիվ այլ հիվանդություններ, որոնք հնձում են հայերի հազարավոր կյանքեր, սպառնում են նաև տեղական բնակչությանը, ծիծաղելով պատասխանել է. «Տղաս, այդպիսով մենք միանգամից կազատվենք երկու վտանգավոր տարրից: Չէ՞ որ հայերի հետ միասին մեռնում են նաև արաբները: Մի՞թե դա վատ է: Չէ՞ որ մաքրվում է ճանապարհը թրքության համար»[62]: Ցանկանում ենք առանձնապես նշել այն տարածված կեղծավորությունն ու անսքող լկտիությունը, որոնցով միմյանց հետ մրցել են երիտթուրքերի ղեկավարները: Երբ ամբողջ աշխարհին հայտնի էին դարձել թուրքերի չարագործությունները, մի լրագրող դիմել է Թալեաթ փաշային. «Ինչու՞ են թուրքերը այդպես անխնա հալածում հայերին:- Երիտթուրք սրիկան ժպտալով

59 Նույն տեղում, էջ 295-299

60 ՀՅՕԿ ժող. էջ 597

61 Talat pazanin hatiralari. Istanbul, 1946, s. 13

62 ՀՅՕԿ ժող. էջ 562

պատասխանել է.- Որովհետև դա մեզ զվարճացնում է»[63]: Իսկ ընդհանրապես նա փորձել է մեղքը բարդել ուրիշների, իր ընկերների, գլխավորապես թուրք ժողովրդի վրա: Բոլոր նրանք,- ասել է նա,- ովքեր մասնակցել են տեղահանություններին, կամ սովորական ոճրագործներ ու ավերողներ են, և կամ էլ հասարակ, տգետ, արկածախնդիր, կեղծ թուրքեր, որոնք հավատում էին, որ հայերը պետք է պատժվեն, և որ, կոտորելով հայերին, գործում են ի շահ իրենց երկրի»[64]: Թուրք գործիչներից ամենաանկեղծն ու շիտակը Ահմեդ Էմին Յալմանը, գտել է, որ «տեղահանությունները կոչված էին լինելու ժամանակավոր միջոցառում ռազմական նկատառումներով, բայց մի շարք ազդեցիկ թուրք քաղաքագետների համար դրանք կոչված էին բնաջնջելու Թուրքիայում եղած հայկական փոքրամասնությունը Փոքր Ասիայում ցեղային միատարրություն ստեղծելու հարար: Ցեղասպանությունը կատարվել է»[65]:

Ցեղասպանության նախօրեին կամ բուն տարիներին, երբ վերևից տրված կարգադրությունները պահանջել են խլել, թալանել, սպանել, ապա հակամարդկային, ավերիչ, հանցավոր գործողությունները շեշտակիորեն մեծացել են հատկապես տեղահանությունների ու կոտորածների շրջաններում: Համապատասխանորեն փոխվել է նաև մարդկանց հոգեբանությունը: Յուրաքանչյուրը ձգտել է նմանվել մյուսին: Նրանք գործել են արա այն, ինչ անում են մյուսները սկզբունքով: Հաճախ ակամայից, տարերայնորեն, անհատները, մարդկանց խմբերը, դարձել են ավերածությունների ու սպանությունների մասնակիցներ: Իսկ տեղահանության ու ջարդերի ժամանակ որակական փոփոխություններ են տեղի ունեցել մարդկանց հոգեկան աշխարհի մեջ: Կոտորածներն ու սպանությունները դարձել են սովորական զբաղմունք: Անհատի հոգեկան աշխարհի վերլուծությունը ցույց է տալիս, որ մարդկանց մեծ խմբի ազդեցությունը նրա վրա ներգործում է դրականորեն: Ոխստի անհատը այդ պայմաններում զգում է ուժերի հորդում, և նա պատրաստ է կատարել այն, ինչ չի խիզախի սովորական պայմաններում: Մտահղացած արարքի վրա վճռական ազդեցություն է ունենում նաև անանուն լինելու զգացողությունը: «Կորչելով «անդեմ զանգվածի» մեջ, վարվելով այնպես, «ինչպես բոլորը» անհատը կորցնում է պատասխանատվության զգացումը սեփական արարքների հանդեպ»[66]: Բոլոր այդ երևույթները պայմանավորված են տվյալ ժողովրդի կամ պետության հասարակական առաջադիմության և քաղաքակրթության աստիճանով: Եվ, ինչպես ճիշտ նշել է Բ. Պորշնևը. «Որքան բարձր է հասարակության և նրա հետ միասին նաև բուն մարդու զարգացման մակարդակը, այնքան վերջինս քննադատաբար է վերաբերում այն ուժերին, որոնք ինքնաբերաբար նրան մղում են այս կամ այն գործողության»[67]: Իսկ թուրքական հասարակությունը XX դարի սկզբին գտնվել է զարգացման բավական ցածր մակարդակի վրա. այնտեղ գերիշխել են քոչվորություն, կենցաղի և արտադրության ավատատիրական վերապրուկներ, տնտեսության քաոսային վիճակ, ճնշում ու կամայականություն, իսկ կյանքի ցածր

63 Վրաց. ԽՍՀ ԿՊՊԱ, ֆ. 2Ս, գ. 3198, թ. 76

64 *Ս. Պողոսյան.* Գոյատևման պայքարի քառուղիներում, Եր., 1988, էջ 269

65 Նույն տեղում, էջ 270-271

66 "Социал на психологи ", с. 284

67 ***Б. Ф. Поршнев.*** Социал па психологи и истори , с. 137

մակարդակը բազմազգ կայսրությունում էլ ավելի էր սաստկացրել իրավիճակը: Այդ իրադրությունը հասարակության մեջ ծնել է ձգտում ընդօրինակելու սովորական գործերում, ինչը հոգեբանը կապում է «հոտային բնազդի» վերապրուկների առկայության հետ: Սա իր հերթին ծնում է այսպես կոչված «ամբոխի ոգի», որը կյանքի խաղաղ ժամանակաշրջանում ունենում է հանգիստ բնույթ և անզուսպ ու վայրագ է դառնում հասարակական վճռորոշ ժամանակներում: Համատեղ գործողությունները թուլացնում են, այնուհետև նաև ձրկում անհատին խմբային, հասարակական կարգերի և այլ արժեքների զսպող ազդեցությունից: Միաժամանակ բորբոքվում են այնպիսի զգացումներ, ինչպես խանդավառությունը, համարձակությունը, ատելությունը, զայրույթը և այլն: Մարդկանց պատահական կուտակումը պատահական ամբոխը, աստիճանաբար վերածվում է ագրեսիվ ուժի: Աստիճանաբար համատեղ, բազմամարդ գործողություններում «մարդիկ իրենց հասցնում են մինչև մոլուցքի» բոլոր հանգամանքներում խուժանը աննահանջ ձգտում է իրականացնել առաջադրված նպատակները: Սկսվում է անպատասխանատու, ոչ մեկի կողմից չվերահսկվող մարդկանց գործողությունների շրջանը: Իսկ դա, ինչպես հաստատում է ակադեմիկոս Դ. Ս. Լիխաչովը, զարհուրելի դժբախտություն է, քանի որ «անպատժելիությունն ու անվերահսկողությունը ամենաթողություն ու լկտիություն է ծնում իշխանությամբ օժտվածների մեջ...»[68]: Երիտթուրքերը գործով և խոսքով լիուլի ապացուցել են այդ կենսական ճշմարտությունը: Եվ այնուհանդերձ, պատմությունը իրավասու է դատապարտելու երիտթուրքերի չարագործությունները: Նրանց մեղքը պատմության հանդեպ բացատրել կարելի է, բայց արդարացնել ոչ մի կերպ չի կարելի: Անհրաժեշտ է իրենց թուրքերին ու ցանկացած երանգի պանթյուրքիստներին օգնել հասկանալու, որ ժողովուրդների հիշողության մեջ երբեք չեն ջնջվում անցյալում կատարված նողկալի ոճրագործությունները: «Դեսպան Մորգենթաուի հուշերը» գրքում մենք գտնում ենք այսպիսի մի պատմական անդրադարձ. «Տասներեքերորդ դարի սկզբին ալբիգոյցիների կոտորածը միշտ էլ համարվել է պատմության ամենատխուր իրադարձություններից: Մոլեռանդության այդ բռնկման ժամանակ սպանվել էր մոտ 60 000 մարդ: Բարդուղիմեոսյան գիշերը կյանքից զրկվել էին մոտ 40 000 մարդկային արարածներ: Սիցիլիական ճրագալույցի ժամանակ, որը միշտ էլ ներկայացվում է որպես այդ կարգի առավել դաժան բռնկումներից մեկը, ոչնչացվել էր 8 000 մարդ: Ամբողջ հատորներ են գրվել Տոկվեմադոյի օրոք իսպանական հավատաքննության մասին. բայց և այնպես նրա տասնութամյա իշխանության ընթացքում մահապատժի էին ենթարկվել 8000-ից փոքր-ինչ ավելի հերետիկոսներ: Հնարավոր է, որ հայերի տեղահանությունը թերևս ամենից ավելի հիշեցնում է միայն մի իրադարձություն. դա Իսպանիայից հրեաների արտաքսումն էր Ֆերդինանդի և Իզաբելայի կողմից: Ըստ Պրեսկոտի, իրենց տներից վտարվել և ամբողջ Աֆրիկայով ու Եվրոպայով մեկ սփռվել էին 160 000 հրեաներ: Բայց այդ բոլոր հալածանքները գրեթե աննշան են թվում հայերի կրած տառապանքների համեմատ. նրանցից ոչնչացվել է առնվազն 600 000, հնարավոր է նաև մեկ միլիոն մարդ»[69]: Գրականության մեջ կան տարբեր

68 "Литературная газета", N 37. 9.IX.1987

69 ՀՅՕԿ ժող. էջ 668

տվյալներ մարդկության դեմ կատարված նման հանցագործությունների մասին: Օրինակ՝ Իվ Տերնոնի «Հայեր. Մի ցեղասպանության պատմություն» գրքի մասին Ժերար Շալյանի գրախոսության մեջ մատնանշվում է. «XX դարում եղել է երեք ցեղասպանություն: Դրանցից մեկի մասին երբեք չեն խոսում. դա գնչուների ցեղասպանությունն է...»[70]: Մյուս երկուսի մասին խոսք կլինի ստորև: Բայց եղել է նաև կխմերների կոտորածը Կամբոջայում, որի մասին շատ քիչ է ասվել: Ինչ վերաբերում է գերմանական և թուրքական ֆաշիստների կատարած հանցագործություններին, ապա դրանց մասին կան հարյուրավոր ու հազարավոր ստեղծագործություններ, ականատեսների հուշեր ու հոդվածներ: Դրանք կարելի է և պետք է դնել իրար կողքի, քանի որ ունեն բազմաթիվ նման գծեր, չնայած ժամանակի տարբերությանը: Նախ, դրանք երկուսն էլ տեղի են ունեցել երկու համաշխարհային պատերազմների տարիներին: Երկուսի համար էլ ոգեշնչող գաղափարախոսություն է եղել ռասայական տեսությունը: Գերմանացի ֆաշիստները իրենց լավ մշակված ծրագրերի իրականացմանը հասել են հենվելով իրենց ժողովրդի կազմակերպվածության և մոլեռանդության վրա: Թուրք ֆաշիստները կարողացել են նույնքան լավ մտածված ու ծրագրված տեղահանությունն ու կոտորածները մինչև վերջ հասցնել՝ հենվելով զինվորական ու քաղաքացիական աստիճանավորների, ինչպես և մուսուլման ամբոխի մոլեռանդության վրա: Ընդ որում նրանք լայնորեն օգտագործել են նման ծավալուն գործողությունների նախապատրաստման ու իրականացման պատմական փորձը: XI դարի գրական հուշարձանում («Քաբուս Նամե») երիտասարդ մարդկանց խորհուրդ է տրվում. «Եթե ուզում ես միշտ լինել հզոր ու երջանիկ, փնտրիր իշխանություն ունեցող հասարակություն և հնազանդ եղիր նրան... որպեսզի դժբախտ ու մեղավոր չդառնաս»[71]: Ռազմական ուժի և բռնության պաշտամունքը այսուհետ դառնում են թուրք երիտասարդության ողջ դաստիարակության ելակետային դրույթներ, իսկ զինվորական ծառայությունը՝ վերին նպատակ: XVII դարի վերջերից բանակը կատարում էր իր հիմնական դերը՝ պաշտպանում էր Օսմանյան կայսրության ամբողջականությունը՝ պարբերաբար, պատժիչ գործողություններ իրականացնելով հնազանդ ժողովուրդների ազատագրական շարժումների դեմ: Անցյալ դարի վերջին և այս դարի սկզբին հայերը այդ հզոր ուժի դեմ մնում են մենակ: Թուրքական պետական մեքենայի բոլոր օղակներն ու հասարակական կարծիքը ուղղվում են հայկական հարցի «լուծման» նախապատրաստմանը: Ըստ երևույթին, այդ ամբողջ ժամանակաշրջանը հարկավոր է դիտել որպես հայերի բնաջնջման լուրջ ու եռանդուն նախապատրաստման շրջան: Տարածված այն կարծիքը, թե իբր ազգային կոմիտեների և կուսակցությունների կազմակերպումը և հայ հասարակական կյանքի աշխուժացումը պատճառ են եղել ցեղասպանության իրականացման համար, ոչ մի քննադատության չի դիմանում: Որպես ապացույց կարող են ծառայել տասնյակ հազարավոր արձանագրված փաստերն ու իրադարձությունները, և իրենց իսկ՝ երիտթուրք գործիչների բացահայտ արտահայտությունները, վերջապես՝ ականատեսների ու այլ անձանց վկայությունները: *Ապացույցների այդ ողջ հզոր զինանոցը, հակառակ*

70 " Le nouvel observateur", 19. IX. 1977

71 Кабус наме. Изд II, М., 1958, с. 55

պաշտոնական Թուրքիայի, նրա հեռու և մոտիկ բարեկամների բոլոր ճիգերի ու պատճառաբանությունների, լուրջ հիմք է ծառայում Թուրքիային, նրա ժողովրդին, գլխավորապես նրա ղեկավարներին մեղադրելու մարդկության դեմ կանխամտածված հանցավոր գործողություններ կատարելու մեջ : Թուրքական դատարանների բոլոր դատավճիռները միանշանակ մեղադրում են հենց երիտթուրքական կուսակցությանն ու նրա ղեկավարներին՝ հայերի ցեղասպանությունը կազմակերպելու և իրականացնելու հարցում: 1919 թվականի ապրիլի 27-ին հայտարարված դատավճռում Թալեաթը, Էնվերը, Ջեմալը և նրանց ընկերները մեղադրվել են պատերազմի և ահաբեկչության միջոցով այնպիսի հարցեր լուծելու համար, որոնք կարելի էր իրագործել հանգիստ պայմաններում, առողջ բանականությամբ: Իսկ նրանք շարունակ խռովություն են սերմանել և անչափ ծանր պայմաններ ստեղծել ժողովրդի համար: «Ստեղծվել էին հանցագործների խմբեր՝ տեղահանված հայերի քարավանները կոտորելու և ոչնչացնելու նպատակով»: «Լրիվ ապացուցված է, որ այդ կոտորածները կատարվում էին Թալեաթ, Էնվեր և Ջեմալ բեյերի անմիջական հրամաններով և նրանց իմացությամբ»: Այնուհետև ասվում է, որ սահմանադրության հռչակումից հետո ևս շարունակվել են հիշյալ հանցավոր գործողությունները, և հենց «Միություն և առաջադիմություն» կուսակցության թելադրանքով: Դրա ղեկավարները պատասխանատվության են ենթարկված «ոչ թե այն պատճառով, որ նրանք եղել են նախարարներ, այլ «Միություն և առաջադիմություն» կուսակցության կենտրոնական կոմիտեում բարձր պաշտոններ զբաղեցնելու և անդամության համար»[72]: Մեզ թվում է՝ այլևս հարկ չկա ստորև ներկայացնել օտար նշանավոր մարդկանց՝ հասարակական գործիչների ու մտածողների, գրողների և արվեստագետների, դիվանագետների և զինվորականների մտքերն ու գնահատականները երիտթուրքերի քաղաքականության ու ոճրագործությունների մասին: Դա մեր կողմից կլինի ապացուցվածը կրկին ապացուցելու ավելորդ փորձ: Բացի այդ՝ նրանց գրքերն ու հոդվածները տպագրված են բազմաթիվ լեզուներով, և նրանք թուրքերի՝ որպես ցեղասպանի դատավճիռը վաղուց են կայացրել:

Սակայն այստեղ արժե թեկուզ թռուցիկ անդրադառնալ կայսրության անմիջական հարևանների ու նախկին հպատակների արձագանքներին, որոնք, մեր կարծիքով, պատկերը կդարձնեն ամբողջական:

Գոյություն ունեցող բավական հարուստ գրականության մեջ պարսիկ ու արաբ հեղինակները հարևան երկրում կատարված ոճրագործությունները բացատրել են ամբողջ տարածաշրջանի թուրք բնակչության շրջանում շովինիզմի ու պանթյուրքիզմի ուժեղացմամբ: Պարսիկ հայտնի գրող Մոհամեդ Ալի Ջեմալզադեն 1915 թվականին Բեռլինի իրանական ազգային կոմիտեի հանձնարարությամբ մեկնել է Բաղդադ: Տասնվեց ամիս շարունակ նա ականատես է եղել բազմաթիվ չարագործությունների: «Ես ականատես եղա,- գրում է նա,- մի շարք դաժանաբարո տանջանքների ու խոշտանգումների, որոնք գործադրում էին թուրք զինվորները հայերի գլխին...

72 «Հայերի ցեղասպանությունը ըստ երիտթուրքերի դատավարության փաստաթղթերի», էջ 37, 42, 54

որի հետևանքը եղավ միլիոնավոր հայերի ջարդը: ...Հանդիպեցինք հայերի բազմաթիվ խմբերի, որոնց սպառազեն հեծյալ թուրք ժանդարմները սարսափելի ձևով, որ նույնիսկ կարելի է անհավատալի թվալ, քայլելով դեպի կործանում էին քշում: Հարյուրավոր հայ տղամարդկանց, կանանց ու երեխաների, որոնք արդեն անզոր էին քայլելու, մտրակի ու զենքի ուժով հետիոտն ու անզոր, անխնա քշում էին առաջ: Տղամարդկանց մեջ երիտասարդներ չկային»[73]: Ջեմալզադեն վրդովմունքով շարունակում է, որ կտտանքներն ընդունում էին ծայրահեղ ձևեր. մոլեգնության հասած խուժանի ներկայացուցիչները, իրենց անասնական կրքերին հագուրդ տալու համար բռնաբարում էին նույնիսկ մահացող կանանց:

Պատմաբան Իսմայիլ Ռահինը «Հայերի ընդհանուր կոտորածը օսմանյան սուլթանների տիրապետության ժամանակաշրջանում» մենագրության մեջ ոչ միայն հայերի, այլև ուրիշ ազգերի ջարդերի փաստերը բացատրում է թուրք ժողովրդի այսպես ասած գերազանցության և կրոնական մոլեռանդության քարոզով: Ըստ Ռահինի, պանթյուրքիզմի հետադիմական գաղափարախոսությունից կուրացած թուրք ազգայնամոլների կարծիքով դեպի Արևելք, այսինքն դեպի «Թուրան» տանող ճանապարհին ամենալուրջ խոչընդոտը եղել է «հայկական արգելապատը», որը պետք էր վերացնել հայերի բնաջնջմամբ: Նրա տվյալներով, «Օսմանյան Թուրքիայում 1876-ից մինչև 1919 թվականը տեղի է ունեցել հայերի 24 զանգվածային կոտորած, որոնցից ընդհանուր առմամբ զոհվել է 2 237 027 հայ»: Այնուհետև, ամփոփելով պարսիկ պատմաբաններ Ռ. Ա. Դիվանբեգիի, Մ. Ավշարի և այլոց հետևությունները քննարկվող հարցի մասին, նա ցեղասպանության գլխավոր պատճառը տեսնում է պանթյուրքիզմի գաղափարի մեջ: «Թուրանի» ստեղծումը պահանջում է այդ հսկայածավալ կայսրության արևմտյան կեսը միացնել նրա արևելյան կեսի հետ, որին խանգարում է Հայաստանը: «Ոչստի թուրքերը գտնում էին, որ եթե վերջինս վերանա, ապա իրենք կհայտնվեն Կասպից ծովի ափին, և իրենց կմնա միայն անցնել ծովը:[74]

Քննարկվող հարցերի վերաբերյալ հասարակական կարծիքի վրա մեծ ազդեցություն ունի արաբական պատմագրության դիրքորոշումը: Վերջինս ունի հարևան հայ ժողովրդի պատմության ու մշակույթի ուսումնասիրման բազմամյա ավանդույթներ: Դրան նպաստել են երկու ժողովուրդների պատմական ճակատագրի որոշ ընդհանուր գծեր: Դարերով նրանք գտնվել են Օսմանյան կայսրության լծի տակ և նրանց ազգային կազմակերպություններն ու կուսակցությունները կողք-կողքի պայքարել են թուրքական վարչակարգի դեմ: Երկու ժողովուրդներն էլ դիտվել են որպես խոչընդոտ թուրք շովինիստների ազգային իդեալի իրականացման ճանապարհին: Առանց թաքցնելու վերջինները խոսել են հայերի բնաջնջումից հետո արաբների ոչնչացման անհրաժեշտության մասին: Չի կարելի հաշվի չառնել նաև այն հանգամանքը, որ հայերի բեկորները, որոնք մի կերպ փրկվել են տեղահանությունից, հայտնվել են արաբական երկրներում, որտեղ նրանք

73 *Հ. Մովսիսյան.* Պարսիկ անվանի գրողը հայկական ցեղասպանության մասին, «Պատմաբանասիրական հանդես», 1987, N 2, էջ 232

74 ***Բ. Բայբուրտյան.*** Исмаил Раин. Всеоб ее избиение арм н... Լրաբեր ՀՍՍՀ ԳԱ, 1977, N 1, էջ 100-101

ապաստան են գտել և բնակություն հաստատել: Երկու ժողովուրդների միջև հաստատվել են բարեկամական հարաբերություններ: Եվ միանգամայն բնական է, որ երևան են եկել մի շարք լուրջ հետազոտություններ մեր ժողովրդի պատմության մասին: Հրատարակվել են Մրվան ալ Մուդավարիի «Հայերը պատմության մեջ», *Ոսման աթ Թուրքիի «Էջեր Հայաստանի պատմության»*, Ֆուադ Հուֆիզի «Հայ ժողովրդի պատմությունը սկզբից մինչև մեր օրերը» մենագրությունները: Արաբ շատ հեղինակներ, ընդհանուր գծերով, մասնավորապես Մերձավոր և Միջին Արևելքի մասին գրած աշխատություններում բավական հանգամանորեն լուսաբանել են հայ ժողովրդի պատմության առանձին փուլերը: Բայց արաբ հեղինակները ուշադրություն են նվիրել և շարունակում են նվիրել հայերի ցեղասպանության խնդրին: Դրանց մեջ կարևոր տեղ են գրավում իրավաբան գիտնական Մուսա Պրենսի հետազոտությունները: Բազմամյա ուսումնասիրությունները հեղինակին հանգեցրել են այն համոզման, որ հայերի կոտորածները պետք է կոչել ոչ այլ կերպ, քան «հայասպանություն»: Լիբանանում լույս տեսած նրա բազմահատոր աշխատությունը և բազմամյա գործունեությունը նվիրված են այդ խնդրի լուսաբանմանն ու իրավաբանական հիմնավորմանը: Հիշյալ հեղինակներից մեկի՝ Ֆաուդ Հաֆիզի կարծիքով, «Հայկական ցեղասպանության իսկական պատճառն այն է,որ օսմանյան պետության մեջ կառավարող «իթթիհադ վե թերաքքի» կուսակցության ավազակախումբը էնվեր փաշայի, Ջեմալ փաշայի, Թալեաթ փաշայի ղեկավարությամբ ձգտում էր բարենպաստ (պատերազմական - Հ.Ի.) պայմաններն օգտագործել հայկական հարցը հայերի բնաջնջման միջոցով վերացնելու համար»[75]: Հեղինակի կարծիքով, երիտթուրքերը իրենց հետագա խնդիրը համարել են այն, որ Ռուսաստանի թյուրքալեզու ժողովուրդների տարածքները միացնեն իրենց տիրապետությանը: Մեկ այլ հեղինակ՝ Ջիհադ Սալեհը հայերի ցեղասպանությունը դասում է այն «ամենամռայլ ու բարբարոսական էջերի շարքը, որ թուրք կառավարող դասակարգը իրականացրել է ժողովուրդների դեմ, չնայած բոլոր այն մեծ ծառայություններին, որ հայ ժողովուրդը մատուցել է թուրքական հասարակությանը...»[76]:

Իսկ ի՞նչ զարգացում է ապրել հայ ժողովրդի բարոյաքաղաքական և հոգեբանական վիճակը իր ազգային ողբերգության նախօրյակին և այդ տարիներին: Դիմենք պատմական զարգացման փուլերին: Թուրքական ստրկության դարերն ու դաժան ճնշումները ժողովրդի մեջ պատվաստել են հնազանդության մտայնություն, որից շատ դժգոհ են եղել ազատագրական շարժման մարտիկները: Բայց դա Օսմանյան կայսրության հայ և մյուս քրիստոնյա հպատակների մեղքը չէ, այլ նրանց դժբախտությունը: Կամայականությունը, բռնությունները, ռայաների շահերը պաշտպանող որևէ միջոցի կատարյալ բացակայությունը, զենք պահելու և կրելու խիստ արգելքը նրանց դարձրել են հնազանդ: Մյուս կողմից, հայկական վերնախավի դասակարգային շահերը, կենսական պահանջներն ու նրանց գործունեության

75 *Ն. Հովհաննիսյան.* 1915թ. ցեղասպանությունը արաբական պատմագրության մեջ, «Հայրենիքի ձայն», 1987թ. 22 հուլիսի

76 ***Н. О. Оганесян.*** Арабская историагрфия по новой истории Армении /рукопись/, с. 88

բնույթը նրանց հեռու էր պահում ժողովրդից: Այդ հանգամանքը ևս նպաստել է ժողովրդի հնազանդության ոգու ամրապնդմանը: Հայ բուրժուազիայի ամենահեղինակավոր ներկայացուցիչներից մեկը՝ Պողոս Նուբար փաշան, հետևյալ կերպ է ձևակերպել թուրքական պետության մեջ ապրող հայերի վարքի նորմերն ու ակնկալիքները. «Հայերը չեն պահանջեր ոչ անջատում, ոչ անկախություն, ոչ քաղաքական ինքնավարություն - ինչ որ հայկական նահանգներուն ազգագրական և աշխարհագրական պայմաններու մեջ ցնորք մը միայն կհամարենք, այլ կպահանջեն միայն Բեռլինի դաշնագրին 61 հոդվածով խոստացած և մեծ տերությանց դեսպաններուն 11 մայիսի 1895-ի հաշտագրին մեջ բանաձևած բարենորոգումներուն ծրագրին գործադրումը»[77]: Այնուհետև, հայ բնակչության նշանակալի մասը զբաղվել է արհեստներով և առևտրով. դրանք կարող էին զարգանալ ու բարգավաճել միայն խաղաղ պայմաններում: Անցյալ դարի վերջին նրանք որոշ հաջողությունների էին հասել, ուստի չէին ցանկանա կորցնել նվաճած դիրքերը: «Չափազանցություն չպիտի ըլլա ըսելը,- գրում էր Լեփսիուսը,- թե թուրք առևտուրին ամբողջության վրա, ներածության 60, արտածության 40 և ներքին առևտրի գոնե 80 տոկոսը կը գտնվին հայերուն ձեռքին մեջ»[78]: Վերջապես՝ հանգիստ կյանքի ամենամեծ կողմնակիցը եղել է հայ բնակչության գերակշիռ մասը՝ գյուղացիությունը: Մեր ժողովրդի բոլոր խավերը հավատացել են և հուսով եղել, որ ինչ-որ մեկը և ինչ-որ կերպ կկարողանա տանելի պայմաններ ստեղծել իր համար: Այդ հույսը տասնամյակներ ու դարեր փայփայել են մարդիկ: Այդ երազանքի ազդեցությունը դիպուկ ու գեղեցիկ է բնորոշել Ռաֆֆին. «Հույսը մի անդունդ է, որի անեզրական դատարկության մեջ մարդը մխիթարվում է այն բաներով, որ իսկապես չունի: Դատարկ հույսը ծուլացնում է մարդուն, խլում է նրանից իր ինքնագործունեությունը և զրկում է տոկուն աշխատութենից: Դատարկ հույսը մարդուն ամեն բան դրսից է սպասել տալիս: Նա չի թողնում, որ մարդ կանգնի իր սեփական ոտների վրա: Նա միշտ նեցուկ է որոնում: Եվ այս պատճառով մարդկային առաջադիմության մեջ չկա մի ավելի վնասակար բան, քան ցնորամիտ հույսը...»[79]:

Հայ ժողովուրդը որքան էլ տոկաց և վաղվա օրվա գեղեցիկ հույսեր փայփայեց, այնուամենայնիվ բնաջնջվեց կայսրության ողջ տարածքում և կորցրեց իր հայրենիքի ինը տասներորդը՝ Արևմտյան Հայաստանը:

77 *Վ. Բայբուրդյան.* Հայ-քրդական հարաբերությունները XIX դ. վերջին և XX դ. սկզբին, Եր., 1989, էջ 299

78 *Եոհ. Լեպսիուս.* Հայաստանի ջարդերը, Կ. Պոլիս, 1919, էջ 265

79 *Ռաֆֆի.* Երկերի ժողովածու, հտ. 9, Եր., 1958, էջ 271

* * *

Թուրքիայում պահպանվել են ոչ թուրքական էթնիկական, մշակութային և այլ նստվածքների անկոծկելի շերտեր, և ապարդյուն են թուրք ազգայնամոլների ջանքերը ժխտելու կամ ոչնչացնելու դրանք: Ամենից շատ նրանք վախենում են քրիստոնյա ժողովուրդների ու նրանց մշակույթների ազդեցությունից ու հետքերից, ուստի սովորույթ է դարձել նրանց բոլորին անվանել թուրքեր և մուսուլմաններ, իսկ նրանց ստեղծածը՝ թուրքական: Վերջին տարիներին հայերը նույնիսկ հայտարարվել էին քրիստոնյա թուրքեր:

Հանրածանոթ է, որ աշխարհի երեսին զուտ թուրքական ոչինչ գոյություն չունի. թուրքական պետությունը հիմնվել և այժմ էլ գտնվում է արաբների, հայերի, հույների, քրդերի, բուլղարների ու սլավոնական այլ ժողովուրդների և այլոց հողերում: Թուրքերն իրենց մեջ են ներծծել թվարկած և հարևան քաղաքակրթությունների մշակութային հարուստ ժառանգությունը: Հունա-հռոմեական և հայկական ճարտարապետությունից հրաժարվելու բոլոր կարգի փորձերը բավական լուրջ հակահարվածի են հանդիպել հեռատես թուրք ներկայացուցիչների և այդ արվեստների գիտակների կողմից: Թուրք ժողովրդի ձևավորման ժամանակ բոլոր այդ էթնիկական տարրերը կազմել են հիմնական բաղադրամասերը: Այդ հանգամանքը հատկապես նշել է Դ. Երեմեևը «Թուրքերի ծագումը» գրքում: Ուստի այն ամենը, ինչ դրականորեն է բնութագրում Թուրքիայի բնակչին՝ դրանց համադրության արդյունքն է: Բնական է, որ պատմական երևույթները գնահատելիս պետք է ուշադրություն դարձնել բարեխիղճ վկաների տվյալներին: Իսկ նրանք անչափ հարուստ նյութ են տալիս Թուրքիայի պատմության մեջ հայերի կատարած դերի մասին: Բոգդան Գեմբարսկին գրել է. «Ստամբուլը դեռ այն ժամանակ եղել է ոչ պակաս հայկական և հունական, քան թուրքական մշակույթի համաշխարհային կենտրոն: Ըստ էության դա եղել է երեք ժողովուրդների քաղաք»: Իսկ Յուրի Վեսելովսկին 1915 թվականին գրել է. «Բազմադարյա ճնշումը պետք է այսպես թե այնպես իր կնիքը դներ հայկական կյանքի ու հայ ժողովրդի հոգեբանության վրա, շատ բան խլացել էր քաղաքական ու տնտեսական ծանր կարգերի կողմից, բայց անվերադարձ չեն մեռել այն ժողովրդի մշակութային սաղմերը, որի մասին Բայրոնը այն ժամանակ գրել է, որ «ինչպիսին էլ եղած լինի նա ապագայի մեջ, նրա երկիրը հավետ պիտի մնա որպես աշխարհի ամենահետաքրքիր երկրներից մեկը»[80]: Մատնանշենք ֆրանսիական արխիվներից մի փաստաթուղթ ևս. վարչապետ Ա. Բրիանին 1916 թվականի սեպտեմբերի 16-ի հաղորդման մեջ ասում է. «Երիտթուրքերի իշխանության գլուխ անցնելու ժամանակից հայերի տառապանքները հասան իրենց գագաթնակետին. հայերի արյունը հոսում էր գետի նման, բարբարոսությունը դեռ երբեք չէր հասել ահ ու սարսափի այդպիսի աստիճանի: Երիտթուրքերը իրենց մոլեգնության մեջ երդվել են ոչնչացնել այդ ժողովրդին...Հայ ժողովուրդը բազմիցս ցուցաբերել է իր կենսունակությունն ու հանճարը, որը

80 *Ю. Веселовский.* Трегедия Турецкой Армении, с. 44-45

հաղթել է ժամանակն ու հալածանքները. նա դեռ դարերով կփայլի մարդկության առջև: Բայց մենք չենք կարող անզոր ու անխռով ներկա լինել այն նողկալի տեսարաններին, որոնց ասպարեզ է դարձել Թուրքական Հայաստանը... Հայերի օգնության շվեյցարական կոմիտեն հաղորդում է. «Այժմ պարզվել է, որ թուրքերի վարվելակերպը հայերի նկատմամբ ոչ մի կերպ առաջ չի եկել նրանց ռազմական դրության անհրաժեշտությունից, խոսքը բացառապես այն մասին էր, որ ոչնչացնեն այդ խեղճ ազգին»: Այսպիսով դա պատմության մեջ չլսված, ոչնչով չարդարացված ոճրագործություն է, որի դեմ պետք է ոտքի ելնեն բոլոր այն ազգերը, որոնց խորթ չէ պատվի ու մարդկայնության զգացումը: Եվ թույլ տալ, որ կատարվի նման ոճրագործություն, առանց անելու հնարավոր ամեն բան, հավասարազոր է մեղսակցության»[81]: Նման բնութագրումները կարելի է մեջ բերել անվերջ, որոնց, ցավոք, չեն հաջորդել գործնական լուրջ քայլեր: Կուտակվել են հսկայական քանակությամբ փաստաթղթեր: 1933 թվականի հոկտեմբերին լեհ իրավաբան Ռափայել Լեմկեն հատուկ զեկուցման մեջ, որ ներկայացվել էր Մադրիդում կայացած միջազգային քրեական իրավունքի հինգերորդ գիտաժողովին, առաջարկել է վերը նկարագրված գործողությունները հայտարարել բարբարոսական հանցագործություն: Իսկ ինչ վերաբերում է բուն «ցեղասպանություն» արտահայտությանը, ապա դ-ր Լեմկեն այն գրում է ավելի ուշ 1944 թվականին, այսինքն բուն հանցագործության նկարագրությունից գրեթե տասը տարի հետո»[82]:

Ռ. Լեմկեին ցնցել են արդարադատության կատարյալ բացակայությունը և կատարյալ անպատժելիությունը: «Ազգը սպանվեց, իսկ դրանում մեղավորներն ազատ արձակվեցին: Ինչու՞ են պատժում առանձին անձին, երբ մի մարդը սպանում է մեկ ուրիշին: Ինչու՞ մեկ միլիոն մարդու սպանությունը պետք է լինի ավելի փոքր հանցանք, քան մեկ մարդու սպանությունը»[83]: Լեմկեն ուղղակի և աներկմիտ գրում է, որ հենց հայերի ցեղասպանությունը իրեն դրդեց իր կյանքը նվիրելու ցեղասպանության հանցագործության դեմ մղվող պայքարին: Եվ փառք աստծո: Քանզի մարդկությունը մինչև այժմ ոչ մի գործնական դաս չի քաղել հայ ժողովրդի ազգային ողբերգությունից: Ամենազարմանալին այն է, որ կրկնվող արյունահեղ իրադարձությունները, որոշակի տրամադրություններ առաջացնելով համաշխարհային հասարակական կարծիքի մեջ, չեն անդրադառնում մեծ կամ փոքր տերությունների քաղաքականության վրա: Իրավաբան և գրող Ա. Վ. Ամֆիտեատրովը խորապես ուսումնասիրելով միջազգային գործերը երկու դարերի սահմանագծում, արդարացի զարմանքով գրել է. «Երբևէ ոչ մի ազատագրական շարժում ավելի մեծ դաժանությամբ չեն դավաճանել և որպես զոհ թողել բռնությանը, որքան հայկական շարժումը: Եվրոպայից ակնկալվող օգնության փոխարեն ապստամբները հանդիպեցին բոլոր մեծ տերությունների ակնհայտ անբարյացակամությանը...»[84]: Նրանցից ոչ մեկը չի ցանկացել վիրավորել

81 "Документ французских архивов о геноциде арм н", с. 15-16

82 *Ю. Барсегов.* Геноцид арм н - преступление против человечества. Լրաբեր հասարակական գիտությունների. 1987, N 4, էջ 28

83 Նույն տեղում, էջ 29

84 *А. В. Амфитеатров.* Арм нский вопрос. СПб., 1906. Пу кинска Скоропеч., с.4

«բարեկամ» երկրին, ինչ-որ բան զիջել նվաճած դիրքերից: Նրանց արտաքին քաղաքականության այդ գլխավոր գիծը չի խախտվել մինչև մեր օրերը: 1915 թվականի ցեղասպանությունից հետո ակնհայտորեն ծառանում է թուրքական պետության պատասխանատվության հարցը: Այդ ոգով հնչել են հասարակական ու պետական, մշակույթի գործիչների, գրողների, հոգևոր անձանց բազմաթիվ ելույթներ: Այսպես, Անատոլ Ֆրանսը գտնում էր, որ «հայերի դատը մարդկության դատն է, հետևաբար նրանք պետք է ամբողջ մարդկությանը հետաքրքրեն այդ դատով: Եվրոպային և արար աշխարհին իրենց ձայնը հասցնելու համար բոլոր հայերի ձայնը մեկ ձայն պետք է կազմի»[85]: Մ. Գորկին «ստոր անտարբերության» մեջ մեղադրել է «քրիստոնյա կրթված Եվրոպային», որը քաջ տեղյակ է եղել «այդ եռանդուն ժողովրդի ապրած բոլոր ողբերգություններին: Հայերի ճակատագրի մասին նրա մտքերի շարունակությունն ասես լինի 1916 թվականին լույս ընծայված «Հայ գրականության ժողովածուի» ներածական հոդվածը: «Թուրքիան ինքը խառնվեց պատերազմին, և հայերի սրտում վառվեց մի հուսո նշույլ, որ Ռուսաստանի հաղթանակով կլուծվի նաև հայկական հարցը հայերին կպարգևի «քաղաքական վարկ»: Այդ հույսը իրենց բախտը դարձյալ ռուսական զենքի հաջողության հետ կապած հայերին մղեց այդ հաջողության համար անել այն ամենը, ինչ նրանք ի վիճակի էին: Հայերի այդպիսի քաղաքականությունը կատաղեցրեց թուրքերին, որոնք վրեժխնդրության համար որոշեցին և ի կատար ածեցին Թուրքիայի սահմաններում ապրող հայերի սիստեմատիկ, գլխովին բնաջնջման ծրագիրը...»[86]: Մնում է միայն մեկ անգամ ևս կրկնել, որ հայերի մասնակցությունը պատերազմին Ռուսաստանի կողմում և կամ նրանց «ապստամբությունը» թուրքական բանակի թիկունքում կարող էին ծառայել ոչ իբրև էական առիթ: Իսկ թուրքերի ոճրագործությունների իսկական պատճառը նրանց պանթյուրքիստական ծրագրերի իրականացումն էր, որին խանգարել են հայերը, և առանձնապես Արևմտահայաստանի փաստական գոյությունը: Եվ նրանց ոչ ոք չի խանգարել իրականացնելու իրենց այսպես կոչված «ազգային իդեալը»: Այդ հետևության ճշտությունը բազմիցս ու վավերագրերով հաստատվել է գրականության մեջ: Ակադեմիկոս Մ. Ներսիսյանը վերջերս հրապարակել է մոլի թուրքասեր, գերմանական դեսպան բարոն ֆոն Վանգենհայմի գաղտնի զեկուցագիրը կանցլեր Բ. Հոլվեգին 1915 թվականի հունիսի 17-ին: Այնտեղ, մասնավորապես, ասված է. «Միանգամայն ակնհայտ է, որ հայերին աքսորելը կապված չէ միայն ռազմական նկատառումների հետ: Վերջերս ներքին գործերի մինիստր Թալեաթ բեյը առանց քաշվելու հայտարարել է կայզերական դեսպանության աշխատակից դոկտոր Մորդմանին, որ «Բարձրագույն դուռը ձգտում է օգտագործել համաշխարհային պատերազմը, որպեսզի վերջնական դատաստան տեսնի իր ներքին թշնամիների (տեղական քրիստոնյաների) հետ, առանց հարուցելու դիվանագիտական միջամտություն արտասահմանից»[87]: Քսան օր հետո, նոր հաղորդման մեջ խոսվում է հայերին նրանց բնակության բոլոր վայրերից

85 *Մ. Արզումանյան.* Հայաստան 1914-1917, Եր., 1969, էջ 565

86 *М. Горький.* Собр. соч., т. 17, 1952, с. 134

87 *Մ. Ներսիսյան.* Անհերքելի փաստաթղթեր արևմտահայության ցեղասպանության մասին, «Սովետական Հայաստան», 1987, N 3, էջ 10

տեղահանելու մասին, ինչը վկայում է, որ «կառավարությունը իրոք նպատակ ունի ոչնչացնել հայ ցեղը թուրքական պետության մեջ»[88]:

Գերմանական իմպերիալիզմի մեղսակցությունը հայերի ցեղասպանությանը հանգամանորեն ցույց է տրված անհերքելի փաստերով: Այսպես, 1915 թվականի ապրիլին Կ. Պոլսի հայկական կազմակերպությունները դիմել են Վանգենհայմին խնդրելով, որ նա իր վրա վերցնի արևելյան վիլայեթների հայ բնակչության պաշտոնական պաշտպանությունը և հատուկ հյուպատոսական աշխատակիցներ ուղղակի այնտեղ: Դեսպանը պարզապես մերժել է նրանց:[89]: Միաժամանակ նա զգուշացրել է Էրզրումի փոխհյուպատոս ֆոն Շոյբներ Ռիխտերին, որպեսզի հայերի գործերին միջամտելիս թուրքերի մեջ այն տպավորությունը չստեղծվի թե ,իրենք ուզում են օգտագործել հայերին հովանավորելու իրավունքը կամ միջամտել իշխանությունների գործողություններին»[90]: Այդ հարցերի վերաբերյալ դիվանագիտական տարբեր ատյաններին ուղղված բազմակի դիմումներին դեսպանը սովորաբար պատասխանել է, թե ստեղծված պայմաններում արվել է ամեն բան ի պաշտպանություն հայերի: Իսկ նրանց, ովքեր պարտավոր էին իմանալ, նա ասել է. «Հայկական հարցի պատճառով խզել կապերը Թուրքիայի հետ մենք հարմար չենք գտել և չենք գտնում»[91]: Եվ այս վերջին պատճառաբանությունը եղել ու մնում է որպես ծանրակշիռ շարժառիթ Թուրքիայի հետ տերությունների միջպետական հարաբերությունները բնորոշելիս:

Անգլիական կառավարության արտաքին քաղաքական հիմնադրույթը մշտապես եղել է. «Մենք չունենք մշտական բարեկամներ ու մշտական թշնամիներ: Մենք ունենք մշտական շահեր»: Անգլիայի շահերը պայմանավորել են անգլիական քաղաքականության հակահայկական բնույթը այդ տարածաշրջանում: Նրա համար կենսականորեն կարևոր խնդիր է եղել ցանկացած գնով խոչընդոտել Ռուսաստանի դիրքերի ամրապնդմանը: Այդ հակասությունների զոհ են դարձել հայերը: Այդ քաղաքականության խիստ քննադատությամբ հանդես են եկել իրենք անգլիացիները (Մ. Մաքկոլ. «Անգլիայի պատասխանատվությունը Հայաստանի հանդեպ», էմ. Դիլոն «Գործերի վիճակը Թուրքահայաստանում» և ուրիշն.): Վկայակոչենք Անգլիայի պետական քաղաքականությունը կերտողներից միայն երկուսի կարծիքը: «Բրիտանական կառավարության քաղաքականությունը,- գրել է Դ. Լլոյդ Ջորջը,- ճակատագրական անխուսափելիությամբ հանգեցրեց 1895-1897 և 1909 թվականների զարհուրելի սպանդներին և 1915 թվականի անչափ սարսափելի կոտորածին: Թուրք բռնակալության պատմության մեջ անգամ անօրինակ այդ չարագործությունների հետևանքով հայ բնակչության թվաքանակը Թուրքիայում կրճատվեց ավելի քան մեկ միլիոնով»: Հատկանշական է, որ քաղաքագետն այս տողերը գրել է այն ենթաբաժնում, որը կրում է «Հայաստանը մեր զոհն է» խորագիրը[92]: Վերլուծելով առաջին

88 Նույն տեղում, էջ 11

89 *Ռ. Սահակյան.* Նոր փաստաթղթեր 1915թ. եղեռնում կայզերական Գերմանիայի դերի մասին, Բանբեր Հայաստանի արխիվների, 1970, N 2, էջ 133

90 Նույն տեղում, էջ 134

91 Նույն տեղում, էջ 144

92 *Д. Ллойд Джордж.* Правда о мирн х договорах, т. II, М., 1957, с. 390

համաշխարհային պատերազմից հետո ստեղծված իրադրությունը, Չերչիլը նույնպես անդրադարձել է հայ բնակչության «անողոք զանգվածային կոտորածին ու տեղահանությանը»: «Մոտավոր հաշվարկներով,- գրել է նա,- այդ բռնարարքներին ենթարկվել է 1 1/4 միլիոն հայ, որի կեսից ավելին զոհվել է: Ոչ մի կասկած չկա, որ այդ հանցագործությունը ծրագրվել ու իրականացվել է քաղաքական նպատակներով...»[93]: Նման քաղաքականության մասին «Մշակ» թերթը ժամանակին գրել է. «Երևում է, որ թե Թուրքիայի և թե Անգլիայի համար հայերը և Հայաստանը աչքի փուշ են դարձել: Նրանց գաղտնի դաշնագրությունը (1878թ. մայիսի 18) նրա մեջն էր կայանում, որ հայերին ոչնչացնեին Հայաստանի մեջ, աքսորեին հայերին Հայաստանից»[94]: Դրա հետ միասին կարծիք էր տարածվել հայկական հարցի նկատմամբ Անգլիայի բարենպաստ վերաբերմունքի մասին:

Ֆրանսիայի դիրքը որոշվել է նրանով, որ տնտեսական կայուն շահեր ունենալով կայսրությունում չի ցանկացել կորցնել դրանք: Բանկային գործառություններում նա գերակշիռ ազդեցություն է ունեցել բոլոր տերությունների շրջանում: Երկաթուղիների շինարարության ու շահագործման բնագավառում նա գրավել էր երկրորդ տեղը Գերմանիայից հետո: 64 միլիոն ֆունտ ստեռլինգի ինվեստիցիոն գումարներից 45,4 տոկոսը պատկանում էր Գերմանիային և մոտ 26 տոկոսը Ֆրանսիային: Ցեղասպանության ժամանակաշրջանում Ֆրանսիան և Անգլիան աշխատում էին պաշտոնական փաստաթղթերում և բանակցությունների ժամանակ խուսափել մուսուլմանների կողմից քրիստոնյաների կոտորածների վերաբերյալ ձևակերպումներից և հատկապես դատապարտել առաջիններին, քանի որ նրանց գաղութային տիրույթների բնակչության հսկայական մեծամասնությունը մուսուլմաններ էին: Եվ, իհարկե, նրանց ավելի շատ հետաքրքրում էր ոչ թե հայերի ճակատագիրը, այլ Օսմանյան կայսրության նախկին հողերում իրենց ազդեցության ոլորտի ընդլայնումը: Վերոհիշյալ վկայակոչումները անառարկելիորեն ապացուցում են, որ թուրքերը իրենց հանցավոր ծրագրերը կարող էին իրականացնել միայն մեծ տերությունների ակնհայտ թողտվության դեպքում: Արևելագետ Ա. Մանուչարյանը գերմանական արխիվներում և վերջերս հրապարակված փաստաթղթերի ժողովածուներում հայտնաբերել է այդ միտքը հաստատող բազմաթիվ նյութեր: 1988 թվականին Մյունխենում լույս է տեսել Օսմանյան կայսրությունում հայերի ցեղասպանության վավերագրերի երկրորդ հատորը: Ժողովածուի նյութերի մեջ կա Ավստրո-Հունգարիայի դեսպան Պալլավիչինիի 1915 թվականի ապրիլի 29-ի հաղորդումը, որտեղ նա հայտնում է ԱՄՆ-ի դեսպանի հետ ունեցած իր հանդիպման մասին: Մորգենթաուն համոզել է, որ նա որպես դաշնակից միջնորդի թուրքական կառավարության առջև, որպեսզի վերջինս հրաժարվի հայերի նկատմամբ «դաժան միջոցների կիրառումից»: «Պալլավիչինին հավաստիացրեց իր մինիստրությանը, որ ինքը ոչ մի դեպքում այդպես չի վարվի: Եվ ոչ թե այն պատճառով, որ նման խորհուրդը չեն լսի, այլ պարզապես Թուրքիայում այն կդիտվի որպես միջամտություն ներքին գործերին, ինչը նրա համար ամենաանախորժ բանը կլիներ նրա հետ

93 *У. Черчилль.* Мировой кризис. М.-Л., 1932, с. 27

94 «Մշակ», N 6, 1879

դաշնակից տերությունների կողմից»[95]: Եվ այնուհետև գրախոսը պատմում է, որ ժողովածուի մյուս նյութերից երևում է Ավստրո-Հունգարիայի հետևողական քաղաքականությունը մեղմացնելու Թուրքիայի մեղքը և ապակողմնորոշելու համաշխարհային հասարակական կարծիքը տեղի ունեցող իրադարձությունների վերաբերյալ:

Ինչ վերաբերում է հայ ժողովրդի ողբերգության նկատմամբ ԱՄՆ-ի վերաբերմունքին, ապա այն կարելի է բնորոշել որպես սոսկ մարդասիրական: Հայերի ճակատագրի հարցում նրանց մասնակցության վերաբերյալ վիթխարի քանակությամբ հուշերի, նյութերի, փաստաթղթերի լոկ թվարկումը գործի էությունը չի փոխում: Հայկական հարցում ԱՄՆ-ի ունեցած դերի վերաբերյալ լուրերը կապված են ընչազուրկների հովանավորության մասին զանազան խոստումների, բազմաթիվ բարեգործական ընկերությունների գործունեության հետ: Չի կարելի աչքաթող անել նաև անկախ Հայաստան ստեղծելու մասին ԱՄՆ-ի ու նրա դաշնակիցների պաշտոնական շրջանների մտադրությունը, Հայաստան, որի սահմանների որոշումը դրված է եղել ամերիկացիների վրա, որոնք իրենց հերթին պետք է վայելեին մանդատակիրների իրավունքներ: Բայց դժբախտաբար, այդ ամենը, ինչպես արդարացիորեն նշել է հասարակական գործիչ ու հրապարակախոս Գերսեմ Սահարոնյանը, լոկ «պատմական հեգնանք» էր հայերի նկատմամբ: Հիշյալ տարածաշրջանն այն ժամանակաջրջանում այնքան էլ չի հետաքրքրել գործարար Ամերիկային: Շահագրգռություններն առաջացել ու ձևավորվել են, բայց արդեն գոյություն են ունեցել և գործել են այլ կապեր: Քննարկվող խնդիրը իբրև լրագրող ուսումնասիրած Ջոն Ռիդը, խոսելով հայերի անչափ ծանր դրության մասին, գրել է. «Բայց Ամերիկան ի՞նչ է արել հայերի համար մերկապարանոց հայտարարությունից բացի: Ոչինչ: Այն ժամանակ, 1915 թվականին, ես գտնվում էի Կոստանդնուպոլսում և գիտեմ, որ միսիոներները հրաժարվում էին բողոքել գազանությունների դեմ՝ ասելով, որ իրենք անչափ շատ գույք ու սեփականություն ունեն Թուրքիայում, ուստի և չեն ցանկանում վիրավորել թուրքերին»[96]: Ամերիկացիները, այդպիսով, նույնպես ինքնատիպ չէին միջազ-գային կյանքի այդ ամենասուր հարցում:

Հայկական հարցում վճռական նշանակություն է ունեցել Ռուսաստանի, իսկ Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո՝ Խորհրդային Միության կառավարության դիրքը: Ամենից առաջ պետք է ասել, որ հայկական հարցը Ռուսաստանի համար այդպես էլ ինքնուրույն նշանակություն չէր ստացել և կապված էր եղել քաղաքականության տվյալ փուլի կոնկրետ խնդիրների հետ: Ընդ որում, բոլորովին հաշվի չեն առնվել ոչ հայ ժողովրդի բազմադարյան ռուսական կողմնորոշումը և նրա ներկայացուցիչների անդավաճան ու չափազանց անհրաժեշտ օգնությունը ռուս-թուրքական բոլոր պատերազմների ու ընդհարումների ժամանակ, ոչ ռուս ժողովրդի ու նրա մտավորականության համակրանքը մեր ժողովրդի նկատմամբ: Իբրև վերաբերմունքը բնորոշող գործոն եղել են բարձրագույն պաշտոնեության տրամադրությունն ու կարծիքը: Քաղաքականությունը կտրուկ փոխվել է՝ նայած կոնկրետ հանգամանքներին ու գործող անձանց: Այդպես էր, օրինակ, երկու դարերի սահմանագծում թուրքական մայրաքաղաքում ռուսական

95 «Պատմա-բանասիրական հանդես», 1989, N 2, էջ 212-214

96 "Перв й с езд народов Востока. Стенограф. отчет". П-г, 1920, с. 123

դեսպան Ա. Ն. Նելիդովի և արտաքին գործերի նախարար Ա. Բ. Լոբանով-Ռոստովսկու օրոք. «Եվ այսպես, - գրում էր Ա. Վ. Ամֆիտեատրովը 1906 թվականին, - ռուսական բյուրոկրատիան, դիվանագիտությունը և նրանցով ոգեշնչված հետադիմական մամուլը իննսնական թվականներին գրավել էր մի դիրքորոշում, որն ուղղակիորեն թշնամական էր հայերի նկատմամբ, պահպանելով այդ վերաբերմունքը գրեթե անսասան նաև մինչև ներկա ժամանակները»[97]: Եվ այդ դիրքորոշումը նա գնահատել է որպես ռուսական դիվանագիտության ճակատագրական սխալ, որը վնասակար էր Ռուսաստանի շահերի համար: Այդ սխալը դառնում է մի ամբողջ շարք ողբերգությունների պատճառ: Վերլուծելով այդ սխալի պատճառները, հեղինակը մատնանշում է հայկական հարցի նկատմամբ պատշաճ ակտիվության բացակայությունը Բեռլինի վեհաժողովում, նրա քննարկման ժամանակ ու դրանից հետո; Իսկ հայերի նկատմամբ ռուսական դիվանագիտության բացասական վերաբերմունքի գլխավոր գործոնները նա համարում է այն թշնամությունն ու կասկածամտությունը, որոնք ծագել ու ձևավորվել են արյունոտ սուլթանի ներգործությամբ. «Աբդուլ Համիդը ժամանակակից Մաքիավելու իրեն բնորոշ տաղանդով հասցրեց պետերբուրգյան ոլորտներին ներշնչել դաժան նախատրամադրվածություն ընդդեմ հայկական ազգային վերելքի՝ այն ներկայացնելով որպես միջազգային սոցիալական հեղափոխության մի ճյուղ[98]: Հայերի հասցեին նույնատիպ բնորոշում է հնչել Ռուսաստանի դեսպան Ա. Նելիդովի բերանից, իբր հայերը համաշխարհային հեղափոխության խմորիչ են: Համոզված լինելով, որ իրենք իրենց երկիրը կամ, գոնե, Անդրկովկասը պաշտպանում են խռովարարներից կամ հեղափոխության քարոզիչներից, ցարական պաշտոնեության բարձր աստիճանավորները Սասունի կոտորածներից հետո երկար տարիներ փակել են սահմանը և դրանով խանգարել մի քանի հազար կյանքի փրկությանը: Ռուսական հասարակայնությունը թույլ տված սխալը հասկացել է հայ-թաթարական ընդհարումներից հետո միայն, իսկ առաջավոր մտածողներն ու առաջադեմ խավերը համոզվել են, որ հայերի կոտորածը պետական չարիք է: Ըստ հրապարակախոսի, ճիշտ կլիներ, եթե բոլոր ռուսներն իրենց աչքերը բացեին հայկական վշտի վրա և հասկանային այն պետական չարիքը, որը մեզ համար աճեցրել է Թուրքիան իր մոտ՝ արտասահմանում, իսկ մենք հնազանդորեն այն նրանից ընդունեցինք, վերատնկեցինք մեր տարածքում և կատարելագործեցինք պետերբուրգյան բյուրոկրատիայի ծաղիկների պատվաստով»[99]: Կովկասում տեղի ունեցած իրադարձությունների մասին մամուլում գրեթե նրա հետ միաժամանակ հանդես է եկել բոլշևիկյան հայտնի հրապարակախոս Վ. Վորովսկին: Առաջինը ցարական պաշտոնեությանը մեղադրել է Թուրքիայում և Կովկասում առաջադիմական խավերի աջակցության գործում ցուցաբերած անհետևողականության մեջ: Երկրորդը 1905 թվականի սեպտեմբերին «Պրոլետարի» թերթում հանդես է եկել «Հեղափոխություն և հակահեղափոխություն» հոդվածով, որտեղ տվել է երկրամասում ծավալվող իրադարձությունների հստակ վերլուծությունը: Հանրածանոթ է ցարիզմի դեմ հեղափոխական

97 *А. В. Амфитеатров*. Армянский вопрос, с. 10

98 Նույն տեղում

99 Նույն տեղում, էջ 10

շարժման ուժեղացումը 1905 թվականին: Ոչ պակաս հայտնի է, որ հայկական եկեղեցու գույքի և անշարժ սեփականության բռնագրավման, ինչպես նաև հայկական դպրոցների փակման կապացությամբ երկրամասի ողջ հայ բնակչությունը գործուն պայքար է մղել ցարական կառավարության ծայրամասային քաղաքականության դեմ: Այդ պայմաններում ամենուրեք իր կազմակերպվածությունն է ցուցաբերել հայ բանվորը: Այդ կապակցությամբ Վ. Վ. Վորովսկին գրել է «Կովկասյան պրոլետարիատի շրջանում ամենագիտակից տարրը հայ բանվորներն էին»: Ձեռնամուխ լինելով երկրամասում հեղափոխական շարժման ճնշմանը, նոր նշանակված կուսակալ Ի.Ի. Վորոնցով-Դաշկովը չէր կարող աչքաթող անել հայերի հեղափոխական շարժումը: Նա կազմել է հակահեղափոխական ուժերի մի բանակ նրա մեջ ներգրավելով ոչ միայն զորքն ու ոստիկանությունը, այլև տեղական բազմազգ բնակչության բոլոր հետադիմական ուժերը: Այդ ուժերի առաջին շարքերում են հայտնվել ադրբեջանցիների կամ թաթարների (ինչպես այն ժամանակ անվանում էին նրանց) ֆեոդալական շրջանները, մուսուլմանական հոգևորականությունը և զանազան քրեական տարրեր: Գրեթե ամենուրեք հեղափոխական շարժման ճնշումն ուղեկցվել է հայ բնակչության ջարդերով. դրանք սկսվել են փետրվարին Բաքվում և մի քանի այլ արդյունաբերական կենտրոններում: Օգոստոսին իսկական կոտորած է տեղի ունեցել Շուշիում, հոկտեմբերին նորից Բաքվում, իսկ մեկ ամիս հետո Ելիզավետպոլում և այլն: Շարունակելով իր պատմությունը, Վ.Վորովսկին գրում է. «Թաթարներին կատարյալ ազատություն էր տրված սպանելու, բռնություններ գործադրելու, թալանելու համար: *Այստեղ ևս հակեղափոխությունը առաջինը շտապեց հարձակվել հեղափոխության վրա*, կանխել այն, թույլ չտալ, որ նա հավաքի իր ուժերը... Հեղափոխական ուժերի դեմ հետադիմական ուժերի մղած պայքարը վերածվեց երկու ազգությունների պայքարի, որին մասնակցեցին անգամ պարսկական զինված ուժերը: Սադրիչ ոստիկանի տեղը գրավեց մուսուլմանական քարոզիչը սրբազան կանաչ չալմայով»[100]: 1905 թվականի փետրվարի 10-ի Բաքվի կոմիտեի հրապարակած թռուցիկում մատնանշվում է, որ արդեն չորրորդ օրն է քաղաքում շարունակվում են խելահեղ դաժանությունները, որոնք ցույց են տալիս, թե ինչպիսի մեթոդներով է «ցարական ոստիկանությունը թաթարներին գիտակցաբար գրգռում հայերի դեմ»[101]: Նույն թվականի հունիսի 14-ի իր թռուցիկում Թիֆլիսի կոմիտեն նշել է. «Կովկասում սև հարյուրյակի ու ավազակային կառավարության հավատարիմ պաշտպանների դերը կատարել ու կատարում են թաթարները»[102]: Կառավարության ու նրա գործակիցների քաղաքականությունն ավելի լրիվ մերկացնելու համար Բաքվի կոմիտեն փետրվարի 13-ին հրապարակել է մի նոր թռուցիկ, ուր ասված է.«Երեք օր ու երեք գիշեր մեր դժբախտ քաղաքի փողոցներում տեղի է ունենում ինչ-որ անհավանական, զարհուրելի մի բան: Տեղական իշխանությունների աչքի առաջ մարդիկ գազանների նման հարձակվում էին միմյանց վրա, գնդակահարում անցորդներին, սարսափելի գազանություններ գործադրում նրանց նկատմամբ, ավերում, թալանում էին

100 *В.В. Воровский*. Сочинени , т. III, М., 1933, с.с. 106, 107

101 Листовки Кавказского Со за РСДРП 1903-1905 гг, М., 1955, с 272

102 Նույն տեղում, էջ 247, 274

տներն ու խանութները, սպանում ամբողջ ընտանիքներ, առանց խնայելու կանանց ու երեխաներին, նրանց ողջ - ողջ այրում հրկիզված տներում»[103]: Ինչպիսի ծանոթ տեսարան: Աշակերտները հետ չեն մնացել (հիմա էլ հետ չեն մնում) իրենց ուսուցիչներից: Տարօրինակ կերպով ուսումնական ձեռնարկներում և հանրամատչելի գրականության մեջ գիտակցորեն շրջանցված են այդ հանցավոր գործողությունները, հավանաբար աշխատելով վնաս չհասցնել ժողովուրդների «ստալինյան բարեկամությանը»: Իսկ կյանքում հասարակական ուժերի և սոցիալական խմբերի տեղաբաշխումը ծնում էր համապատասխան հասարակական կարծիք և սոցիալական հոգեբանություն: Այդ գործոնների փոխգործողությունն էլ հենց սնում էր այս կամ այն էթնիկական խմբի կամ ժողովրդի նկատմամբ տիրապետող վերնախավերի որոշակի քաղաքականությունը, որը կամա թե ակամա հաղորդվել է մյուս սերունդներին: Վերլուծելով ռեալ իրադրությունը, սոցիալ-դեմոկրատները առաջ են քաշել քաղաքական պայքարի հստակ խնդիրներ: Հետադիմական ուժերի առաջին շարքերում, նրանց բնորոշմամբ, գտնվել են «ավազակային շայկաները», այսինքն մուսուլման ջարդարարների հերոսակախմբերը: Ուստի բոլոր ազգությունների պրոլետարներին կոչ անելով համախմբվել դրանց դեմ մղվող պայքարում, Բաքվի կոմիտեն դրել է հետևյալ կոնկրետ խնդիրը. «Եթե, սակայն, մոտ ապագայում Բաքվում բռնկվի կոտորած, մենք պետք է օգտագործենք մեր ունեցած բոլոր միջոցները, որպեսզի վերջ դնենք դրան: Բոլոր այն մարտական ուժերը, որ մենք կարողացել ենք հավաքել, պատրաստվելով ապստամբության, մենք պետք է գործի դնենք ջարդարարների դեմ... Այդ բանը մենք պետք է անենք և որպես քաղաքացիներ և որպես հեղափոխականներ»[104]: Այսպիսին էին անցյալի իսկական հեղափոխական գործիչների վեհ, ազնիվ ու մարդասիրական դիրքերը: Բայց թաթարական բուրժուական ազգայնամոլները, Ահմեդ Աղաևի նման պանթյուրքիստները չեն կարողացել բարձրանալ նույնիսկ սովորական լիբերալ բուրժուայի մակարդակին և, արաբ պատմաբան Ֆուադ Հաֆիզի պնդմամբ, դարձել են «հայերի ջարդերի կազմակերպիչները Բաքվում 1905 թվականին»[105]:

Չնայած իր հետադիմական քաղաքականությանը, ցարական կառավարությունը Թուրքիայի դեմ պատերազմի մեջ մտնելուց հետո որոշակի փորձեր էր ձեռնարկում, որպեսզի խանգարի թուրքերին: Երբ 1915 թվականի ապրիլին լուրեր են տարածվել ջարդերի մասին, Ռուսաստանի արտգործնախարարությունը դիմել է Անգլիային և Ֆրանսիային առաջարկելով բողոքել Թուրքիայի նման գործողությունների դեմ: Հայտարարությունը մայիսի 24-ին հրապարակվել է միաժամանակ Փարիզում, Լոնդոնում և Պետրոգրադում: Նրանում մասնավորապես ասվում է. «Մարդկության և քաղաքակրթության դեմ Թուրքիայի կատարած այս նոր հանցագործությունները նկատի ունենալով, Ռուսաստանի, Ֆրանսիայի և Անգլիայի դաշնակից կառավարությունները սույնով հրապարակավ հայտարարում են Բարձրագույն դռանը, որ իրենք այդ հանցագործությունների համար անձնական պատասխանատվությունը դնում են թուրքական կառավարության բոլոր անդամների վրա, ինչպես նաև նրա

103 Նույն տեղում, էջ 274

104 Նույն տեղում, էջ 248

105 *Н. О. Оганесян*. Арабская историография по новой истории Армении, с.57

տեղական այն ներկայացուցիչների, որոնք մասնակից կդառնան նման կոտորածին»[106]: Բայց ռուսական զենքի հաջողությունները Կովկասյան ռազմաճակատում և զավթված տարածքների յուրացման գործնական հնարավորությունը մեկ անգամ ևս հետին պլան են մղում արյունաքամ հայ ժողովրդի ճակատագիրը: Այդ խնդիրը գործնականորեն այնքան էր հասունացել, որ, ինչպես նշում է Ծ. Աղայանը, «Սազանովը, իր 1916թ. հունիսի 14-ի գրությամբ խնդրում է Կովկասի փոխարքային մտածել գրաված շրջանների ներքին քաղաքականության որոշակի հիմունքներ մշակելու մասին, քանի որ արդեն մշակված էր և պետք է գործողության մեջ դրվեր «պատերազմի իրավունքով գրավված Թուրքիայի մարզերի կառավարման» ժամանակավոր կանոնակարգի նախագիծը: Նա միաժամանակ նշում է, որ «մեր առաջիկա խնդրի ամենամեծ դժվարությունն ու բարդությունը հայկական հարցի բարձրացումն ու լուծումն է»[107]: Սակայն, ինչպես վերևում է ասվել, այդ հարցը հետ է մղվել և ջախջախված ժողովրդի բեկորների ազատագրության խնդիրը կատարվել է առանձին զորապետների կամ պետական գործիչների մասնավոր նախաձեռնությամբ: Իր անկումից առաջ ցարական կառավարության վերջին գործը այդ բնագավառում 1917 թվականի մարտի 6-ի հուշագիրն է, որը Անգլիայի ու Ֆրանսիայի հետ ճշգրտում էր «իր» տարածքի սահմանները Օսմանյան կայսրության նախկին տիրույթներում:

106 ՀՅՕԿ ժող. էջ 602

107 *Ծ. Պ. Աղայան.* Հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմությունից, Եր., 1976, էջ 518

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ԿՐԿՆՎՈՒՄ Է

Անպատժելիությունը հանցագործության մեծագույն խրախուսանքն է:

ՑԻՑԵՐՈՆ

Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակը շեշտակիորեն փոխում է իրադրությունը: Ռուսաստանը որպես դաշնակից դուրս է գալիս պատերազմից: Նույն թվականի դեկտեմբերի 23-ի համատեղ համաձայնությամբ Ֆրանսիան պետք է իր վերահսկողությունը սահմաներ Ուկրաինայում, իսկ Անգլիան՝ Կովկասում: Գործերի վիճակի ընդհանուր գնահատականը շատ դիպուկ է բնորոշել Գերսամ Ահարոնյանը. «Մեզ համար խոսքերն ընդհանրապես բարենպաստ էին, իսկ գործերը՝ անբարենպաստ»: Մի փոքր ամրապնդվելով, ժամանակավոր կառավարությունը ապրիլի 25-ին հրահանգ է արձակում հայկական հողերի կառավարական կոմիսարի տնօրինությանը հանձնելու վերաբերյալ: Որոշակիորեն ճանաչվել է նաև դրանց պատկանելիությունը: Բայց արդեն սեպտեմբերին սկսվում է ռուսական զորքերի նահանջը: Դրա հետ մեկտեղ պատերազմական վիճակը շարունակվում է հայերի համար ստեղծված ամենածանր պայմաններում՝ ինչպես երկրի ներսում, այնպես էլ արտաքին ռազմաճակատներում: Սեպտեմբերին կազմակերպված հայ ազգային խորհուրդը և նոյեմբերին՝ Անդրկովկասյան սեյմը չեն կարողանում պաշտպանել Հայաստանի Հանրապետության սահմանները և երկրամասի հայ բնակչության ֆիզիկական գոյությունը: Երիտթուրքերի սկսած կոտորածներն ու ավերածությունները նույն դաժանությամբ շարունակել են մուսավաթականներն ու ամեն կարգի թաթար ազգայնամոլները: Վերջերս մամուլում որոշ նյութեր են հրապարակվել մեր ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի և հիշյալ ժամանակաշրջանում հայկական հարցի վերաբերյալ: Բերենք դրանցից մի քանիսը, որոնք ցույց են տալիս, որ շարունակվել է հայերի ցեղասպանության քաղաքականությունը: Մուսավաթական բանակի շտաբի 1917 թվականի սեպտեմբերի 7-ի հրահանգում դրված են եղել հետևյալ խնդիրները. «Զանգեզուրի միացումը տեղի կունենա առանց զինված պայքարի, քանի որ նրա հայ բնակչությունը Նախիջևանի ջախջախումից հետո գտնվում է երկու կրակի արանքում և հազիվ թե համարձակվի մեզ հակահարված տալ...Ներկա պայմաններում Հայաստանը մեզ համար վտանգավոր չէ, բայց այսպիսի բարենպաստ իրադրությունը չի կարող մշտական լինել... Հայերը չեն կարող հաշտվել Ղարաբաղը կորցնելու մտքի հետ և անկասկած հնարավոր բոլոր միջոցները կգործադրեն կորցրածը հետ վերադարձնելու համար»[1]: Բաքվում հայերի լրատվական կենտրոնը 1919թ. փետրվարի 28-ի իր հաղորդման մեջ նկարագրում է Շուշիում տիրող դրությունը, որտեղ նախորդ տարվա սեպտեմբերից մուսավաթի ուժերի հետ միասին տնօրինում են Թուրքիայի զորքերը: Կողոպուտները, ձերբակալությունները իշխանությունների ու զանազան հրոսակախմբերի կամայականությունը

1 *Կ. Ազարյան.* Մեղադրում են վավերագրերը, «Գրական թերթ» N 42, 1989 թ. 13 հոկտեմբերի

քաղաքում անտանելի պայմաններ են ստեղծում տեղական բնակիչների համար: «Ըստ երևույթին,- ասվում է հաղորդագրության մեջ,- Ադրբեջանի «դեմոկրատական» իշխանությունը որոշել է ջախջախել Շուշի քաղաքի մտավորականությանը և այդպիսով գլխատել Ղարաբաղի հայ ժողովրդին»[2] :

Այդ ոճրագործությունների մասին պահպանվել են մեծ քանակությամբ գրավոր վկայություններ ու փաստաթղթեր: Ամենուրեք նշվում են թուրք բաշիբոզուկների համատեղ գործողությունները տեղական թաթարների ավազակախմբերի հետ: Այդ ավազակախմբերը գլխավորել են նահանգական բժիշկ Դ. Լեմբերանսկին, «վայրի դիվիզիայի» սպա Շիրին բեկը և հայտնի ավազակ Շահմալին...»[3] : Թուրքական զինված ուժերից բացի, թաթարական ավազակախմբերը վայելել են անգլիական հրամանատարության և անձամբ նրա հրամանատար, գեներալ Թոմսոնի աջակցությունը: Այդ մասին ուղղակի ցուցումներ կան Ղարաբաղի խնդրի հետ կապված գրեթե բոլոր վավերագրերում: Հայաստանի կառավարությանն ուղղված հայ ազգային խորհրդի 1919 թվականի մարտի 19-ի հաղորդման մեջ ասված է. «Այսօր մենք տեսնում ենք, թե ինչպես Ադրբեջանը փողի միջոցով...տիրում է Ղարաբաղի կենտրոնին, իսկ հետագայում փորձեր կանի ձեռք բերել նաև գավառը...»: Այնուհետև մենք կարդում ենք. «Անգլիական հրամանատարությունը կապել է մեր ձեռքերն ու ոտքերը, մենք չենք կարողանում հակազդել Ադրբեջանին, որովհետև գերի ենք դարձել օրինապահության և, բացի այդ, տեղական ուժերը բոլորովին անկազմակերպ վիճակի մեջ են և ոչինչ չի կարելի անել նրանցով»[4]: Իսկ հակառակորդ կողմը գործել է թուրքերի և անգլիացիների աջակցությամբ: Վերջինները կազմել էին միասնական ճակատ և իրենց առջև խնդիր դրել թույլ չտալ, որ Կովկասում ուժեղանան Ռուսաստանի դիրքերը: Հույս ունենալով, որ այդ հանգամանքը ըմբռնում կգտնի, Հայաստանի արտգործնախարար Հ. Օհանջանյանը 1920 թվականի մայիսի 31-ին հեռագրել է Չիչերինին և Օրջոնիկիձեին. «Հայկական Լեռնային Ղարաբաղը... իրենց գյուղացիների պատգամավորների ութ հերթական համագումարներում, ամեն անգամ հատկապես, ընդունել է կտրական որոշում, որ վճռել է մտնել իր հարազատ Հայաստանի հանրապետության կազմի մեջ»: Ապրիլին կայացած «իններորդ համագումարը հաստատում է նախորդ համագումարների որոշումները: Նույն այդ համագումարն էլ կտրականապես մերժել է Ադրբեջանի իշխանությունը ճանաչելու հնարավորությունը, նույնիսկ քաղաքական հեղաշրջումից և այնտեղ Խորհրդային իշխանության հաստատումից հետո»[5] : Նախարարն առաջարկել է անցկացնել հանրաքվե և այդ կերպ լուծել հարցը:

Իրադրությունը ծանր է եղել Արևմտահայաստանի տարածքում: Ջախջախված թուրքական բանակները 1917 թվականի դեկտեմբերի 5-ին Երզնկա քաղաքում զինադադար են կնքում ռուսական զորքերի հետ: Ամսի վերջին հրապարակվում է Ռուսաստանի ժողովրդական կոմիսարների խորհրդի դեկրետը «Թուրքահայաստանի մասին» ճանաչելով նրա ինքնավարության իրավունքը: Հայության լայն շրջանները գոհունակությամբ և հույսով

2 Նույն տեղում

3 Նույն տեղում

4 Նույն տեղում

5 ՀԽՍՀ ԿՊՊԱ, ֆ. 69/200, գ. 360, թ.8

են ընդունում ժողկոմխորհի դեկրետը: Բայց անբարենպաստ պատմական պայմանները հնարավորություն չեն տալիս գեթ ինչ-որ կերպ օգտվելու այդ բարենպաստ պահերից: Կովկասյան ռազմաճակատի փլուզումը և ռուսական զորքերի նահանջը ստեղծում են ծանր վիճակ: Բայց հաջորդ տարվա հունվարի կեսերին արդեն թուրքական զորքերը խախտելով զինադադարը շուտով գրավում են Երզնկան, իսկ մեկ ամիս հետո Էրզրումը: 1918 թվականի մարտի 3-ին կնքվում է Բրեստ-Լիտովսկի ծանր պայմանագիրը, որի 4-րդ հոդվածը թուրքերին էր թողնում Կարսի, Արդահանի և Բաթումի օկրուգները: Առանց սպասելու, որ իրադրությունը պարզվի, օգոստոսի 15-ին հրապարակվում է սուլթանական կառավարության որոշումը այդ օկրուգները Թուրքիային միացնելու մասին: Բաթումում և Տրապիզոնում վրացիների և հայերի հետ թուրքերի վարած բանակցություններից հետո հուլիսի 31-ին Ստամբուլում ստորագրվում է հաշտության պայմանագիր, որով փոքր Հայաստանի հետ (մոտ 10 000 կմ²) հաստատվում են «բարեկամական» հարաբերություններ: Թուրքական կողմի մտադրությունների մասին գեներալ ֆոն Լյոսոֆը դեռ մայիսի 12-ին Բաթումից հեռագրել է իր կառավարությանը. «Թուրքական ամեն չափ ու սահման անցած պահանջքները անջատելու զուտ հայկական գավառները... աղաղակող ձևերով խախտում են Բրեստ-Լիթովսքի դաշնագիրը և նպատակ ունեն բնաջնջել հայերին Անդրկովկասում»[6] :

Ֆրանսիական հետախուզության 1918 թվականի հուլիսի 24-ին տված հաղորդման համաձայն, «թուրքերը գերմանացիների հետ միասին պատրաստվում են զորք ուղարկել Կրասնովոդսկ, Թուրքեստան, Մերվ և Աֆղանստան: Երիտթուրք սպաները ելիզավետպոլում ձեռնամուխ են լինում թուրք ռազմագերիներից զորամասեր կազմակերպելու գործին». Նույն թվականի հոկտեմբերին ֆրանսիական զինվորական ներկայացուցիչը էնզելից հաղորդում էր. «...Բաքուն գրավելուց հետո թուրքերը Անդրկովկասի հայ բնակչության հետ վարվում են այնպես, ինչպես 1915 թվականին Օսմանյան կայսրությունում»[7] : Սակայն, խորհրդային կառավարության և, առանձնապես, Չիչերինի, Կարախանի և այլոց հետևողական ջանքերի շնորհիվ երիտթուրքական զորքերը մայիսի 6-ին թողնում են Անդրկովկասի տարածքը: Բայց հայ ժողովուրդը դեռ չէր փրկվել թուրքական բռնություններից և ֆիզիկական բնաջնջման սպառնալիքից: Երիտթուրքական զավթիչներին փոխարինելու են գալիս քեմալական զավթիչները: Կովկասում գտնվելու ողջ ժամանակաշրջանում առաջինները բոլոր միջոցներով ձգտել են իրականացնել պանթուրքիստական ծրագրեր:

Իշխանության գլուխ անցնելուց հետո քեմալականները նման նպատակներով հայացքներն ուղղում են դեպի Արևելք: Գնդապետ Ջևդեթ Քերիմը այդ մասին գրել է. «Գլխավոր ուշադրությունը նվիրվել էր արևելյան ռազմաճակատին, քանի որ հաջողության հասնելն այստեղ պետք էր ոչնչացնելու հայկական բանակն ու հայկական պետությունը, որոնք թարախապալարի նման դեռ մնացել են մեր երկրի մարմնին...»[8]: Իսկ արտգործժողկոմատի 1919-1920 թթ. տարեկան հաշվետվության մեջ

6 *Գ. Սիարոնյան.* Մեծ երազի ճամբուն վրա, Պեյրութ, 1964, էջ 105

7 "Документы французских архивов", с.42

8 ***М. Кемаль.*** Путь новой Турции. М., 1934, т. III, с.314

քեմալականների գործողություններին տրված է հետևյալ գնահատականը. «Այն ժամանակ, երբ Մոսկվայում սկսել է պարզվել փոխզիջումային սահմանը որոշելու փորձերի անհուսալիությունը, թուրքական կառավարությունը որոշել է սրով լուծել գորդյան հանգույցը... Թուրքական կառավարությունը մերժում է խորհրդային կառավարության միջնորդությունը, որ մինչ այդ նա ընդունել էր»[9]: Ըստ Ա. Մյասնիկյանի 1921 թվականի հունիսի 6-ի երկտողի, միայն Ալեքսանդրապոլում թուրքերը «սպանել են 60 հազար մարդ, վիրավորել 38 հազար, գերի վերցրել՝ 18 հազար տղամարդ, 8 հազար կին: Բռնաբարել են ավելի քան 50 հազարի: Սովամահությունը տարել է ավելի քան 32 հազար կյանք: Թուրքիայում գերության մեջ է մնացել տասը հազար մարդ, որոնցից ողջ է մնացել ամենաշատը 2 հազարը, մնացածները մահացել են սովից կամ ցրտից, կամ սպանվել են»[10] : Թուրքիայի կողմից բռնազավթված տարածքում մարդկային կորուստները կազմել են մոտ 200 հազար մարդ: Ամբողջ հանրապետությունը քայքայվում է տնտեսապես, Հայաստանը հիրավի դառնում է սովի և որբերի երկիր: Հայերի ընդհանուր կորուստների մասին հետազոտողները տարբեր կարծիքներ են հայտնել՝ 600 հազարից մինչև երկու միլիոն: Բայց բանը սոսկ թվերի մեջ չէ: Ինչպես արդարացիորեն գրել է Ժակ դե Ռոժին. «Իսկ ինչու՞ վիճել թվերի մասին: Հաշվարկները լոկ պատմական հետաքրքրություն են ներկայացնում... Կոտորածը և տեղահանությունը բավարարել են այն մարդկանց ցանկությունները, ովքեր երազում են Հայաստանը տեսնել առանց հայերի»[11]: Ինչ վերաբերում է նյութական վնասներին, ապա Կոնստանդնու-պոլսում Հայաստանի ներկայացուցչի 1919 թվականի ապրիլի 7-ի նամակից մենք իմանում ենք, որ Հայ ազգային խորհուրդը որոշել է հաշտության կոնֆերանսին ներկայացնել մի հուշագիր, որով պահանջելու է հատուցել ընդհանուր վնասը 19 միլիարդ ֆրանկի չափով, որից 14 միլիարդը կազմում են Արևմտահայաստանում և Թուրքիայում ապրած հայերի կորուստները, իսկ մնացած 5 միլիարդը՝ Անդրկովկասի հայերինը[12] :

Ձախջախված, թալանված, հոգևարք ապրող հայ ժողովուրդը զգում է լուրջ աջակցության և օգնության կարիք: Անտանտի տերությունները, որոնք Հայաստանը համարել են իրենց «փոքր դաշնակիցը», միայն խոստումներով էին կերակրում նրան՝ չփորձելով անգամ կասեցնել թուրքերի գործողությունները: «Մեծ տերությունները ևս,- վրդովվում է Ֆ. Նանսենը,- անդորրության մեջ են: Նրանք հայերին թույլ են տվել արյուն թափել դաշնակիցների փոխարեն, իսկ դրա դիմաց նրան վճարեցին ոչինչ չարժեցող թղթի կտորով»[13]: Խոսքը հաշտության՝ այն պայմանագրի մասին է, որը կնքվել է 1920 թվականի օգոստոսի 10-ին Սևրում: Պայմանագրի երեք հոդվածները /89, 90, 91/ որոշում էին ապագա անկախ հայկական հանրապետության տարածքն ու սահմանները (68500 կմ^2): Իսկ շուտով, նոյեմբերի 22-ին լույս աշխարհ է գալիս Հայաստանի նշանավոր քարտեզը՝ նախագահ Վիլսոնի դիմանկարով: Հայաստանի

9 "Годовой отчет НКИД", М., 1921, с. 70

10 АВПР СССР, ф. 132, д. 13, папка 6, оп. 4, л. 52

11 *Р. Г. Саакян.* Нова истори арм нского народа в трудах французских авторов (рукопис), с. 55

12 ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 200, գ.1, պահպ. միավ. 145, թ. 99

13 *Лив Нансен-Хайер.* Книга об отце. Л. 1986, с. 457

նկատմամբ ամերիկյան մանդատի մասին շատ տարիներ խոսակցությունների արգասիք հանդիսանալով, այդ քարտեզը իր հրատարակման օրն իսկ պարզապես դառնում է պատմական փասթաթուղթ, քանի որ ԱՄՆ-ի սենատը դեռ հունիսի 20-ին մերժել էր ընդունել Հայաստանի հիշյալ մանդատը: Այդ պայմաններում սեպտեմբերին սկսվում է թուրքերի, այս անգամ քեմալականների հարձակումը Հայաստանի վրա: Շուտով ազգերի լիգայի նիստերում սկսում են քննարկվել զոհին ռազմական օգնություն ցույց տալու հարցը: Երկար բանավեճերից հետո մասնակիցները գալիս են այն եզրակացության, որ Ազգերի լիգան չի կարող կազմակերպել, այդ օգնությունը, քանի որ իր տրամադրության տակ չունի զինված ուժեր: Արևմտյան տերություններից և ոչ մեկը չի առաջարկում հայկական հարցի լուծման որևէ այլ ուղի: Իսկ Լոզանի կոնֆերանսը, քննարկելով ազգային փոքրամասնությունների իրավունքների հարցը, ընդառաջ է գնում թուրքական պահանջներին և վերջնականապես թաղում անկախ կամ ինքնավար կազմավորումների ստեղծման ամեն մի հեռանկար: «Փաստն այն է,- գրում է Զարևանդը,- որ թուրքը պահանջեց լռեցնել հայկական խնդիրքներու տաղտկալի ձայնը միջազգային բանակցություններու արիոպագոսին մեջ և հաջողեցավ արդարև լռեցնել զայն: Թուրքը պահանջեց վերացնել հայկական դատի վավերագրերը համաշխարհային հարցերու սեղանեն և զանոնք անպետք թուղթերու կողովը նետել: Եվ դիվանագիտությունը կատարեց այդ փափաքը»[14]: Հայ ժողովրդի համար այդ անբարենպաստ պայմաններում միակ պետությունը ՌՍՖԽՀ-ն էր, որը, ինչպես վերևում նշվել է, Հայաստանի և Թուրքիայի միջև տարածքային հարցերն ու սահմանները լուծելիս խոստացել էր լինել միջնորդ: Բայց հանրապետության ղեկավարների շրջանում միասնություն չի եղել այդ սուր հարցերը լուծելիս, նույնիսկ ռազմական գործողությունների և թուրքական բռնազավթումների պայմաններում: Բայց այնպիսի գործիչներ, ինչպիսիք են Գ. Վ. Չիչերինը, Լ.Մ. Կարախանը, Վ. Վ. Լեգրանը և ուրիշներ, հսկայական ջանքեր են գործադրել, որպեսզի փոքր ու ընչազուրկ ժողովուրդներին և մասնավորապես հայերին պաշտպանեն իմպերիալիստական նկրտումներից: Արտգործժողկոմ Չիչերինը ուղղություն է տվել կոմիսարիատի գործունեությանը և անձամբ միջամտել կոնֆլիկտային շատ իրավիճակների լուծման ժամանակ; Այսպես. նա գրավոր ու բանավոր խիստ բողոքել է երիտթուրքերի կամայական գործողությունների դեմ; 1918 թվականի սեպտեմբերի 21-ի նոտայում մասնավորապես մատնանշվում է, որ հաստատված զինվորական վարչակարգն ուղեկցվել է «խաղաղ բնակչության նկատմամբ անթույլատրելի կողոպուտներով ու բռնություններով»: Խոստումի համաձայն անցկացված հանրաքվեն վերածվել է բնակչության նկատմամբ «բացահայտ ծաղրի». «քվեարկության նախօրյակին այն քաղաքացիները, որոնց ազդեցությունը կարող էր լինել ոչ Թուրքիայի օգտին, արտաքսվում են, կալանավորվում, շատ դեպքերում նույնիսկ գնդակահարվում»: Բազմաթիվ չարագործությունների թվարկումից հետո, այդ թվում և Բաքվի զավթումը, որի բնակչությունը «մի քանի օր շարունակ վայրագությունների ու թալանի բոլոր սարսափներին էր ենթարկվում թուրքական զորքերի ու նրանց հարած թաթարական հրոսակախմբերի կողմից», արձանագրվում է, որ Օսմանյան կառավարության բոլոր այդ

14 *Զարևանդ.* Կրնա՞նք հաշտվիլ թուրքին հետ, 1926, էջ 26-27

գործողությունները ցույց են տվել, որ «Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը Ռուսաստանի և Թուրքիայի միջև արդեն գոյություն չունի»[15]: Հանրահայտ է, որ Խորհրդային Ռուսաստանի կառավարության Անկարայի կառավարությանը հղած 1920 թվականի ապրիլի 26-ի պատասխանը կազմել և ստորագրել է Չիչերինը: Նամակի հեղինակը կրկնել է իր կառավարության որոշումը միջնորդ լինել Հայաստանի հետ սահմանի հարցի լուծման ժամանակ և գոհունակություն է հայտնել այն որոշումից, որ ընդունել է «Ազգային մեծ ժողովը Հայաստանին, Քրդստանին, Լազիստանին, Բաթումի մարզին, Արևելյան Թրակիային և թուրք-արաբական խառը բնակչություն ունեցող բոլոր տարածքներին՝ իրենց բախտը իրենք որոշելու իրավունք վերապահելու մասին...»[16]: Նա առանձին հետևողականություն է ցուցաբերել Մոսկվայի պայմանագրի կնքումից առաջ կայացած խորհրդա-թուրքական բանակցությունների ժամանակաշրջանում: Պայմանագիրը ստորագրելու համար նա նախնական պայման է համարել հայկական հարցի և Անդրկովկասում մի քանի տարածքային վեճերի լուծումը: Թուրքական երկու պատվիրակությունների ներկայացուցիչներն էլ գանգատվել են Չիչերինի անդրդվելիությունից: Առաջին պատվիրակության մասնակից Յուսուֆ Քեմալ Թենգիրշեքը գրել է. «Մոսկվայում մեզ դիմավորեցին ոչ սիրալիր: Արտաքին գործերի նախարար Չիչերինը մեզ երես չէր տալիս: Մի անգամ Չիչերինը մեզ կանչեց իր մոտ և հարցրեց. «Թերթերում հրապարակվել է պայմանագրի նախագիծը, դուք այն տեսե՞լ եք»: Մենք այն չէինք տեսել: Հետագայում մեզ համար պարզվեց, որ ռուսներն այդ պայմանագրով ձգտում էին մեր և իրենց միջև կապերը հաստատել Հայաստանի կառավարության միջոցով: Իսկ Մոսկվա կատարած մեր այցելության նպատակն էլ հենց այն էր, որ խուսափեինք հարցի նման լուծումից: Եվ մենք Չիչերինին առաջարկեցինք ուղղել այն: Չիչերինը մերժեց այդ պահանջը...»[17]: Իր դժգոհությունն է հայտնել նաև թուրքական երկրորդ պատվիրակության ներկայացուցիչ, Մոսկվայում Թուրքիայի առաջին դեսպան Ալի Ֆուդ փաշան (Ջեբեսոյը): Նա գանգատվել է. «Չիչերինը կրկնեց, որ անհրաժեշտ է հայերին տարածք հատկացնել Վանի և Բիթլիսի վիլայեթներում, որ թուրքերին օգնություն ցույց տալը կախված է նրանից, որ իրականացվի հայերի վերաբնակեցումը Հայաստանին տրամադրվող տարածքներում»[18]: Հայերի համեստ տարածքային պահանջները պաշտպանել է Անդրկովկասում ՌՍՖԽՀ-ի լիազոր ներկայացուցիչ Բ. Լեգրանը. «Ռուսաստանը չի կարող անտարբեր մնալ Քեմալի հարձակմանը Հայաստանի վրա, քանի որ այդ հարձակումը շարունակում է ստանալ զուտ իմպերիալիստական բնույթ: Թուրքերի այդ ձգտումների բավարարումը սպառնում է իմպերիալիստական միտումների հետագա աճ քեմալականների շրջանում, ինչը իր հերթին կարող է բոլորովին փոխել այդ շարժման, որպես ազատագրական շարժման նախասկզբնական բնույթը: Կարսը Հայաստանի ձեռքում Հայաստանը իմպերիալիստների երկիր չի դարձնի: Թուրքիայի

15 "Документ вне ней политики СССР", т. I, М., 1957, с. 490-492

16 Նույն տեղում, հ. I, Մ., 1958, էջ 554-555

17 Լրաբեր ՀՍՍՀ հասարակական գիտությունների, 1988, N. 6, էջ 10

18 Նույն տեղում, էջ 11

ձեռքում.. նա կարող է խաղալ այդ բազայի դերը»[19]: 1920 թվականին Չիչերինը և Կարախանը բազմիցս, Ս. Օրջոնիկիձեի, Ս. Կիրովի և այլոց միջոցով ստիպված են եղել չափավորել Ադրբեջանի տարածքային պահանջները՝ նույնիսկ Հայաստանում խորհրդային կարգեր հաստատվելուց հետո: Օրջոնիկիձեի արտահայտությամբ, իրենց պահանջների մեջ համառ «ադրբեջանական խավարամոլները» նույն թվականի ամռանը ձգտել են Ղարաբաղից ու Զանգեզուրից բացի իրենց հանրապետությանը միացնել նաև Շարուր-Դարալագյազի գավառը, Նախիջևանը, Օրդուբադը և Ջուլֆան: Այդ կապակցությամբ դիպուկ կերպով նշել է Չիչերինը. «Հայաստանից գրեթե ոչինչ չմնաց»[20]: Բոլոր կողմերից ճնշված ու նեղված Հայաստանը այդպես էլ չի կարողանում հասնել իր նույնիսկ ամենանվազագույն ու համեստ պահանջների իրականացմանը: Իսկ այդ պահանջները ամփոփված են Ա.Մռավյանի 1920 թվականի հոկտեմբերի 19-ի գրության մեջ, որ կազմել են «մի խումբ հին կուսակցական ընկերներ» և որը ուղարկվել է Վ.Ի.Լենինին: Գրության մեջ անկեղծորեն ասված է, որ լուրեր են տարածվում այն մասին, թե իբր «թուրքերի հարձակումը որոշակիորեն արժանացած է եղել Խորհրդային Ռուսաստանի հավանությանը...Դա լուրջ հարվածներ է հասցնում Խորհրդային Ռուսաստանի հեղինակությանը՝ որպես փոքր ու ճնշված ազգերի պաշտպանի՝ ինքնորոշման համար նրանց մղած պայքարում»[21]: Այնուհետև, վերլուծելով ժողովրդի ծանր դրությունը հայկական հարցի լուծված չլինելու կապակցությամբ, Մռավյանը գրում է. «Խորհրդային Ռուսաստանը պետք է կոտրի Հայաստանը խեղդող այդ շղթան: Արևելյան վիլայեթներում իր չափերով գոնե ամենահամեստ տարածքի հատկացումը Հայաստանին՝ Հայաստանի հանրապետությունում ապաստան գտած կես միլիոնանոց փախստական զանգվածի տեղաբնակեցման համար: Նրանք արդեն վեց տարի է սպասում են, որ կբացվեն իրենց տանջահար հայրենիքի դռները...»[21] : Բայց, մյուս կողմի առանց այն էլ ուժեղ դիրքերին մշտական աջակցություն էին ցույց տալիս երիտասարդ հանրապետության ղեկավար թուրքասերները՝ նույնիսկ ի վնաս պետական շահերի: Սրանից մի քանի տարի առաջ դժվար էր պատասխան գտնել այն հարցին, թե ինչու խորհրդային պատասխանատու գործիչները չեն պաշտպանել Խորհրդային Հայաստանի, մեր ժողովրդի շահերը, այլ դրանք զոհաբերել և գիջել են թուրք բռնադատիչների պահանջներին: Այժմ, երբ ստալինիզմը պատմության մեջ բնորոշված է որպես հակահեղափոխություն, իսկ ինքը՝ Ստալինը անվանվել է որպես «XX դարի ամենաչարագուշակ ինկվիզիտոր», ով իր ամբողջ կյանքում ձգտել է ոչնչացնել ամբողջ ցեղեր և ժողովուրդներ, միանգամայն ակնհայտ է դառնում, որ նրա համար թիվ առաջին ժողովուրդը, որը ենթակա է ոչնչացման կամ խիստ կրճատման, եղել է մեր հյուծված ու արյունաքամ ժողովուրդը: Այլապես դժվար է բացատրել նրա հայատյաց դիրքը հայ-թուրքական վեճի լուծման ողջ ժամանակաշրջանում: Առանց վրդովմունքի չի կարելի կարդալ 1920 թվականի փետրվարի 12-ի նրա նամակը Վ.Ի.Լենինին. «Ես երեկ միայն իմացա, որ Չիչերինը իրոք ինչ-որ ժամանակ թուրքերին մի հիմար (և

19 ՀՀԿՊԱ, ֆ. 200, գ. 312, թ. 421

20 ***Р. Казанчян***. РСФСР и так называемые "спорные территории". "Коммунист", 23 декабря 1989

21 ՀՀԿՊՊԱ, ֆ.40/113, գ.22, թ.1-2

պրովոկացիոն) պահանջ է ուղարկել Վանը, Մուշը, Բիթլիսը (թուրքերի վիթխարի գերակշռություն ունեցող թուրքական նահանգները) Հայաստանի օգտին մաքրելու մասին: Պետք է Չիչերինին արգելել նացիոնալիստորեն տրամադրված հայերի թելադրանքով նոտաներ ուղարկել թուրքերին: Ստալին»[22]: Ցավոք, նման դիրքորոշման կողմնակիցներ եղել են շատերը: Հայ-ադրբեջանական տարածքային վեճի կապակցությամբ, որի մասին խոսվել է վերևում, ադրբեջանցի պանթյուրքիստ-կոմունիստները ամեն առիթ օգտագործել են թուրքական ագրեսիային աջակցություն ցույց տալու կամ Հայաստանը էլ ավելի մասնատելու համար, որպեսզի զուգահեռաբար իրականացնեին իրենց զավթողական ծրագրերը: Վերը բերված նամակը Ստալինը գրել է Օրջոնիկիձեից հաղորդում ստանալուց անմիջապես հետո, որ փետրվարի 6-ին Բաքվում մի քանի օր մնալուց հետո, Թուրքիայի պատվիրակությունը մեկնել է Մոսկվա: Արտահայտելով բաքվեցի գործիչների բարձրագույն շրջաններում այն ժամանակ տիրող տրամադրությունները, Սերգոն գրել է Լենինին (պատճենները Չիչերինին, Տրոցկուն, Ստալինին), որ խորհրդային պետության շահերի օգտին է բարեկամություն պահպանել քեմալականների հետ, ուստի նա առաջարկել է դիմել ամեն տեսակ զիջումների: Նույն ոգով, բայց ավելի որոշակի են գրված Ն.Նարիմանովի երկու նամակը, որոնք վերջերս հրապարակվել են պատմաբան Հ. Սիմոնյանի կողմից: Առաջին նամակի վրա կա Լենինի 1921 թվականի փետրվարի 19-ի մակագրությունը. «Ընկ. Ստալին: Խնդրում եմ երկու խոսքով կարծիք ուղղարկել և հանձնել Կենտկոմի բոլոր անդամներին, խնդրելով կարդալ, ներքևում նշել, որ կարդացել են, և վերադարձնել ինձ»: Ըստ երևույթին, կառավարության ղեկավարը ազգությունների գործերի ժողկոմին, և այն էլ կովկասցուն, ավելի գիտակ էր համարել այդ գործում: Մյուս կողմից, ինչպես նշում է Չիչերինը, ուրիշ գործերով ծանրաբեռնված Լենինի «անձնական մասնակցությունը արտաքին քաղաքականության գործերին գնալով պակասում է»[23]: Իսկ Նարիմանովի նամակները անվերապահորեն պաշտպանում էին քեմալականների դիրքերը: Հայտնի չէ, թե ով ում է համոզել՝ Նարիմանովը թուրքական պատվիրակությանը, թե՞ հակառակը, բայց նրանք երկուսն էլ հանգել են այն հետևությանը, որ « հայկական հարցը կենաց ու մահու հարց է»: Նարիմանովը գրել է Լենինին, որ «հայկական հարցի պատճառով Մոսկվան չպետք է վանի Անգորայի կառավարությանը, հակառակ դեպքում մենք կկորցնենք Թուրքիայի բարեկամությունը և միաժամանակ վնաս կհասցնենք մեր արևելյան քաղաքականությանը»: Այնուհետև նա գրել է. «Ես պետք է զգուշացնեմ Ձեզ. ընկ. Չիչերինը շփոթում է Արևելյան հարցը. նա չափից ավելի է հրապուրվում Հայկական հարցով և հաշվի չի առնում այն ամենը, որ կարող է խզումը անգորացիների հետ տեղի ունենա հենց Հայկական հարցի պատճառով: Ես կտրականապես հայտարարում եմ՝ Կովկասում ստեղծված դրության մեջ... եթե ուզում ենք Ադրբեջանը պահպանել մեզ հետ, մենք պետք է ինչ գնով ուզում է լինի ամուր դաշինք կնքենք անգորացիների հետ»[24]: Փետրվարի 21-ին գրված երկրորդ նամակում նա կտրական տոնով

22 ԽՄԿԿ Կենտկոմին առընթեր ՄԼԻ ԿԿԱ, ֆ. 558, g. 1, պահպ. միավ. 5214, թ. 2

23 *Г. В. Чичерин*. Ленин и вне н политика. М., 1977, с. 14.

24 ԽՄԿԿ Կենտկոմին առընթեր ՄԼԻ ԿԿԱ, ֆ.2, g.1, պահպ.միավ. 24503,թ.1-2

կրկնում է. «Հայկական հարցը թուրքական պատվիրակության հետ տեղի ունեցող բանակցություններում չպետք է դեր խաղա»[25] : Ուշադրություն է գրավում մի հետաքրքիր նրբություն: Երկու նամակում էլ հեղինակին անհանգստացնում է «Չեկայի և Հատուկ բաժնի գործակալների» գործունեությունը: Ըստ երևույթին չեկիստների զգոնությունը խանգարել է նրանց գործուն մասնակցությանը:

Այսպիսով, Մոսկվայի բանակցությունների նախօրյակին ստեղծվում է ամուր թուրքամետ ճակատ և այնքան ազդեցիկ, որ կառավարությունը որոշում է բանակցություններն անցկացնել առանց Հայաստանի ներկայացուցիչների մասնակցության:

Բանակցությունները սկսվել են 1921 թվականի փետրվարի 26-ին և ավարտվել մարտի 16-ին՝ «բարեկամության և եղբայրության» պայմանագրի ստորագրմամբ: Դրանք ընդգրկել են բոլոր հիմնական հարցերը. բարիդրացիական հարաբերությունները, միջազգային համաձայնեցված գործողությունները, խորհրդային օգնությունը Թուրքիային, նեղուցների հարցը և այլն: Հանգամանալից խոսակցություն է տեղի ունեցել սահմանների մասին: Նախապատրաստական մեծ աշխատանքի շնորհիվ թուրքական կողմը ստացել է նույնիսկ ավելին, քան պահանջել է: Թուրքիային են անցնում 40 տարի առաջ ռուս և հայ զինվորների համատեղ հաղթական մարտերում նվաճված Կարսի նահանգը, Արդահանը, Սուրմալուի գավառը, որը երբեք թուրքերին չի պատկանել: Պայմանագրի երրորդ հոդվածում ասվում է. «Երկու պայմանավորվող կողմերը համաձայն են, որ Նախիջևանի մարզը պայմանագրի I (C) հավելվածում նշված սահմաններում կազմում է ինքնավար տարածք Ադրբեջանի պրոտեկտորի ներքո, պայմանով, որ Ադրբեջանը սույն պրոտեկտորատը չի զիջի երրորդ պետության»[26]: Այս հոդվածը ակնառու կերպով ցույց է տալիս, թե Թուրքիան ինչպես է թելադրել իր պայմանները, և թե ինչպես էին խորհրդային կառավարության ներկայացուցիչները հլու հնազանդ ընդունել դրանք: Բանն այնտեղ է հասնել, որ մեծ տերությունը հարևան պետությանը թույլ է տվել որոշելու փոխհարաբերությունները իր սահմաններում, հարևան մարզերի միջև: Այսպիսով, մեծ եղեռնից հետո, խորհրդային կառավարության օգնությամբ, թուրքերը երկրորդ մեծ հարվածն են հասցնում հայ ժողովրդին. պատմական Հայաստանի կենտրոնական մասը, առանց նրա տիրոջ համաձայնության, նվիրաբերվում է հարևանին, վերապահում անելով, որ նա իրավունք չունի այն վերադարձնել Հայաստանին: Հայկական հարցի մասին զրույց է տեղի ունեցել Ստալինի հետ: Նրա զրուցակիցներից մեկը՝ Յուսուֆ Քեմալի բեյը վերապատմել է. «Մեր այն հարցին, թե Հայաստանի հարցը խոսակցության առարկա լինելու՞ է արդյոք, Ստալինը պատասխանեց. «Հայաստանի հարցը դուք ինքներդ արդեն լուծել եք: Եթե ձեզ մոտ դեռ ինչ-որ բան մնում է չլուծված, դա էլ լուծեցեք, բայց ճիշտ ժամանակի մասին տեղյակ պահեք մեզ»: Ընկեր Ստալինի այդ վճռական, շնորհակալության արժանի հայտարարությունից հետո մենք հրաժեշտ տվեցինք նրան»[27]: Այդ ամենն, իհարկե, արձանագրված չի եղել պայմանագրի մեջ: Այսպես *մեր հայրենիքի մի*

25 Նույն տեղում, պահպ. միավ.24504,թ.1

26 "Документы внешней политики СССР", т. Ш, М., 1959, с.599.

27 Լրաբեր Հայաստանի ԳԱ հասարակական գիտությունների, 1988, N 6, էջ 12

նշանակալի մասը պետք է զիջեինք թուրքերին: Նշանակում է, իրենց հարազատ օջախները վերադարձած մարդիկ ստիպված էին կրկին տեղահանվել, ենթարկվելով նոր հալածանքների, կոտորածների ու թալանների: Հուսահատական էր նաև հայերի այն խմբերի դրությունը, որոնք, տարբեր պատճառներով, չէին կարողացել դուրս գալ Թուրքիայից: Տրապիզոնում խորհրդային գլխավոր հյուպատոսը շրջակա վեց շրջաններում (Ամասիա, Արաբկիր, Սվազ և այլն) հաշվել է մոտ հինգ հազար մարդ, որոնց մի մասը դիմել է խնդրելով օգնել փոխադրվելու Հայաստան: Թուրքական իշխանություններն, իրենց հերթին «ստիպում էին նրանց հեռանալ հարազատ վայրերից»: Գլխավոր հյուպատոսության զեկուցագրում այնուհետև ասվում է, որ «Թուրքական հանրապետության կառավարությունը վարում է ոչ ավելի լավ քաղաքականություն, քան նրա նախորդները: Եթե ներկայումս մենք չենք տեսնում Թուրքական կառավարության կողմից արհեստականորեն ստեղծվող ազգային թշնամություն և հայերի կոտորած, ապա մենք տեսնում ենք ավելի նրբին ու ավելի զգալի քաղաքականություն, տնտեսական ճնշման քաղաքականություն: Շրջաններում ապրող հայերը ... գտնվում են չափազանց դժվարին տնտեսա-իրավական պայմաններում: Նրանք զրկված են Թուրքիայում տեղափոխվելու իրավունքից, առանց Անգորայի հատուկ թույլտվության չեն կարող դուրս գալ այն վայրերից, որտեղ ապրում են»[28] : Շատ հաճախ հայերին ստիպել են կատարել ամենածանր ու կեղտոտ աշխատանքներ, ընդ որում միանգամայն անտեսվել են նրանց շահերը: Գյուղացին զրկված է եղել հողից, գործազուրկ արհեստավորը «չի կարողացել գնալ հարևան գյուղը որպես բատակ աշխատելու համար»:[29] :

Այդպիսին էր այն ընդհանուր պատկերը, որը բնութագրում էր հայ ժողովրդի դրությունը նրա հայրենիքի երկու մասերում: Իսկ որոշ բարձրաստիճան անձանց անտարբերությունը հայոց ճակատագրի նկատմամբ և աննշան գործողությունները ստեղծում էին համապատասխան հոգեբանական տրամաբանություն հայկական հարցի շուրջ: Ավելին, եղել են մարդիկ, ովքեր փորձել են տեսականորեն հիմնավորել անարդարացի, մարդու և ժողովրդի իրավունքները ոտնահարող գործողությունները ոչ թե միայն Թուրքիայի և Խորհրդային հանրապետության շահերի «միասնությամբ», այլև «համաշխարհային հեղափոխության» նպատակներով: Այդ կարգի բազմաթիվ բանավոր ու գրավոր ելույթներից նշենք Ստալինի գործակիցներից մեկի, նրա իսկ անվանած «թուրքական իմպերիալիզմի փաստաբան», ազգությունների գործերի ժողկոմատի աշխատակից Ա. Սկաչկոյի հոդվածը: Իր ձայնը միացնելով թուրքասերների բանակի ձայնին, նա Մոսկվայի պայմանագրի ստորագրման նախօրյակին, այդ հարցին նվիրված հոդվածում գրել է հետևյալ հրեշավոր տողերը. «Սոցիալիստական պետությունները պետք է հաղթահարեն իրենց նացոնալիզմը և համաշխարհային հեղափոխության զարգացման շահերին զոհաբերեն և իրենց տարածքները, և անգամ իրենց ցեղակիցներին: Չե՞ որ, եթե մենք հավատում ենք պրոլետարական հեղափոխության հաջողությանը, ապա մենք պետք է հասկանանք, որ բոլոր այդ զոհողությունները միայն ժամանակավոր են, որ համաշխարհային

28 Վրաց. ԽՍՀ ԿՊԱ, ֆ. 617,g. 2, գ. 1352, թ. 1-2
29 Նույն տեղում,թ. 3

հեղափոխության հաղթանակով դրանք բոլորն էլ կվերանան»[30] : Տեսականորեն այդ գաղափարը մեռելածին էր . կյանքը ցույց է տվել ու ապացուցել դրա սնանկությունը: Ի դեպ, թուրքերը միշտ էլ պաշտպանել են միանգամայն հակառակ տեսակետ: Նրանք երազել են ոչ թե հեղափոխության տարածման, այլ ընդհակառակը, նրա ազդեցության սահմանափակման մասին: «Վերջիվերջո, հազարավոր միջոցների և մի շարք զոհերի շնորհիվ - 1921 թվականի հուլիսի 8-ին գրել է քեմալականներին մոտ կանգնած « Իլերի» թերթը - բոլշևիզմը սահմանափակվեց Ռուսաստանում, իսկ աշխարհի մնացած մասերը զերծ մնացին կոմունիզմից: Ընդ որում անհրաժեշտ է նշել, որ բոլշևիզմը մեկուսացած մնաց նաև շնորհիվ այն բանի, որ բարենպաստ գործոն չգտավ Անատոլիայում»[31]: Ինչ վերաբերում է նրանց արած զիջումների գնահատականին, ապա դրանք մամուլում միանշանակ ներկայացված են եղել որպես «թուրքերի հաղթանակ»: Թուրք հեղինակի գրքում կարդում ենք. «Մոսկվայի 1921 թվականի պայմանագրով Թուրքիան բոլշևիկներին ստիպեց համաձայնել ոչ միայն այն բանի հետ, որ հսկայածավալ թուրքական վիլայեթները չտան հայերին, այլև Կարսի, Արդահանի և Արդվինի շրջանները Թուրքիային վերադարձնելու անհրաժեշտությանը, որոնք խլել էր ցարիզմը և որոնք ուզում էին բռնի հայացնել: Թուրքիան դրանք վերջնականապես հետ վերցրեց[32]: Հիշատակության արժանի է նաև «Թևհիդի էֆքյար» թերթի նույն թվականի նոյեմբերյան համարներից մեկում զետեղված հայտարարությունը. «Մեր արևելյան սահմանները գծված են մեր սրով»[33] :

Ասենք, որ քեմալական շարժման դեռ սկզբից նրա առաջնորդը գործարար կապեր է հաստատել Արևմուտքի հետ, բայց սեր է բացատրվել խորհրդային գործիչների հետ: Այսպես, 1919 թվականի աշնանը, նոր միայն դուրս գալով քաղաքական ասպարեզ, նա մերձավորներին նախազգուշացրել է. «Հանուն ազգային շարժման անվտանգության, ես խնդրում եմ բացարձակապես գաղտնիք պահել մեր հարաբերությունները ինչպես ամերիկացիների, այնպես էլ անգլիացիների հետ[34]: Եվ խորհրդային կառավարությունը ձևացրել է, թե այդ ամենը չի նկատել, թեև այդ մասին գրել էին թե՛ մասնագետները և թե մամուլը: 1989 թվականի սեպտեմբերյան համարներից մեկում բուլղարական «Ռաբոտնիչեսկո դելո» թերթը հրապարակել է Դ. Զագորսկու «Մարդկության հիշողության դատաստանի առաջ» հոդվածը: Քրդերի նկատմամբ Թուրքիայում շարունակվող ցեղասպանության փաստերը նշելուց բացի, հեղինակը ամփոփում է տասնյակ տարիների տվյալները և անում լուրջ հետևություն. հայերի, հույների, սլավոնների և քրդերի կոտորածները Օսմանյան կայսրությունում և հանրապետական Թուրքիայում մարդկության վրա նստել է հինգ միլիոն կյանք[35]:

30 *А. Скачко*. Армения и Турция на предстоящей конференции."Жизнь национальностей", 4 марта 1921
31 ԽՍՀՄ ԱՔԱ, ֆ. 132, թղթապ. 67, g. S, հերթ. 69, թ.96
32 ԽՍՀՄ ՀՀԿՊԱ, ֆ. 4459, g.8, պահպ. միավ. 167, թ. 209
33 ԽՍՀՄ ԱՔԱ, ֆ. 132, թղթապ. 2,g.4 հերթ, 66, թ. 75
34 *М. Кемаль*. Путь новой Турции, т. I, М., 1929, с. 303
35 "Коммунист", 1989, 22 октября

Չմատնանշելով շարունակվող եղեռնագործությունների մյուս օջախները, նշենք միայն ցեղասպանության դրսևորումները հարևան Ադրբեջանում: Արցախի գրեթե յոթ տասնամյակ ճնշված հայ բնակչության ազգային-ազատագրական շարժման վերելքի կապակցությամբ: Ըստ որում տեղական ազգայնամոլները գործել և գործում են ըստ իրենց ուսուցիչներ՝ թուրք ջարդարարների պատկերի ու նմանության: Վերջիններս իրենց աշակերտներին առարկայական դասեր են տվել դեռ 1918-1921թթ. Բաքվում, Շուշիում և այլ վայրերում: Էնվերի եղբայր Նուրի փաշան մի քանի տարի հետո հոխորտացել է. «Ես միշտ կմնամ որպես բոլշևիզմի հակառակորդ, քանի որ ես շատ լավ ծանոթացել եմ թյուրքիզմի նկատմամբ նրանց ունեցած մտադրություններին: Երբ բոլշևիկները գրավեցին Ադրբեջանի մայրաքաղաքը, ես գտնվում էի Ղարաբաղում: Այն ադրբեջանցիների հետ, որոնք չցանկացան ընկնել բոլշևիկների իշխանության տակ, ես տաք մարտից հետո նահանջեցի էրզրում: Ճանապարհին ադրբեջանցիների հետ միասին մասնակցեցի հայկական ջոկատների ճնշմանը»[36]: Հենվելով տարիների ընթացքում լավ մշակված փորձի վրա, հալածանքների, ահաբեկչության, արտաքսման միջոցներով Նախիջևանի երկրամասը հայաթափվեց: Տեղական բնակչությանը դուրս մղելու այդ հանցավոր քաղաքականությունը կիրառվել է նաև Լեռնային Ղարաբաղում; Իրադարձությունների թարմ հետքերով Սումգայիթ է ժամանել Լենինգրադի «Ավրորա» հանդեսի աշխատակից Ա. Վասիլևսկին: Տուժածների, ականատեսների, մասնակիցների հետ ունեցած բազմաթիվ հանդիպումներից հետո, նա տեղական քաղաքացիական, վարչական և զինվորական ղեկավարությանը մեղադրել է անմեղ ու անզեն մարդկանց եռօրյա ջարդերի համար: «Սումգայիթում զարհուրելի էր,- հանդեսի 1988 թվականի 10-րդ համարում գրում է նա:- Իհարկե, մեղավոր են իշխանության տեղական խորհրդային կուսակցական մարմինները: Անգործության էր մատնվել միլիցիան... Ջարդի նախօրյակին զանգահարեցին, տվեցին հեռախոսի երեք համար, ուր կարելի էր զանգահարել դժբախտության դեպքում, իսկ երկու ժամ հետո կապը կտրվեց»[37]: Կասկած չկա, որ այդ բոլոր դեպքերին տեղյակ են եղել նաև հանրապետության ղեկավարները... Մինչ այդ ծավալվել էր զանգվածային շարժումը: Ականատեսները Վասիլևսկուն պատմել են. «...Դրոշակով անցան մեր տան կողքով: Դրոշակի վրա մակագրություն՝ «Մահ հայերին»: Կես ժամվա ընթացքում 40-50 մարդուց բաղկացած խումբը դարձավ 5-6 հազարանոց ամբոխ: Եվ այդպես նրանք քայլել են ամբողջ շրջանով և բղավել «Մահ հայերին»: Խոշտանգումներ, բռնությունների փաստեր, սպանություններ, դիակների կիզում, բռնի արտաքսում իրենց բնակարաններից, սեփական տներից, առանց թույլ տալու, որ հետները վերցնեն թանկարժեք իրեր, վաճառեն սեփականությունը... մերկ կանանց ստիպել են քայլել քաղաքների փողոցներով, և ուրիշ շատ վայրագություններ են կատարել ամբողջ Ադրբեջանում: Դեռևս խորհրդային իշխանության առաջին տարիներին թուրք ազգայնամոլները լուրջ անհանգստացել են այն բանից, որ թյուրքալեզու ժողովրդների շրջանում քիչ է տարածված թուրքերենը, թուրքական պատմությունը, գրականությունը և անբավարար է իրականացվում ազգային

36 ԽՍՀՄ ԱԲԱ, ֆ. 132, թղթապ. 72, ց. 9, պահպ. միավ. 26, թ. 108

37 "Коммунист", 1988, 5 но бр .

թուրքական դաստիարակությունը» «Ենի Կաֆկասյա» թերթի 1924 թվականի հունվարի 1-ի համարում լույս տեսած «Արտասահմանում գտնվող թուրքերի դրությունը» խորագիրը կրող հոդվածում կարդում ենք. «Ազգային դաստիարակությունը պետք է զգացվի և շուտով իր արդյունքներն ունենա Թուրքեստանում, Ադրբեջանում, Հյուսիսային Կովկասում, Պովոլժիեում և Սիբիրում: Նոր Թուրքիան դեռ չի կանգնել լայն ուղղու վրա... նա կենտրոնական դիրք կգրավի բոլոր թյուրքական ժողովուրդների մշակույթի ու գիտության մեջ»[38] : Թուրքական մամուլը այսօր էլ եռանդով միջամտում է թյուրքալեզու ժողովուրդների գործերին: Օրինակ՝ «Հուրիյեթ» թերթը զետեղել է ոմն Զոշքուն Քրջայի «Խորհրդային մարդը և նացիոնալիզմը» հոդվածը, որը իր ընթերցողներին տեղեկություններ է տալիս Լեռնային Ղարաբաղի իրադարձությունների մասին: «Կրեմլը ստիպված էր,- գրում է հեղինակը,- միջամտել այդ իրադարձություններին և որոշում ընդունել ոչ թե հայերի, այլ ադրբեջանցիների օգտին... Կրեմլը, ուսումնասիրելով հայերի և ադրբեջանցիների միջև տեղի ունեցած իրադարձությունները, հաշվի էր առնում ոչ միայն ազերի թուրքերի, այլև բոլոր թուրքերի կշիռը: Իրոք, ԽՍՀՄ-ում թուրքերի թիվը հասնում է 50 միլիոնի: Նման հսկայական թուրքական զանգվածի հանդեպ, ինչպիսին էլ լինի հայերի արժեքը ԽՄԿԿ-ի աչքում, Կրեմլի հաշիվներում նրանք թուրքերի արժեքը չեն ունենա»: Այնուհետև հեղինակը մեկ առ մեկ թվարկում է երկրում ապրող թյուրքալեզու 20 ժողովուրդներին ու ազգություններին, որոնց գլուխներում, նրա խոսքերով ասած, ավելի ու ավելի է հասունանում այն գաղափարը, որ իրենք թուրք են, «քանի որ նրանք ունեն տարբերիչ գծեր ԽՍՀՄ մյուս ժողովուրդների համեմատությամբ»[39]: Իսկ խորհրդային մարդուն տակավին թվում էր, թե Կրեմլը բոլոր հարցերը լուծելիս ելնում է ժողովուրդների իրավահավասարության սկզբունքից: Պետք է նշել պանթյուրքիստական քարոզչության զգալի աճը վերջին մի քանի տարում: Դրա կրողն է Ադրբեջանի ժողովրդական ճակատը, և ոչ միայն նա... նրան էական օգնություն են ցույց տալիս հանրապետության մտավորականության որոշակի շրջաններ, առանձին հասարակական ու պետական գործիչներ: Այս շրջանների ներկայացուցիչների ելույթները մամուլում դարձել են հաճախակի: 1989 թվականի սեպտեմբերին Աբու Դաբիում լույս տեսնող «Ալ բայան» թերթում ժողովրդական ճակատի ղեկավարներից մեկը, ոմն Ի. Ալիև հարցազրույց է ունեցել: Ճակատի գործունեության մասին պատմելուց բացի նա հայտարարել է. «...Մեր նպատակն է ստեղծել «Մեծ Թուրքիա» կամ արտասահմանի բոլոր թուրքերին միավորել Թուրքիայի հովանու ներքո»[40]: Ավելի համարձակ ու անկեղծ է ճակատի գաղափարախոսներից մեկ ուրիշը՝ գրականագետ Համիդ Խերիշչին: Նույն թվականի հոկտեմբերին լիտվական «Ատգիմիմաս» /«Համաձայնություն»/ թերթում զետեղվել էր նրա զրույցը թերթի թղթակիցների հետ՝ «Կովկասը կրակի մեջ» վերնագրով: Նրա կարծիքով, Խորհրդային Միությունը դուալիստական, այսինքն՝ «մուսուլմանա-քրիստոնեական կամ ավելի ճիշտ, թյուրք-սլավոնական պետություն է»: Ուստի իրենց համարելով դրության տերը հսկայածավալ պետությունում, թյուրքական պարագլուխները

38 ԽՍՀՄ ԱԲԱ, ֆ. 132, թղթապ.82, ց. 9, պահպ. միավ. 26, թ.111

39 «Հուրրիյեթ», 1988 մարտի 11

40 "Коммунист", 1989, 17 октября

չեն ենթադրում «նույնիսկ ԽՍՀՄ-ից դուրս գալու հնարավորությունը, քանի որ մեզ համար դա կլիներ դուրս գալ թյուրքական միասնությունից... Մուսուլմանների համար շահավետ չէ ԽՍՀՄ-ի փլուզումը և, դրանով իսկ թյուրքական միասնության փլուզումը». Նշանակում է, այն, որ բազմազգ պետության մեջ բնակչության մեծամասնությունը մուսուլմաններ չեն, պանթյուրքիստի համար ոչ մի նշանակություն չունի: Ավելին, իր նպատակներին հասնելու համար նա պատրաստ է ջիհադ սրբազան պատերազմ հայտարարել, «երբ բոլորը մեծ ու փոքր, և կանայք նույնպես, մարտի կգնան, իսկ զոհվելով, մեր հավատով, կընկնեն դրախտ: Մենք մեր կրոնի համաձայն հույսներս դնում ենք միայն մեզ վրա», նաև օգնություն սպասելով Իրանից, Թուրքիայից և ամբողջ մուսուլմանական աշխարհից: Այնուհետև նա խոսում է հնարավոր ընդհարումների մասին քրիստոնյա ժողովուրդների հետ, եթե նրանք այդ պայքարում պաշտպանեն հայերին[41]: Իսկ Սումգայիթի մարդասպանների Մոսկվայի դատավարությունում, 1988 թվականի նոյեմբերին, բազմիցս հիշատակվում էր, որ բազմամարդ միտինգներում հակահայկական կոչերը, բացականչությունները, կարգախոսները եղել են հիշյալ խաժամուժի հավաքների հիմնական բովանդակությունը: Եղել են կոչեր նաև հետևյալ բովանդակությամբ. «Մուսուլմանը, որը չխմի հայի արյուն, մուսուլման չէ: Ամեն մի մուսուլման պետք է սպանի յոթ հայ»[42]: 1988 թվականին Ադրբեջանի տարբեր շրջաններում տեղի ունեցած ջարդերի ժամանակ, և հատկապես, Բաքվի հայ բնակչության ցեղասպանության և նրան Բաքվից բռնի վռնդելու, ռուսների, հրեաների և այլոց կոտորածի օրերին 1990 թվականի հունվարին ի հայտ եկավ պանիսլամիզմի և պանթյուրքիզմի իրական սպառնալիքը: Այաթոլլաի Խոմեյնին հիշյալ իրադարձությունները որակեց որպես մեկ միլիարդ մուսուլմանների իսլամական զգացմունքների արտացոլում[43]: Կաշառքների և թմրադեղերի օգնությամբ ժողովրդական ճակատի էմիսարները փորձեցին նման տրամադրություններ բորբոքել Միջին Ասիայի հանրապետություններում և այլուր նպատակ ունենալով կազմակերպել անկարգություններ և հայերի նոր ջարդեր: Վերջապես, Կրեմլի պատերից ներս, ադրբեջանցի պատգամավորների բերանից հնչեցին «իսլամը կհաղթի» բառերը: Հիշեցնենք իսլամական «մուսուլման եղբայրներ» միջազգային կազմակերպության կոչերից մեկը. «Մեր մեթոդն է խրատը և խորհուրդը, իսկ եթե չի օգնում հնազանդեցումը ուժով, ոչնչացումը»[44] : Այս կոչի հետ միանգամայն համահնչուն է պանթյուրքիստների գաղափարախոսներից մեկի, Թեքին Ալփի խրատը: «Պանթյուրքիզմ» գրքում նա գրել է. «Թուրան հասկացությունը աշխարհագրական է և այն կարող է դառնալ ապագա թուրքական պետության համար, որը կմիավորի ամբողջ աշխարհի թուրքերին...Թուրանը իրողություն է և տասն անգամ մեծ է Անատոլիայից»: Նրա արտահայտությամբ, այդ պետության հողերը գտնվում են «չինական ճիրաններում և ռուսական սապոգի տակ»[45]:

41 "Коммунист", 1989 16 декабр

42 «Երեկոյան Երևան», 1988, 11 նոյեմբերի

43 "Литературна газета" , 1990г., 24 но бр

44 "Ислам в современной политике стран Востока", М., 1986, с. 13

45 "Вопрос востоковедени ", ЕГУ, в пуск 3-4, 1967, с. 93

Պանիսլամիստների և պանթյուրքիստների առջև ծառացած ընդհանուր խնդիրները բնականաբար, մերձեցնում են նրանց ուժերն ու դիրքորոշումները: Բայց փաստերի համադրումը ցույց է տալիս, որ հիշյալ իրադարձությունները պանթյուրքիստական խնդիրների իրականացման սոսկ նախերգանքն են: Այդ բանն են ապացուցում ժողովրդական ճակատի հրոսակների հետ հանրապետության ղեկավար մարմինների համաձայնեցված գործողությունները: Այսպես, 1990 թվականի փետրվարի 13-ին սկսվել են հայերի ջարդերն ու արտաքսումները Բաքվից ռուսների, հրեաների և այլոց հետ: Նրանց համոզմամբ, այդ բռնարարքների իրականացումը նշանակում էր մոտեցնել «Մեծ Թուրանի» կազմավորման գործը: Ադրբեջանում նման բարբարոսական քաղաքականության իրականացմանը նպաստում էր կենտրոնի այն չմտածված դրույթը, որ պետք է բոլոր ոանքերը գործադրել, բոլոր միջոցներն օգտագործել ազգամիջյան հարաբերությունների սրման գործում երկու կողմին էլ հավասարաչափ մեղադրելու համար: Դրանով իսկ, ինչպես Վալենտին Ռասպուտինին հղած իր նամակում ճիշտ է նշում գրող Զորի Բալայանը, նրանք մի հարթության վրա դրեցին զոհին ու դահճին[46]: Թուրքական բուրժուազիայի գաղափարախոսության ճանաչված մասնագետ է Յու. Հասանովան հասարակական մտքի մասին իր հետազոտության մեջ գրել է. «Որոշակի պահերի բուրժուական նացիոնալիզմը կարող է վերածել շովինիստական, ագրեսիվ «պան» հոսանքի, որը թեպետև աճում է նրանից, բայց ըստ էության նրա ժխտումն է, քանի որ ազգային սկզբունքը փոխարինում է ռասիզմով»[47] : Այնուհետև նա բերում է երիտթուրքերի քաղաքականության գերմանացի լրագրող Գ. Շտյուրմերի հետևյալ բնորոշումը, որ նրանք «փորձ արեցին թուրանիզմի սկզբունքները մտցնել գործնական քաղաքականության բնագավառ, որը, վերջին հաշվով, վերածվեց ավարտուն ռասայական մոլորության»[48]: Վերջապես հետազոտության հեղինակը անում է շատ կարևոր և օգտակար եզրակացություն. «Պանթուրանիզմը և պանթյուրքիզմը հիմնված են ռասիզմի վրա և վճռականորեն հակասում են ազգային սկզբունքին»[49]: Մենք դրան կավելացնեինք, որ «պան»- երը ժխտում են նույնիսկ ժողովուրդների միջև հավասարության հնարավորությունը, անհաղթահարելի խոչընդոտ են ազգային հարցի լուծման ճանապարհին, բացառում են խաղաղության և բարիդրացիական հարաբերությունների ստեղծումը:

Ըստ երևույթին, այդ բանը չեն հասկանում Ադրբեջանի բախտը տնօրինողները, մասնավորապես մտավորականության որոշ խմբեր: Օգտագործելով իրենց ուսուցիչների թուրք հեղինակների փորձը, ադրբեջանցի աշակերտները կեղծիքը դարձրել են «գիտություն» և այդ բարեբեր հողի վրա պատրաստում են «գիտնականներ»: Եվ այդ անպատասխանատու մարդիկ, շովինիզմի ոգով թևավորված, չեն որոնում հարևան ժողովուրդների հետ հաշտության ուղիներ: Միանգամայն իրավացի է պրոֆ. Յու.Գ. Բարսեղովը, երբ գրում է. «Շովինիզմը, ուրիշի տարածքը պահելու ձգտումը այդպիսի դեպքերում սովորաբար ներկայացվում է իբրև հոգատարություն հանուն

46 "Коммунист" 1990 г., 3 февраля

47 "Современная философская и социологическая мысль стран Востока", с. 231

48 Նույն տեղում, էջ 233

49 Նույն տեղում, էջ 235

կայունացման, խաղաղության և նույնիսկ հոգատարություն այն ժողովրդի «բարեհաջողության», որին մերժում են իր օրինական ու անկապտելի իրավունքը»[50]: Տարածքների հարցի կապակցությամբ նրանք հարձակումների թիրախ են դարձրել մեր ժողովրդի պատմությունը՝ սկսած հնագույն ժամանակներից: Եվ այդ «քննադատությունը» իրականացվում է այնպիսի ցածր մակարդակով, որ երբեմն դժվար է լինում բանավեճի մեջ մտնել: Փաստերի սովորական ցենզափոխում, հայհոյանք, առանձին երևույթների կամայական բացատրություններ, դեպքերի, փաստերի վերագնահատում - ահա սրանք են մեր «ընդդիմախոսների» սովորական մեթոդները: Իսկ ցեղասպանության մասին հանդիպում ենք այսպիսի արտահայտությունների. «Ցեղասպանություն չի եղել: Եթե ընդունում ենք դա,- ասում է Ադրբեջանի ժողովրդական ճակատի անդամ Կուլիևը,- ապա պետք է ընդունել նաև հայերի գործած ցեղասպանությունը թուրքերի ու ադրբեջանցիների նկատմամբ»[51]: Որքան ծանոթ է այս ամենը: Բառ առ բառ հաղորդվում է Թուրքիայի պաշտոնական կարծիքը: Ավելին. Նախագահի պոստից հեռանալուց առաջ Քենան Էվրենը բացել է սպանված թուրքերի լուսանկարների էրզրումի թանգարանը: Շարունակվում է բազմադարյան հայ մշակույթի ոչնչացումը: 1989 թվականի ապրիլին ավստրալիական «Էքստրա» թերթում զետեղված էր Ուիլյամ Դալռիմպլի «Հին արվեստի ոչնչացումը» ընդարձակ հոդվածը՝ Արևմտյան Հայաստանի պատմական ու ճարտարապետական հուշարձանների ողբալի վիճակի մասին: Հեղինակը կանգ է առնում տեղական իշխանությունների այն խոչընդոտների վրա, որ նրանք հարուցում են հնագույն հուշարձանները ուսումնասիրելու կամ վերականգնելու եվրոպական հետազոտողների առաջ: Նա նշում է, որ 1914 թվականի 2549 եկեղեցական շենքերից պահպանվել է միայն մի քանի հարյուրը: «1974 թվականին հայտնի դարձավ, որ այն ժամանակ հայտնի 913 շինություններից 464-ը լրիվ ոչնչացվել են, 252-ը մնացել են փլատակներում և միայն 197-ը պահպանվել են համեմատաբար տանելի վիճակում»[52]: Նախիջևանի շրջանում 4500 պատմական հուշարձաններից կիսավեր վիճակում պահպանվել է կեսից էլ պակասը:

* * *

Գրեթե մեկդարյա ծանր, հյուծիչ պայքարից, հոգևոր ու հոգեկան լարվածությունից հոգնել է իմ ժողովուրդը: Ուստի նա հանդես է գալիս որպես ժողովուրդների բարեկամության ամենաանկեղծ, ճշմարիտ ու հետևողական կողմնակից: Այդ բանը պետք է հասկանան ու զգան բոլոր նրանք, ովքեր պետք է լուծեն Արցախի խնդիրը:

Արցախի խնդրի լուծմամբ 20-րդ դարը փոքր-ինչ կհատուցի հայ ժողովրդի կրած մեծ կորուստների դիմաց:

---

50 *Ю. Г. Барсегов.* Право на самоопределение - основа демократичееского ре ени межнационал н х проблем. Ер., 1989, с. 73

51 "Коммунист" , 1989, 31 окт бр

52 Նույն տեղում, 1 օգոստոսի, 1989

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԻՆՃԻԿՅԱՆ

1995 թ. ապրիլի 5-ին լրացավ բազմավաստակ գիտնական, հայ արևելագիտության տաղանդավոր կազմակերպիչ, դասախոս-մանկավարժ, արժանավոր մարդ Հ. Գ. Ինճիկյանի մահվան հինգերորդ տարելիցը: Նա հեռացավ կյանքից մինչև վերջ գրիչը ձեռքին: Անժամանակ մահից մի քանի շաբաթ առաջ նա վերջնական ավարտի բերեց և տպագրության պատրաստեց իր նոր, հետաքրքիր աշխատությունը՝ «Սոցիալական հոգեբանությունը և ցեղասպանությունը» խորագրով...

Հ. Գ. Ինճիկյանը ծնվել է 1913 թ. սեպտեմբերի 25-ին Ախալցխա քաղաքում: Ավարտել է Թբիլիսիի հայկական մանկավարժական տեխնիկումը և Մոսկվայի պատմության, փիլիսոփայության ու գրականության ինստիտուտը: 1939-1941 թթ. դասավանդել է Վ. Ի. Լենինի անվան ռազմաքաղաքական ակադեմիայում, 1941-1946 թթ. ծառայել է խորհրդային բանակում, մասնակցել Հայրենական մեծ պատերազմին՝ նախ Տուլայի և Մոսկվայի շրջանում, իսկ այնուհետև, 1942 թ. նշանակվել է 89-րդ հայկական Թամանյան դիվիզիայի 390-րդ գնդի զինվորական կոմիսար: Զորացրվելով 1946-ին, Հ. Գ. Ինճիկյանը մոտ 10 տարվա ընթացքում գտնվել է պատասխանատու պաշտոններում՝ Ռադիոյի պետական կոմիտեում, ՀԿԿ Կենտկոմում և Հայաստանի Նախարարների խորհրդի աշխատակազմում: Միաժամանակ, 1955-1958 թթ. նա դասավանդել է Երևանի պետական համալսարանում և Բրյուսովի անվան մանկավարժական ինստիտուտում: 1958 թ-ից մինչև կյանքի վերջը նա աշխատել է Հայաստանի Գիտությունների ակադեմիայի արևելագիտության ինստիտուտում, սկզբում որպես արևելագիտության սեկտորի վարիչ, իսկ այնուհետև՝ 1971 թ. նրա ջանքերով ստեղծված արևելագիտության ինստիտուտի փոխտնօրեն: 1960-ական թթ. Հ. Գ. Ինճիկյանը Հայաստանի ԳԱ «Լրաբեր հասարակական գիտությունների» ամսագրի գլխավոր խմբագիրն էր:

Հ. Գ. Ինճիկյան-պատմաբանի աշխատանքը եղել է նպատակասլաց՝ ուսումնասիրել Օսմանյան Թուրքիայի 19-րդ դ. երկրորդ կեսի 20-րդ դ. սկզբի զարգացման ներքին օրինաչափությունները: Նա առաջինն էր, որ ձեռնամուխ եղավ Օսմանյան կայսրությունում կապիտալիստական հարաբերությունների և բազմազգ բուրժուազիայի ձևավորման առանձնահատկությունների հատուկ ուսումնասիրմանը: Հ. Ինճիկյանի երկարամյա գիտական պրպտումների արդյունքը եղան «Օսմանյան կայսրության բուրժուազիան» և «Օսմանյան կայսրության անկումը» ծանրակշիռ հետազոտությունները: Նշված մենագրություններում առաջ քաշված հարցադրումներն ու փաստարկված եզրակացությունները նոր խոսք էին թուրքագիտության մեջ, ուստի և արժանացան բարձր գնահատականի՝ Հայաստանի և արտասահմանի գիտական հրապարակներում: Նշված զույգ աշխատությունները այսօր էլ խիստ այժմեական են, օգնում են հստակ ըմբռնելու Օսմանյան կայսրության բուն էությունը: Հ. Գ. Ինճիկյանի գրչին են պատկանում նաև հայ արևելագիտության պատմությանը նվիրված մի շարք արժեքավոր հոդվածներ, նրա բազմաթիվ ելույթները հարապետական մամուլի էջերում

առանձնանում են հրատապությամբ և, միաժամանակ, նյութի ընբռնման և մատուցման խորությամբ:

Հ. Գ. Ինճիկյանը նաև հմուտ մանկավարժ էր, որը սիրված և հարգված էր իր բազմաթիվ ուսանողների և աշակերտների կողմից՝ ի շնորհիվ նրա խորապես մարդկային նկարագրի:

Հ. Գ. Ինճիկյանը, իրոք, ստեղծել է մնայուն գիտական արժեքներ, որոնք իրենց շարունակությունն ու զարգացումն են գտնում հայ թուրքագիտության մեջ:

Հ. Գ. Ինճիկյանի վերջին մենագրությունը, նրա «կարապի երգը», որն անվանի գիտնականն ուժերի գերագույն լարման գնով հասցրեց ավարտել մահից մի քանի շաբաթ առաջ, ինչպես նշել էինք, կրում է «Սոցիալական հոգեբանությունը և ցեղասպանությունը» խորագիրը: Դա հույժ կարևոր աշխատություն է, որը կնպաստի ցեղասպանության հասկացության առավել լայն ընբռնմանը, մարդկության դեմ ուղղված այդ վտանգավոր հանցագործության և նրա գաղափարախոսների դատապարտման գործին: Խորհրդանշական է, որ 5 տարի իր հրապարակմանը սպասող այդ աշխատությունը լույս է տեսնում այսօր, երբ համայն հայությունը նշում է Մեծ Եղեռնի 80-րդ տարելիցը: Նրա արժանի որդու՝ Ռ. Հ. Ինճիկյանի և նրա մերձավորների ջանքերով լույս տեսնող այս գիրքը պատշաճ հուշարձան է հանդիսանում հայ անվանի գիտնականի հիշատակին և նաև ապացույց այն բանի, որ գիտնականը մնում է պատմության մեջ իր աշխատություններով: Հ. Գ. Ինճիկյան-պատմաբանի, հասարակական գործչի և մարդու միտքն ու գործը այսօր էլ մասնակից են հայ ժողովրդի պայքարին՝ հանուն պատմական արդարության և ճշմարտության հաստատման:

Անուշ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի
գիտաշխատող

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Առաջաբան 3

Անցյալի մոռացումը սպառնում է նրա կրկնությանը 5

Պատմության էջերից 9

Ցեղասպանության նախապատրաստման թուրքական մեթոդները 26

Հայասպանություն 49

Պատմությունը կրկնվում է 85

Հովհաննես Ինճիկյան 101

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԳՐԻԳՈՐԻ ԻՆՃԻԿՅԱՆ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Խմբագիր՝	Ա. Վ. Իսոյան
Նկարիչ՝	Ռ. Խ. Գևորգյան
Ձևավորող խմբագիր՝	Ռ. Ա. Ինճիկյան
Սրբագրիչ՝	Ա. Ա. Ինճիկյան
Համակարգչային շարվածքը՝	Ա. Մ. Թադևոսյան

Հանձնված է շարվածքի 5.04.95թ. Ստորագրված է տպագրության 18.04.95թ. Գրաչափը՝ 84x108/ 1/32: Թուղթ N 1: Շարվածքը՝ համակարգչային: 6 հրատ. մամուլ: Տպաքանակը՝ 1000: Գինը՝ պայմանագրային: «Հայագիտակ» հրատարակչություն, Երևան, Մարշալ Բաղրամյան 24: Տպագրված է «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի տպարանում. Երևան, Հարավ-Արևմտյան զանգված, Բ-1 թաղամաս, Ռաֆֆու փող. թիվ 4: